

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՕՏԱՐԱԶԳԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

**Միջազգային գիտաժողովի նյութեր,  
28 հոկտեմբերի 2016 թ.**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՍԻՍԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐԱԶԳԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՎԱՂԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԵՎ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵՐՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*Միջազգային գիտաժողովի նյութեր,  
28 հոկտեմբերի 2016 թ.*

ВКЛАД ИНОСТРАННЫХ АРМЕНОВЕДОВ В ИЗУЧЕНИИ  
ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИИ АРМЕНИИ

*Материалы международной научной конференции,  
28 октября 2016 г.*

THE CONTRIBUTION OF FOREIGN ARMENOLOGISTS IN THE  
STUDY OF ANCIENT AND MEDIEVAL HISTORY OF ARMENIA

*International Scientific Conference, 28 October 2016*

103372

ԼԵՍՐՈՊ ԱՐՁ. ԱՇԽԵԱՆ  
ՄԱՏԵՆԱՍՈՐ

166



ARCH. MESROB ASHJAN  
BOOK SERIES

166

*Arch. Mesrob Ashjian*

Երևան  
Պատմության ինստիտուտ 2017  
Ереван  
Институт Истории 2017  
Yerevan  
Institute of History 2017



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

*Նվիրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
Հին դարերի պատմության բաժնի վարիչ (2010-2017),  
պատմական գիտությունների դոկտոր  
Էդուարդ Լիպարիտի Դանիելյանի լուսավոր հիշատակին*

✦

Օ- 781 Օտարազգի հայազետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում (միջազգային գիտաժողովի նյութեր). - Եր.: Պատմության ինստիտուտ, 2017. - 215 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2016 թ. հոկտեմբերի 28-ին Երևանում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած «Օտարազգի հայազետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» խորագրով միջազգային գիտաժողովում ընթերցված զեկուցումները:

Գիտաժողովը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

## ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Սելբոնյան Ա.Ա., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր

Դոլտխանյան Ա.Գ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, քանասիրական գիտությունների դոկտոր

Դանիելյան Է.Լ., պատմական գիտությունների դոկտոր  
(պատասխանատու խմբագիր)

Ղազարյան Ռ.Պ., պատմական գիտությունների թեկնածու

Սուրադյան Հ.Ղ., պատմական գիտությունների թեկնածու

Վարդումյան Գ.Դ., պատմական գիտությունների թեկնածու

Դումիկյան Ա.Վ., պատմական գիտությունների թեկնածու

Սուքիասյան Հ.Կ., պատմական գիտությունների թեկնածու

Սարգսյան Վ.Ս., կրտսեր գիտաշխատող

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Мелконян А.А., академик НАН РА, доктор исторических наук

Долуханян А.Г., член корр. НАН РА, доктор филологических наук

Даниелян Э.Л., доктор исторических наук (ответственный редактор)

Казарян Р.П., кандидат исторических наук

Мурадян А.Г., кандидат исторических наук

Вардумян Г.Д., кандидат исторических наук

Думикян А.В., кандидат исторических наук

Сукиасян А.К., кандидат исторических наук

Саргсян В.С., младший научный сотрудник

## EDITORIAL BOARD

Melkonyan A.A., Academician of NAS RA, Doctor of Sciences (History)

Dolukhanyan A.G., Corresponding Member of NAS RA, Doctor of Sciences  
(Philology)

Danielyan E.L., Doctor of Sciences (History) (executive editor)

Ghazaryan R.P., PhD of History

Muradyan A.G.H., PhD of History

Vardumyan G.D., PhD of History

Dumikyan A.V., PhD of History

Sukiasyan H.K., PhD of History

Sargsyan V.S., junior researcher

*ՀՈՒՎԱԾՆԵՐ*  
*СТАТЬИ*  
*ARTICLES*

## ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Արդի փուլում հայ պատմաբանների առջև դրված կարևորագույն խնդիրներից է հայոց պատմության կեղծարարների դեմ պայքարը: Հատկանշական է, որ այդ կեղծարարությունն ընդգրկում է Հայաստանի պատմության գրեթե բոլոր այն ոլորտները, որոնք ունեն գիտաքաղաքական կարևորություն: Անշուշտ, այդ հիմնահարցերի մեջ առանձնահատուկ տեղ ունի թուրքական պատմագրության կողմից մասնավորապես Հայոց ցեղասպանության պատմության խեղաթյուրումը: Սակայն տարիներ շարունակ կեղծարարության նյութ են եղել նաև Հայաստանի հին ու միջնադարյան պատմության բազմաթիվ հարցեր:

Մինչև 19-րդ դարի կեսերը թեև եվրոպական պատմագրության մեջ Հայաստանի պատմության հիմնահարցերին անդրադարձ համեմատաբար քիչ էր լինում, սակայն եվրոպացի հեղինակների մեծ մասի աշխատություններում հայոց պատմության հանգուցային հարցերն առավելապես անաչառ լուսաբանություն էին գտնում: Սակայն շուտով՝ հայազիտության հանդեպ Եվրոպայում հետաքրքրության աճին զուգընթաց, նկատվեց պատմությունը խեղաթյուրելու ընդհանուր միտում: Հայոց պատմության խորենացիական հայեցակարգի կողքին հայտնվեցին տեսակետներ հայերի եկվորության, Ուրարտու պետության ոչ հայկական օտար բնույթի, Պատմահոր ապրած Ժամանակի, հաղորդած տեղեկությունների հավաստիությունը կասկածի տակ առնելու և այլնի վերաբերյալ: Ցավոք, այդ տեսակետների մի մասին տուրք տվեցին նաև որոշ հայ հետազոտողներ: Ստեղծվեց մի տպավորություն, թե իբր այդուհետ եվրոպական պատմագրությունն ամ-

բողջապես կանգնեց Հայոց պատմության կեղծարարության դիրքերում:

Իրականությունն այն է, որ եվրոպացի հետազոտողների մեջ եղան նաև բազմաթիվ ազնիվ գիտնականներ, որոնք շարունակեցին Հայաստանի պատմության անաչառ ուսումնասիրությունը և իրենց ծանրակշիռ աշխատություններով հարստացրին հայագիտությունը, այդ թվում՝ պատմագիտությունը: Ավելին՝ նրանց մի մասը դեռ 19-րդ դարի երկրորդ կեսին անզիջում պայքար սկսեց այդօրինակ կեղծարարների դեմ: Վերոհիշյալ գործընթացներին ուշի-ուշով հետևող, հայրենի պատմաբան, մեր գործընկեր Էդուարդ Դանիելյանը տպրիներ շարունակ տպագրում էր հողվածներ, որոնցում ցույց էր տալիս, որ օտար հեղինակների մեջ քիչ չեն այն ուսումնասիրողները, որոնք մշտապես եղել ու մնացել են հայոց պատմության իսկական պաշտպաններ: Էդ. Դանիելյանը ոչ միայն գնահատում էր այդպիսի հեղինակների հայանպաստ գործունեությունը, այլև հորդորում մեր պատմաբաններին նույնպես անդրադառնալ նրանց աշխատություններին: Այդ պայքարում նրա կողքին էին մեր ժամանակի հայագետների ավագ սերնդի մի շարք ներկայացուցիչներ: Ժամանակի ընթացքում Դանիելյանը պատրաստեց նաև աշակերտների յուրօրինակ դպրոց, որը շարունակում է իր ուսուցչի գործը: Նման հետազոտողների թիվն աճեց, ուստի և հնարավոր եղավ հրավիրել հատուկ միջազգային գիտաժողով՝ նվիրված օտար հեղինակների աշխատություններում Հայոց պատմության հանգուցային հարցերի լուսաբանումներին:

Սույն ժողովածուն 2016 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ՎԱԱ պատմության ինստիտուտում կայացած՝ «Եվրոպացի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսում-

նասիրության բնագավառում» միջազգային զիտաժողովի նյութերն են, որոնց հեղինակներն անդրադարձել են հայագիտության բնագավառում եվրոպացի մի շարք հետազոտողների (Հ. Աբիխ, Կ.Ֆ. Լեման-Հաուպտ, Ա. Յակոբսոն, Կ. Էփհարդ, Դ. Լանգ և ուրիշներ) կարևոր ձեռքբերումներին: Ցավոք, ժողովածուն լույս է տեսնում էդ. Դանիելյանի վաղաժամ մահվանից հետո: Բայց այն դառնում է իր գործընկերների կողմից նրա հիշատակի հանդեպ յուրօրինակ գնահատական՝ նրա կատարած ահռելի ազգանպաստ գործունեության համար:

*Աշոտ Մելքոնյան*

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,*

*ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

**Դ. Մ. ԼԱՆԳԻ ՆԵՐՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման գործում հայագետների, արևելագետների և կովկասագետների շարքում իր նշանակալից տեղն ունի բրիտանացի պատմաբան, պրոֆեսոր Դ. Մ. Լանգը (1924-1991 թթ.), որը հեղինակել է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ<sup>1</sup>. *Հայերը* (1976 թ.), *Հայաստանը քաղաքակրթության բնօրրան* (1970, 1978 թթ.), *Բարձունքների ժողովուրդներ՝ Հին Արարատը և Կովկասը* (1988 թ.):

Դ. Լանգը բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը՝ «*Հայաստանը քաղաքակրթության բնօրրան*» գրքում նշել է. «Ննագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Միջագետքն իր հնագույն՝ Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում է քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրը ժամանակակից իմաստով, Հայաստանը նույնպես իրավունք ունի որակվելու որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը: Նախ, ինչպես Ծննդոց Գրքում է ասվում, Նոյյան տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին՝ Հայաստանի հենց կենտրոնում... Անկախ այն հանգամանքից, թե մենք Ծննդոց Գրքին, որպես պատմական սկզբնաղբյուրի, կարևորություն տա-

---

<sup>1</sup> Danielyan E. L., The Contribution of D. M. Lang to the Appreciation of Armenia's Civilizational Heritage, *Fundamental Armenology*, Issue 2 (4) 2016, pp. 7-17. Դանիելյան Է.Լ., Դ.Մ. Լանգի ներդրումը Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման բնագավառում. - «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (74), 2017, էջ 113-124:

լիս ենք թե ոչ, ոչ մեկը չի կարող ժխտել Նոյյան տապանի մասին դրա հաղորդման խորհրդանշական կարևորությունը, որին ակնածանքով են մոտենում հավատացյալները և անհավատներն ամբողջ աշխարհում: Դրա հետ մեկտեղ, Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում՝ որպես մետաղագործության հնագույն հիմնական օջախներից մեկը՝ սկզբնավորվելով, առնվազն, հինգ հազար տարի առաջ: Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին ընդարձակ թագավորությունը՝ լինելով եկեղեցական ճարտարապետության այն ոճի սկզբնավորողը, որը կանխագործում է մեր սեփական արևմտյան գոթիկան»<sup>2</sup>:

Լանգն ուշադրություն է դարձրել Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից քաղաքակրթական զարգացումներին նպաստած աշխարհագրական, բնակլիմայական, մշակութային և բնական պաշարներով պայմանավորված գործոնների վրա: Նա աշխատում էր այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնագիտության և պատմագիտության մեջ գերիշխող էր հայերի «եկվորության» վարկածը: Սակայն նրա հայեցակարգին բնորոշ է Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից ստացվող տվյալների շարունակականության հիման վրա, տարբեր դարաշրջանների առումով *Հայկական* տերմինի օգտագործումը, որով նա ճեղքում է «եկվորության» վարկածի թմբիչը և իր մեթոդաբանական որոշ հարցադրումներով մոտենում հայագիտական հետազոտությունների ոլորտում գտնվող հայերի տեղաբնիկության հայեցակարգին<sup>3</sup>, որն ամրագրվում է նաև հնդեվրոպաբանա-

<sup>2</sup> David M. Lang, *Armenia: Cradle of Civilization*, London, 1970, p. 9.

<sup>3</sup> Ալիշան Դ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 79-81, 94-96: Մարտիրոսեան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթոթերենի հետ (Հանդես

կան լեզվաբանության զարգացմամբ և հնագիտական նոր հայտնագործություններով<sup>4</sup>:

*Հայաստան* անվանումը Դավիդ Լանգը լայնորեն կիրառում է ամբողջական նշանակությամբ: Այսպես, հիշատակելով Հայկական լեռնաշխարհի հնագիտական մշակույթի ժամանակագրությունը՝ Միջին բարի դարից մինչև Ուշ պղնձի-բարի դարը, նա նշել

---

ամսօրեայ, 1924, N 9-10, էջ 453), նույնի, Նպաստ մը հեթ և հայ բառաբանության (ՊԲՀ, 1972, N 2, էջ 163-186), Капанцян Гр., Хайаса - колыбель армян. Этногенез армян и их начальная история, Е., 1956. Պետրոսյան Լ. Ն., Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ (տե՛ս Հայ խզգարանություն և բանահյուսություն. Ժողովածու, 6, Եր., 1974, էջ 123, Иванов Вяч. Вс., Выделение разных хронологических слоев в древнесармянском и проблема первоначальной структуры гимна Вахагнгу.- ՊԲՀ, 1983, N 4, էջ 32-33, Kavoukjian M., Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987. Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Եր., 1998: Ղազարյան Ռ.Պ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Եր., 2009: Դանիելյան Է. Լ., Հայաստանի պատմաբաղադրակրթական ամբողջականության փաստն ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարությունների.- ԼՀԳ., № 1, 2016, էջ 29-44 և այլն:

<sup>4</sup> Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967: Խանգաղյան Է., Մկրտչյան Վ., Պարսամյան Է., Մեծամոր, Եր., 1973: Ավետիսյան Պ., Գասպարյան Բ., Ազարակի հուշարձանախմբի 2001 թ. պեղումները (Հին Հայաստանի մշակույթը, XII, Եր., 2002, էջ 9-12): Гамкрелидзе Т., Иванов Вяч., Индоевропейский язык и индоевропейцы, II, Тбилиси, 1984, с. 865, 895. Gray R. D., Atkinson Q. D., Language-tree Divergence Times Support the Anatolian Theory of Indo-European Origin, Nature, vol. 426, 2003, pp. 435-438. Remco Bouckaert, Philippe Lemey, Michael Dunn, Simon J. Greenhill, Alexander V. Alekseyenko, Alexei J. Drummond, Russell D. Gray, Marc A. Suchard, Quentin D. Atkinson, Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Family. - www.sciencemag.org SCIENCE, VOL 337, 2012, p. 957-960. Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенъе К., Поселение Араташен (неолитический памятник в Араратской равнине), Культура древней Армении, XIII, Материалы республиканской научной сессии, Е., 2005, с. 34-41. Միմոնյան Հ., Վերին Նավեր, գիրք Ա, Եր., 2006, նույնի՝ Ներքին Նավերի N 4 դամբարանը (Հուշարձան, տարեգիրք, 5, Եր., 2010, էջ 7-20): G. E. Arshian, B. Gasparyan, P. S. Avetisyan, R. Pinhasi, K. Wilkinson, A. Smith, R. Hovsepyan, D. Zardaryan, The Chalcolithic of the Near East and South-Eastern Europe: Discoveries and New Perspectives from the Cave Complex Areni-1, Armenia, - Antiquity, vol. 86, N 331, March, 2012. etc.

է. «Հայաստանի հարավային՝ Վանա լճի շրջակայքի մասերը շահում էին մ.թ.ա. 5500-4400 թթ. բարգավաճող նրբագեղ և զարգացած «հալաֆյան մշակույթի» հետ շփումներից... Մելարտի կարծիքով «հալաֆյան մշակույթը» ստեղծվել է հյուսիսից նոր եկածների կողմից, և դրա հայրենիքը հավանաբար գտնվում է Տիգրիսի և Եփրատի վերին հովիտների շրջանում, այն տարածքում, որը հետագայում կազմեց Մեծ Հայքի մի մասը... Հալաֆի ժողովուրդը հացահատկի մեծ աճեցնող էր և կառուցում էր ինքնատիպ տներ սալապատ ճանապարհների երկայնքով... Նման տներ նաև հանդիպում են Հայաստանի տարբեր մասերում: Հալաֆյան մշակույթը թեպետ կենտրոնացած էր Ասորիքում և Իրաքում, կարևոր և արդյունավետ կապեր ուներ Հայաստանի Վանի շրջանի հետ»<sup>5</sup>:

Ելնելով Նոր քարի դարի հնագիտական մշակույթի տվյալներից՝ Լանգը Հայաստանը համարել է միջազգային առևտրի հանգույց, միևնույն ժամանակ նշելով, որ հայկական վանակատը հանդիպում է ոչ միայն արևմտյան Փոքր Ասիայում, այլ նույնիսկ ստորին Վոլգայի ավազանի երկայնքով գտնվող հնավայրերում<sup>6</sup>: Նա դիտարկել է, որ Հայաստանում Նոր քարի դարի բնակավայրերը շարունակել են բարգավաճել Պղնձի-քարի դարի, Բրոնզի դարի և հետագա ժամանակներում և, որ նման հարուստ հնավայրերից է Մոխրաբլուրը, որը գտնվում է հին հայկական Նախիջևան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք և այն՝ «մի քանի արժեքավոր հնարավորություններ է ընձեռում պղնձի և բրոնզի մետաղագործության առաջացումը հասկանալու համար»<sup>7</sup>: Հայաստանը և Փոքր Ասիան Լանգը համարել է այն կենտրոնները, որտե-

<sup>5</sup> Lang D.M., նշվ. աշխ., էջ 63:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 64, 66:

դից մետաղամշակության զաղտնիքները թափանցել են դեպի Ասորիքի և Միջագետքի հարթավայրերը:

Լանգը բարձր է գնահատել Հայաստանում մետաղագործության առաջացումն ու զարգացումը և պատմության ուսումնասիրությանը քաղաքակրթական մեթոդաբանությամբ մոտեցմամբ «Հայկական մշակութային պատմության մեծ փուլ» է համարել, «այսպես կոչված, Կուր-Արաքսյան՝ Վաղ բրոնզի դարի մշակութթը» («...great phase in Armenian cultural history - the so-called 'Kuro-Araxes' Early Bronze Age culture»): Այստեղից հետևում է, որ Լանգը վերջինս դիտել է որպես Հայկական մշակութային պատմության նշանակալից փուլ: Այդ ժամանակաշրջանի հոգևոր պատմության առումով Լանգը նշել է. «Հայաստանը մեծ տեղ ուներ շումերների գիտակցության մեջ...» («Armenia bulked large in the consciousness of the Sumerians...»)<sup>8</sup>:

Քաղաքակրթական պատմության շարունակականության բնույթից ելնելով՝ Լանգը Բրոնզի դարի մասին գրելուց հետո, անդրադառնալով Հայոց պատմության (Armenian history) մեջ «համեմատելի մշակութային միասնականացմանը» («comparable cultural unification»), դրա փուլերից է համարել «Ուրարտական թագավորության ծաղկման՝ մոտ մ.թ.ա. 750 թ. և ապա՝ Տիգրան Մեծ արքայի գահակալության (մ.թ.ա. 95-55 թթ.)» ժամանակաշրջանները<sup>10</sup>:

Լանգը, բարձր գնահատելով Հայաստանի շինարարական արվեստը, նշել է. «այսպես կոչված Կուր-Արաքսյան հայկական քաղաքաշինության լավ օրինակ է Շենգավիթը՝ տեղադրված

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 73:

Հրազդան գետի ձախ ափին»<sup>11</sup>: Ինչպես տեսնում ենք, այսպես կոչված «Կուր-Արաքսյան մշակույթը», Լանգն անվանել է «Հայկական Կուր-Արաքսյան մշակույթ»<sup>12</sup> նշելով, որ դրա ազդեցությունը հասել է մինչև Դնեստր գետի ավազանի *Տրիպոլյան մշակույթը*, որի հնավայրերում հայտնաբերված հողի պաշտամունքի հետ կապված կանացի արձանիկների պատկերում որոշ հետազոտողներ տեսնում են *արմենոիդ* (Armenoid) մարդաբանական տիպին բնորոշ յուրահատուկ գծեր<sup>13</sup>:

Դ. Լանգը, կիրառելով իր կողմից մշակված տերմինաբանական չափանիշները, օգտագործում է «Հայկական Վաղ բրոնզի դար», «Հայկական Միջին բրոնզի դար», «Հայկական Ուշ բրոնզի դար» և «Հայկական Երկաթի դար» տերմինները («Armenian Early Bronze Age», «Armenian Middle Bronze Age», «Armenian Middle and Late Bronze Age», «Armenian Iron Age»)<sup>14</sup>: Այսպիսով, քաղաքակրթական գործոնները նա դիտում է Հայաստանի հնագույն պատմության առանցքում:

Անդրադառնալով Մարիա Գիմբուտսաի «կուրգանային» վարկածից<sup>15</sup> բխող հնդեվրոպական ցեղերի (հյուսիսային Մերձսևծովյան տափաստաններից) դեպի խնդրո առարկա տարա-

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 76:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 76, 78: Օրինակ «Այս հիասքանչ դիլիջանյան անոթի զարդարումը վկայում է Հայկական Բրոնզի դարի մեկ այլ կարևոր հատկանիշի մասին՝ դիցուք, երկրի հույժ առաջադիմած դիրքին անվավոր փոխադրամիջոցների և մարտակառքերի բնագավառում... Էդիբուրգի համալսարանի պրոֆ. Ս. Պիգոթը և Բրիտանական թանգարանի դոկտոր Ռ. Բարնեթը արևմտյան այն հնագետների թվին են պատկանում, որոնք տեղում հետազոտել են Հայկական Բրոնզի դարի այս կառքերը» (նույն տեղում, էջ 82-83):

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 76:

ծաշրջան մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի գաղթին՝ Լանգը միննույն ժամանակ Վաղ բրոնզի դարի ակներով կառքերի ստեղծողներ է նշել «հայերի նախնիներին»<sup>16</sup>: Հնագույն ժամանակներից սկսած պատմության շարադրանքում Լանգը կիրառել է *Հայաստան* երկրանունը: Դրանով իսկ, նրա պատմագիտական հայեցակարգը հնարավորություն է տալիս ամբողջականության մեջ դիտարկել Հայաստանի հնագիտական տվյալներով վավերացված մշակութային պատմությունը հնագույն ժամանակներից:

Դ.Մ. Լանգը, Հայոց պատմության մեջ, մեծ տեղ տալով Հայասայի ժամանակաշրջանին նշել է. «Հայերն իրենց կոչում են *Հայք* և իրենց երկիրը՝ *Ջայաստան*»: Հետևելով այն կարծիքին, որ հիմքեր կան այս էթնիկ անունը կապելու խեթական աղբյուրներում հիշատակվող *Հայասայի* հետ<sup>17</sup>, նա այն նշել է Հայաստանի արևմտյան լեռնային մասում, Եփրատի վերին ավազանի շրջանում: Լանգը այնուհետև գրել է. «Հայասայի ժողովրդի լեզուն

---

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>17</sup> Հիմնվելով Հայասային նվիրված հետազոտությունների, սեպագիր սկզբնաղբյուրների, հնագիտական նյութերի և մասնագիտական գրականության վրա՝ Ռ. Ղազարյանը եզրակացրել է. «Բրոնզի դարի ընթացքում Հայաստանի արևմտյան մասը մտավ ակտիվ տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների մեջ Փոքր Ասիայի և Միջագետքի երկրների հետ: Այդ մեծագույնս նպաստեց պետական միավորների ստեղծմանը. Հայասա (Ազգի), Խտուվա (Շոփք) և Ալզի (Աղձնիք): Ուշ բրոնզի դարում Հայասան հզոր պետություն էր Հայկական լեռնաշխարհում: Այն կարող էր դիմակայել Խեթական պետությանը, որը Առաջավոր Ասիայի մեծ տերություններից էր: Քաղաքական, մշակութային և տնտեսական բնագավառներում զգալի փոխհարաբերություններ էին հաստատվել վերջինիս և Հայասայի (Ազգի) թագավորության միջև: Հայասայի (Ազգի) թագավորությունը շնորհիվ իր անկախ քաղաքական իշխանության, տնտեսության և մշակութային արժեքների Հայոց պետականության մասն էր, մեծագույն ներդրում կատարելով Հայոց պատմության մեջ» (Ghazaryan R. P., The development of the Armenian statehood: Kingdom of Hayasa (the XIV-XIII centuries BC), Fundamental Armenology, Issue 1, 2015, pp. 16-20):

ակնհայտորեն ազգակից էր Փոքր Ասիայի հին հնդեվրոպական լեզուներին, այսինքն՝ խեթերենին, լուվիերենին, լյուդիերենին, լիկիերենին և փոյուզիերենին, ու այս կարևոր է, նկատի ունենալով հայերենի՝ հնդեվրոպական մյուս լեզուների հետ ազգակցությունը»<sup>18</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ Լանգը «Ուրարտու» անունը դիտել է թե՛ *Հայաստան* անվանը զուգահեռ և թե՛ որպես թագավորություն՝ «Հայաստանի առաջին ազգապետություն»<sup>19</sup>: Այս կապակցությամբ նա շոշափել է «հայ ազգի ձևավորման» ինդիքը և, կասկած հայտնելով «եկվորության»<sup>20</sup> վարկածի հանդեպ, նշել. «Հնագիտական և լեզվաբանական արդի հայտնագործությունները ցույց են տալիս, որ պարզունակ գաղթի տեսությունը չի կարող համապատասխանել փաստերին: Ուրարտական քաղաքակրթության շատ գծերը մասնավորապես պահպանվել են հին հայկական մշակույթում: «Ուրարտու» անունը երկար ժամանակ գո-

---

<sup>18</sup> Lang D.M., նշվ. աշխ., էջ 114:

<sup>19</sup> Լույն տեղում, էջ 85:

<sup>20</sup> Հայերի «եկվորության» վարկածի քննադատության, Հայկական լեռնաշխարհում հայերի տեղաբնիկության և Հայոց ավելի քան հինգազարամյա պետականության մասին տե՛ս Դանիելյան Է.Լ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի ակունքները, Գիտություն և տեխնիկա, 1990, N4, էջ 1-9: Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Եր., 1992: Դանիելյան Է.Լ., Հայոց պետականությունը և նախարարական համակարգը հնագույն ժամանակներից վաղ միջնադար, Գիտություն և տեխնիկա, 1993, № 9, էջ 5-6. № 10, էջ 4-8: Դանիելյան Է.Լ., Հին Հայոց պետականությունը Առաջավոր Ասիայի երկրների համակարգում, Գիտություն և տեխնիկա, 1994, № 7-9, էջ 5-7: Զուլայան Մ., Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Եր., 1995: Այվազյան Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, էջ 117-121: Մովսիսյան Ա. Ե., Սբրազան լեռնաշխարհը: Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Եր., 2004: Դանիելյան Է. Լ., Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության սն-հրաժեշտությունը, ԼՀԳ, 2010, № 3, էջ 53-74:

յատևեց տարբեր ձևերով Վանի թագավորության անկումից հետո»: Կարևոր է նշել, որ Լանգը *Արարատ* անունը դիտելով որպես «Ուրարտու» անվան նախնական ձև, նշել է. «Իրոք, մինչև այսօր հայկական ազգային գիտակցության կիզակետի՝ Արարատ լեռան անվան՝ լուրջ այլ ձևն է «Ուրարտուն»»<sup>21</sup>:

Դ.Մ. Լանգի աշխատությունում նկատվում է Մովսես Խորենացու երկի վրա հիմնված ավանդական մոտեցում՝ «Վանի հիմնադրման և Ուրարտական թագավորության» ժամանակաշրջանի առումով: Նա գրել է. «Արքայազն Արա Գեղեցիկը կարող է նույնացվել պատմական Արամե կամ Արամու թագավորի (մ.թ.ա. 880-844 թթ.) հետ»<sup>22</sup>:

Այսպիսով, Լանգի աշխատությունում երկու մոտեցում է դիտարկվում Հայաստանի հնագույն պատմության առումով: Քաղաքակրթական հետազոտության մեթոդաբանությամբ Հայաստանի պատմամշակութային պատկերը, հիմնված հնագիտական պեղումներից ստացվող արդյունքների վրա, նա ներկայացնում է ամբողջականության մեջ՝ այն բնութագրելով *Հայկական* տերմինով, սկսած Վաղ բրոնզի դարից: Իսկ էթնիկական պատմությունը շարադրելիս՝ չնայած իր ժամանակ գերակայող հնդեվրոպական ցեղերի *գաղթի տեսությանը*, նա իր հարցադրումներով փորձում է հայերի էթնիկական ծագումնաբանության հարցը լուծել ոչ թե «պարզունակ գաղթի տեսության», այլ էթնո-մշակութային ժառանգության շարունակականության սկզբունքով՝ հատկապես ընդգծելով Հայասայի ժամանակները:

Դ.Մ. Լանգը, հիմնվելով Հերոդոտոսի հաղորդումների վրա, անդրադարձել է Հայաստանի և Աքեմենյան կայսրության միջև

---

<sup>21</sup> Lang D.M., նշվ. աշխ., էջ 112:


<sup>22</sup> Նույն տեղում, էջ 85-86:

եղած հարաբերություններին: Այնուհետև նա նշել է հատկապես Երվանդյանների մայրաքաղաք Արմավիրի բարձրացման կարևորությունը և միջազգային առևտրում Հայաստանի հանգուցային դերը, քանզի այնտեղով էին անցնում հիմնական ուղիները դեպի հյուսիս և հարավ: Գիտնականը մասնավորապես շեշտադրում է հայերի հյուրընկալության հատկանիշը:

Մ.թ.ա. IV դ. երրորդ քառորդից Առաջավոր Ասիայում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխմամբ, Լանգը նշել է, որ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից Հայաստանը դուրս էր սակայն շուտով չկարողացավ խուսափել նոր՝ հունա-արևելյան աշխարհի քաղաքակրթության՝ հելլենիզմի ազդեցությունից և տնտեսական ու սոցիալական նոր փուլ ապրեց՝ շփվելով մի շարք հարևան հելլենիստական երկրների հետ: Հայոց պատմության՝ Մեծ Հայքի և (նրա բնական մասը) Ծոփքի թագավորությունների ժամանակաշրջանի կարևոր առանձնահատկությունը Լանգը համարել է նոր քաղաքների հիմնադրումը և հների վերականգնումը: Քաղաքաշինությունը շարունակվեց նաև Արտաշեսյանների օրոք: Լանգը գրել է Արտաշես I-ի հիմնած Արտաշատի կառուցման գործում կարթագենացի գորավար Հանիբալի ցուցաբերած օգնության մասին:

Հայոց պետականության անընդմեջ զարգացման տեսանկյունից ուշագրավ է Լանգի հետևյալ միտքը. «Արտաշեսը հիմնադիրն էր երրորդ և մեծագույն Հայոց միապետության, շարունակելով Արամեի հիմնադրած (ըստ Մովսես Խորենացու), որպես առաջինը՝ Ուրարտական թագավորությունը և Երվանդյաններինը՝ երկրորդը»<sup>23</sup>:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 125:



Տիգրան Մեծի գահակալության ժամանակաշրջանը հետևյալ կերպ է բնութագրել Դ.Լանգը. «Հայաստանը կարճ ժամանակով հասավ կայսերական հզորության և հաջողության գագաթնակետին Տիգրան Մեծի օրոք... Հայկական գերիշխանությունը շատ առումներով նախընտրելի էր հռոմեականից, որը լավ ճանապարհների և ընդհանուր արդյունավետության հետ մեկտեղ բերեց տնտեսական շահագործում, ստրկություն և քաղաքական հպատակեցում: Տիգրան Մեծի տիրույթները ձգվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրականը, Միջագետքից մինչև Պոնտական Ալպերը... Հարևան երկրները, որոնք ճանաչել էին Տիգրանը՝ որպես «արքայից արքայի» գերիշխանությունը, պարտավորված էին նրան վճարել հաստատված հարկ և ուղարկել օժանդակ զորքեր պատերազմի ժամանակ...»<sup>24</sup>: Տիգրան Մեծի կայսրության կենտրոնում էր իր հիմնած Տիգրանակերտ մայրաքաղաքը<sup>25</sup>:

Մեծ Հայքի թագավորության Արշակունյաց ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության առումով Լանգը կարևորել է Գառնիի պեղումները՝ հատկապես բարձր գեահատելով այնտեղ գտնվող դասական տաճարը<sup>26</sup>: Նա հայկական քաղաքակրթության նախաքրիստոնեական շրջանի առավել ուշագրավ խնդիրներից է համարել հայ հեթանոսության բնույթը: Նկարագրելով Արայի, Աստղիկի, Անահիտի, Տիրի, Արամազդի կերպարները՝ գիտնականն անդրադառնում է նաև Վահագնին, որպես արեգակնային աստվածություն բնութագրող տեսակետին՝ հիմնված Վահագնի երգի վրա<sup>27</sup>:

---

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 130-131:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 123:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 144:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148:

Քրիստոնեության ընդունման պատմությունը Լանգը դիտարկելով որպես հայ ազգի ամենից սիրելի ավանդություններից մեկը՝ նշել է. «Այս սրբազան ավանդությունների գիտելիքն անհրաժեշտ է հայկական որմնանկարների և մանրանկարչության սրբապատկերները հասկանալու համար»<sup>28</sup>:

Արքայական և հոգևոր կառույցների թվում Լանգը հիշատակել է «Հայաստանի ամենից սուրբ քաղաք Էջմիածինը՝ գերագույն կաթողիկոսի»<sup>29</sup> նստավայրը Արարատի տեսարանով: Այն սկզբնապես կոչվել է Վաղարշապատ՝ Վաղարշ I-ի (117-140 թթ.) անունով, որը Արտաշեսյան հարստությանը հաջորդած Արշակունյաց հարստության ներկայացուցիչն էր»<sup>30</sup>:

Հւյ ճարտարապետությանը և արվեստին նվիրված բաժնում Լանգը նշել է, որ հայերը մեծ վարպետներ էին ամրոցների և ռազմական շինությունների կառուցման գործում: Այդ են վկայում Ամբերդը և Կիլիկիայի ամրոցներն ու բերդերը: Իսկ եկեղեցաշինության մեջ Տրդատ ճարտարապետի կառուցած Անիի Մայր տաճարը Լանգը (1001 թ.) համարել է հայ ճարտարապետության գլուխգործոցը:

Լանգը բարձր է գնահատել խաչքարային արվեստը, որպես միջնադարյան հայկական քանդակագործության փառքի դրսևորում, ինչպես նաև մանրանկարչությունը և որմնանկարչությունը<sup>31</sup>: Նա հիացած էր նաև հայ ոսկերիչների ստեղծած զարդերով, որոնք մինչ այսօր մեծ համբավ են վայելում: Լանգը հատուկ

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 155:

<sup>29</sup> Ամենայն Հայոց կաթողիկոս:

<sup>30</sup> Lang D.M., նշվ. աշխ., էջ 123:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 227-228:

անդրադարձել է հայ գորգագործության պատմությանը և հայկական գորգերի՝ աշխարհում տարածմանը:

XIX-XX դարերի հայ գեղանկարիչներից Հովհաննես Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Արշիլ Գորկու, կոմպոզիտորներից՝ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արամ Խաչատրյանի վերաբերյալ մեծ հիացմունքով է արտահայտվել Դ.Լանգը: Կոմիտասի մասին նա, մասնավորապես գրել է. «Կոմիտասի վոկալ ստեղծագործությունները երբեք չեն դադարում զարմացնել և հիացնել իրենց վեհությամբ և ոճով՝ հարուստ հարմոնիայով և երաժշտական նուրբ ներշնչանքով»<sup>32</sup>:

Հնագիտական, պատմագիտական և մշակութաբանական տվյալներին քաղաքակրթական չափանիշներով մոտենալով՝ Լանգը բարձր է գնահատել հին և միջնադարյան Հայաստանում (Մեծ Հայք, Փոքր Հայք, Կիլիկյան Հայաստան) հայ ժողովրդի՝ ճարտարապետության (քաղաքաշինություն, ամրոցաշինություն, տաճարաշինություն և եկեղեցաշինություն), խաչքարային արվեստի և մանրանկարչության, գորգագործության, դրամագիտության, դպրության, գիտության և կրթության (պատմագիտություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն և աշխարհագրություն, աստղագիտություն, մաթեմատիկա) բնագավառներում մշակութակերտ գործունեությամբ համաշխարհային մշակույթի գանձարանը ներդրված արգասիքները:

Հայոց հնագույն և միջնադարյան պատմության հետ մեկտեղ, Լանգն անդրադարձել է նոր և նորագույն ժամանակաշրջաններին, հատկապես ընդգծելով օտար նվաճողների ներխուժումների և տիրապետության, ու հատկապես 1915 թ. Հայոց ցեղասպա-

---

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 261:

նության<sup>33</sup>՝ հայ ժողովրդի և քաղաքակրթության համար աղետավոր հետևանքները:

Դ.Մ. Լանգն իր գիրքը ժամանակագրորեն հասցրել է մինչև 1968 թ., երբ «հայ ժողովուրդը տռնում էր Երևանի հիմնադրման 2750 ամյակը... Այս հոբելյանին մասնակցեցին հազարավոր հայեր ամբողջ աշխարհից և այն վերածվեց ազգային հպարտության և համերաշխության տարրերային դրսևորման: Այս ամենը լավագույնս կանխատեսում է այս հիասքանչ ժողովրդի և նրա՝ մեծ վնասներ կրած, սակայն հավերժ սրբազան երկրի՝ իրոք մարդկության քաղաքակրթության բնօրրանի ապագա ճակատագիրը»<sup>34</sup>:

---

<sup>33</sup> Ինչպես նշել է Դ.Մ. Լանգը, մոտ մեկ ու կես միլիոն արևմտահայեր սպանվեցին Լուսիապատերազմյան ընդհանուր երեք միլիոնից (Տե՛ս ևս այն տեղում, էջ 288):

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 296:

ВКЛАД Д. М. ЛАНГА В ОЦЕНКУ ЦИВИЛИЗАЦИОННОГО  
НАСЛЕДИЯ АРМЕНИИ

*Резюме*

Британский профессор, историк Д. М. Ланг (1924-1991) занимает значительное место среди арменоведов, востоковедов и кавказоведов в исследовании и оценке цивилизационного наследия Армении, будучи автором ряда книг - *Армяне* (1976), *Армения: колыбель цивилизации* (1970, 1978), *Народы возвышенностей: древний Арарат и Кавказ* (1988). Характерной особенностью цивилизационной истории как следует из концепции Ланга является категория культурной преемственности. Высоко оценив цивилизационное значение Армении, Д. Ланг в своей книге *Армения: колыбель цивилизации* отметил: «Древняя страна Армения расположена в высоких горах... Хотя Месопотамия со своими древними цивилизациями Шумера и Вавилона обычно рассматривается вместе с Египтом как основной источник цивилизованной жизни в современном понимании, Армения также может классифицироваться как одна из колыбелей человеческой культуры. Во-первых, как утверждается в Книге Бытия, Ноев ковчег остановился на вершине горы Арарат, в самом центре Армении... Армения требует нашего внимания как один из основных очагов древней металлургии, берущей начало, по крайней мере, пять тысяч лет назад. Позднее Армения стала первым обширным царством, принявшим христианство как государственную религию, являясь зачинателем того стиля церковной архитектуры, который предвосхищает нашу собственную западную готику».

THE CONTRIBUTION OF D. M. LANG TO THE APPRECIATION  
OF ARMENIA'S CIVILIZATIONAL HERITAGE

*Summary*

The British Professor David Marshall Lang (1924-1991) occupies a distinct place among the Armenologists, Orientalists and Caucasiologists, dealing with the appreciation of Armenia's civilizational heritage, having authored a number of books - *The Armenians* (1976), *Armenia: Cradle of Civilization* (1970, 1978), *The Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus* (1988). A specific feature of civilizational history is the category of cultural continuity, as follows from Lang's concept. Having highly appreciated the civilizational significance of Armenia, D. Lang noted in his book *Armenia: Cradle of Civilization*: «The ancient land of Armenia is situated in the high mountains... Although Mesopotamia with its ancient civilizations of Sumeria and Babylon, is usually considered together with Egypt as the main source of civilized life in the modern sense, Armenia too has a claim to rank as one of the cradles of human culture. To begin with, Noah's Ark is stated in the Book of Genesis to have landed on the summit of Mount Ararat, in the very centre of Armenia.... Armenia has a claim on our attention as one of the principal homes of ancient metallurgy, beginning at least five thousand years ago. Later on, Armenia became the first extensive kingdom to adopt Christianity as a state religion pioneering a style of Church architecture which anticipates our own Western Gothic».

**ՀԱՅԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ, ՔՐԻՍՏԱՓՈՐ ԽԱՉԱՆՈՎ  
ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ**

**ԳԵՐՄԱՆԱՑԻ ԵՐԿՐԱԲԱՆ ՀԵՐՄԱՆ ԱՔԻԽԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ**

Աշխարհահռչակ երկրաբան և բնախոյզ Օտտո Հերման Աբիխը (Otto Wilhelm Herman von Abich, 1806, Բեռլին – 1886, Վիեննա, թաղված է Գերմանիայի Ռայնլանդ Պֆալց շրջանի Կոբլենց քաղաքում) հիրավի համարվում է Կովկասի և Հայկական լեռնաշխարհի «երկրաբանության հայրը» և ժամանակին դասվել է համաշխարհային մեծության երկրաբանների առաջին տասնյակում<sup>1</sup>:

Ականավոր գիտնականը ծնվել է լեռնային ճարտարագետ-խորհրդատու Վիլհելմ Աբիխի և Յոհաննա-Վիլհելմինա Կլապրոտի ընտանիքում: Նրա մորական պապը՝ աշխարհահռչակ քիմիկոս, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր և Սանկտ-Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի պատվավոր անդամ Մարտին Կլապրոտն էր (Klaproth Martin Heinrich, 1743-1817), որը ուրանի, տիտանի, ցիրկոնի, ցերիումի և մի շարք այլ քիմիական տարրերի և մետաղների առաջին հայտնագործողն է<sup>2</sup>:

Հերման Աբիխի քեռին՝ պրոֆեսոր Յուլիուս Կլապրոտը (1783 Բեռլին-1835 Փարիզ), արևելագետ, կովկասագետ, մի քանի ասիական լեզուների փայլուն գիտակ էր<sup>3</sup>: Այսպիսով, մանուկ

---

<sup>1</sup> St u Волкова С.П., Тихомиров В.В., Жизнь и труды Г.В. Абица. Очерки по истории геологических знаний, вып. 8, М., 1959, էջ 177:

<sup>2</sup> St u Волков В.А., Вонский Е.В., Кузнецов Г.И., Выдающиеся химики мира: Биографический справочник, М., 1991, էջ 206-207:

<sup>3</sup> St u Энциклопедический Словарь Брокгауза и Ефрона, т. 15, С.-Петербург, 1895, էջ 292:

հասակից մոտիկից շփվելով այդ երկու աշխարհահռչակ գիտնականների հետ՝ երիտասարդ Հերմանը ստացել է յուրօրինակ փայլուն տնային կրթություն և երկար ժամանակ չէր կարողանում կողմնորոշվել իր հետագա մասնագիտության ընտրության հարցում՝ հմտանալ հումանիտա՝ ը, թե՛ բնական գիտության ասպարեզում: Երևի թե այդ է պատճառը, որ սկզբից նա ընդունվում է Հեյդելբերգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, սակայն 2 տարի այնտեղ ուսանելուց հետո թողնում է այն և ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժանմունք, որտեղ մեծ ոգևորությամբ և ջանասիրությամբ ուսումնասիրում է երկրաբանություն, հանքաբանություն (միներալոգիա), աշխարհագրություն, ոչ օրգանական քիմիա:

Այստեղ տաղանդավոր երիտասարդ ուսանողին մեծագույն բախտ է վիճակվում ուսուցանելու համաշխարհային գիտության ասպարեզի ռահվիրանների մոտ: Արիստոս փիլիսոփայություն է դասավանդել մեծն Գեորգ Հեգելը (1770-1831), պատմություն՝ Լեոպոլդ ֆոն Ռանկեն (1795-1886), աշխարհագրություն՝ «համեմատական աշխարհագրության» համաշխարհային դպրոցի հիմնադիր Կարլ Ռիտտերը (1779-1859) և «XIX դարի Արիստոսել» աշխարհահռչակ բնագետ Ալեքսանդր Հումբոլդտը (1769-1859), գեոգլոգիա (այն ժամանակ երկրաբանությունն այդպես էր կոչվում)՝ Բեռլինի և Փարիզի գիտությունների ակադեմիաների իսկական անդամ և Սանկտ-Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ,

համաշխարհային ժամանակակից երկրաբանության հիմնադիր-ներից մեկը՝ Լեոպոլդ ֆոն Բուխը (1774-1853)<sup>4</sup>:

Իր ուսուցիչ Բուխի հորդորով երիտասարդ շրջանավարտը մեկնում է Իտալիա, որտեղ մի քանի տարի շարունակ հանգամանորեն ուսումնասիրում է այդ երկրի հանգած և գործող հրաբուխների՝ Վեզուվի, Էթնայի, Ստրոմբոլի երկրաբանական կառուցվածքը, որի ընթացքով հմտանում է հրաբխագիտության ասպարեզում: Այդ ուսումնասիրությունների արդյունքում երիտասարդ գիտնականը 1836-1842 թթ. տպագրում է Իտալիայի հրաբխականության բարդ և խրթին հարցերին նվիրված 10 լուրջ գիտական հոդված, որոնցից երկուսը գերմաներենից թարգմանվում են ֆրանսերեն, շվեդերեն և լայն ճանաչում բերում հեղինակին: Արդեն իսկ գիտական շրջանակներում հեղինակություն ձեռք բերած երկրաբանին ռուսական կառավարությունը, նրա ուսուցիչ մեծն Ալեքսանդր Հումբոլդտի միջնորդությամբ, 1842 թ. հրավիրում է դասախոսական աշխատանքի Դորպատի (ներկայիս Տարտուի, Էստոնիա) համալսարանի հանրաբանության ամբիոնի օրդինար պրոֆեսորի պաշտոնում<sup>5</sup>: Սակայն այդ պաշտոնում Հ. Աբիխին վիճակված էր աշխատել ընդամենը 2 տարի՝ մինչ 1844 թ. սկիզբը:

Այդ տարիներին միջազգային բնագիտական հանրության և մասնավորապես ռուսական բնագետների հետաքրքրությունների կիզակետում էր գտնվում բիբլիական Արարատ լեռան 1840 թ. հուլիսի 2-ի կործանարար երկրաշարժի առաջացման պայման-

---

<sup>4</sup> St' u Молявко Г.И., Франчук В.П., Куличенко В.Г., Геологи, географы биографический справочник, Киев, 1985, էջ 51, 91-92, 226. Волкова С.П., Тихомиров В.В., Жизнь и труды Г.В. Аби́ха, էջ 178:

<sup>5</sup> St' u Волкова С.П., Тихомиров В.В. Жизнь и труды Г.В. Аби́ха, էջ 179; Богачев В.В., Герман-Вильгельм Аби́х - «Отец Кавказской Геологии». - Труды Геологического Института АН Азерб. ССР, 1939, т. XII/63, էջ 8:

ների բացահայտումը, և, բնականաբար, այդ հարցը չէր կարող վրիպել երիտասարդ երկրաբանի տեսադաշտից մանավանդ այն հանգամանքից հետո, երբ Ռուսաստանի լեռնային ճարտարագետների կորպուսի շտաբը պաշտոնապես դիմում է գիտնականին, որպեսզի նա հայտնի իր կարծիքը՝ երկրաշարժի հետևանքների տեղում իր կողմից կատարվելիք դաշտային ուսումնասիրությունների հնարավորության մասին: Աբիխն ամենայն հետաքրքրվածությամբ արձագանքում է այդ առաջարկին և արդեն 1843 թ. մարտին պատրաստում է մի պաշտոնական փաստաթուղթ՝ Հայաստանում իր հնարավոր ուսումնասիրությունների մասին: Օգոստոսին նա Դորպատի համալսարանում ներկայացնում է մի հրապարակային, լայնածավալ գիտական աշխատություն՝ «Հայկական բարձրավանդակի երկրաբանական բնույթը» թեմայով, որը հրատարակվում է նույն թվականին 68-էջանոց մի աշխատության տեսքով՝ *Über die geologische Natur des armenischen Hochlandes, Dorpat, 1843, 1. Karte.*

Ուշագրավ է, որ դեռևս եղած չլինելով Հայաստանում, տակավին երիտասարդ գիտնականն այս աշխատությունում քննական վերլուծության է ենթարկում մինչ այդ Հայաստանում ուսումնասիրություններ կատարած հանրահռչակ բնագետներ, Սանկտ-Պետերբուրգի ակադեմիայի ակադեմիկոս Իոհան Գյուլդենշտեդտի (1745-1871), Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարոտի (1791-1841), հայտնի ֆրանսիական հնագետ և բնախույզ Դյուբուա դե Մոնպերեի (1789-1850) և այլոց գիտական աշխատությունները, առաջին անգամ համաշխարհային գիտական շրջանառության մեջ է մտցնում *Armenisches Hochland* Հայկական լեռնաշխարհ կամ Հայկական բարձրավանդակ, ֆիզիկա-աշխարհագրական եզրույթը, որն այդպես է անվանում ի պատիվ

այդ ընդարձակ տարածքը մշտապես զբաղեցրած տեղաբնիկ հայ ժողովրդի<sup>6</sup>:

Հետագայում՝ 1844-1872 թթ., ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով տարածաշրջանի գրեթե բոլոր, նույնիսկ դժվարամատչելի անկյունների երկրաբանությունը և աշխարհագրությունը, Հ. Աբիխը լեռնաշխարհի հյուսիսարևմտյան սահմանը անցկացնում է ճորոխ գետի վերին հոսանքի ավազանով՝ Բաբերդ քաղաքից քիչ հյուսիս տեղակայված Տրապիզոնի և Լազիստանի լեռների հարավահայաց և հարավարևելյան լանջերով՝ մինչև Բաթումի քաղաք<sup>7</sup>:

Ներկայումս Հայկական լեռնաշխարհի հյուսիսային սահմանն ընդունված է անցկացնել Սև ծովի հարավային ափագծով, ապա՝ Մոսկիթյան (Մեսխեթի) և Թոեղքի (Թրիալեթի) լեռնաշղթաների արտաքին հյուսիսային ստորոտներով, այսինքն՝ Փոքր Կովկասի հյուսիսարևմտյան հատվածի արտաքին լանջի ստորոտով, որը մասնավորապես համընկնում է Բաթում-Բորժոմ-Մցխեթ ուղեգծին<sup>8</sup>: Ինչ վերաբերում է լեռնաշխարհի հյուսիսային սահմանին, ապա գերմանացի գիտնականը նշում է, որ Հայկական լեռնաշխարհի մեջ է ներառվում նաև ամբողջ Փոքր

---

<sup>6</sup> Տե՛ս Мелик-Адамян Г.У., Хачанов Х.В., Герман Абих - первооткрыватель «Армянского Нагорья».- журнал «Апарат», 2010, էջ 116; Melik-Adamyan H., Khachanov S., Investigations by the German geologist H. von Abich in Armenia. Newsletter INHIGEO, 2011, № 43, pp. 48-51.

<sup>7</sup> Տե՛ս Абихъ Г., Геология армянского нагорья. Западная часть, перевод Б.З. Коленко, Пятигорск, 1899, с. 1-17.

<sup>8</sup> Տե՛ս Գաբրիելյան Հ.Վ., Հայկական լեռնաշխարհ, Եր., 2000, էջ 13: Զոհրաբյան Լ.Ն., Հայկական լեռնաշխարհը և նրա լեռնագրական միավորները.- Известия АН Арм ССР. Науки о Земле, 1972, N 2, էջ 64; Бойнагрян В.Р., Рески и речные долины Армянского нагорья, Е., 2009, с. 7; Халатов В.Ю., Природные и историко-культурные границы региона «Армянское нагорье».- Известия РАН, Серия Географическая, 2008, № 3, էջ 117.

Վոլկասը<sup>9</sup>, իսկ Փոքր և Գլխավոր (Մեծ) Կովկասների միջև հյուսիսային լեռնազրական սահմանագիծը նա անցկացնում է Թրիալթեյան լեռների հյուսիսարևմտյան ճյուղավորությամբ<sup>10</sup>: Այսպիսով, համադրելով Արիխի սահմանագատումները վերը նշված հայտնի հայ աշխարհագետների մեկնաբանությունների հետ՝ կարելի է համոզվել, որ գերմանացի գիտնականի՝ Լեոնաշխարհի հյուսիս-արևմտյան և հյուսիսային սահմանների մասին եղած պատկերացումները գրեթե չեն տարբերվում ներկայումս ընդունված սահմաններից: Լեոնաշխարհի հարավային սահմանը Արիխը եւս հստակ ուրվագծում է արևմտյան Տիգրիսի վերին ծոսանքի ավազանով<sup>11</sup>, որն, ինչպես հայտնի է, սկիզբ է առնում Խարթերդ քաղաքից մոտ 30 կմ հարավ-արևելք տեղակայված Մովք լճից<sup>12</sup> և, հոսելով հարավարևելյան ուղղությամբ, Դիրաբեքիի մոտից կտրուկ թեքվում է դեպի արևելք, որից հետևում է, որ բարձրավանդակի հարավային սահմանը Արիխն անցկացնում է Մարդինի լեռների (Բաթման քաղաքից քիչ հարավ) հյուսիսահայտնի լանջերով:

Մեկ այլ տեղ գիտնականը նշում է Բարձրավանդակի տավուտյան մասի վերաբերյալ, ընդհանրապես<sup>13</sup>, որից կարելի է եզրակացնել, որ խոսքը Արևելյան կամ Հայկական Տավրոսի մասին է, որն ինքնուրույն սահմանագատվում է Արևմտյան Եփրատով: Այսինքն, հարավային սահմանը Արիխն անցկացնում է մոտավորապես Վանա լճից հարավ՝ Բաթման-Մերվանե-Սալմաստ-Սոֆիան-Թավրիզ կորագծով:

<sup>9</sup> Տե՛ս Աбихъ Г., Геология армянского нагорья, էջ 2:

<sup>10</sup> Տե՛ս Առյկն տեղում, էջ 8:

<sup>11</sup> Տե՛ս Առյկն տեղում, էջ 2:

<sup>12</sup> Տե՛ս Бойрагрян В.Р., Реки и речные долины Армянского нагорья, էջ 59:

<sup>13</sup> Տե՛ս Աбихъ Г., Геология армянского нагорья, էջ 16:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան եզրը, որի սահմանագատումն առ այսօր էլ համարվում է առավել խնդրահարույց և ոչ հստակ<sup>14</sup>, Հ. Աբիխն անցկացնում է Եփրատ գետի սվազանով, որի ամենաարևմտյան ծնկաձև հատվածը, ինչպես հայտնի է, տեղակայված է Մալաթիա քաղաքից մոտ 110 կմ հյուսիս՝ 38° միջօրեականից քիչ արևելք՝ ներառելով Արևմտյան Հայաստանի նահանգները (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի) ամբողջապես և Խարբերդի ու Տրապիզոնի նահանգների գերակշռող արևելյան հատվածը, ինչպես նաև Սեբաստիայի նահանգի մի աննշան՝ հյուսիսարևելյան հատվածը:

Այսպիսով, «Հայկական լեռնաշխարհ» ֆրզիկա-սոցիալ-հագրական եզրույթի Հ. Աբիխի սահմանումը և գիտական քննադատության մեջ այս հասկացության ներկայիս լայն կիրառումը, բացի կարևոր բնագիտական, աշխարհագրական նշանակություններից, կարելի է համարել գերմանացի գիտնականի ամենամեծ նվաճումներից մեկը հայագիտության ասպարեզում: Այս հանգամանքը առավելապես կարևորվում է նաև նրանով, որ Հ. Աբիխը բացարձակապես ոչ մի կախվածություն չուներ այս կամ այն երկրի վարած քաղաքականությունից, աչքի էր ընկնում իր խիստ արտահայտված անաչառությամբ ու երբևիցե չէր վախենում բացահայտ արտահայտել նաև քննադատական կարծիքներ այս կամ այն հարցի շուրջ: Այդ է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ հիանալով և ուսումնասիրելով Գեղարդի, Կեչառիսի և մյուս վանքերի ճարտարապետությունը՝ Աբիխը, բացարձակ չկաշկանդվելով և բնագետին հարիր ուղղամտությամբ, քննադատական բնույթի հայտարարագիր է ներկայացնում Ամենայն հայոց

<sup>14</sup> Տե՛ս Գաբրիելյան Չ.Կ., Հայկական լեռնաշխարհ, էջ 14-15:

կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն՝ Հայաստանի եկեղեցական թանկագին հուշարձանների անփույթ պահպանության վերաբերյալ<sup>15</sup>:

Դեպի հայ ժողովրդի պատմությունը, կենցաղը և ճարտարապետությունը ունեցած մեծագույն հետաքրքրության, հարգանքի և ակնածանքի մասին են վկայում գիտնականի բազում նամակները, գրված Հայաստանից և Վրաստանից, հասցեագրված մորը Յոհաննա-Վիլիելմինային, քույրերին՝ Կլեմենտինային (Օտմեր), Ռոզանային և Էմմային, ինչպես նաև կնոջը՝ Ադելաիդային: Այդ նամակները (Aus kaukasischen Ländern, Reisebriefe von Hermann Abich, Hrsg. von dessen Witwe, Bd. 1-2, Wien, 1896, Bd.1, Briefe aus den Jahren 1842-1853 an seine Eltern und Geschwister, Wien, 1896, XI, Bd.2.; Briefe aus Jahren 1859-1874 an seine Frau, Wien, 1896, IV) գիտնականի այրու՝ Ադելաիդայի ջանքերի շնորհիվ, 1896 թ. երկու ստվար հատորով հրապարակվեցին Վիեննայում, սակայն, ցավոք սրտի, առ այսօր այլ լեզուներով, այդ թվում և հայերեն, չեն թարգմանվել և հասանելի չեն հայ ընթերցողին<sup>16</sup>:

Նամակներում Հ. Աբիխը բազմիցս նշում է հետևյալ բառակապակցությունները՝ «Das wunderbare armenische Volk» (հայոց գոթրոսոսիրաշ ժողովուրդը), իսկ 1849 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսից գրած մի նամակում նշում է. «Ինչպես հնում, հայ ժողովուրդն այժմ էլ շարունակում է պահպանել բնությունից իրեն տրված գերադասությունն Արևելքի մնացած ժողովուրդների հանդեպ»: 1845 թ. մարտի 14-ի իր նամակում հայտնում է. «Հայե-

<sup>15</sup>Տե՛ս մուշեղյան Ա., Շերման Աբիխը և Աբովյանը, Գիտություն և Տեխնիկա, 1985, N 12, էջ 30:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 34: Волкова С.П., Тихомиров В.В., Жизнь и труды Г.В. Абиха, էջ 230.

րը կազմում են Թիֆլիսի բնակչության կեսից ավելին և, անկասկած, նրանք իրենց ազգային նկարագրով ավելի բարձր են, քան տեղի վրացիները»<sup>17</sup>: 1866 թ. սեպտեմբերի 15-ի իր մյն ստամբուլում, տպավորված Լոռվա բնությամբ և վեհասքանչ ճարտարապետությամբ, նա նշում է. «Հրաշալի երկիր է հինավուրց Հայաստանը: Բնության ձեռքով ստեղծված գեղեցիկի և ինքնատիպի կողքին այստեղ մենք տեսնում ենք պատմական գրավիչ անցյալի բազմաթիվ հիշատակարաններ: Հիշատարականներ, որոնք անցորդի առջև դուրս են գալիս ամեն քայլափոխի, այս վիպական հովիտների մեջ խոհուն գեղեցկությամբ աչքի զարնող ճարտարապետական բեկորներ, վիմագիր, անթիվ արձանագրություններ»<sup>18</sup>:

Հայկական լեռնաշխարհում 1844-1872 թթ. ընթացքում իր կատարած դաշտային երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ Հ. Աբիխը բազմիցս այցելել է Հայկական լեռնաշխարհի անբակտելի արևելյան մասը կազմող Արցախ և Նախիջևան: Առաջին անգամ գերմանացի գիտնականն այստեղ ուղք է դնում դեռևս Խաչատուր Աբովյանի հետ իր շրջագայությունների ժամանակ՝ 1844 թ. ապրիլի վերջ - սեպտեմբերի վերջ, Երևան-Նախիջևան-Հին Ջուղա-Ագուլիս-Ղարաբաղ երթուղով<sup>19</sup>: Երկրորդ անգամ գիտնականն Արցախ է այցելում 1849 թ. և ուսումնասիրում Թարթառ (Տերտեր) գետի ավազանի երկրաբանական կառուցվածքն ու իր հիացական տպավորությունները թողնում Դա-

<sup>17</sup> Շախկյան Գ., Հերման Աբիխը և Հայաստանը, Հայոց պատմության հարցեր, հ. 10, Եր., 2009, էջ 127:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>19</sup> Տե՛ս Հակոբյան Ա., Խաչատուր Աբովյանի առևտրությունները Հայաստան այցելած եվրոպական գիտնականների հետ, ՊԲՀ, 2012, N 1, էջ 128:

դիվանքի հոյակերտ ճարտարապետության մասին<sup>20</sup>: Առավել հանգամանալից և մանրամասն Արցախի տարածքը Հ. Աբիխն ուսումնասիրել է 1850-ական թթ. վերջերին Երևան -Նախիջևան - Գորիս - Բերձոր - Շուշի - Վազգենաշեն -Եվլախ -Թբիլիսի երթուղով, որտեղ կատարել է ինչպես բազմաբնույթ երկրաբանական, այնպես էլ հնէաբանական և կենսաշերտագրական ուսումնասիրություններ: 1866 թ. ամռանը և աշնանը չորրորդ անգամ է այցելել Արցախ վերը նշված գրեթե նույն երթուղով, սակայն այս անգամ Շուշիից Եվլախ հասել է Վազգենաշեն գյուղով՝ կտրելով Քարքար և Խաչեն գետերի միջև եղած ջրբաժանը: Հատկանշական է, որ Հայաստանի մշակույթի և պատմության նկատմամբ գերմանացի գիտնականի մեծագույն հարգանքի ու հետաքրքրության մասին կարելի է եզրահանգումներ անել ոչ միայն Աբիխի բացահայտ և հրապարակային արտահայտություններից, այլև նրա կողմից անմիջականորեն հայտնաբերված ու իր գործընկերների օգնությամբ գիտության համար նոր բրածո ձևերի անվանակոչումներից:

Այսպես, Հին Ջուղայի աշխարհահռչակ հայկական միջնադարյան գերեզմանատեղիից ոչ հեռու գտնվող Դարաշամբ տեղավայրից մոտ 253 մլն տարի վաղեմության Վերին պերմի հասակի ապարներից (Ջուղայի հորիզոն) հայտնաբերված, գիտության համար նոր բրածո զլիտտանու մի ձևի տվել է *Pseudo Titanosaurus (Nautilus) armeniacus* (Abich, 1878) անունը: Հ. Աբիխն այն այդպես

---

<sup>20</sup> Ст'ю Мелик-Адамян Г.У., Хачанов Х.В., Роль академика Германа Абиха в изучении природы и культуры Арцаха (к 200-летию со дня рождения), Ստեփանակերտ, 21-26, հունիս 2006, Եր., 2006, էջ 191:

է անվանակոչել ի պատիվ Հայաստանի<sup>21</sup>, ցանկանալով հստակ ընդգծել այն հանգամանքը, որ Նախիջևանի մարզն ամբողջապես եղել է պատմական Հայաստանի տարածքում և վաղնջական ժամանակներից բնակեցված է եղել հայերով:

Հատկանշական է, որ Աբիխի՝ Արցախի տարբեր շրջանների Վերին կավճի հասակի ապարներից հավաքագրված, Վիեննայում գտնվող հավաքածուում, այլ բրածո անողնաշարավոր կենդանիների շարքում, ֆրանսիական հնէաբան Դ. Անտուլան նկարագրում է բրածո փորոտանու ևս մի նոր ձև, որը դարձյալ՝ ի պատիվ Հայաստանի, 1899 թ. անվանակոչում է *Song Dianella (Valvulina) armeniaca Anthula*, 1899<sup>22</sup>, այս անգամ ընդգծելով այն հանգամանքը, որ Արցախի տարածքը ևս մշտապես Հայաստանի մասն է կազմել:

Այդ նույն տրամաբանությամբ գերմանացի հնաբուսաբան Գեորգ Գուրիխը (1859-1938), հիմնվելով Հ. Աբիխի հասակային թվագրումների վրա (Կավճի համակարգ), արդեն հյուսիսային Արցախի հայաբնակ Փիբ (Ջազլիկ) գյուղի շրջակայքի (ներկայումս Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջան) հրաբխանստվածքային ապարներից հայտնաբերված բրածո մի ծառատեսակ ևս անվանակոչել է ի պատիվ Հայաստանի՝ *Araucarioxylon armeniacum Gurich*, 1855<sup>23</sup>, այս անգամ փաստելով այն հանգամանքը, որ հյուսիսային Արցախը, Գարդմանը ևս շարունակաբար եղել է հայաբնակ և պատմական Հայաստանի տարածքում:

---

<sup>21</sup> St' u Razvitiye i smena morskikh organizmov na rubezhe paleozoya i mezozoya, Труды ПИН АН СССР, т. 108, М., 1964, էջ 162-163:

<sup>22</sup> St' u Rentgarten В.П., Стратиграфия меловых отложений Малого Кавказа, М., 1959, էջ 11:

<sup>23</sup> St' u նույն տեղում, էջ 96-97:

Ամենայն հավանականությամբ, հանուն պատմական արդարության մեկ այլ մեծահամբավ հնէաբան՝ Կազանի և Դորպատի համալսարանների կենդանաբանության և հնէաբանության պրոֆեսոր Էդուարդ Էյխվալդը (1795-1876), Օրդուբադի շրջակայքի Վերին կավճի տուրոնի հարկով հասակագրվող (93,9-89,8 միլիոն տարի առաջ ընկած ժամանակահատված) նստվածքային ապարներից Հ. Արիխի կողմից հավաքագրված մի բրածո փորոտանի նոր ձև ևս անվանել է ի պատիվ Հայաստանի՝ *Protocardia armenia Eichwald*<sup>24</sup>: Հ. Արիխի՝ Հայոց պատմության հանդեպ տածած մեծագույն հարգանքի մասին է խոսում նաև գիտնականի համաշխարհային հնէաբանության մեջ այն ժամանակ, հավանաբար և այսօր, իր նախադեպը չունեցող մեկ այլ որոշում՝ անվանակոչելու բրածո գտածոյի նոր ձև ի պատիվ այս անգամ ոչ թե երկրի, այլ՝ միջնադարյան հայկական իշխանական հանրահայտ Օրբելյանների տոհմի:

Ներկայիս Նախիջևանի տարածքի հին հայկական Արծաթավան գյուղի շրջակայքից (Նորավանքից մոտ 12 կմ արևմուտք), Վերին դևոնի ֆամենի հարկով թվագրված (372-359 միլիոն տարի առաջ ընկած ժամանակահատված) նստվածքային ապարներից գերմանացի գիտնականը հայտնաբերել և նկարագրել է բրածո ուստտանու գիտությանն անհայտ մի նոր ձև՝ *Cyrtopsis (Spirifer) orbelanis Abich, 1858*՝ ի պատիվ Օրբելյան իշխանական տոհմի: Այս որոշման աննախադեպությունը բացատրվում է նրանով, որ համաշխարհային հնէաբանության մեջ ընդհանրապես ինչպես գրված, այնպես էլ չգրված օրենքներով, բրածո նոր տեսակներն ընդունված է անվանակոչել՝ ելնելով նրանց ձևաբանական այս

---

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 212:

կամ այն գերակշռող հատկանիշներից կամ գտնելավայրի տեղանունից (գետ, լիճ, լեռնագագաթ և այլն), կամ էլ ի պատիվ հայտնի բնագետների՝ որպես կանոն հնէաբանների և երկրաբանների, բայց ոչ երբեք իշխանական տոհմերի:

Հետաքրքրական է նշել, որ Աբիխի՝ Օրբեյան իշխաններին նվիրված այս ուստանու տեսակը հետագայում հայտնաբերվել է նաև Ֆրանսիայի, Բելգիայի, Լեհաստանի և Պամիրի Վերին դևոնի հասակի ապարներից<sup>25</sup>:

Այսպիսով, Աբիխի և իր գործընկերների հնէաբանական որոշումների հայկականացման փաստը կարելի է դիտարկել որպես հայազիտության աղբյուրագիտական մի նոր, դեռևս չուսումնասիրված ենթաճյուղ, որը՝ անկախ այլ բազմատեսակ սկզբնաղբյուրագիտական նյութերից, ևս մեկ անգամ եվրոպացի անաչառ բնագետների միջնորդությամբ ապացուցում է հայերի վաղեմի տեղաբնակության փաստն իրենց պատմական հայրենիք Նախիջևանի և Արցախի տարածքներում:

Առանձնակի ուշադրության են արժանի Աբիխի ուսումնասիրությունները Հայաստանի պատմամշակութային կոթողների ճարտարապետության ասպարեզում: Քաջ հայտնի է, որ Ն. Մառի հանրահայտ պատմաճարտարապետական արշավախմբից մոտավորապես կես դար առաջ՝ 1844 թ. աշնանը, Հայաստան առաջին այցելությունից ամիսներ անց, Հ. Աբիխը Խ. Արովյանի հետ մանրամասն հետազոտել և չափագրել է հայոց հինավուրց մայ-

---

<sup>25</sup> St' u Melik-Adamyani G.Y., Khachanov X.B., German Abich - первооткрыватель «Армянского Нагорья», с. 118; Melik-Adamyani H., Khachanov C., Investigations by the German geologist H. von Abich in Armenia. Newsletter INHIGEO 2011, N 43, p. 49; Balinski A., Brachiopods and conodont biostratigraphy of the Famennian from Debnikanticline, Southern Poland. - Paleontologic Polonica Warszawa, 1995, N 54, pp. 1-88.

րաքաղաքի ճարտարապետական կոթողները և կազմել Անիի առաջին հատակագիծը<sup>26</sup>:

Բայց Անիից, իր երկարամյա երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ Հ. Աբիխն այցելել, ուսումնասիրել և մասնակիորեն գծանկարել է պատմական Հայաստանի գրեթե բոլոր քիչ թե շատ հայտնի պատմամշակութային կոթողները, հիացական և ուշագրավ տեղեկություններ թողել Հաղպատի, Սանահինի, Գեղարդի, Տաթևի, Գանձասարի, Դաղիվանքի, Հառիճավանքի, Կարմիր վանքի (Աստապատ կամ Քարատակի վանք Նախիջևանում), Դարաշամբի Սուրբ Ստեփանոսի (Մաղարդավանք Ջուղայից 15 կմ հարավ-արևմուտք, ներկայիս Իրանի տարածք) և այլնի ճարտարապետական և ոճական առանձնահատկությունների մասին<sup>27</sup>:

Ընդհանրացնելով հայկական ճարտարապետության առանձնահատկությունների մասին իր դիտարկումները՝ Հ. Աբիխն իր նամակներից մեկում նշում է. «Բայց ավելին, Հայաստանի այդ մասում իմ տեսած վանքերի ավերակներն արտացոլում են հին հայկական, հաճախ նաև հին իտալական ճարտարապետական ոճերը՝ թափանցելով մինչև արդի, պրոզայիկ ժամանակները»<sup>28</sup>:

Ուշագրավ է, որ այստեղ Հ. Աբիխը զուգահեռներ է անցկացնում հին հայկական և հին իտալական (ռոմանական) ճարտար-

---

<sup>26</sup> Տե՛ս Абиx Г., Ани. В кн.: Пятый археологический съезд в Тифлисе, М., 1879, с. 275-276; Арутюнян В., Город Ани, Е., 1964, էջ 14: Դոլուխանյան Ա., Անի մայրաքաղաքը Խ. Արովանի և նրա ժամանակակիցների զննհատմամբ, ՊԲՀ, 2010. № 1, էջ 49

<sup>27</sup> Տե՛ս Абиxъ Г.В., Геологические наблюдения въ нагорной стране между Курой и Араксом. Записки Кавказского отдела Русского географического общества (пер. с подлинника К.Л. Маркова), М., 1867, с. 48-63; Тихомиров В.В., Геология в России, т. 1, М., 1960, с. 146: Շախսկյան Գ., նշվ. աշխ., էջ 132:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 133:

րապետական ոճերի միջև: Ավելին, չունենալով համապատասխան ճարտարապետական կրթություն՝ մեծ բնագետը ենթագիտակցորեն կարծես կանխագգում է հանրահոշակ ավստրիացի ճարտարապետ Յոզեֆ Ստրժիգովսկու (1862-1941) տասնամյակներ հետո արած ուսումնասիրությունների արդյունքները՝ գետեղված «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» 1918 թ. հրատարակված երկհատոր մենագրության մեջ, համաձայն որի միջնադարում եվրոպական երկրների ողմանական և զոթական ճարտարապետական ոճերի վրա զգալի ազդեցություն է թողել հայկական ճարտարապետությունը<sup>29</sup>:

Գիտությանը մատուցած հսկայածավալ և ծանրակշիռ ավանդի համար Հ. Աբիխը 1866 թ. ընտրվել է Սանկտ-Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, 1879 թ.՝ ռուսական աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ, իսկ 1879 թ.՝ պարզևատրվել այդ ընկերության ամենաբարձր պարգևով՝ Կոնստանտինյան ոսկե մեդալով: Նա 1878 թ. Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ի կողմից պարգևատրվել է Վլադիմիրի II աստիճանի շքանշանով, իսկ 1883 թ.՝ ընտրվել Վիեննայի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան թղթակից-անդամ:

Հատկանշական է, որ մահվանից ընդամենը չորս ամիս առաջ՝ 1886 թ. փետրվարի 16-ին, անվանի գիտնականն իր շխտական գործունեության 50-ամյակի կապակցությամբ անձամբ շնորհավորական նամակ է ստացել Գերմանիայի կայսր Վիլհելմ I-ից (1871-1888)<sup>30</sup>:

---

<sup>29</sup> Տե՛ս Հարությունյան Վ., Գիտնականի անանց երախտիքը (Ժոզեֆ Ստրժիգովսկու մահվան 50-ամյակի առթիվ), Գիտություն և տեխնիկա, 1991, N 7, էջ 40:

<sup>30</sup> Տե՛ս Опись фонда Абиха Германа Вильгельмовича. Библиотека им. Салтыкова-Щедрина, Л., 1969, էջ 2-3, 74.

Կարևոր է նշել, որ Սանկտ-Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում պահվող հսկայածավալ արխիվային նյութերը, բացի Ղևոնդ Ալիշանի Աբիխին ուղղված նամակներից<sup>31</sup>, դեռևս ուսումնասիրված չեն և բացառված չէ, որ այդ հսկայածավալ նյութով հնարավոր է համալրել գիտնական երկրաբանի՝ հայագիտության մեջ ունեցած ուսումնասիրությունների ավանդը:

---

<sup>31</sup> Հակոբյան Պ., Ղևոնդ Ալիշանի նամակները Հերման Աբիխին, ՊԲՀ, 1970, N 2 էջ 124-125:

ГАЙК МЕЛИК-АДАМЯН, ХРИСТОФОР ХАЧАНОВ  
*Институт геологических наук НАН РА*

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ  
НЕМЕЦКОГО ГЕОЛОГА ГЕРМАНА АБИХА  
В АРЦАХЕ И НАХИДЖЕВАНЕ

*Резюме*

Всемирно известный немецкий геолог Герман Абих (1806 Берлин - 1886 Кобленц) - «отец» геологии Кавказа и Армянского нагорья наряду с естественно-научными изысканиями прославился также своими арменоведческими исследованиями. В частности, в 1843 г. Г. Абих впервые ввел в научный оборот физико-географический термин «Армянское нагорье», назвав так обширный регион в честь автохтонного армянского народа, издревле населявшего его. В районе старой Джуги, он нашел новый вид ископаемого верхнепермского головоногого и назвал его в честь Армении *Pseudo titanosaurus (Nautilus) armenicus Abich, 1878*. Другой новый вид ископаемой брахиоподы из верхнедевонских отложений в районе древнеармянского села Арцатаван в Нахиджеванской АР назван *Cyrtopsis (Spirifer) orbelianis Abich, 1858* в честь древнеармянского княжеского рода Орбелянов. Г. Абих также оставил много лестных и хвалебных отзывов о культуре, истории армянского народа и его архитектурных памятниках в Республике Арцах - Гандзасаре, Дадиванке и т.д.

HAYK MELIK-ADAMYAN, CHRISTAPOR KHACHANOV

*Institute of Geological Sciences of NAS RA*

ARMENIAN STUDIES BY GERMAN GEOLOGIST  
HERMAN ABICH IN ARTSAKH AND NAKHICHEVAN

*Summary*

The world-famous German geologist Hermann Abich (1806 Berlin - 1886 Koblenz) - the "father" of the Caucasus and the Armenian Highland geology, in addition to natural science research, became famous for his Armenian studies. In particular, in 1843 H. Abich first introduced to science the physical and geographical term «Armenian Highlands», named so in honor of the indigenous Armenian people since ancient times inhabiting this vast region. In the area of Old Jugha, he found a new species of Upper Permian fossil cephalopod and named it *Pseudo titanosaurus (Nautilus) armenicus Abich, 1878* in honor of Armenia. Another new species of Upper Devonian fossil brachiopods in the area of ancient village Artsatavan in Nakhchivan Autonomous Republic he named *Cyrtopsis (Spirifer) orbelianis Abich, 1858* in honor of the ancient princely family Orbelians. H. Abich also gave a favorable praise of the Armenian culture, history and architectural monuments, such as Gandzasar, Dadivank etc. in the Nagorno-Karabakh Republic (part of ancient Armenian Artsakh region).

## ՀԱՅԱԳԵՏ ԱՆԱՏՈՒԻ ՅԱԿՈՒԲՈՒՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Հայկական միջնադարյան ճարտարապետության և, առհասարակ, միջնադարի տարբեր հարցերի ուսումնասիրության բնագավառում հայագիտության երախտավորներից է Անատոլի Յակոբսոնը: Հիրավի, մեծ գիտնականն իր առանձնահատուկ տեղն ունի օտարազգի հայագետների շարքում, ինչը նրան բերել է պատշաճ գնահատանք և ճանաչում: Նա պատկանում էր Ն. Մառի և Հ. Օրբելու «իմնած կովկասագիտության նշանավոր դպրոցին, և պատահական չէր, որ հատկապես Հ. Օրբելու անմիջական նախաձեռնությամբ և օժանդակությամբ Յակոբսոնն իր գիտական հետաքրքրությունների շարքում ներգրավեց նաև Այսրկովկասը, և ի մասնավորի՝ Հայաստանը: Հ. Օրբելու ղեկավարությամբ Յակոբսոնը բազմիցս եղել է Հայաստանում և մասնագիտացել հայկական միջնադարյան արվեստի և ճարտարապետության բնագավառում<sup>1</sup>: Որպես հնագետ՝ նա մասնակցել է նաև Հայաստանում և Ադրբեջանում կազմակերպված հնագիտական մի շարք արշավների՝ ձեռք բերելով գործնական խորը գիտելիքներ և փաստական կյուր:

Հայաստանի միջնադարյան մշակույթի ուսումնասիրությունների շարքում կարևոր են նաև Ա. Յակոբսոնի հետազոտությունները՝ նվիրված Ներքին Խաչենի իշխանության հոգևոր կենտրոն Գանձասարի վանքին: Խաչենի գահերեց իշխան Հասան-Ջալալի

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան Վ., Անատոլի Յակոբսոն, Հայ ճարտարապետության նվիրյալը. - Պատմա-բանասիրական հանդես, 1998, N 3, էջ 111-112:

կառուցած վանքի գիտական հետազոտումը շրջադարձային երևույթ էր՝ խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից տարվող հակահայ քաղաքականության պայմաններում: Տարիներ անց գիտնականն ափսոսանքով է հիշում, որ Արցախում նա հասցրել է լինել միայն Գանձասարում և անդրադառնալ միայն վերջինիս հետազոտմանը: Ժամանակի սղության պատճառով նա հնարավորություն չի ունեցել անգամ հետևելու 2. Օրբելու հարդույներին՝ անպայման տեղագննելու Գանձասարի շրջակայքը ուր պահպանվել են նշանավոր վանական համալիրին համաժամանակյա հուշարձաններ<sup>2</sup>: Այնուհանդերձ, Յակոբսոնի կատարած ուսումնասիրությունները կարևոր ձեռքբերումներ են Հայոց արևելից կողմանց նյութական մշակույթի ուսումնասիրման և Ադրբեջանցիների վարած օտարացման ու մշակութային բռնության քաղաքականության դեմ տարվող պայքարում:

Նշենք, որ Խորհրդային Ադրբեջանի ստեղծումից ի վեր, նորսուգազ պետության կազմում հայտնված Արցախի հազարավոր հուշարձանները և դրանք կերտած ժողովրդի պատմությունը դարձան Ադրբեջանցի մասնագետների հիմնական գլխացավանքն ու հայագետների հակազդեցության գլխավոր թիրախը: Խորհրդային իշխանության առաջին տարիներին հայ գիտնականներին արգելված էր շոշափելու Արցախին վերաբերվող որևէ հարց, իսկ Ադրբեջանի գիտական հաստատություններում ի սկզբանե գոյություն է ունեցել որդեգրված մի սկզբունք՝ ամեն

---

<sup>2</sup> Գանձասարում Ա. Յակոբսոնը եղել է երեք անգամ՝ Օրեն-կալայում ընթացող պեղումներին մասնակցելու ճանապարհին (տե՛ս Якобсон А., Письма (ред. А. Галасян), Е., 2014, էջ 115, 137):

կերպ շրջանցել Ղարաբաղի թեման<sup>3</sup>: Այդ տարիներին ԼՂԻՄ ի ներսն հարող տարածքների քրիստոնեական բազմաեզանք հուշարձանների գոյությունն աղբրեջանցիների կողմից պարզապես անտեսվում էր: Բաքվի հնագետների կողմից ուսումնասիրության օբյեկտներ էին ընտրվում հիմնականում բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հուշարձանները: Հնագույն մշակույթների ուսումնասիրությունը ԼՂԻՄ տարածքում արվում էր մի կողմից շրջանցելու միջնադարյան հուշարձաններից անբաժան էթնիկ-կրոնական հաճեքերը, մյուս կողմից՝ ի ցույց դնելու երկրամասում ևս կատարվող հնագիտական աշխատանքները և դրանց ձեռքբերումները:

1950-ական թվականներից, երբ զուտ քաղաքական նկատառումներով ստեղծվեց «աղվանական տեսությունը», համաձայն որի աղբրեջանցիները պատմական Աղվանքի ժառանգորդներն ու աղվանների հետնորդներն են, Բաքվի հետազոտողները սկսեցին Կուրի աջափնյակը ներկայացնել իբրև աղվանական տարածք, իսկ այստեղ ապրած և ստեղծագործած ժողովրդին՝ աղվաններ<sup>4</sup>: Այդ ճակատագրին արժանացան իշխան Մահլ Սմբատյանը, պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գուժակեցին, Մխիթար Գոշը և այլոք<sup>5</sup>: «Աղվանական տեսությունը» սպասարկմանը և կեղծ գիտական հիմնավորմանը ծառայելով մի շոց դիտարկվեցին նաև Հայաստանի արևելյան շրջանների քրիս-

<sup>3</sup> Տե՛ս Սաֆարյան Վ., Արցախի մշակութային ժառանգության օտարացման և յուրացման մեթոդաբանությունը աղբրեջանական պատմագիտության մեջ.- Հայագիտական հանդես, Ստեփանակերտ, 2010, N 1, էջ 160:

<sup>4</sup> Տե՛ս Դադայան Ս., Արցախի պատմամշակութային ժառանգությունը.- Հայկական լեոնաշխարհի պատմա-մշակութային ժառանգությունը, միջուկային գիտաժողովի կյութեր, Եր., 2012, էջ 19:

<sup>5</sup> Տե՛ս Буниятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, էջ 12, 81:

տոնեական հուշարձանները: Այդ նկատառումներից ելնելով՝ 1960-70-ական թվականներին ադրբեջանցի մասնագետները սկսեցին անդրադառնալ Արցախի մի շարք նշանավոր վանական համալիրներին՝ փորձելով դրանք ներկայացնել իբրև աղվանական մշակույթի արգասիք՝ պնդելով, որ 10-13-րդ դարերի արցախյան վանքերը ոչ մի առնչություն չունեն հայերի հետ<sup>6</sup>: Բաքվի կողմից տարվող մշակութային բռնագավթման քաղաքականությանը զուգահեռ հայ գիտնականները զրկված էին երկրամասում հնագիտական ուսումնասիրություններ անցկացնելու որևէ հնարավորությունից: Արդյունքում՝ Հայաստանի մաս կազմող Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը մնաց անհասանելի, իսկ զուտ հայկական դիմագիծ ունեցող նյութական մշակույթը՝ չլուսաբանված: Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում Արցախը դուրս մղվեց հայագիտական հետազոտությունների ընդհանուր գործընթացից:

Պատմաքաղաքական նման իրադրության ֆոնին, երբ ադրբեջանցի գիտնականների կողմից հստակ մշակված քաղաքականություն էր տարվում, 1960 թ. «Արևելքի ժողովուրդների արվեստի պատմության հետազոտություններ» ժողովածուում լույս են տեսնում ռուս հետազոտող Ա. Յակոբսոնի ուսումնասիրությունները՝ նվիրված Գանձասարի վանքին<sup>7</sup>: Տեղում կատարած հետազոտությունների արդյունքում գիտնականը մանրամասն ներկայացրել է վանական համալիրի ճարտարապետութ-

---

<sup>6</sup> St u Карапетян С., Состояние армянских исторических памятников в Азербайджане и Арцахе, Е., 2011, с. 3; Ахундов Д., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, էջ 95-203:

<sup>7</sup> Якобсон А., Гандзасарский монастырь XIII в.- Исследования по истории культуры народов Востока, Л., 1960, էջ 144-158:

յունը, նրա զուգահեռները հայկական ճարտարապետական այլ կառույցների հետ, վանքի քանդակներն ու դրանց քրիստոնեական ակունքները: Գանձասարի վանքին անդրադարձած հետազոտողների շարքում Յակոբսոնն առաջինն էր, ով խորությամբ քննել է վանական համակառույցի մանրամասները, քանդակները, խաչքարերը՝ հայտնելով այն միտքը, թե «Գանձասարը հայկական ճարտարապետության հանրագիտարանն է»<sup>8</sup>:

Ա. Յակոբսոնի հետազոտություններն առաջ են բերում Բաքվի պատմաբանների խոբ՝ անհանգստությունը՝ ժամանակի ընթացքում վերաճելով հայ և ադրբեջանցի մասնագետների գիտական առճակատման: Արցախի պատմաճարտարապետական գլխավոր հուշարձանները աղվանացնելու և հայերից օտարելու գործին առավել ակտիվ լծվեցին հնագետ Ռաշիդ Գեյուշեր և ճարտարապետ Դավուդ Ախունդովը: 1973 թ. լույս է տեսնում Ռ. Գեյուշի հոդվածը՝ նվիրված Խաչենի իշխանության հոգևոր կենտրոն Գանձասարին: «Գանձասարի վանքի դավանաբանական-էթնիկական պատկանելիության մասին» վերաառությամբ հոդվածում ակնհայտ է հեղինակի ձգտումն՝ ամեն կերպ հակադրվելու Ա. Յակոբսոնի դիտարկումներին: Հոդվածում Գեյուշեր փորձում է հիմնավորել, թե Գանձասարի վանքը և վանական ամբողջ համալիրը հանդիսանում են ոչ թե հայկական, այլ Կովկասյան Աղվանքի մշակույթի և կրոնի հուշարձան<sup>9</sup>:

Գեյուշի հաղորդումը ստիպում է հայ մասնագետներին լրջորեն մտահոգվելու ստեղծված իրավիճակով: Նրա ուսումնասիրության գիտական սնանկությունը և, առհասարակ, ադրբեջանցի-

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>9</sup> Si' u Gejusev P., О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря. - Материальная культура Азербайджана, т. 7, Баку, 1973, с. 366-368.

ների կեղծարարությունը մերկացնելու նպատակով որոշվում է հանդես գալ նոր հոդվածով: Եվ քանի որ պատասխան հոդվածի առանցքը լինելու էր Գանձասարի վանքը, դրա շարադրումն առաջարկում են խնդրին քաջատեղյակ Ա. Յակոբսոնին: 1977 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Վ. Միքայելյանը՝ Ա. Յակոբսոնին ուղղված իր նամակում նշում է. «Վաղուց հասունացել է սյահը Գանձասարի մասին համակողմանի հոդված հրատարակելու համար: Եվ իհարկե ցանկալի է, որ նրա հեղինակը լինեք դուք, որպես խնդրի հեղինակավոր գիտակ: Կարծում եմ, որ Գեյուշնի խեղաթուրումները չի կարելի թողնել անպատասխան»<sup>10</sup>: Պատասխանը սպասեցնել չտվեց: Նույն թվականին լույս է տեսնում Ա. Յակոբսոնի հոդվածը, որում Գանձասարի վանքի ուսումնասիրությանը նվիրված շարադրանքին զուգահեռ հայագետն անդրադառնում է նաև Ռ. Գեյուշնի դիտարկումներին՝ դրանք անվանելով «անհիմն և հակազիտական»<sup>11</sup>:

Գանձասարի վանքի ճարտարապետությունը, քանդակներն ու խաչքարերը դառնում են նաև հայկական հուշարձաններն աղվանականացնելու մյուս առաջամարտիկ, ճարտարապետ Դ. Ախունդովի «ուսումնասիրության» առարկան: 1983 թ. վրացական արվեստին նվիրված IV միջազգային սիմպոզիումին Դ. Ախունդովը հանդես է գալիս «Աղվանքի վանքերի և հուշայունների վրա դրոշմված ծիսական խորհրդաբանությունն ու աշխարհի պատկերը» վերստորոշյալ գեկուցմամբ, ուր նորից բախվում

<sup>10</sup> Якобсон А., Письма, с. 187-188. Ավելի վաղ նույնարժանի առաջարկությամբ հանդես էր եկել նաև Արցախի պատմության և մշակույթի հետազոտող Բ. Ուլուբաբյանը (տե՛ս նույն տեղում, էջ 63):

<sup>11</sup> Якобсон А., Из истории армянского средневекового зодчества, Гандзасарский монастырь XIII в., Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, № 12, էջ 59-76:

ենք Գանձասարի ինչպես ճարտարապետության, այնպես էլ պատկերագրության մեկնաբանման միտումնավոր խեղաթյուրման փաստին<sup>12</sup>: Հատուկ ուշադրության է արժանի Ախունդովի փորձը վանքի հարթաքանդակներն այլաբանորեն լուսաբանելու ուղղությամբ: Զեկուցման մեջ առանձին գլուխ նվիրված է խաչքարերին, որտեղ հեղինակը խնդիր է դնում բացահայտել հնարածին աղվանական «խաչդաշերի» և հայկական խաչքարերի միջև եղած տարբերությունները:

Ադրբեջանցի հետազոտողներ Ռ. Գեյուշևի, Դ. և Մ. Ախունդովների ու այլոց դիտողությունների և Գանձասարի վանքի ոչ գիտական լուսաբանման հետ կապված՝ Ա. Յակոբսոնը ստիպված է եղել առանձին հոդվածով նորից անդրադառնալ վանական համալիրի ուսումնասիրությանն և ադրբեջանցիների չհիմնավորված հայտարարություններին<sup>13</sup>: 1984 թ. հրատարակված հոդվածում հեղինակը մանրամասն շարադրել է իր ուսումնասիրությունների և արված եզրակացությունների գիտական հիմնավորումն ու ադրբեջանցիների կամայական մեկնաբանությունները՝ եզրակացնելով, որ «Ախունդովների ձգտումը ծայրահեղորեն միտումնավոր է և նպատակամղված է ապակողմնորոշելու ընթերցողներին»<sup>14</sup>:

Ա. Յակոբսոնը հայկական միջնադարյան ճարտարապետության և արվեստի մեծանուն հետազոտողներից էր, միաժամանակ նաև դրանց սկզբունքները նենգափոխելու լճոական և

---

<sup>12</sup> Տե՛ս Աхундов Д., Ахундов М., Культурная символика и картина мира, запечатленная на храмах и стенах Кавказской Албании. - IV международный симпозиум по грузинскому искусству, Тбилиси, 1983.

<sup>13</sup> Տե՛ս Якобсон А., Гандзасарский монастырь и хачкары. Факты и вымыслы. - Պատմա-բանասիրական հանդես, 1984, N 2, էջ 146-152:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 152:

եիմնավոր հերքողներից: Ի թիվս վերոհիշյալ հետազոտությունների՝ նրա գրչին է պատկանում նաև հայկական խաչքարերի ու ուսումնասիրությանը նվիրված կոթողային աշխատությունը, որտեղ նա անդրադարձել է նաև Գանձասարի վանքի խաչքարերին: Հետևաբար, պատահական չէ, որ Հայաստանի միջնադարյան մշակույթի մաս հանդիսացող Գանձասարի վանքի շուրջ ծավալված առճակատումներում ներգրավվում է նաև նշանավոր հայագետը, ում ուսումնասիրությունները չեն կորցրել իրենց գիտական կարևորությունը նաև մեր օրերում:

**ТИГРАН АЛЕКСАНИЯН**

*Институт археологии и этнографии НАН РА*

**ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЕНОВЕДА АНАТОЛИЯ ЯКОБСОНА  
ПРОТИВ АЗЕРБАЙДЖАНСКИХ ФАЛЬСИФИКАЦИЙ**

*Резюме*

В дело изучения средневековой армянской архитектуры и разных вопросов средневековья свою лепту внес заслуженный деятель арменоведения Анатолий Якобсон. В числе исследований средневековой культуры Армении важны также исследования А. Якобсона, посвященные духовному центру княжества Неркин Хачен в Арцахе, монастырю Гандзасар, что являлось революционным явлением в условиях антиармянской политики Азербайджана в те годы.

В данной статье представлена деятельность выдающегося арменоведа против азербайджанских фальсификаций, его усилия, направленные против фальсификации основ армянской средневековой архитектуры и искусства.

TIGRAN ALEQSANYAN

*Institute of Archeology and Ethnography of NAS RA*

THE ACTIVITIES OF ARMENOLOGIST ANATOLY YAKOBSON  
AGAINST THE AZERBAIJANI FALSIFICATIONS

*Summary*

Researches of the prominent armenologist Anatoly Yakobson played an important role in the studies of the medieval Armenian architecture. Among the studies of medieval culture of Armenia, the studies of A. Yakobson dedicated to the religious center of the Nerkin Khachen Princedom in Artsakh - to Gandzasar monastery, are also important. It was a revolutionary phenomenon in the conditions of anti-Armenian policy of Azerbaijan during that period.

This article presents activities of the prominent Armenologist against Azerbaijani falsifications, and his efforts against falsification of the fundamentals of the Armenian medieval architecture and art.

**ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԻ ԵՎ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԱՅԼԱԶԳԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հին հայոց պատմության և մշակույթի տարբեր ոլորտներն արտացոլում են գտել այլազգի բազմաթիվ ուսումնասիրողների հետազոտություններում, որոնցից նախ և առաջ հիշատակման արժանի են տարաբնույթ օտար աղբյուրները, որոնք հրատարակված են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարում (հհ. 1-17, Եր., 1961-2015): Դրանցից հատկապես հունա-հռոմեական աղբյուրները հարուստ նյութ են պարունակում հին հայոց պատմության ու մշակույթի վերաբերյալ, և արժեքավոր են նրանով, որ դրանք հաճախ ակնառեսի վկայություններ են:

Հիշատակելի են հատկապես Հերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի և այլոց աշխատությունները, որոնցում պահպանված նկարագրությունների շնորհիվ հայտնի են դարձել Հայկական լեռնաշխարհը բնակեցնող հիմնական էթնիկ տարրի՝ հայերի, նրանց ընդարձակ երկրի, արքայական իշխանության, հայ հասարակության կյանքի ու կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի, կրոնա-դիցաբանական պատկերացումների, ծիսա-պաշտամունքային առօրյայի վերաբերյալ զանազան մանրամասներ: Դրանցում պահպանված նյութից օգտվել են հետագա շատ հետազոտողներ, և մեծ մասը թարգմանված է բազմաթիվ լեզուներ:

րով, այդ թվում՝ հայերեն<sup>1</sup>: Հերոդոտոսն իր «Պատմության» մեջ, ի թիվս շատ այլ հին ժողովուրդների, տեղեկություններ է հաղորդում նաև արմեն-հայերի, նրանց երկրի՝ Արմենիայի սահմանների և ներքին կյանքի մասին<sup>2</sup>: Քսենոփոնն իր «Անաբասիս»-ում նկարագրում է հայկական որոշ գյուղական բնակավայրեր, կենցաղային մշակույթի մանրամասներ, օրինակ՝ «գարուց պատրաստած գինու» մասին<sup>3</sup>, իսկ «Կյուրոպեդիա»-ում հաճախ հիշատակվում է հայոց թագավորի որդի Տիգրանի անունը, որը Կյուրոսի հասակակիցն ու զինակիցն էր<sup>4</sup>: Աշխարհագիր Ստրաբոնը նկարագրում է հայոց բնաշխարհը, տեղեկություններ հաղորդում նրա բնակիչների միալեզվության մասին, ինչպես նաև վկայում, որ Արմենիան դեռ շատ հնուց հարուստ էր ձիաբուծական արտոններով, և որ աքեմենյանների օրոք Արմենիայի սատրապը պարսից արքային ուղարկում էր տարեկան 20 հազ. մտրուկ՝ միհրական տոների համար<sup>5</sup>:

Ինչ վերաբերում է օտարազգի հետազոտողներին, ապա հայոց նախաքրիստոնեական կրոնի և դիցաբանության հարցերը վաղուց են սկսել հետաքրքրել նրանց՝ դեռևս նախանցյալ դարի վերջերից, երբ Մերձավոր Արևելքի երկրների պատմությունն ու

---

<sup>1</sup> Տե՛ս Herodotus, *Historiarum libri IX*, 1-3, Cambridge, Mass.-London, 1946-1950 (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյան), Եր., 1986); Xenophontis, *Cyropaedia* (recensuit A. Hug), Lipsiae, 1878 (Քսենոփոն, Կյուրոսի կրթություն (թարգմ. Ս. Կրկյաշարյան), Եր., 1970); Xenophontis, *Anabasis* (transl. by C.L. Brownson), Loeb Classical Library, 1922, rev. 1989 (Քսենոփոն, Անաբասիս /թարգմ. Ս. Կրկյաշարյան/, Եր., 1970); Strabonis, *Geographica* (recogn. A. Meineke), v. 1-2, Lipsiae, 1915-25 (Ստրաբոն, Աշխարհագրություն (Ստրաբոնը Հայաստանի և հայերի մասին (թարգմ. Հր. Աճառյան), կազմեց Ս. Հովհաննիսյան, Եր., 2011):

<sup>2</sup> Տե՛ս Herodotus, *Historiarum*, I, 189; I, 194; III, 93; V, 49; V, 52; VII, 73.

<sup>3</sup> Տե՛ս Xenophontis, *Anabasis*, III, 17; IV, 3; IV, III-1; IV, IV; IV-4:

<sup>4</sup> Տե՛ս Xenophontis, *Cyropaedia*, III, 1, 10, 33.

<sup>5</sup> Տե՛ս Strabonis, *Geographica*, XI, 4, 8; XI, 13, 7; XI, 14, 9; XI, 14, 12.

մշակույթը հայտնվեցին եվրոպացի և ռուսաստանցի արևելագետների հետաքրքրության շրջանակներում: Սկզբում դրանք եղել են եվրոպացի արևելագետ-հնագետները, որոնք պատմական Հայաստանի տարբեր հնավայրերում պեղված նյութերի հիման վրա վեր են հանել հին հայոց հոգևոր մշակույթի տարբեր դրսևորումները: Հիշատակության արժանի են Շառլ Տեքսիեի, Ֆրանց Կյումոնի, Պոլ Լագարդի, Վոլդեմար Բելքի և Կարլ Ֆրիդրիխ Լեմանի, Հայնրիխ Հյուբշմանի, Յոզեֆ Մարկվարտի, Ժան-Ժաք Մորգանի, Էֆրաիմ Սպայսերի, Ռիչարդ Բարնեթի, Ջոն Գարսթանգի, Ալբրեխտ Գյոտցեի, Չարլզ Բլեննիի, Ջեյմս Մելլաարտի և այլոց աշխատությունները, որոնցում հեղինակները ընդհանուր արևելագիտական նյութի համապատկերում ավելի կամ պակաս չափով անդրադարձել են հայ մշակույթին ու դրա առանձին տարրերին, այդ թվում և խնդրո առարկա նյութին<sup>6</sup>:

---

<sup>6</sup> St u Texier Ch., *Asie Mineure, Description géographique, historique et archéologique de la Chersonnese d'Asie*, Paris, 1862; Cumont Fr, *Les religions orientales dans le paganisme romain* (C. Bonnet, F. Van Haepereen (eds.)), Turnhout, 2010, Lagarde P., *Armenische Studien*, Göttingen, Dietrich, 1877; Նույնի, *Mysteries of Mithra*, by Franz Cumont (English translation) at sacred-texts.com; Bleck W., Lehmann C. F., *Über neue armenische Keilinschriften*, - *Zeitschrift für Ethnologie*, XXIV, II Heft, Berlin, Verlag von A. Asher & Co., The Getty Center Library, 1892; Hübschmann J. H., *Die Umschreibung der iranischen Sprachen und des Armenischen*. Leipzig, Breitkopf und Härtel, 1882; Նույնի, *Armenische Studien*, Leipzig, Breitkopf und Härtel, 1883; Նույնի, *Armenische Grammatik*, Leipzig, Breitkopf und Härtel, 1895; Marquart J., *Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation*, Berlin-Schöneberg, 1919; Markwart J., *Le berceau des Arméniens*, - *Revue des études arméniennes*, Vienna, 1928, VIII, fasc. 2; Morgan J.-Jacques de, *La préhistorique Orientale*, III, Paris, 1927; Speiser E. A., *Excavations at Tepe-Gawra*, Philadelphia, *Oriental and Biblical Studies*, 1937; Barnett R.D., *The Excavations of the British Museum at Toprak Kale, near Van*, - «Iraq», XII, I, 1950; Garstang J., *Prehistoric Mersin*, 1953; Goetze A. von, *Kleinasiens*, 2 Aufl., Ausgabe, München, 1957; Mellaart J., *Earliest Civilizations in the Near East*, Amazon, 1965.- <https://www.amazon.com/Earliest-Civilizations-Near-James-Mellaart /dp/0070414610>:

Հայոց դիցապաշտական համակարգի ուսումնասիրությունը շարունակել են խորհրդային շրջանի արևելագետ-հայագետները, որոնց հետազոտությունները հիմնված են եղել գլխավորապես Հայաստանում կատարած հնագիտական պեղումների արդյունքում ստացված նյութի վրա: Այդ ուսումնասիրողներից հիշատակության արժանի են Ն. Մառը և Յա. Սմիռնովը, որոնք դեռևս 1930-40-ական թթ. քննության են առել, ի թիվս մշակութային այլ գտածոների, վաղնջական անցյալի քարեդեն վկաներ վիշապ կոթողները՝ բնութագրելով դրանք որպես ջրի, պտղաբերության պաշտամունքը խորհրդանշող հուշարձաններ՝ սփռված Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում<sup>7</sup>:

Սանկտ-Պետերբուրգի էրմիտաժի արևելագետներից Կամիլյա Տրևերը քննության է առել հին Հայաստանի մշակույթը<sup>8</sup>: Իսկ էրմիտաժը երկար տարիներ ղեկավարող Բ. Պիոտրովսկին, որը բազմաթիվ հնագիտական պեղումների է մասնակցել Հայաստանում, մի շարք աշխատություններ է գրել Վանի թագավորության պատմության ու մշակույթի վերաբերյալ, հանգամանալից անդրադառնալով նաև հոգևոր մշակույթին: Իր աշխատություններում նա քննության է առել բիայնական դիցարանի կառուցվածքին, աստվածների պաշտամունքին, տաճարներին, տոներին, ծեսերին առնչվող այլևայլ հարցեր<sup>9</sup>:

---

<sup>7</sup> St' u Mapp H. Я., Смирнов Я. И., Вишапы.- Труды гос. академии истории материальной культуры (Труды Государственной Академии Истории Материальной Культуры, далее - Труды ГАИМК), Л., 1931.

<sup>8</sup> St' u Тревэр К. В., Очерки по истории культуры древней Армении, (II в. до н. э. - IV в. н. э.), М.-Л., 1953.

<sup>9</sup> St' u Пиотровский Б. Б., История и культура Урарту, Е., 1944; Նույնի, Археология Закавказья, Л., Изд. Ленинградского госунта, 1949; Նույնի, Кармир-блур, I-III, Е., 1950-1955; Նույնի, Ванское царство Урарту, М., 1959; Նույնի, Искусство Урарту, Л., 1962; Նույնի, Кармир-блур, Л., 1970.

Հարկ է նշել, որ հատկապես Վանի թագավորության պատմությանն ու մշակույթին շատ են անդրադարձել թե՛ խորհրդային, թե՛ եվրոպական մասնագետները, որոնց հետաքրքրությունը բացատրվում է, ամենայն հավանականությամբ, պահպանված հարուստ նյութով: Այս հին երկրի հարուստ մշակույթի ուսումնասիրողներից են Ա. Հ. Մեյսը, Կ. Լեման-Հաուպտը, Գ. Մելիքիշվիլին, Ի. Դյակոնովը, Պ. Ջիմանսկին, Մ. Սավվինին և շատ ուրիշներ<sup>10</sup>: Այս հեղինակների մեծ մասն Ուրարտուն չի համարել հայկական թագավորություն, իսկ ուրարտական մշակույթը՝ հայկական մշակույթի մի փուլ: Եվ ինչ-ինչ պատճառներով հարցը խճճվել է այնքան, որ այսօր շատ հայագետներ, Ուրարտուի կրոնն ու դիցաբանությունը հայկական չեն համարում: Ավելին, քանի որ ուրարտագիտությամբ հիմա զբաղվում են շատ թուրք գիտնականներ, Ուրարտուի պատմությունը ներկայացվում է որպես թուրքերի հին պատմություն, ուրարտացիներն էլ իրենց նախնիներ (հայկական միջնադարյան մշակույթն էլ ներկայացվում է որպես իրենց քրիստոնյա նախնիների մշակույթ): Ակնհայտ է, որ այս բնագավառում շատ մեծ գործ ունեն անելու մեր ուրարտագետները/բիսյանագետները, որոնցից ոմանք նույն-

<sup>10</sup> St u Sayce A. H., *The Kingdom of Van (Urartu)*, Cambridge, 1925; Lehmann-Haupt C. F., *Armenien einst und jetzt: Reisen und Forschungen*, Bd. 2, Halfte 1-2, Berlin, Behr, 1926-31; Меликшвили Г. А., *Наири-Урарту*, Тб., 1954; Նույնի. *Урартские клинообразные надписи*, М., 1960; Дьяконов И. М., *Ассиро-Вавилонские источники по истории Урарту*.- *Вестник древней истории*, М., 1951, № 2-4; Zimansky P. E., *Urartian material culture as state assemblage: An anomaly in the archaeology of Empire*.- *Bulletin of the American Schools of Oriental Research. The American Schools of Oriental Research*, 1995; Նույնի, *Ancient Ararat, A Handbook of Urartian Studies*, New York, 1998; Salvini M., *Geschichte und Kultur der Urartaer*. — Darmstadt, 1995. Նույնի, *The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic. Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kali, 1989-1998*, Roma, 2001; Նույնի, *Cospus dei testi urartei (CTU)*, Vol. 1-3, Roma, 2008; Vol. 4, Roma, 2012.

պես, ցավալիորեն, համարում են, որ Ուրարտուն Հայաստան չէ, և ուրարտական մշակույթն էլ հայկական չէ: Այստեղ անհրաժեշտ չհամարելով անուններ նշել՝ չենք կարող չասել սակայն, որ բիայնագիտության բնագավառում ներկայիս հայագետների մեծ ու լուրջ աշխատանքի հրատապ անհրաժեշտությունն է զգացվում:

Մեկ այլ խնդիր է հետբիայնական շրջանի համահայկական դիցախմբի աստվածների ուսումնասիրության վիճակը: Այս խմբին նույնպես բավականին շատ հետազոտողներ են անդրադարձել, և արդեն երկար-ժամանակ է, ինչ դրանց մի ստվար մասը հայկական Անահիտ, Արամազդ, Միիր, Վահագն դիցերին համարել է իրանական ծագման: Եվ քանի որ այս խմբի աստվածներն առավել հայտնի են եղել ուսումնասիրողներին, ստեղծվել է այնպիսի պատկեր, որ, իբր, հեթանոս հայերը սեփական աստվածներ չեն ունեցել: Նման մոտեցումները սկսվել են դեռևս 19-րդ դարի եվրոպացի մի շարք ուսումնասիրողներից՝ հետագայում տարածվելով նաև մյուս մասնագետների միջավայրում:

Պարսկամետության առաջին ջատագովներից էր Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Հայնրիխ Գեյցերը, որը «Հետազոտութիւն հայ դիցաբանութեան» գրքույկում գրում է իրանական, ասորական, հելլենական ազդեցությունների մասին հայկական մշակույթի վրա և կարծիք հայտնում, որ հայերը, բացի Վանատուրից, սեփական աստվածներ չեն ունեցել<sup>11</sup>: Գերմանացի մեկ այլ արևելագետ՝ Ֆրիդրիխ Վինդիշմանն էլ պարսկական դիցուհուն է վերագրում հայկական Անահիտի վերաբերյալ նյութերը<sup>12</sup>: Մոսկվայի Լազարյան ճեմարանի պարսկերեն լեզվի պրոֆեսոր Ռ. Շտակելբերգը հենվելով Մտրաբոնի այն հիշատակության վրա, թե

<sup>11</sup> Տե՛ս Գեյցեր Հ., Հետազոտութիւն հայ դիցաբանութեան, Վենետիկ, 1847:

<sup>12</sup> Տե՛ս Windischman F., Die persische Anahita oder Anaitis, München, 1856.

պարսից բոլոր աստվածները պաշտվում էին մարաց և հայոց կողմից, ջանում է ապացուցել պարսկական կրոնի մեծ ազդեցությունը հայոց հավատալիքների վրա<sup>13</sup>: Սակայն Հերոդոտոսի մի հաղորումից կարելի է եզրակացնել, որ պարսիկներն իրենք էին փոխառնում զանազան բարքեր ու երևույթներ օտարներից: Պատմիչը գրում է. «Պարսիկները բոլոր մարդկանցից ավելի հակված են օտար սովորույթները փոխառնելու: Նրանք հազնում են մեղական զգեստ, այն համարելով առավել լավ, քան իրենցը, և պատերազմում կրում են եգիպտական զրահներ»<sup>14</sup>:

Ավելի ուշ շրջանի մասնագետներից շատերը նույնպես տուրք են տվել հին հայոց աստվածների իրանական ծագման թեզին: Արնելագետ Կ. Տրևերն անդրադառնալով Միհրի պաշտամունքին՝ կարծիք է հայտնում, որ այն Հայաստանում առանձնակի տարածում է ստացել միթրայականության ծաղկման ժամանակներում, երբ հնդիրանական Միթրան պաշտվում էր ոչ միայն Պարթևական թագավորությունում ու Հռոմեական կայսրությունում, այլև Հին Աշխարհի մյուս երկրներում, այն ժամանակներում Միթրա անունն ուղեկցում էր արևային աստծուն Փոքր Ասիայի ու Միջագետքի ժողովուրդների մեջ<sup>15</sup>:

Ցավոք, հայոց հին հավատքին պարսկամետ մոտեցումն արձագանք ու շարունակություն է գտել նաև այն ժամանակվա հայ հետազոտողների աշխատություններում: Բ. Սարգիսյանը, Ն. Տա-

---

<sup>13</sup> St. u. Штакельберг Р., Об иранском влиянии на религиозные верования древних армян,- Древности Восточные, т. II, вып. II (под редакцией М. В. Никольского и С. С. Слуцкого), М., 1901; Страбон, География в 17 книгах (Репринтное воспроизведение: текста издания 1964 г.), М., 1994.

<sup>14</sup> Herodotus, Historiarum, I, 135 (հայերեն թարգմանությունը տե՛ս Հերոդոտոս, Պատմություն, էջ 58):

<sup>15</sup> St. u. Тревел К. В., ևշվ. աշխ., էջ 86:

ղավարյանը, Ա. Ղլտճյանը, Ե. Դուրյանը և այս տեսակետի այլ ջատագովներ, որոնք բոլորն էլ հիմնվել են հայոց ու պարսից աստվածների արտաքին նմանության վրա, կարծիք են հայտնել հայոց դիցերի պարսկական ծագման վերաբերյալ՝ չթափանցելով նրանց խորքային բովանդակության մեջ<sup>16</sup>: Նույնիսկ Աստղիկ դիցանունը, որն ակնհայտորեն հայերեն «աստղ» բառն է, սեմական ծագման են համարում՝ համեմատելով նրան Աստարտեի հետ, որի անունը նույն իմաստն ունի:

Անշուշտ, նման մոտեցումների քննադատներ նույնպես եղել են: Պարսկամետության հարցում, ինչպես շատ այլ դեպքերում էլ, առավել խիստ է արտահայտվել Գր. Ղափանցյանը, որը, հենվելով իր ժամանակի նորագույն նյութերի վրա, գրում է. «Մի պատմական դժբախտություն է կախված եղել հայ ֆիլոլոգիայի վրա՝ աշխատել ամեն կերպ հայոց նյութական, թե հոգևոր (այս թվում և լեզվական) մատերիալը պարզաբանել նախ և առաջ իրանական աշխարհով»<sup>17</sup>: Նա իր աշխատություններում համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հայկական մշակույթի շատ երևույթների ակունքներն ու զուգահեռները պետք է փնտրել հարևան երկրների հնագույն էթնիկ միջավայրերում, որպիսիք են շումերականը,

---

<sup>16</sup> Տե՛ս Սարգիսեան Բ., Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890 («Միայն իրանեան ժողովրդոց քով կգտնեք զԱնահիտն իբրեւ նախատիպ հայոց Անահտա», էջ 134): Տաղավարեան Ն., Հայոց հին կրօնները, Կ. Պոլիս, 1909: Ղլտճյան Ա., Հայ հին իրաւունք.- ԱԶ, գ. 24, էջ 37-47: Դուրյան Ե., Հայոց հին կրօնք կամ հայկական դիցաբանութիւնը, Երուսաղեմ, 1933:

<sup>17</sup> Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1945, էջ 90: Պարսկամետությունն իրեն զգացնել է տվել նաև վրացագիտության մեջ, որտեղ նույնպես պայքարել են դրա դեմ Ի. Ջավախիշվիլին գրում է, որ վրաց հեթանոսական կրոնը գտնվել է ոչ թե պարսկական, այլ փոքրասիական ժողովուրդների՝ կապադովկիացիների, փռուգացիների ազդեցության ներքո (История грузинского народа, Тб., 1946, с. 54):

աքքադականը, խեթականը, խուտիականը, իրանականը և այլն, սակայն վեր հանել նախ և առաջ տեղականը:

Մ. Մինասյանն Անահիտ դիցուհուն նվիրված իր մի հոդվածում ավստուսանքով գրում է. «Ղլտճեանը, Բասմաճեանը պետք է ընդունեն, որ Անահիտին պարսկական կամ արիական ծագում ընծայելով ոչ միայն «երիցս սխալներ» են, այլև մոլորեցուցեր են հանրային կարծիքը հայոց ամենէն ինքնատիպ մէկ աստվածուհւոյն մասին, որու ստեղծագործումը ամենամեծ հրաշակերտն է հայ հոգւոյն...»<sup>18</sup>: Նույն դիցուհու մասին ականավոր ազգագրագետ Խ. Սամուելյանը նկատում է, որ Անահիտի պաշտամունքը դեռևս մայրիշխանության ժամանակ է ձևավորվել ու աղերսվում է փոքրասիական, միջագետքյան մշակույթների հետ և ընդհանուր գծեր չունի պարսկական Անահիտի հետ<sup>19</sup>:

Միևի վերաբերյալ ուսումնասիրողների մէկ այլ խումբ, որի մէջ կան թե՛ օտարագգի, թե՛ հայ մասնագետներ, կարծիք են հայտնում, որ Միիր-Միթրայի պաշտամունքը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում է սկզբնավորվել<sup>20</sup>: Ավելին. «...Միիրի առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է Ք. ա. II հազարամյակի կեսին և կապված է Կոմմագենե երկրի հետ, ավելի ճիշտ՝ վերջինիս տարածքում գտնվող երբեմնի Միտաննի պե-

---

<sup>18</sup> Մինասյան Մ., Հայաստանի կուսամայր աստվածուհի Անահիտ.- «Հայրենիք». Բոստոն, 1928, հոկտեմբեր, էջ 105:

<sup>19</sup> Տե՛ս Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա. Եր., 1931, էջ 73:

<sup>20</sup> Տե՛ս Капанцян Гр., Хеттские боги у армян, Е., 1940, с. 31-32; Неронова В. Д., Со-перники христианства: гностицизм и митраизм.- История Древнего Мира. Упадок древних обществ, под ред. И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцицкой, издание 2, М., 1983, с. 255; Մարգարյան Ե., Միիրականությունը Հին աշխարհի կրոնաևեղանակը համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հոռո, Եր., 2014, էջ 134-142:

տության», որի խուռիական աստվածների ցուցակում հիշատակվում է նաև արիական Միթրա-Միթրաշիլը<sup>21</sup>:

Հին հայոց դիցապաշտական համակարգի ձևավորման վերաբերյալ հետաքրքիր տեսակետ է արտահայտել ազգագրագետ Կարեն Մելիք-Փաշայանը, որը համառոտ անդրադառնալով հայոց դիցարանին առհասարակ, կարծում է, որ Հին Հայաստանը, կազմելով Առաջավոր Ասիայի հյուսիսային մասը, իր աշխարհագրական դիրքով հանդիսանում է տարանցիկ մի երկիր, որի վրա, իբրև հանգուցային կետի, շփվում էին Միջագետքի, Փոքր Ասիայի, Կովկասի ժողովուրդները: Այստեղով էին անցնում Հին Աշխարհի առևտրային քարավանները, որոնց հետևում էին աշխարհակալների արշավանքները, և այս ամենի արդյունքում՝ հայ ժողովրդական զանգվածների մեջ թափանցում էին օտարերկրյա աշխարհայեցողության ու մտածողության տարրերը: «Մյուս կողմից, նվաճողները բռնի մտցնում էին իրենց կրոնը և գլխավոր աստվածների պաշտամունքը, նամանավանդ վերնախավի շրջաններում: Այսպիսով, Հայաստանում յուրացվում էին հարավ-արևմուտքից՝ ասորական, արևմուտքից՝ փոքրասիական, խեթական, հարավ-արևելքից՝ իրանական դից ներկայացուցիչները: Այդ այլատարր պաշտամունքի և տեղական հավատալիքների խաչաձևման պրոցեսում գոյանում և կազմակերպվում է հայկական դիցարանը»<sup>22</sup>:

Ներկայումս իրավիճակը քիչ է փոխվել, քանի որ Անահիտ-Արամագդ դիցընտանիքին պարսկական ծագում վերագրելը շարունակվում է: Այս մոտեցման հետևողները հիմնվում են այն փաստի վրա, որ նման անուններով դիցեր եղել են նաև պարսկա-

<sup>21</sup> Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 144:

<sup>22</sup> Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 44:

կան դիցարանում, մասնավորապես Արամազդ-Ահուրա-Մազդա, Անահիտ-Արդվի-Սուրա-Անահիտա, Վահագն-Վերեթրագնա, Միհր-Միփրա և այլն: Ինչի՞ց են գալիս դիցանվանական այս նմանությունները, և արդյո՞ք դրանք միայն հայկական դիցանուններին են հատուկ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանրությունները գալիս են ընդհանուր հնդեվրոպական (կամ հարևան սեմական, կովկասյան) միջավայրում փոխազդեցություններից և հատուկ են ոչ միայն հայկական դիցանուններին: Այսպես, հայկական Վահագնին ու իրանական Վերեթրագնային զուգահեռ է մեկ այլ հնդեվրոպական՝ հնդկական Վրիտրահանը, Միհրին ու Միփրային՝ հնդկական Միթրան և այսպես շարունակ: Նույնանման զուգահեռներ կան այլ հին դիցանունների դեպքում նույնպես, օր. հայկական Արա, հունական Արես, սլավոնական Յարիլո, հայկական Արամազդ, կովկասյան Արմազդի և այլն: Համադրումների այս շարքը կարելի է շարունակել և առավել հանգամանալից ներկայացնել տարբեր ժողովուրդների դիցանունների նմանությունները, սակայն սա արդեն առանձին հետազոտման նյութ է:

Ամփոփելով ու գնահատելով վերը նշված օտարազգի հետազոտողների ներդրումը հայոց նախաքրիստոնեական կրոնի ու դիցաբանության հարցերում՝ նշենք, որ նախ և առաջ դա այն է, որ նրանք ուսումնասիրել են բնագավառը: Մեկուկես հարյուրամյակի ընթացքում լեզվաբանների, հնագետների, մարդաբանների մի քանի սերնդի ջանքերով պատմական Հայաստանի տարբեր հնավայրերում պեղված նյութերի, ինչպես նաև մատենագիր աղբյուրների տեղեկությունների հիման վրա արծարծել են հին հայոց հոգևոր մշակույթի տարբեր հիմնախնդիրները: Իրենց աշխատություններում նրանք, ընդհանուր արևելագիտական նյութի

համապատկերում, ավելի կամ պակաս չափով անդրադարձել են նախաքրիստոնեական պաշտամունքի, դիցարանի, առասպելաբանության, տաճարաշինության և խնդրո առարկա այլ հարցերի՝ որոշակի ներդրում կատարելով հայագիտության այս ոլորտում:

ГОАР ВАРДУМЯН

*Институт истории НАН РА*

**ИЗУЧЕНИЕ ВОПРОСОВ ДРЕВНЕАРМЯНСКОЙ  
РЕЛИГИИ И МИФОЛОГИИ  
В ТРУДАХ ИНОСТРАННЫХ АРМЕНОВЕДОВ**

*Резюме*

Иностранные арменоведы начали заниматься вопросами дохристианской религии и мифологии армян со второй половины 19-го века, когда история и культура стран Передней Азии оказались в кругу интересов европейских и российских востоковедов. В течение полутора веков несколько поколений лингвистов, археологов, антропологов, этнографов и других специалистов изучали самые разные стороны древнеармянской духовной культуры, основываясь на материале из археологических раскопок разных местностей исторической и современной Армении, а также из фольклорных, языковых, письменных и др. источников Древнего Мира. В своих трудах они, в контексте общего востоковедческого материала, в большей или меньшей мере освещали проблемы языческого прошлого Армении, в частности пантеона богов и богинь, их культов и храмов, обрядов и обычаев, таким образом внеся определенный вклад в эту области арменистики.

THE RESEARCH OF ANCIENT ARMENIAN  
RELIGION AND MYTHOLOGY  
IN THE WORKS OF FOREIGN ARMENOLOGISTS

*Summary*

Foreign Armenologists began to investigate the Armenian pre-Christian religion and mythology in the second half of the 19th century, when history and culture of the countries of Western Asia appeared in the circle of the interests of European and Russian orientalists. During one and a half century several generations of linguists, archaeologists, anthropologists, ethnographers and other specialists have studied various sides of ancient Armenian spiritual culture, based on the materials from archaeological excavations of different areas of historical and contemporary Armenia, as well as from folklore, linguistic, written and others sources of the Ancient World. In their works they, in the context of broad Oriental material, in more or less degree, covered the problems of Armenia's pagan past, particularly the pantheon of gods and goddesses, their cults, temples, rituals and customs, thus they made certain contribution to this field of Armenian Studies.

## ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

*Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի հետազոտական  
ինստիտուտ (Մատենադարան)*

### ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կոմիտաս վարդապետը, սկսած Բեռլինում իր ուսումնա-  
նության տարիներից, արտասահմանյան տարբեր երկրներում  
տված համերգ-դասախոսություններով մեծապես նպաստել է, որ  
իբր ժամանակի եվրոպացի հեղինակավոր երգահանների ու  
երաժշտագետների ուճադրությունը սևեռվի մինչ այդ իրենց հա-  
մար անհայտ՝ հայկական միջնադարյան և ժողովրդական  
երաժշտական ժառանգության վրա: Նրա յուրաքանչյուր համեր-  
գից հետո օտար մամուլում լույս էին տեսնում սրտազեղ դրվա-  
տանքներով լեցուն հոդվածներ, որոցում Կոմիտասը մեծարվում  
էր թե՛ որպես կոմպոզիտոր, թե՛ որպես խմբավար, թե՛ որպես  
հրաշալի կատարող:

Հայտնի է, որ 1896-1899 թթ. Բեռլինում բազմակողմանի  
կրթություն ստանալով ու կարճ ժամանակամիջոցում գերմաներե-  
նին տիրապետելով՝ Կոմիտասն իր բովանդակալի դասախոսու-  
թյուններով ուղեկցվող առաջին ելույթներն ունեցել է հենց այդ քա-  
ղաքում: Իր հմուտ և անվանի ուսուցիչներից նա ոչ միայն սովոր-  
ում էր երաժշտական տարբեր առարկաներ, այլև մտքերի բեղմ-  
նավոր փոխանակում էր կատարում գերմանացի անվանի  
երաժշտագետների հետ: Արդարացի կլինի նախ անդրադառնալ  
նրա առաջին ուսուցչին՝ պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտին, ում հետ  
Կոմիտասը հաճախ ստեղծագործական բուռն վեճեր էր ունենում՝  
պաշտպանելով իր հայկական և ինքնատիպ ոճով կատարած ներ-  
դաշնակումները: Պատահում էր, որ Շմիդտը, ճարահատյալ, հա-

մակերպվում էր իր հանճարեղ ուսանողի հետ՝ ասելով. «Եթե դուք համոզված եք, որ այդ ներդաշնակությունը գեղեցիկ է թող ձեր ուզածը լինի»<sup>1</sup>: Հմուտ դասախոսը, կայուն գիտելիքների հաղորդելով իր սանին, միայն բարերար ազդեցություն էր ունենում նրա վրա՝ հարգելով նրա անհատականությունն ու հայեցի մտածողությունը, և երբեք չպարտադրելով Կոմիտասին իր ստեղծագործական ոճը: 1899 թ. Համբուրգի ավարտական հանդեսում պրոֆ. Շմիդտը հանդիսականներին ներկայացնելով Կոմիտասին, պարծանքով բացականչել է. «Կոմիտասն արդեն մի վարպետ է. ես հպարտ եմ նրանով: Ջզում եմ, որ ապրում եմ և ապրելու եմ Կոմիտասի մեջ», ավելացնելով, որ «նա մի մոլեռանդ արևելքցի է, պատրաստ ամեն մեկ նոտայի համար արյուն թափելու»<sup>2</sup>:

Այդ տարիների բեռլինյան շրջանի մասին «Կոմիտասական» ժողովածուի էջերում լույս են տեսել Լայպցիգի երաժշտագետներից Ռայնարդ Շեսկուսի<sup>3</sup> հուշերը: Նա գտնում է, որ արդեն մինչև Բեռլին ժամանելն էր ուրվագծվել Կոմիտասի ժողովրդական երգեր հավաքագրողի և ուսումնասիրողի առաքելությունը: Ինչպես հայտելի է, Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայից բացի, 1896 թ. Կոմիտասն ընդունվել էր նաև Բեռլինի Հումբոլդտի անվան թագավորական համալսարան, որտեղ նրա ուսուցիչներն էին Մաքս Ֆրիդլենդերը, Հայնրիխ Բելլերմանը և Օսկար Ֆլայշերը: Հուշերի հեղինակը գտնում է, որ Կոմիտասի վրա անշուշտ պիտի որ բարերար ազդեցություն թողած լինեին իր հմուտ ուսուցիչների դասախոսություններն ու հետազոտությունները, հատկապես Բել-

<sup>1</sup> Գասպարյան Գ.Ն., Կոմիտաս.- Ժամանակակիցները Կոմիտասի մասին (այսուհետ՝ ԺԿՄ), Եր., 1960, էջ 11:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>3</sup> Տե՛ս Շեսկուս Ռայնարդ, Կոմիտասը Բեռլինում.- Կոմիտասական, 2, Եր., 1981, էջ 25-38:

լերմանի ուսումնասիրությունները և վարժությունները կոնտրապունկտի վերաբերյալ: Դա կարող էր նաև խթան լինել Կոմիտասի համար՝ ժողովրդական երգի մշակման ժամանակ կոնտրապունկտի նրբությունները կիրառելու հարցում: Իսկ անսամբլում գործիքային նվագակցությունը վոկալին ենթարկելու սկզբունքը նույնպես համահունչ էր Կոմիտասի այն համոզմանը, որ հայկական ժողովրդական երաժշտությունը միայն նվագագույն հարմոնիկ համադրության կարիք ունի. «հայ եղանակները, ինչպես և նոցա ոգին պահանջում է ներդաշնակել որքան կարելի է պարզ»<sup>4</sup>, - գրել է նա Բեռլինից իր՝ նամակներից մեկում: Շեսկուսը գտնում է, որ Կոմիտասի վրա առանձնապես մեծ ազդեցություն է թողել իր ուսուցիչներից Օսկար Ֆլայշերը, որի եռահատոր աշխատության առաջին հատորը՝ «Նևմերի ծագման և վերձանման մասին», լույս է տեսել Լայպցիգում հենց 1895 թ.՝ Կոմիտասի Բեռլին ժամանելուց մեկ տարի առաջ, իսկ երկրորդ հատորը՝ «Հին քրիստոնեական ասերգը և նևմերի վերձանումը», հրատարակվեց 1897 թ., երբ Կոմիտասն արդեն Բեռլինում էր: Չի բացառվում, որ Ֆլայշերի այդ հրապարակումները՝ հավանաբար հիմք են ծառայել Կոմիտասի համար՝ հայկական խազերի վերձանման գործում: Այս հատորներում Ֆլայշերը գրել է. «Չնայած, որ հայկական խազերի և հունական առողանության նշանների սերտ կապերն անհերքելի են, սակայն դրանց օգտագործումն այնքան յուրօրինակ է ու ինքնուրույն, որ թույլ չի տալիս հայկական խազերը դիտել որպես

---

<sup>4</sup> Նամակ Մ. Բաբայանին Բեռլինից, ենթադր. 1907 թ., «Советская музыка», 1959, № 10, էջ 81:

<sup>5</sup> Վերոնշյալ հատորները Ֆլայշերի ավելի քան երեսնամյա ուսումնասիրությունների արդյունքն են, որ նևմերի հետազոտության պատմության մեջ կարևոր փուլ դարձան (տե՛ս Կոմիտասական, 2, էջ 29):

հունական պրոսոդիաների սուկ փոխադրումը հայերենի...»<sup>6</sup>: Այսպիսով, Ֆլայշերը նշում է հայկական խազանշանների և հունական նմերի արտաքին դրսևորումների, այսինքն՝ գծագրական ձևերի համապատասխանությունը, սակայն ոչ ներքին բաղադրյալների, այսինքն՝ բովանդակության ընդհանրությունը:

Այն, «որ Կոմիտասի ուսուցիչ Օսկար Ֆլայշերը խորապես հարգում և գնահատում էր նրան, երևում է այն բանից, որ Կոմիտասը Ֆլայշերի հիմնադրած Միջազգային երաժշտական ընկերության առաջին անդամներից էր», - գրում է Շեսկուսը<sup>7</sup>:

Կոմիտասի անկրկնելի և անմոռանալի ելույթների շնորհիվ այլազգի բազմաթիվ մեծահամբավ երաժիշտներ հնարավորություն են ունեցել ի մոտո ծանոթանալու հայոց բազմադարյա երաժշտարվեստին և ուշագրավ կարծիքներ են հրապարակել հայկական երաժշտության մասին: Նրանցից առաջինը հենց Օսկար Ֆլայշերն էր, ում հրավերով 1899 թ. մայիսի 10-ին Կոմիտասը հանդես էր եկել Միջազգային երաժշտական ընկերության անդամների առջև դասախոսությամբ ու տպավորիչ համերգով, որն իսկական հայտնություն էր ներկաների համար: Այս դասախոսությունը կրկնվել է նաև հունիսի 14-ին առավել լայն լսարանում՝ Կոնսերվատորիայի դահլիճում, սակայն արդեն այլ երաժշտական նմուշների ցուցադրությամբ: Այնքան ուժեղ է եղել Կոմիտասի կատարմամբ հայկական երաժշտության թողած տպավորությունը, որ պրոֆեսոր Ֆլայշերն իր հատուկ շնորհակալությունն է հայտնել նրան հետևյալ խոսքերով. «...Ձեր հմտալից եւ խորիմաստ դասախոսութիւնները օգնեցին մեզ խոր հայեացք նետել այն երաժշտութեանը, որը ցարդ մեզ համար գրեթէ փակ էր, եւ

<sup>6</sup> Fleisher O., Über Ursprung und Entzifferung der Neumen, Leipzig, 1895, S. 65-71:

<sup>7</sup> Կոմիտասական, 2, էջ 30-31:

որը կարող է շատ բան սովորեցնել մեզ՝ արեւմտացիներին: Ձեր նախաձեռնած աշխատանքը բնաւ դիրքին չէ, եւ ես բոլոր նրանց անունից կարտայայտուեմ, ովքեր լսել են Ձեր դասախօսութիւնները (այդ թւում եւ բացառիկ նշանակութեան եւ գիտական աշխարհում համաշխարհային ճանաչման արժանացած այրերի), եթէ պնդեմ, որ Ձեր տրնաջան աշխատանքը եւ ջանքերը զուր չեն: Դուք անգնահատելի ծառայութիւն մատուցած կլինէք արդի գիտութեանը, եթէ հրապարակէք Ձեր աշխատութիւնները, եւ ես անչափ ուրախ կլինեմ, եթէ կարողանամ օժանդակել Ձեզ այդ գործում»<sup>8</sup>:

Իսկ Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի մասնաճյուղի անունից դոկտոր Մաքս Ջայֆերթը<sup>9</sup> գրել է Կոմիտասին. «Այն խորունկ հայեացքը, որով Դուք, ի մօտոյ մեզ ներկայացրիք մեզնից բոլորովին հեռու գտնուող բարձր եւ զարգացած մի քաղաքակրթութեան վսեմ կարողությունը, - անակնկալօրէն հմտալից մատուցումն այն ամենի, որ արեւմտեան հնագոյն քաղաքակրթութեան ճանաչման համար իսկապէս բացառիկ նշանակութիւն ունեն, Ձեր դասախօսելու եւ երգելու կատարեալ արուեստը - սրանք բաներ են, որ զարմանք կարող էին պատճառել եւ որոնք վառ կմնան Ձեր ունկնդիրների յիշողության մէջ: Սրանով Դուք ոչ միայն մեր մասնաճիւղի շնորհակալութիւնը, այլեւ, վստահաբար, Ձեր հայրենիքի քաղաքակրթական դերի

---

<sup>8</sup> Կոմիտաս Վարդապետ, Նամականի (աշխ. Գ. Գասպարեանի, թարգմ.՝ Արթուր Ավանեսովի), Եր., 2009, էջ 240, 487:

<sup>9</sup> Միջազգային Երաժշտական ընկերության Բեռլինի մասնաճյուղի քարտուղար եւ Բեռլինի արքայական համալսարանի երաժշտության պատմության ուսուցչապետ (տե՛ս ԺԿՄ, էջ 13):

գնահատումը վաստակեցիք»<sup>10</sup>: Չայֆերթը նաև 1899 թ. Կոմիտասի կադդացած դասախոսությունների տպավորության ներքո արձանագրել է. «Հայկական եկեղեցական երաժշտությունը, քրիստոնեության սկզբից մինչև մեր օրերը անփոփոխ է մնացել: Իր ծագումով այն պարտական է հին հեթանոսական տաճարային երգեցողությանը, որն իր հերթին ծագել է ժողովրդական երաժշտությունից: Եկեղեցական և ժողովրդական երաժշտության ընդհանրությունը ակնհայտ է դառնում նրանց մեղեդիների վերլուծությունից: Միայն թե եկեղեցին զարդարանքի միջոցով ճոխացրել է այն, ինչը ժողովուրդը պահպանել է իր պարզության մեջ: Պարսիկները և արաբները, ինչպես նաև հույները, ոչ մի ազդեցություն չեն կարող գործել այդ զարգացման վրա: Այդ անարատությունը շատ կարևոր հանգամանք է հնագույն քրիստոնեական երաժշտության ուսումնասիրության գործում: Ստույգ աղբյուրներից հայտնի է, որ ժողովրդական երգիչները գոյություն են ունեցել արդեն մ.թ.ա. VI դարում, ու թեև նրանց երաժշտությունը չի պահպանվել, բայց հայտնի է երգերի խոսքային բովանդակությունը: Ժամանակակից ժողովրդական երգիչների երաժշտությունը ընթանում է երկու ձևով. ասերգ՝ պատմությունների, և մեղեդի՝ բանաստեղծությունների համար»<sup>11</sup>:

Նշելի է, որ այս հոդվածի վերջում զետեղված են Կոմիտասի մի ուշագրավ երկի նոտաները, որ ստեղծվել է Բեռլինում՝ Դավթի 137-րդ սաղմոսի գերմաներեն տեքստով<sup>12</sup>: Հոդվածի հեղինակը պարզաբանում է, որ Կոմիտասն այդ սաղմոսը այլաբանորեն օգ-

<sup>10</sup> Կոմիտաս Կարդապետ, Նամականի (Բեռլին, 1899 թ. հուլիսի 19), էջ 242, 487-488 (թաղգմ. Ա. Ավանեսովի):

<sup>11</sup> Կոմիտասական, 2, էջ 31-32:

<sup>12</sup> St u «An den Wassern zu Babel».- Կոմիտասական, էջ 35, 37:

տագործել է թուրքերի կողմից 1895-96 թթ. դաժան կոտորածի երթարկված իր ժողովրդի ծանր ճակատագիրը ողբալու համար: Եվ չնայած գերմաներեն տեքստին, Կոմիտասն այս ստեղծագործության մեջ ցուցաբերել է ազգային ավանդույթները պահպանելու ձգտում: Այն առաջին անգամ կատարել է Բեռլինի երգչախումբը 1967 թ., իսկ երգի ձայնագրությունը հետագայում ուղարկվել է Երևան<sup>13</sup>:

Իր կատարած գործի բացառիկ նշանակության վերաբերյալ գերմանացի վերոնշյալ երաժշտագետների բարձրագույն գնահատականների շնորհիվ Կոմիտասը սերտորեն կապվեց Միջազգային երաժշտական ընկերության հետ և հետագայում՝ 1914 թ. նույնպես հսկայական հաջողությամբ հանդես եկավ այդ ընկերության միջազգային կոնգրեսում՝ ներկայացնելով հայկական երաժշտությունն օտարազգի ամենից հեղինակավոր կոմպոզիտորներին ու երաժշտագետներին:

Ֆրանսիացի հայտնի երաժշտագետ Պիեռ Օբրին 1901 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանի օրոք այցելելով Ս. Էջմիածին, գրել է «Հայոց եկեղեցու երաժշտական համակարգը. հուշեր Հայաստան կատարած գիտական ուղևորությունից» խորագրով տեսական և հուշագրական ընդարձակ հոդվածաշարը, որ տպագրվել է «Tribune de Saint-Gervais» հանդեսում (1901, 1902, 1903, Փարիզ)<sup>14</sup>: Նկարագրելով այն ջերմ ընդունելությունը, որին իրենց խումբն արժանացել էր Էջմիածնում, Օբրին նկատում

---

<sup>13</sup> Տե՛ս Կոմիտասական, 2, էջ 34; տես նաև՝ «Neue Zeit» («Նոր ժամանակ») պարբերականում՝ 1967թ. սեպտ. 3-ի, 1969թ. մայիսի 18-ի, 25-26-ի համարները (հեղինակ՝ Էվելինա Բարտլից):

<sup>14</sup> Վերոնշյալ հոդվածը ֆրանսերենից թանգմանել է Մարտիրոս Մինասյանը: Տպագրված է Կոմիտասին առնչվող հատվածը (տե՛ս Կոմիտասական, 1, էջ 253, ծան. 1):

է, որ այնտեղի մի քանի հոգևորականներ ազատ խոսում էին՝ բացի ռուսերենից, նաև ֆրանսերեն կամ գերմաներեն, քանի որ կրթություն էին ստացել այդ երկրներում, և ավելացնում է. «Նույնպիսին է նաև Կոմիտաս վարդապետը, նա միանգամայն ազատորեն խոսում է գերմաներեն և մի փոքր էլ ֆրանսերեն: Էջմիածնում մեր եղած ժամանակ նա մեծապես օգտակար եղավ մեզ. ես շատ կցավեի, եթե նրան չհանդիպեի, որովհետև պ. Մեյեն Փարիզում շատ էր գովել ազգային եկեղեցական երգի նրա գիտելիքները: Կոմիտասը մեզ ընդունում էր իր հյուրասենյակում և հայ երաժշտության տեսության վրա միասին աշխատում էինք՝ համեղ թեյի բաժակներ ըմպելով: Կոմիտասն իր միտքը բացատրում էր մերթ հայերեն, մերթ գերմաներեն, մերթ ֆրանսերեն. նա այդպիսով համարյա վստահ էր, որ մենք նրան հասկանում ենք: Այսպիսով՝ երկարատև ու հետաքրքրական զրույցների ընթացքում նա լուսաբանեց բոլոր դժվարին հարցերը: Ինչ որ բնորոշումով դժվար էր հասկացվում, երգն ավելի հասկանալի էր դարձնում, և Կոմիտասը սիրով էր հրաժարվում ճոռոմ բացատրությունից ու իր միտքը հասկացնում երգած նմուշներով՝ այսպես է նկարագրում Օբրին իրենց շփումները և հավելում. «Ճեմարանում երաժշտությունը, որ Կոմիտասի շնորհիվ նոր թափ է ստացել, շատ է հարգի: Կոմիտասը անձնվեր ուսուցիչ է, սովորեցնում է թե՛ հայկական, և թե՛ եվրոպական երաժշտության տեսությունն ու գործնականը: Հայ երաժշտության ուսուցումն ընդգրկում է հայկական ձայնանիշների ընթերցում Նիկողայոս Թաշճյանի երգեցողության գրքերով, մոդալ տեսություն և եկեղեցական երգերի կատարյալ իմացություն: Եվրոպական երաժշտությունից դասեր կան նոտաների երգեցիկ ընթերցումից, դաշնավորումից, խմբական երգեցողությունից, հայերեն և օտար լեզուներով գեղարվեստ-

տական ասմունքից: Վերջապես, գործիքային երաժշտությունն էլ բոլորովին թերագնահատված չէ Արարատի ստորոտում. աշակերտները սովորում են նվագել դաշնամուր, հարմոնիում և լարային գործիքներ: Ամենից չափահաս աշակերտները երաժշտության դասեր չունեն, բայց Կոմիտասը նրանցից հիանալի երգչախմբեր է կազմել: Մենք նրանց կատարմամբ լսեցինք ավագ շաբաթվա վերջում հոգևոր երգեր՝ սաղմոսներից սկսած մինչև շարականներ»<sup>15</sup>:

Պիեռ Օբրին նաև որոշ տարակուսանք է հայտնում հայոց հոգևոր երգեցողության ոճի մասին. «Ես էջնիածին էի եկել լատինական այն հոգևոր երաժշտությամբ սնված, որ մեզ ուսուցանել էին Սոլեմի կրոնավորները. ուստի կուզենայի եկեղեցական նույն պարզությունը գտնել նաև հայկական հոգևոր երգում. ուզում էի լսել աղոթող երաժշտություն, սակայն վախենամ՝ գեղագիտական և երաժշտական չափազանց շատ մտահոգություններ նկատեցի այդ կատարումների մեջ: Եվ իրոք, երգչախմբերը պարզ միաձայնի փոխարեն երգում էին երկձայն, եռաձայն կամ նույնիսկ քառաձայն. դրանից բացի, կատարումների ժամանակ նկատվող նրբերանգների առատությունը, վարպետ ելևէջները, տոնայնության հաճախակի փոփոխությունները վկայում էին, մեր կարծիքով, շատ լավ կատարելու մտադրության մասին: Ինչպես հայտնի է, կրոնական արվեստի մեր ըմբռնումն այլ է: Սոլեմը և Մենժերվեն այնքան բուռն են պայքարել Հռոմի ծանր և շեշտավորված կատարման դեմ, որ մենք կասկածի ենթակա չենք՝ այստեղ նրանց անունից քննադատելով Կոմիտասի գեղագիտական մտահոգությունները: Սակայն մեզ թվում է, թե էջմիածնում այս

---

<sup>15</sup> Օբրի Պ., Հուշեր Հայաստան կատարած գիտական ուղևորությունից (հատված).- Կոմիտասական, 1, էջ 254-258:

ուղղությամբ չափազանցնում են: Հայկական երաժշտության ակունքներն իրոք, եթե Գրիգոր Լուսավորչի առաքելության ժամանակաշրջանից են գալիս, ինչպես ասում է ավանդությունը, ապա մենք այսօր հեռու ենք առաջին դարերի ավետարանական պարզությունից»<sup>16</sup>: Մա լատին կրոնական օրդեններից ամենապահպանողականին պատկանող հոգևորականի կարծիք լինելով հանդերձ, չնայած իր քննադատական երանգին, նույնպես պարունակում է ուշագրավ մտքեր Կոմիտասի և հայկական հոգևոր երգեցողության մասին: Նշելի է նաև, որ այդ օտարազգի այրերը Էջմիածին էին ժամանել Մուրբ Զատկի տոնակատարությունից առաջ, իսկ հայոց եկեղեցում Ավագ Շաբաթին, ինչպես նաև Մուրբ Հարությանը նվիրված երգեցողությունն ամենից հանդիսավոր ու շքեղ շարականներից ու տաղերից է բաղկացած: Այն, ինչ հեղինակը բացասական է համարում հայոց հոգևոր երգեցողության մեջ, իրականում վկայում է հենց դրա բարձր արժանիքների մասին: Պատահական չէ, որ հոդվածի վերջում հեղինակը հավելել է. «Եթե եկեղեցում Կոմիտասի աշակերտների համար արվեստի մտահոգությունը լավ հատկանիշի թերություն է, ապա արտակեղեցական կատարումների համար մենք անվերապահորեն ծափահարեցինք Կոմիտասին: Զատկի երեկոյան ժամերգությունից հետո Կոմիտասն իր սաներին հավաքեց ճեմարանի դահլիճը և մեզ անակնկալի բերեց իր հանպատրաստից տված համերգով: Կեցցե՛ն ժողովրդական երգերը. դրանք ժողովրդի կենսունակության նշան են, և մեր լսածներում զգացինք հայկական ոգին, նրա ըմբոստ ճիչերը, սիրո երգերը, միշտ հուսալի ազատության իդձը»<sup>17</sup>:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 258:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 259:

Պիեռ Օբրին կարևոր մտքեր է արտահայտում նաև հայոց խազանշանների մասին. «Հայկական հին խազագրությունը արևմտյան խազերի հետ ընդհանուր շատ կետեր ունի: Նրա նշաններից շատերը եղանակների լոկ ընդհանուր գծեր են նշում: Այդ խազագրությունը ևս հիշողության օգնական է: Վենետիկի Մխիթարյանները ժամերգության իրենց գրքերում պահպանել են հին խազագրությունը, որ նրանց վերհիշեցնում է իրենց ավանդաբար սովորած եղանակը: Ուստի հայկական հոգևոր երգերը պահպանվել են միայն բերանացի փոխանցման շնորհիվ. երգչի առաջին հատկությունը նրա երաժշտական հիշողությունն էր, իսկ մոտավոր նշումը՝ գերծ էր պահում շվարումից, սակայն այդ գրությունն ինքնին ոչ մի դեպքում չի կարող բավական լինել անձանոթ եղանակ սովորեցնելու համար: Արդյո՞ք խազային ձայնագրությունը լոկ հիշողության օգնական չէ, ավելին պահանջվո՞ւմ էր արդյոք դրանից, և այսօր նրա խորհուրդը բացատրել ձգտելով՝ ավելին պե՞տք է պահանջել դրանից»<sup>18</sup>: Ի դեպ, Պիեռ Օբրին նաև մեծապես տպավորված էր երգող հայ պատանիների հրաշալի հիշողությամբ, որոնք մի քանի ժամ տևող արարողության եղանակներն անգիր են երգել:

Հողվածն ավարտվում է Կոմիտասի իմաստուն ասույթով. «Որքան ապրի հայկական երաժշտությունը, այնքան կապրի Հայաստանը»<sup>19</sup>:

Այնուհետ՝ 1906 թ., Կոմիտասն անցնում է Փարիզ, որպեսզի մոտիկից առնչվի ֆրանսիական երաժշտությանը: Այնտեղ նա ծանոթանում է Արշակ Չոպանյանի հետ, ով ամեն կերպ աջակցում էր նրան՝ թարգմանելով Կոմիտասի դասախոսությունները ֆրանսե-

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 253-259:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 259:

րեն, ինչպես նաև հրատարակելով դրանք իր խմբագրությամբ լույս տեսնող «Անահիտ» հանդեսում: Դեկտեմբերի 1-ին Կոմիտասի հսկայական ջանքերի շնորհիվ կայացավ անմոռանալի մի համերգ, որին ներկա էին ֆրանսիական երաժշտության այնպիսի մեծություններ, ինչպիսիք են երաժշտական անվանի քննադատ Լուի Լալուան և հռչակավոր գրող ու երաժշտագետ Ռոմեն Ռոլանը: Վերջինս դրանից առաջ էլ առիթ էր ունեցել ծանոթանալու Կոմիտասի հոգեպարար կատարումներին, իսկ այդ համերգից հետո հրավիրում է նրան Սորբոնի համալսարան և խնդրում դասախոսություն կարդալ հայ երաժշտության մասին՝ նաև կատարելով իր սքանչելի երգերը: Կոմիտասի երգեցողությունն այնքան ուժգին էր տպավորվել նրա հիշողության մեջ, որ դրանից երեք տասնյակ տարի անց՝ 1935 թ., երբ Հայպետհրատը դիմել է Ռոլանին՝ իր հռչակավոր «Ժան Քրիստոֆը» հայերեն թարգմանելու համար թույլտվություն խնդրելու, նա պատասխանել է. «Հաճույքով թույլատրում եմ թարգմանել և իմ սիրալիր ողջունն եմ հղում ձեր նշանավոր Հայկական երկրին, որ առանձնապես սիրելի է երաժշտի իմ սրտին՝ իր գեղեցիկ երգերով, որոնցով վաղուց հիացած եմ: Նրանք հրապույր ու մելոդիկ մի հարստություն ունեն, որոնք ձեր երկիրը, երաժշտության տեսակետից, դարձնում են յուրիդային մի Իտալիա»<sup>20</sup>:

Գուցե հենց վերոնշյալ համերգն է նկատի ունեցել մեր ակա-նավոր հայագետ ու լեզվաբան Հրաչյա Աճառյանը<sup>21</sup> Կոմիտասի մասին իր հուշերում, որտեղ գրել է. «Իմացեր եմ, որ 1906 թվին

---

<sup>20</sup> Ռոլան Ռոմեն, Ժան Քրիստոֆ, Եր., Հայպետհրատ, 1935, հ. I, Առաջաբանի փոխարեն:

<sup>21</sup> Հրաչյա Աճառյանը 1899 թ. ի վեր երեք տարի ապրել է Կոմիտասի հետ միևնույն սենյակում և մոտիկից ճանաչել է նրան ու չափազանց հետաքրքիր հուշեր գրել նրա մասին (տե՛ս ԺԿՄ, էջ 75-99):

Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգին վերջ, ֆրանսիացի հայտնի կոմպոզիտոր-դաշնակահար Կլոդ Դեբյուսին ծունկի գալով կը համբուրե Կոմիտասի ձեռքերը, ըսելով՝ «Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջև կխոնարհիմ...»<sup>22</sup>: Այդ ժամանակ Կոմիտասը մնացել է Փարիզում շուրջ մեկ տարի՝ մինչև 1907 թ., և ի մոտո ծանոթացել Դեբյուսիի նրբագեղ իմպրեսիոնիստական արվեստին, քանի որ այն իր գեղագիտությամբ համահունչ էր իր ստեղծագործական սկզբունքներին: Տեղեկություններ կան, որ այդ ընթացքում Կոմիտասին ունկրել և նրա կատարումներով հիացրել են նաև մեծահամբավ կոմպոզիտորներ Գաբրիել Ֆորեն և Կամիլ Սեն-Սանսը:

Հիշարժան է նաև Կոմիտասի գաղափարակից բարեկամուհու՝ Փարիզում բնակվող հայտնի երգչուհի և դաշնակահարուհի Մարգարիտ Բաբայանի<sup>23</sup> (ի դեպ, նրա կրտսեր քույրը՝ Շուշանիկ Լալուա-Բաբայանը, Լուի Լալուայի կինն էր և նույնպես դաշնակահարուհի) մի արտահայտությունը Կոմիտասի՝ 1906-1907 թթ. Փարիզ կատարած նշանակալից ուղևորության մասին. «Փարիզի երաժշտական աշխարհը այդ ժամանակ Կլոդ Դեբյուսիի՝ մեծ երաժշտի ազդեցության տակ, նոր ազատ հոսանքներով ոգևոր-

---

<sup>22</sup> Աճառյան Հր., Հուշեր Կոմիտասի մասին.- ԺԿՄ, էջ 80, տե՛ս նաև՝ Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում (այսու՝ ԿԺԿ), հրատ. պատրաստեց Գ. Գասպարյանը, Եր., 2009, էջ 23:

<sup>23</sup> Բաբայան Մարգարիտ Ավետիքի (1874-1968 թթ.)՝ հայ դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ. 1904 թ.-ից մշտապես բնակվել է Փարիզում: Ունեցել է հարուստ ու ճկուն ձայն (մեցցո-տոպրանո): Կոմիտասի և Արշակ Չոպանյանի հետ հանդես է եկել համերգ-դասախոսություններով: Եղել է ֆրանսիական երգի վարպետների միության և Երաժշտագետների ընկերության անդամ, ֆրանսիական ռադիոյի պաշտոնական մեկնաբան, աշխատակցել է «Larousse» հանրագիտարանին: 1906 և 1914 թթ. Փարիզում մասնակցել է Կոմիտասի համերգներին, հետագայում հավաքել է նրա ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, գրել հողվածաշար նրա մասին (տե՛ս ՀՄՀ, հ. 2, Եր., 1976, էջ 187):

ված չէր կարող չազդել նաև այդ զգայուն երաժշտի սքանչելի հոգվույն վրա»<sup>24</sup>: Նշանակում է, որ Կոմիտասի և Դեբյուսիի ստեղծագործական փոխազդեցությունները երկուսի համար էլ հույժ բարենպաստ են եղել: Նման կարծիք կարելի է գտնել նաև Կոմիտասի կրտսեր աշակերտուհի Աղավնի Մեսրոպյանի հուշերում. «1906-1907 թթ. ժամանակաշրջանին Բեռլինի, Վենետիկի, Զվիցցերիայի և Փարիզի մեջ Կոմիտասի տված համերգներուն և զաստիստություններուն առաջացուցած հետաքրքրության և հեռացումի ակիբները տարածվեցան մինչև Լոնդոն: Այդ օրերուն Մանի վայելող երաժիշտ-երաժշտագետներեն Դեբյուսին, Լանդովը, Լոթսլը, Լալուան և Դըզըրը Կոմիտասի այդ համերգներուն ազդեցության տակ, իրենց երաժշտա-գիտահետազոտական աշխատություններուն մեջ առանձին հատվածներ նվիրեցին հայ երաժշտության պատմության և անոր առանձնահատկություններուն մասին»<sup>25</sup>: Նույն տեղում նկարագրված է Կլոդ Դեբյուսիի ազդեցականության էլեմենտար Դեբյուսիի կազմակերպած մի համերգը. «...նույնպես հայտնի դաշնակահարուհի էր, և «...նույնի ելլելով և դաշնամուրի վրայեն քանի մը տեսրակներ վերցնելով անակնկալ կերպով հայտնեց, որ այդ օրվան համերգ-հավաքույթը նվիրված էր հայ վարպետի մը կողմէ կատարված երաժշտա-

<sup>24</sup> Մարգարիտ Բաբայան, Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով, ԺԿՄ, էջ 117; ԿժԿՎ, էջ 210:

<sup>25</sup> Խոսքը հավանորեն Մարգերիտ Լոնգի (Long, 1874 - 1966 թթ.) մասին է, ով այդ տարիներին անվանի դաշնակահար ու մանկավարժ էր: Մշտապես կատարում էր ֆրանսիական իմպրեսիոնիստների և «Վեցյակի» կոմպոզիտորների գործերը: Փարիզի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր էր, նաև հելվեթական էր «Le piano de Marguerite Long» (1958 թ.) ձեռնարկի, որ պարունակում է 400 վարժություն: Գաշնամուրի համար; ՄՅ, տ. 3, 1976, с. 320-321.

<sup>26</sup> Մեսրոպյան Ա., Հուշեր. Կոմիտասի ազդեցության շրջանակները.- ԺԿՄ, էջ 238. ԿժԿՎ, էջ 331-332:

կան խոշոր հայտնագործության մը: Եվ անցնելով դաշնամուսի առջև, սկսավ նվագել ու երգել Կոմիտասի «Կուժն սուա»-ն, «Քելեր-ցուլեր»-ը, «Սարերի վըրով գնաց»-ը, «Օիրանի ծառ»-ը, «Անտունի»-ն և երկու ժողովրդական-կոմիտասյան պար՝ «Ունաբի»-ն և «Մարալի»-ն: Էլեոնորան ներքին գոհունակությամբ ըսավ, որ այդ անգին եղանակները իրեն Փարիզեն նվեր դրկեր էր իր տագրը՝ Կլոդ Դեբյուսին և հանձնարարեր էր իրեն առանձին գույճուրանքով մոտենալ անոնց: Կից նամակին մեջ Դեբյուսին ըսեր էր, որ չէր կրցած ավելի սրտագրավ բան մը գտնել իր հարազատին նվիրելու համար: Դեբյուսին նույն նամակի մեջ, Կոմիտասի հայտնությունը համարել էր այդ օրերու երաժշտական աշխարհի ամենաուշագրավ երևույթը»<sup>27</sup>:

Նույն օրերին պրոֆ. Լուի Լալուան, ով նաև Դեբյուսին կեսսագիրն էր<sup>28</sup>, հանդես է եկել «Le Mercure Musical» հանգրվանի էջերում մի հոդվածով, ինչը նույնպես վկայում է ֆրանսիական հասարակության ստացած անջնջելի տպավորությունները Կոմիտասի տված համերգից. «...Ոչ ոք չափազանցության մեղադրանքը պիտի անէ ինձի, եթե հայտարարեմ, թե այդ համերգը հայտնություն մը և զմայլանք մը եղավ: Սեզմե ոչ մեկը կարծեմ, բացի շատ սակավաթիվ իրագեկներե, կրնար մտքեն անցունել գեղեցկություններն այդ արվեստին, որ իրապես ոչ եվրոպական է և ոչ արևելյան, այլ ունի նկարագիր մը աշխարհիս մեջ մեկ հատիկ՝ շնորհալի քաղցրության, խորաթափանց հուզման և ազնվական գորովի: Փափուկ և սակայն որոշ ոլորումներով մեղեդիներ, ճապուկ ու կենդանի կշռույթներ, երաժշտություն մը, որ ամբողջովին սրտեն կբխի, կհոսի ինչպես ջուրը՝ գով, թափանցիկ ու պայ-

<sup>27</sup> ԺԿՄ, էջ 239; ԿժԻՎ, էջ 332:

<sup>28</sup> St. u Laloy L., Claude Debussy, Paris, 1909, 1944.

ծած: Արև կա այդ երգերուն մեջ, բայց ոչ Արաբիոն և Պարսկաստանի սնապատներուն հրատոչոր արևը, այլ ոսկեգօծ լույս մը, համակ երկնային, որուն ջերմությունը փայփայանք մըն է սարերու սպիտակության, անտառներու կանաչին և քաղցրակարկաչ առուններու ցուլքերուն...»<sup>29</sup>: Հայր Ղ. Տայյանն իր վերոնշյալ հոդվածաշարում մեջբերում է Կոմիտաս վարդապետի՝ 1906 թ. դեկտեմբերի 1-ին ունեցած նվագահանդեսի վերաբերյալ «*Mercure Musicale*»-ի տնօրեն Լուի Լալուայի մի այլ կարծիք ևս. «Ասոնք զեղումներն են հոգիի մը՝ որ ինքզինքը բոլորովին կը բանայ իր Աստուծոյն և անոր կը յանձնէ, սիրոյ խոյանքի մը մէջ, իր բոլոր մտածումներն ու իր կեանքն ամբողջ. անոնց մէջ թրթռալը կը զգացուի հրավառ ու միստիքական հաւատքի մը՝ որ առանց ճիգի կը հասնի յափշտակութեան կատարներուն»<sup>30</sup>: 1907 թ. հունվարին Փարիզի «Արվեստի դպրոց»-ի վարչության հրավերով Rue de la Sorbonne-ի սրահում Կոմիտասը տալիս է մի դասախոսություն, որին ներկա է լինում նաև Փարիզի դպրությանց համալսարանի ուսուցչապետ Ալֆրեդ Կրաուզեն, ով այդ օրվանից դառնում է Կոմիտասով հիացողներից մեկը: Այնուհետև անցնելով Շվեյցարիա, Ֆի բանի համերգ է տալիս այդ երկրի գլխավոր քաղաքներում: Ինչպես նաև կազմակերպված մի երեկոյթի առթիվ նրա կատարած մի քանի մեներգերի մասին շվեյցարական թերթերը գրել են հետևյալը. «Հայաստանը լեռների և հովիտների մի երկիր է մերի նման. Շվեյցարիան քույր մի երկիր է իր բնությամբ, սակայն հայերը ինչ հրաշալիքներ են հանել իրենց բնության ներշնչումներ-

<sup>29</sup> Չուպանյան Ա., Կոմիտաս վարդապետ և հայ երաժշտությունը.- «Անահիտ» հանդես, Փարիզ, 1931, № 1-2, էջ 103-127:

<sup>30</sup> Տայեան Հ. Ղ., Գերպ. Կիւրեղեան արքեպիսկոպոս ևս հայ եկեղ. Երաժշտութիւնը.- «Բազմավեպ», 1923, էջ 18; տես նաև՝ «Անահիտ», 1907, էջ 27:

րից, մինչդեռ մե՞ նք...»<sup>31</sup>: Շվեյցարիայի տարբեր քաղաքներում Կոմիտասի տված համերգներից հետո «Գազեթ դե Լոզան» թերթը գրել է. «Հայ երաժշտությունը ոչ միայն մարդկային երաժշտության մեկ տարրն է, այլև այնքան գեղեցիկ է ան, որ կրնա նախանձը շարժել փարթամ Գերմանիային և խրոխտ Ֆրանսիային. ան կրնա մեզի համար առաջնորդ մը և իդեալ մը հանդիսանալ»<sup>32</sup>: Ափսոս, որ հողվածագրի անունը չի նշված, սակայն վերջինս հատկապես ընդգծել է, որ այդ երգերը հարկավոր է լսել Կոմիտասի նման արվեստագետի կատարմամբ, որպեսզի տաա՛վորությունը կատարյալ լինի, ում մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Հաճույք մըն էր տեսնել այն հրճվանքը, որով հասարակությունը կհետևեր այդ երգեցողության քմահաճ թելին, և սրտաբուխ խանդավառությունը, որով զանոնք կծափահարեր: Այդ երգերեն ամեն մեկը իր հատուկ գեղեցկությունն ուներ: Եվ արդեն հայ արվեստին բնորոշ գծերեն մին այն է, որ այլազանությունը կհավասարի իր գեղեցկության»<sup>33</sup>:

1906 թ. Կոմիտասը դարձյալ Փարիզում էր. դեկտեմբերի մեկին Հայկական միության և Ա. Չոպանյանի աջակցությամբ տված նրա համերգն աննախընթաց հաջողությամբ է պսակվել: Այդ առթիվ «Le Guide musical»-ը (Բրյուսել) գրել է. «Կոմիտաս վարպետ պետ իրեն հայտնաբերեց իբր թանկագին ծառայողը մի դասի, որն արժանի էր նման մի անձնավորության. խիստ ազդեցիկ է գեղեցկությունը բոլոր այդ հայկական մեղեդիների, ոչոնք, նրա շնորհիվ, մտնում են արվեստագետների ռեպերտուարի մեջ

<sup>31</sup> Գասպարյան Գ. Ն., Կոմիտաս. - ԺԿՄ, էջ 17:

<sup>32</sup> Մուրադյան Մ., Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում. - Կոմիտասական, 2, էջ 22:

<sup>33</sup> Գասպարյան Գ. Ն., Կոմիտաս. - ԺԿՄ, էջ 22:

միաժամանակ և ճոխացնելով մեր ծանոթությունը Արևելքի ֆուկլտորի մասին»<sup>34</sup>: Իսկ «L'Aurore»-ն (Պոլ Կլո) գրել է. «Իր երկու կոնցերտներով Կոմիտաս վարդապետը մեզ ներկայացրեց մեղեդիների մի շահեկան շարք, ուր ըմբռնչվածքները բնավայրի համը և զմայլվեցինք ներդաշնակության վրա, որ նույն ինքն Կոմիտաս վարդապետի բարձր հմտության ու հանճարին գործն է»<sup>35</sup>:

1910 թ. գարնանը Կոմիտասն անցնում է Կ.Պոլիս: Նրա բազմաթիվ համերգներով հիանում են այդ բազմազգ քաղաքի այլնայլ ազգերի ներկայացուցիչները ևս: 1911 թ. գարնանը «Յունիոն Ֆրանսեզ» սրահում կայացած երկու նշանակալից համերգները եվրոպական մամուլը գնահատել է որպես «եղանակի գեղարվեստական ամենագեղեցիկ հայտնությունը»<sup>36</sup>: Ներկաների վկայությամբ, հռչակավոր այդ համերգին մի շարք ֆրանսիացի և եվրոպացի երաժիշտ-երաժշտագետներ, չկարողանալով հավատալ, թե դա իրոք զուտ ձայնական երաժշտություն էր, ընդմիջումներին բեմ են բարձրացել՝ իրենց անձանթ երաժշտական որևէ գործիք փնտրելու համար...<sup>37</sup>:

1911 թ. Կոմիտասը մեկնում է Եգիպտոս. Ալեքսանդրիայում և Կահիրեում հաջորդաբար մի քանի դասախոսություն կարդալուց հետո հունիսի 16-ին ելույթ է ունենում Ալիամպրա թատրոնի մեծ սրահում, հոժ բազմության առջև՝ 190 հոգուց բաղկացած երգչախմբով: Ժամանակի հայտնի գրող Ժորժ Միտաուին «La Bourse Egyptienne»-ում գրել է. «Անցյալ երեկո Ալիամպրայի բեմի վրա հայ ժողովրդի հոգին էր, որ ամբողջովին թրթռաց. մի հոգի, որ

---

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 24:

համակ եռանդ է, որին ոչ մի ուժ չի կարող բանտել կամ մարել: Գիշերային սարսուռի մեջ ներդաշնակ խոսքեր, ժողովրդի զգացմունքներովն արյունած ու շառագույն՝ իջնում են խազ առ խազ, մի ժողովրդի, որն իր հպարտությունը պահում էր և իր փոքրիկ համայնքից իսկ ճոխություններ էր պարզում մարդկության»<sup>38</sup>: Արաբական «Ալ Մուքաթթամ»-ը Կոմիտասին հռչակեց «միջագային երաժշտության ամենից համբավվոր վարպետը»<sup>39</sup>: Իսկ հունական «Թելեկրաֆոս» թերթը հարց է տվել. «Ե՞րբ հույն ժողովրդի մեջ աստված հարուցանելու է մի Կոմիտաս, որը հին հելլենական երաժշտությունը կփրկի կորստից»<sup>40</sup>:

Կոմիտասն Ալեքսանդրիայի այդ համերգը նույնությամբ կրկնում է Կահիրեում՝ Ապպաս թատրոնում: Կահիրեի համարյա բոլոր թերթերը առանձին հոդվածներ և առաջնորդողներ են նվիրում Կոմիտասին, որոնց սյունակներում, բացի երկար հոդվածներից, տպվել էր նաև Կոմիտասի լուսանկարը, որն այդ օրերին դրված էր ո՛չ միայն հայերի, այլև արաբների խանութների ցուցափեղկերում<sup>41</sup>: Իսկ այդ բոլոր համերգներից հետո Կոմիտասին նվիրում են ոսկե շղթա, ոսկե դրամապանակ և ոսկե մատիտ՝ որպես կատարյալ հիացմունքի առհավատյա ...

1913 թ. աշնանը Կոմիտասը կրկին վերադառնում է Պոլիս, ուր կրկին բազմաթիվ համերգներ է տալիս: «Բիզանդիոն» թերթը «Կոմիտաս վարպետի համերգը» վերնագրի տակ գրել է. «Այս կիրակի «Պըտի Շան»-ի թատրոնին մեջ, ուր ժամադիր եղած էր ազգային մեծ հանդեսները հիշեցնող հոծ բազմություն մը, ներկայա-

---

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Նույն տեղում:

ցուցիչ ամեն դասակարգերու, նաև օտարազգի հիացողներու, ներկա էին Պոլսո բոլոր դեսպանները: Այս անգամվան ծրագրին մեջ մտած էր Վազների և Մոցարտի կտորները, որոնք երգվեցան «Գուսան» երգչախումբի կողմէ: Ներկաներեն հռչակավոր դաշնակահար Ֆոտլանին, քանի մը անգամ խանդավառ ծափահարելով ըսավ իր հայ բարեկամներուն, որ Կոմիտաս նշանավոր տաղանդ մ'է, որ եթէ Եվրոպայի մեջ գործեր՝ նյութապէս ալ շատ լավ կ'վարձատրվեր: Բայց մեր բարքերը լավ գիտցող այս արվեստագետը՝ Կոմիտաս վարդապետ, յիշեցնում էր, - հարեց, չափեն ավելի համեստ է, և արվեստի սերն ալ նախնական վիճակ ունի պոլսեցիներուն մեջ»<sup>42</sup>:

Կոմիտասի մասնակցությունը չափազանց կարևոր է եղել 1914 թ. Փարիզում կայացած Միջազգային երաժշտական ընկերության V կոնգրեսին, ուր նա կարողացել է 3 դասախոսություն, որոնցից առաջինը՝ «Հայ եկեղեցական երաժշտության հին և նոր նոտագրությունը» (կամ «Հայկական խազագիտությունը») և երկրորդը՝ «Հայ գեղջուկ երաժշտությունը», նախատեսված էին համագումարի ծրագրով, իսկ երրորդը՝ «Հայ երաժշտության ժամանակի (temps), կշռի (measure), շեշտավորության (rythme) և տաղաչափության (metrique) մասին»՝ հավելվել է ծրագրից դուրս, համագումարի անդամների հատուկ խնդրանքով<sup>43</sup>: Այս գեկույցների առթիվ գերմանացի նշանավոր միջնադարագետ, երաժշտագետ Պետեր Վազներն իր հիացմունքն ու հատուկ շնորհակալությունն է հայտնել. «Անհամբեր սպասում եմ Կոմիտաս վարդապետի բոլոր աշխատությունների հրատարակվելուն, որոնք իրենց մեջ

---

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 25-26:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 29:

շատ մեծ գանձեր են պարունակում թե՛ հայ, և թե՛ հին հունական երաժշտության մութ կետերի լուսաբանության համար»<sup>44</sup>:

Ավստրիացի ականավոր երաժշտագետ, կոմպոզիտոր և բյուզանդական նևմերի հմուտ մասնագետ, Վիեննայի համալսարանի երաժշտության դասախոս Էզոն Վելեշը, ով նույնպես առիթ էր ունեցել ունկնդրելու Կոմիտասին, գրել է. «Զարմանում եմ նրա արտակարգ ընդունակությունների վրա: Շատ լավ իմանալով ժողովրդական երգը, նա այդ երգերը ներդաշնակել է հազվագյուտ ճաշակով և ճշգրտորեն: Բոլոր այն երգերը, որոնք ես անձամբ լսել եմ Կոմիտասից և կամ ուսումնասիրել եմ, ամենից առաջ ապացուցում են, թե Կոմիտասը եզակի մի դեմք է որպես ներդաշնակող և որպես պոլիֆոնիստ»<sup>45</sup>: Տեղեկություն կա, որ Վելեշը նաև այն կարծիքն է հայտնել, թե «հայկական խազերը աւելի հին են, քան բիզանդական (յունական) խազերը, և նոյն իսկ այն վերջիններուն հիմը եղած են հայկականները»<sup>46</sup>: ամենայն հավանականությամբ նման հեղինակավոր գիտնականի այս կարծիքը ձևավորված լինի հե նց Կոմիտասին անձամբ ունկնդրելու արդյունքում...

Վերոնշյալ համերգներից բացի, Կոմիտասը Փարիզի հայկական եկեղեցում Արմենակ Շահմուրադյանի և Մարգարիտ Բաբայանի մասնակցությամբ, կազմակերպել է հայոց միջնադարյան հոգևոր երաժշտության ցուցադրում, որի մասին ֆրանսիացի անվանի երաժշտագետ, Սորբոնի համալսարանի պրոֆ. Ֆրեդերիկ Մակլերը գրել է. «1914 թ. Փարիզի երաժշտական միջազգային

<sup>44</sup> Բաբայան Ս., Հայ երաժշտությունը Փարիզի մեջ.- «Ազատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 11/24 հունիսի, 1914, N 1535, էջ 1:

<sup>45</sup> ԺԿՄ, էջ 18:

<sup>46</sup> Տե՛ս Հայր Ղեւոնդ Տայեան, «Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ» քազմահատոր շարակնոցի անտիպ Ա հատոր, էջ 42:

համագումարում, ուր հավաքվել էին տիեզերքի գլխավոր երաժշտագետները, Կոմիտասը սովեց հայ ժողովրդական և հոգևոր երգերի մի համերգ՝ հիացմունք պատճառելով ներկա երաժշտական հեղինակություններին: ...Երբ Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ՝ մեղմորեն երգելու հայկական երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր լուռ, և այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագույն պարզությունը, որ բխում է հայկական երաժշտությունից»<sup>47</sup>: Մի այլ առիթով նա հետևյալ գնահատականն է տվել Կոմիտասի արվեստին. «...Կոմիտաս վարդապետի գործը անգնահատելի արժեք ունի՝ շնորհիվ այն բացարձակ վավերականության, որ նրան ընձեռում են ճանապարհորդություններն ու բնակությունը հայ ժողովրդի մեջ: Նա կարողացել է դուրս բերել հայկական երաժշտությունը արաբական, պարսկական, թուրքական և քրդական ազդեցություններից, որոնք դեռևս խափանում են որքան կրոնական, նույնքան էլ ժողովրդական երգերը: Նա առաջինը կարողացավ գտնել հայ երաժշտության նկարագրին միանգամայն հարմար դաշնավորումը, որն այնուհետև հայտնվում է մեզ գերազանց քաղցրությամբ ու լիաբուխ փափկությամբ՝ հավասարապես երևան բերելով որոշ բանաստեղծական և հայեցող բնություն, որ նրա գեղեցկագույն զարդերից մեկն է»<sup>48</sup>:

Իսկ Ֆրանսիական Երաժշտական Միության նախագահ, հայտնի երաժշտագետ Ամեդեյ Գաստունեն «Revue de musicologie» հանդեսի 1934 թ. փետրվարի համարի մեջ գրել է. «Գերազանց իր նախորդներեն, Կոմիտաս վարդապետ շատ ճշգրտորեն գրի առած է նկատի առնված կշռույթները, որ մեծ մասամբ ազատ են,

---

<sup>47</sup> ԺԿՍ, էջ 30:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 32-33:

և ինքզինքը պարտավոր չէ զգացած, իրավամբ, ստրկաբար ենթարկվիլ չափի գծին, զոր գործածած էին Եկմայան և Բիանկինի<sup>49</sup> նմանօրինակ հրատարակությանց համար»<sup>50</sup>: Եվ այնուհետ՝ «Ուսանողական և ստեղծագործական ամբողջ գործունեության ընթացքում խորամուխ ու տևական այն որոնումները, որ Կոմիտասն արել է հայկական հին խազերգության բացահայտման ի խնդիր, երկարատև ու տքնաջան այդ աշխատանքը, Կոմիտասի իսկ վկայությամբ, առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ այդ խազերի մեջ նա գտել էր հիմնական այն բանալին, որն առաջնորդել էր իրեն դեպի հայ երաժշտության բյուրեղյա մաքրությունը»<sup>51</sup>: 1936 թ. ապրիլի 27-ին իր դասախոսության մեջ նա մասնավորապես ասել է. «Շրջագայելով հայոց բոլոր համայնքները Կոստանդնուպոլսից մինչև Պարսկաստան, Հայր Կոմիտասը այնտեղ առաջին ձեռքից հավաքեց հայ երգի բանավոր ավանդները: Նվիրվելով այնուհետև հին ձեռագրերի ուսումնասիրմանը, որոնցում շարադրված է միջնադարյան հայոց երգեցիկ խազային նոտագրությունը, որը, արժեքավոր ու հետաքրքրական լինելով հանդերձ, մինչև նա դարերով անվերծանելի էր մնացել, մեր երաժիշտը ամենահեռավոր վանքերում՝ մինչև Հնդկաստանի սահմանները, որոնեց երաժշտական հին աշխատություններ, որոնց իմաստը կորած էր: Դժվար է հաստատապես ասել, որոնք

---

<sup>49</sup> Չեղինակը նկատի ունի նախ՝ Մ. Եկմայան, Երգեցողությունք Սրբոյ Պատարագի, Լայպցիգ, 1896, ապա նաև՝ «Les Chants Liturgiques de l'Église Arménienne, traduits en notes musicales européennes par P. Bianchini et publiés par la Congrégation des Pères Mékhitharistes, Venise, 1877, որն ըստ էության առաջին փորձն էր հայոց հոգևոր երգեցողությունը եվրոպական նոտաներով գրառելու, ինչն ի կատար ածեց իտալացի երաժիշտ Պիետրո Բիանկինին 1877 թ., և լույս ընծայեցին Վենետիկի Մխիթարյանները:

<sup>50</sup> ԺԿՄ, էջ 36-37:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 37:

են այն մեղեդիական թեմաները, որ ծագում են քրիստոնեական առաջին դարերից, երբ Սուրբ Մեսրոպը և Սուրբ Սահակը կազմակերպեցին հայոց Պատարագը: Բայց դատելով այն հետքերից, որ հնադարյան ձայնեղանակները թողել են նրանց մեղեդիներում՝ ուրի բաժանելու դասական մոտեցումով (ավտենտիկ և պլագալ ձայներ), հեշտությամբ կարելի է տեսնել, որ Հայաստանյայց եկեղեցին կանուխ յուրացրել է սիրիական եկեղեցիների արևելյան ամենաբնորոշ մոտիվները: Հենց այս երգացանկն էլ ավելի երկար ու ավելի մաքուր է պահպանել, քան թե մյուսները՝ հելլենական հին լադերի հատկանիշներն ու հմայքը»<sup>52</sup>:

Այնքան նշանակալից են Ամեդեյ Գաստուեի դիտարկումները, որ դժվար է համառոտել նրա արտահայտած մտքերը հայկական երաժշտության և Կոմիտասի մասին: Ահա մեկ այլ հատված նրա մտորումներից. «...Հայ ժողովուրդը դարերի ընթացքում՝ չնայած իր համասփյուռ գոյության անակնկալներին, մնացել է հրաշալի կերպով օժտված գեղարվեստի բոլոր դրսևորումներում: Երաժշտական առումով նա տեր է բազմազան, նշանակալի, մերթ նրբահյուս ու մերթ ողբերգական մի արվեստի, հիմնված գլխավորապես գեղջկական երաժիշտների վրա, որը մեկն է ամենաբնորոշ ժողովրդական արվեստներից: Անհրաժեշտ էր, սակայն, որպեսզի ազգի վերջին աղետներից առաջ դրսևորվի նախաձեռնությունը մի ուսյալ-լուսավորյալ արվեստագործի, որը կարենար քաղել և ներկայացնել այդ արվեստի ամենաարժեքավոր կողմերը: Այդ արվեստագործը Կոմիտասն եղավ: Իր ձեռք բերած տեխնիկական գիտակությամբ, իր լայն երաժշտականութ-

---

<sup>52</sup> Գաստուե Ա., Կոմիտաս Վարդապետը և հայոց երաժշտությունը (գրույց Փարիզի ռադիոյով 1936 թ. ապրիլի 27-ի երկուշաբթի օրը).- Կոմիտասական, 2, էջ 263-264:

յամբ և գեղեցիկի ու ճշմարտի իսկական ներշնչանքով Հայր Կոմիտասը հարստացրեց իր ստեղծագործությունը հոյակապ ներդաշնավորումներով՝ մեծամասամբ կատարելապես գեղեցիկ: Նա հաջողեց զգեցնել այդ մեղեդիները ձայնային ներդաշնակումներով, հենվելով իր ճշմարիտ գիտության, փորձի և գիտակության վրա, որոնք իրենց ծայրահեղ հարստության մեջ անխաթար պահպանում են այնքա՛ն ճարտարորեն ներկայացված եղանակներն ու կշռույթները: Այս պոլիֆոնիկ վերսիաների մեջ մեղեդիների լադային բնույթը, արդիական մոտեցումով հանդերձ, հրաշալի կերպով հարգված է»<sup>53</sup>: Այնուհետ Գաստունն խոսում է Կոմիտասի և ֆրանսիական երաժշտության առնչությունների մասին՝ նշելով, որ 1906-1907 տարեշրջանի Կոմիտասի այցելությունը «առիթ դարձավ ֆրանս-հայկական մի հոյակապ փառատոնի: Նրա ելույթը 1914 թ.՝ երաժշտագիտության միջազգային համագումարում, եղավ ամենաակնառուներից մեկը, որ նրան ներկայացրեց պայծառ լույսով»<sup>54</sup>:

Փարիզի ռադիոյով ունեցած իր ելույթը Ամեդեյ Գաստունն եզրափակել է հետևյալ կերպ. «Կարող եմ ավելացնել, առանց ազգային սին հպարտության, քանի որ սա մի փաստարկում է, որ ինձանից առաջ ուրիշներն արել են, և ես ինքս էլ լսել եմ հենց իրենից. այն օրից, երբ Հայր Կոմիտասը շփման մեջ մտավ ֆրանսիական երաժշտության հետ, ավելի հստակորեն գիտակցեց թե ինչ էր ուզում իրականացնել, և նրա հանճարը դրսևորվեց ավելի լիորեն: Արդյո՞ք, ուրեմն, մի որոշ հեռավոր աղերս կա ֆրանսիական և հայկական արվեստագործական մտքերի միջև...»<sup>55</sup>:

---

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 264-265:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 265:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 266:

Հայ հոգևոր երգերի ունկնդրումից անմիջապես հետո Կոմիտասին է մոտեցել Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, ավստրիացի անվանի երաժշտագետ Գվիդո Ադլերը և բացականչել. «Չեմ գիտեր, թե աստված եթե հայոց ձայնը չլսե, ալ որո՞ւն ձայնը պիտի լսե»: Իսկ Ֆինլանդիայի ներկայացուցիչ, երաժշտագետ Իլմար Քրոնը ավելացրել է. «Աստված ձեր ժողովրդին ազատություն և անդորրություն տա, որպեսզի կարենաք գեղարվեստի մեջ ազատորեն սավառնիլ և մարդկային կյանքին համար պիտանի բաներ ընել»<sup>56</sup>: Եվ Կոմիտասը, որպես հայ երաժշտության իրական պատգամաբեր, իր առաքելությունը լիուլի կերպով իրագործած մարդու գոհունակությամբ պատասխանել է. «...Ամենն ավելի զիս հուզեց այն բանը, որ այդ օտար հեղինակավոր երաժշտագետները, լսելով իմ բացատրություններս, հասկցան և համոզվեցան, որ աշխարհի մեջ կա հայ երաժշտություն մը՝ բոլորովին ինքնատիպ և ինքնուրույն, այնպես, ինչպես հայ լեզուն և հայ կյանքը, մինչդեռ մեր ժողովուրդը դեռ կտարակուսի թե ինքը լեզու ունի, երաժշտություն ունի ու կյանք ունի»<sup>57</sup>: Հայտնի է, որ հենց իր որոշ հայրենակիցների ժխտական հայացքները հերքելու նպատակով է Կոմիտասը գրել «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հայտնի հոդվածը, որով ապացուցում է հայ ազգային-ժողովրդական երգի գոյությունն ու ինքնուրույնությունը: Իսկ օտար երաժշտագետներից արժե վկայակոչել նաև Կոմիտասի ժամանակակից գերմանացի բարձրաստիճան սպա Ֆրանց Կարլ Էնտրեսին, ով իր աշխատություններից մեկում նշել է. «Հայկական երաժշտությունը ոչ միայն հետաքրքրական է, այլև ներ-

<sup>56</sup> Շահպազ Հրանուշ, Հայ երաժշտության պանծացումը.- «Ազատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 26 հունիսի - 9 հուլիսի 1914, № 1548, էջ 1:

<sup>57</sup> Նույն տեղում:

կայացնում է անհուն գեղեցկություն: Պոլսի մեջ ինձ համար մեծ բավականություն էր հայկական երաժշտության մի վարպետի հետ երգել ու նվագել: Այդ անձը ազնիվ, խելացի և մեծահասունճար հայր Կոմիտասն է: Այդ առթիվ ես կարողացա քննական մի ակնարկ նետել խիստ կատարելագործված հայկական ձայնական երաժշտության վրա: Այնտեղ կան իրական գանձեր՝ Եվրոպայի համար անծանոթ: Իմ այս ասածի վրա ավելացնում եմ նաև այն, որ աշխարհի ոչ մեկ երգչախումբ այնքան մաքուր և հստակ երգած չէ, որքան Կոմիտասինը»<sup>58</sup>:

Կոմիտասի և հայկական երաժշտության մասին նույնքան մեծ ակնածանքով ու ջերմությամբ է արտահայտվել նաև ֆրանսիացի նշանավոր կոմպոզիտոր, երաժշտագետ Շարլ Կոհիլինը կամ Կոկլենը. «Հայոց երաժշտությունը ամենից առաջ շատ քնքույշ է, լուսավոր, բայց տխուր նաև՝ յուրահատուկ մի տխրություն, որ լույս է պարունակում... Ինչպես ձեզ ասացի քիչ առաջ, արտառոց նախապաշարունակ է կարծելը, թե ամեն ոք, որ ուժեղ է սեփական թեմաներով հորինելու, ի վիճակի է իրականացնել ֆուկլորի հարազատ բազմաձայնական մեկնաբանություն-մշակումներ: Ընդհակառակը, ոչ մի բան ավելի նրբին զգայնություն չի պահանջում Բայց հայր Կոմիտասն օժտված էր այդ կախարդական հատկությամբ բոլորից ավելի: Հայկական երաժշտության մթնոլորտում աճած, ջանադիր ու բանիբուն, օժտված ջերմ երևակայությամբ և առաջնակարգ երաժշտական տվյալներով, հավելյալ՝ նրա հոյակապ տեխնիկան, գործեց հրաշքներ, որքան հարազատ, նույնքան և բազմազան: Նա պահպանում է այն կատարյալ պարզությունը, որ պահանջում է ֆուկլորային մթնոլորտը, մի պարզություն՝ լի

<sup>58</sup> Գասպարյան Գ. Ն., Կոմիտաս. Կենսագրական ակնարկ. - ԺԿՄ, էջ 28-29:

նրբությունը, և բոլորովին հակառակը պարզունակ արվեստի ու տափնակ ներդաշնակումների...: Ես ողջունում եմ նրա հիշատակը հարգալից և համակրական հույզով, ինչպես և հիացմունքով, որ սլարսական ենք նրան բոլորս այն գործի համար, որով անմահացավ ի՛նքը և անմահացրեց երաժշտությունը հայոց»<sup>59</sup>:

Ուշադրության է արժանի նաև ռուսաստանցի հայտնի կոմպոզիտոր և դիրիժոր Թովմաս Հարտմանի «Կոմիտաս» հոդվածը, որ 1919 թվականին Թիֆլիսում նրա կարդացած դասախոսության թարգմանությունն է ռուսերենից<sup>60</sup> և լույս է տեսել Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսում՝ 1934 թ.: Հեղինակը մասնավորապես ասել է. «Այս օրվան երգահանդես-դասախոսության նպատակը մինն է. Կոմիտասին ներկայացնել ոչ միայն իբրև մի օժտված երաժիշտ, այլ մի կոմպոզիտոր, որ քանքարի դրոշմն է կրում և որի անունը ռուկե տատերով կարձանագրվի հայ երաժշտության պատմության էջի վրա մեջ: Ես հավատում եմ հայ երաժշտության ապագային, դրսևիետև մի ազգ, որ ստեղծած է հայ երգը, մի ժողովուրդ, որի ձևոքն է եղած Պարսկաստանի երաժշտական կյանքը (հայտնի է, որ սլարսիկ երաժիշտների մեծամասնությունը հայեր են եղած), մի ժողովուրդ, որ երաժշտական անցյալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայի մի շարք մեծ անուններ: Այդ անուններին արժանի է կլինի, անշուշտ, Կոմիտասի անունը»<sup>61</sup>: Այնուհետ Հարտմանը հիշատակում է ֆրանսիացի մի շարք մեծանուն կոմպոզիտորների և երաժշտագետների, այդ թվում՝ Մորիս Ռավելի,

<sup>59</sup> Կոմիտասական, 2, էջ 267-269:

<sup>60</sup> Հարտման Թովմաս, Կոմիտաս.- ԺԿՄ, էջ 54-61, 331 (ծան. 2.- թարգմ.՝ Մարգարյան Կաջարյանի):

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 55:

Ռոմեն Ռոլանի<sup>62</sup>, Կլոդ Դեբյուսիի և Լուի Լալուայի<sup>63</sup> անունները, որպես Կոմիտասի արվեստով ու հայկական երաժշտությամբ հիացողների: Հանգամանակից կերպով բնութագրելով Կոմիտասի տարբեր ժանրերում կատարած բարձրարվեստ մշակումները, հեղինակն այն համոզմանն է հանգում, որ Կոմիտասը «նախ և առաջ կոմպոզիտոր է»<sup>64</sup>: «Հանճարեղ Կոմիտասը նախագգայնության ուժով գործադրեց այդ ոճը (բազմաձայնությունը), և այնպիսի կատարելությամբ, որ հազիվ իր արևմտյան արվեստակիցներից մինը կարողանար իրագործել»<sup>65</sup>: Հարտմանը, ինչպես և Կոմիտասի արվեստով զմայլվող բազում հեղինակավոր այլագրերաժիշտներ, նույնպես նկատել են, որ «համեստ Կոմիտասը հրճվում էր ոչ այնքան իր հաջողություններով, այլ նախ երաժշտության փառաբանության համար»<sup>66</sup>: 1914 թվապես զրեանուանը, երբ Փարիզի երաժշտական կյանքում Կոմիտասի երաժշտների հաջողությունը հասել էր իր գագաթնակետին, նա դեռևս երազում էր Պոլսում հայկական կոնսերվատորիա բացելու մասին: Ավադ, գոնե Կոմիտասի հայրենակիցները պետք է կարողանային պահել նրան Փարիզում թեկուզ որպես հայկական եկեղեցու երգչախմբի վարիչ, և գուցե նա խուսափեր 1915 թ. արհավիրքից, որ, ցավոք, ճակատագրական եղավ...

Անշուշտ հարկ է անդրադառնալ նաև Սանկտ-Պետերբուրգի կոմպոզիտորների միության անդամ, երաժշտագետ ու մանկավարժ պրոֆ. Աբրամ Յուսֆինի հողվածին: «Կոմիտասական» ժո-

<sup>62</sup> Romain Rolland, «Pelléas et Mélisande», C. Debussy.- «Musiciens d'aujourd'hui», P., 1908.

<sup>63</sup> Հարտման Թովմաս, Կոմիտաս.- ԺԿՄ, էջ 59:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 60:

դովաճուռի 2-րդ գրքում տեղ գտած իր հանգամանալից հողվածում տեսական-գեղագիտական քննախույզ վերլուծման ենթարկելով Կոմիտասի «Լոռվա հորովել»-ը<sup>67</sup>, նա գրել է. «Այդ հորովելի ֆոլկլորային տարբերակի և Կոմիտասի հանճարեղ մշակման համեմատությունը բերում է այն եզրակացության, որ խմբերգային մեկնաբանման մեջ կոմպոզիտորը կարծես տվել է այս ստեղծագործության ևս մի նոր, այդ երաժշտության էության մեջ բավականաչափ եռանդուն «ներխուժուր» տարբերակ: Փաստորեն Կոմիտասը հանդես է եկել ևս մի ժողովրդական կատարողի դերով...»<sup>68</sup>: Նաև ուշագրավ համեմատություն է արվել հնդկական հնագույն ռազաների հետ. «Լոռվա հորովել»-ի դեպքում մենք առնչվում ենք շատ ավելի խորքային, քան ռազաների կուլտուրան է, երևույթների հետ, որոնց համար անգամ հնդկական դասական երաժշտությունը կարող է ժառանգորդ համարվել (այս խոսքի ամենալայն առումով...)<sup>69</sup>: Հողվածն ավարտվում է հեռույալ կերպ. «Ելնելով վերը շարադրվածից, կարելի է հանգել օրինաչափ եզրակացության Կոմիտասի գեղարվեստական ինտելեկտի առանձնահատուկ ուժի մասին, որը կարողացել է Լոռվա գութաներգը գրի առնել նրա կառուցվածքի շարժունությամբ հանդերձ: Նա հայտնագործել է գրառման այնպիսի եղանակ, որի դեպքում ստեղծագործության մի կոնկրետ տարբերակի գրանցման հետ փաստորեն ձայնագրվել են նաև ինվարիանտներն

<sup>67</sup> Կոմիտասն իր ձայնագրած «Լոռվա հորովել» երգի մասին ընդարձակ ն հանգամանալից հողված է գրել, որը մեկ երգի վերլուծության բացառիկ օրինակ է երաժշտագիտության մեջ (տե՛ս Կոմիտաս, Լոռու գութաներգը՝ Վարդաբույր Գյուղի ռձով. - Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 68-101:

<sup>68</sup> Յուսֆին Աբրամ, Անկայուն կոմպոզիցիայի ամբողջականության պրոբլեմը. Կոմիտասական, 2, Եր., 1981, էջ 167:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 169:

իրենց ամբողջականության և փոխադարձ կապի մեջ: Մեզ չպիտի շփոթեցնի գրանցման բուն փաստը, որը ստաբիլիզացիայի է ենթարկում ամեն մի հնչող նյութ: Կոմիտասը ոչ միայն գրի է առել գութաներգը, այլև կարողացել է լսել և մեզ հաղորդել մտքերի և զգացմունքների այն գորեղ ալիքը, որը ձևավորվելով և սահմանվելով դարերի խորքում, եկել հասել է մեզ միասնական գեղարվեստական, հայրենասիրական և էթիկական կամքի մի պոռթկումով: Այդ պատճառով Լոռվա գութաներգը ոչ միայն հայ ժողովրդի մեծ յճակույթի մի հուշարձան է, այլև կենդանի երաժշտական ստեղծագործություն, որը շարունակում է իր զարգացումը, ամբողջական է իր անկայուն կառուցվածքի մեջ և ուղղված է դեպի ապագան իր զարգացմամբ»<sup>70</sup>:

Եվ վերջապես, ռուս անվանի կոմպոզիտոր և մանկավարժ Միխայիլ Գնեսինը, 1913 թ. լինելով Պոլսում և ուկնդրելով Կոմիտասին, բացականչել է. «Ես զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործությունները իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլիներ սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից»<sup>71</sup>:

Այսպիսով, Կոմիտասն իր արտասահմանյան ուղևորությունների ընթացքում հանդես գալով բազմաթիվ անկրկնելի համերգ-դասախոսություններով, մեծապես ճանաչելի դարձրեց հայկական երաժշտությունը միջազգային ասպարեզում՝ սքանչելի պահեր պարզելով օտարազգի ունկնդիրներին և արժանանալով իր հանճարին վայել գերագույն գնահատականների:

---

<sup>70</sup> Անդ, էջ 169-170:

<sup>71</sup> Հայր Անոկ Տայեան, Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ, հ. Ա (անտիպ), էջ 86:

АРПИ ВАРДУМЯН

*Институт древних рукописей Матенадаран имени св.  
Месропа Маштоца*

## ИНОСТРАННЫЕ АВТОРЫ ОБ ИСКУССТВЕ КОМИТАСА И ОБ АРМЯНСКОЙ МУЗЫКЕ

*Резюме*

Великий армянский композитор Комитас своими незабываемыми концертами и лекциями в разных странах способствовал тому, что многие авторитетные европейские музыканты уделяли пристальное внимание на армянскую средневековую и народную музыку, до тех пор им неизвестную.

После каждого концерта Комитаса в иностранной прессе появлялось множество статей, в которых известные авторы выражали свое высочайшее восхищение искусством Комитаса как гениальным композитором, так и талантливым дирижером и прекрасным исполнителем.

Но великий Комитас был настолько скромной личностью, что все эти похвалы принимал на счет армянской музыки и ликовал, когда всемирно известные композиторы и музыковеды выражали свое глубокое уважение и изумление после каждого его концерта.

FOREIGN AUTHORS ABOUT 'THE ART OF KOMITAS  
AND ARMENIAN MUSIC

*Summary*

The great Armenian composer Komitas with his unforgettable concerts and lectures in different countries contributed much to the fact that many respected European musicians have paid close attention to the Armenian medieval and folk music, until then unknown to them.

After each concert of Komitas in the foreign press appeared numerous articles in which well-known authors expressed their admiration of the highest art of Komitas as a genius composer and talented conductor and a wonderful performer.

But the great Komitas was such a modest personality that all these praise took on the expense of Armenian music and rejoiced when the world-famous composers and musicologists expressed their deep respect and amazement after his concerts.

**ՔՍԵՆՈՓՈՆԻ ԱՐՄԵՆԻՈՍ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՎԱՆԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՎԱԶՈՒՆԻՆԵՐԻ  
ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ (Մ.Թ.Ա. 585 Թ.)**

Հույն գորավար-պատմագիր Քսենոփոնն իր «Կյուրոպեդիա» վեպում պատմում է Հայոց թագավոր Արմենիոսի մասին, որը ժամանակակից է Մարաստանի (Մեդիա) թագավոր Աժդահակ-Աստիազեսին (մ.թ.ա. 584-553 թթ.), և որի որդին է Տիգրան արքայազնը: Քանի որ այս Տիգրանին Մովսես Խորենացին հիշատակում է *Երուանդեան* հայրանունով<sup>1</sup>, այս պատճառով գրեթե բոլոր պատմաբանները, սկսած Միքայել Չամչյանից, Քսենոփոնի ավանդած «արմենիոս» անունը ընդունում են իբրև ցեղանուն՝ «արմեն, հայ» իմաստով և նրան անվանում են Երվանդ՝ նույնացնելով Խորենացու Երվանդ Սակավակյացի հետ: Իրականում Երվանդ է կոչվել ոչ թե Արմենիոս թագավորը, որը ըստ Քսենոփոնի իշխել է Հայաստանում ավելի քան 20 տարի, այլ նրա որդի Երվանդ Սակավակյացը, որը զոհվել է մ.թ.ա 570 թ. Աստիազեսի դեմ մղված պատերազմում, 20-22 տարեկան հասակում: Ահա թե ինչու Խորենացին Երվանդին անվանում է *սակաուակյաց* (վաղամեռիկ), որը չէր կարող 10 տարի թագավորած լինել Հայաստանում (մ.թ.ա. 570-560 թթ.), ինչպես ընդունված է հայ պատմագիտության մեջ: Ի հիշատակ իր զոհված թագաժառանգ որդու, Արմենիոս թագավորը նրա մանկահասակ որդուն՝ Տիգրանին, հոչակել գահաժառանգ: Ըստ այսմ, Արմենիոս թագավորը ոչ թե Տիգրանի

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, Ա, ԻԴ:

հայրն է, ինչպես նշում է Քսենոփոնը<sup>2</sup>, այլ նրա պապը, որի անունը պահպանել է Խորենացին Հայկյան 9 թագավորների ցանկում՝ *Հայկակ* ձևով, իբրև համարժեք հունարեն *Արմենիոս* անվան: Նշանակում է Քսենոփոնի մոտ *Արմենիոսը* ոչ թե ցեղանուն է, այլ՝ անձնանուն:

Մ.թ.ա. 590 թ. Վանյան կամ Ռշտունյաց հարստության անկումից հետո, երբ մեղա-բաբելոնյան միացյալ ուժերը գրավեցին Տուշպա մայրաքաղաքը և սպառնում էին ամբողջ Հայաստանին, Արմենուպրիա երկրում իշխող Հայկյան 9 թագավորներից 7-րդը՝ Հայկակ-Արմենիոսը, համախմբեց Վանի թագավորության (Ուրարտու) տեղաբնիկ հայկական ցեղերը և, հակահարված հասցնելով Մեդիայի հզոր թագավոր Կյուաքսարեսին՝ մ.թ.ա. 585 թ. հռչակվեց ամբողջ Հայաստան-Ուրարտուի թագավոր Հայոց Այրարատ ուտանում՝ Էրեբունի բերդաքաղաքում: Պետք է կարծել, որ ներկայումս Էրեբունի ամրոցում Խալդիի տաճարին կից բացված սյունազարդ դահլիճը՝ 30 սյուներով հենց Արմենիոս թագավորի հիմնած գահանիստ պալատն է: Ամենայն հավանականությամբ Արմենիոս թագավորի անունն է կրում Կարմիր բլուրում հայտնաբերված կավե գլանաձև կնիքը, որ բիայնական արձանագրություններում ընթերցվում է «Էրիմենա»:

Այսպիսով, պետք է խոսել ոչ թե մ.թ.ա. 590 թ. Վանի թագավորության կործանման, այլ այդ թվականից հետո Հայաստան-Ուրարտու պետության մեջ Վանյան կամ Ռշտունյաց հարստությանը փոխարինելու եկած Հայկազունիների հարստության վերականգնման մասին, որի հիմնադիրն է Արմենիոս-Հայկակ թագավորը և որի արքայանիստ ուտանը դարձավ վերստին հինավուրց

---

<sup>2</sup> Cyropaedia - the education of Cyrus by Xenophon, III, 5-7, <https://tripinsurancestore.com/4/cyropaedia.pdf>

Այրարատ նահանգը: Սրանով Արմենիոս-Հայկակ թագավորը փաստորեն վերականգնեց մ.թ.ա. 9-րդ դ. սկզբում Ուրարտուում իշխած Հայկազունիների հարստությունը՝ հանձին Արամ(ե)ի, որի մայրաքաղաքն էր Արգաշկուն: Մ.թ.ա. 585 թ. Հայկազունների հարստության վերահաստատումը Վանի թագավորությունում և նրա հիմնադիր Արմենիոս-Հայկակ նոր թագավորի բացահայտումը առ ոչինչ է դարձնում այն սնանկ վարկածը, իբր մ.թ.ա. VI դարում հայ ժողովուրդը թնակոխել է իր կազմավորման երկրորդ փուլը, որն այլ բան չէ, քան արմենների եկվորության մերժված վարկածի փոխակերպումը: Պատահական չէ, որ այդ երկու հակազիտական վարկածներն էլ համառորեն կառչում են մ.թ.ա. VI դարից:

АЛЬБЕРТ МУШЕГЯН

*Институт литературы НАН РА*

ЦАРЬ АРМЕНИОС КСЕНОФОНТА - РЕСТАВРАТОР  
ДИНАСТИИ ГАЙКАЗУН В ВАНСКОМ ЦАРСТВЕ

(585 г. до н.э.)

*Резюме*

Древнегреческий полководец-историк Ксенофонт в своем труде «Киропедия» повествует историю царя Армениоса, современника мидийского царя Аждаака-Астиагеса (584-553 гг. до н.э.). Сыном Армениоса был принц Тигран. Поскольку Мовсес Хоренаци (V век) этого Тиграна упоминает по отчеству Ервандян, поэтому почти все историки, начиная от Микаэла Чамчяна, слово «Армениос» принимают в качестве этнонима *армянин* и его называют Ерванд, отождествляя его с Ервандом Сакавакцем, упомянутом у Мовсеса Хоренаци.

В действительности, Ерванд был сыном царя Армениоса-Гайкака, правившего в Армении в течение более чем 20 лет.

ALBERT MUSHEGHYAN

*Institute of Literature of NAS RA*

**XENOPHON'S KING ARMENIOS - THE RESTORER OF THE  
HAIKAZUN DYNASTY IN THE KINGDOM OF VAN (585 BC)**

*Summary*

Ancient Greek general-historian Xenophon tells about the Armenian king Armenios, a contemporary of the Median king Ajdahak-Astiages (584-553 BC). The son of Armenios is Prince Tigran.

Since this Tigran is mentioned by Movses Khorenatsi (the 5<sup>th</sup> century AD) under the patronage of Yervandians, for this reason, almost all historians, beginning from Mikayel Chamchian, have considered the word «Armenios» as an ethnic name – *Armenian*, and have called him Yervand, identifying him with Yervand Sakavakyats mentioned by Movses Khorenatsi.

In fact, Yervand was the son of King Armenios-Haikak, who ruled, according to Xenophon, for more than 20 years in Armenia.

**ՖՐԵՂԵՐԻԿ ՄԱԿԼԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇԵՏԱԶՈՏՈՂ**

Ֆրանսիական հայագիտության երևելի, վաստակաշատ ու հիացմունքի արժանի անուններից է Ֆրեղերիկ Մակլերը (1869–1938 թթ.): Նա թողել է հսկայական հայագիտական ժառանգություն, Ֆրանսիայում եղել արմենոֆիլ շաժման պարագլուխներից: Հայագիտական նյութեր և փաստեր հայթայթելու նպատակով նա գիտական գործուղումներով մեկնել է Հոլանդիա, Իսպանիա, Իտալիա, Ավստրիա, Լեհաստան, Դանիա, Ռումինիա, Բուլղարիա, Սիրիա, Թիֆլիս, Կոստանդնուպոլիս, Էջմիածին, կազմել է իր այցելած վայրերի գրադարանների, ինչպես նաև Ֆրանսիայի ազգային գրադարանում պահվող հայոց գրչագրերի ձեռագրացուցակները: Մակլերն աշխարհի տարբեր գրադարաններում ընդօրինակել է տվել հայկական ձեռագրեր, դրանց կցել հիշատակարաններ և որպես ձեռագրի ստացող նշել իր հայացած ազգանունը՝ «ստացող Ֆրեղերիկոս Մակլերյանց Բաբունի»:

Ինչպես վկայում է Ֆ. Մակլերի մեծագույն աշակերտն ու հետևորդը՝ Ֆրեղերիկ Ֆեյդին, հայագետն անտիպ վիճակում թողել է մեծաքանակ գիտական նյութ, որը չի հասցրել հրատարակել: Հայտնի է, որ նա եղել է Հայ դատի նվիրյալ պաշտպաններից:

Հայագիտությունը Մակլերին է պարտական Մեբեոսի պատմության ֆրանսերեն թարգմանության համար, որը հայագետը խորագրել է հետևյալ ձևով՝ «Histoire d'Héraclius par l'évêque

Sebéos»<sup>1</sup>: Այս աշխատությունը Մակլերը նվիրել է ֆրանսիացի հայտնի հայագետ Օգյուստ Կարիերի հիշատակին: Թարգմանությանը կցված առաջաբանում Մակլերը հայտնում է, թե Կարիերը երազում էր ֆրանսերեն թարգմանել Սեբեոսի երկը և այդ նպատակով սկսել էր թարգմանել պատմության առաջին հատվածները, սակայն մահը խանգարում է նրան իրագործելու իր մտահղացումը: Եվ ահա Անտուան Մեյեն Մակլերին խորհուրդ է տալիս ավարտին հասցնել Կարիերի նախաձեռնությունը՝ թարգմանելով Սեբեոսի երկը և այն հարստացնելով ծանոթագրություններով: Մեյեի ցուցումով, նաև մասնագիտական խորհուրդներով ոգևորված՝ Մակլերն իրականացնում է այդ թարգմանությունը, խորին շնորհակալություն հայտնելով վերջինիս, ինչպես և իր երախտագիտությունը հղելով Արշակ Չոպանյանին՝ Ֆրանսիայում ճանաչված հայ հրապարակախոսին, բանաստեղծին, որի գիտական պատրաստվածությանն ինքն ապավինել է բազմիցս:

Մակլերը Սեբեոսի պատմության վերաբերյալ համառոտ ակնարկ է դնում թարգմանության առաջաբանում: Սեբեոս եպիսկոպոսն առաջին հայ պատմիչն է, որ ներկայացնում է արաբների արշավանքները Հայաստան: Նա Մասանյանների հարստության կործանման ժամանակակիցն է և նկարագրում է իր օրերի պատմական դեպքերը, որոնց հաճախ ականատես է եղել: Սեբեոսը ճշմարտապատում պատմիչ է:

Մակլերն ասում է, թե իր նպատակը չէ ներկայացնել գիտապատմական հետազոտություն 6-7-րդ դարերի Հայաստանի վերաբերյալ, նպատակն ավելի քան համեստ է. այն է՝ Սեբեոսի երկը թարգմանել ֆրանսերեն, դրան կցել պատմական ու բանասիրա-

---

<sup>1</sup> Histoire d'Héraclius par l'évêque Sébéos, traduite de l'Arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904.

կան ծանոթագրություններ, տալ դրանց վերաբերող անհրաժեշտ բացատրություններ: Մակլերն իրականացրել է իր ծրագիրը:

Գիրքը կոչվում է “Histoire d'Héraclius” («Հերակլի պատմություն»)՝ բավականին անհարմար վերնագիր, քանի որ հեղինակը շատ մանրամասն պատմում է նաև ուրիշ պատմական իրադարձությունների մասին, մյուս կողմից էլ, այլ առումով, պատումի հիմնական առանցքը Հերակլի և պարսից արքա Խոսրով Երկրորդի միջև եղած պատերազմներն են: Սեբեոսի պատմության մեջ կան հետաքրքիր մանրամասներ այդ երկու տիրակալներին նախորդող գահակալների, ժամանակակիցների և նրանց հաջորդների մասին: Պատմության վերջին մասում մի քանի էջով նկարագրվում է արաբների հարձակումը Պարսկաստանի, Հայաստանի և Բյուզանդական կայսրության վրա: Պատմությունն ընդգրկում է 5-րդ դարավերջը և ձգվում է մինչև խալիֆ Մուավիայի գահ բարձրանալը (661 թ.):

Սեբեոսի գործը նախ և առաջ հոգևորականի գրած է: Եկեղեցու պատմիչը գուցե առավել է երևում այս երկում, քան քաղաքագետ պատմիչը: Այն ժամանակահատվածը, որում ապրել ու գործել է Սեբեոսը, 7-րդ դարն է, և այն հատկապես քննվել է կրոնական դիտակետից: Լինելով քրիստոնյա՝ հայերը չէին կամենում որևէ կապ ունենալ զրադաշտականության հետ, որը շատ անգամներ էր իրենց հալածել: Բյուզանդիայի հետ ունեցած կապերն էլ ավելի բարեկամական չէին: Քաղկեդոնի եկեղեցական ժողովից հետո միաբնակության հարցը երկու տարբեր ճամբարի բաժանեց արևելյան քրիստոնյաներին, և մի անգամ գործի դրված պառակտումն այլևս հաստատեց նրա ամենօրյա գոյությունը: Հայերի ինքնուրույն քաղաքականությունն այդ ժամանակահատվածում ստիպեց Հայկի սերունդներին դիմակայել իրենց հակառակորդ-

ներին՝ բուզանդացիներին ու պարսիկներին՝ մինչև արաբների ներխուժումները Հայաստան: Այդ կոիվները, պայքարը, անվերջանալի պատերազմները Մեբեոս եպիսկոպոսը պատմում է շատ մանրամասն: Պատմիչին բնորոշող գծերը՝ արժանիքներով ու թերություններով, խնամքով վերլուծված և բարձրացված են Հայնրիխ Հյուբշմանի կողմից:

1930 թ. Փարիզում լույս է տեսել Ֆ. Մակլերի «Հայաստան և Ղրիմ» («Arménie et Crimée, Note d'histoire, notice de manuscrits») աշխատությունը՝ պատմական ու ձեռագրական նյութերի ծանոթագրություններով: Ինչպես հայագիտական իր բոլոր աշխատություններում, այստեղ ևս Ֆ. Մակլերը ցուցաբերում է գիտնականի բարեխղճություն, նաև հայ ժողովրդի կատարած դերի գնահատման անկողմնակալություն:

«Հայաստան և Ղրիմ» աշխատությունը բաղկացած է երեք ենթաբաժնից՝ 1) Ո՞րն է եղել հայերի դերը Ղրիմում, 2) Պատմական ակնարկ, 3) Ձեռագրերի ուսումնասիրություն:

Ուսումնասիրության սկզբում Ֆ. Մակլերը խստորեն ահազանգում է շատ զգույշ մոտենալ ճանապարհորդների ու հետազոտողների հայտնած տեղեկություններին, որովհետև նրանց մեջ կան այնպիսիք, որոնք ունեն կանխակալ կարծիք և հաճախ որևէ ժողովրդի մասին դատում են շատ սուբյեկտիվ, ու հենց այդ կողմնակալ կարծիքն էլ մատուցում են ընթերցողին: Այս առումով հայագետը ներկայացնում է գերմանացի ճանապարհորդ Ն. Կլեմանի ուղեգրության մեջ դրիմահայերին տրված գնահատականը<sup>2</sup>:

Մակլերն իր պարտքն է համարում ամբողջովին հերքել Կլեմանի հաղորդած փաստերը դրիմահայության վերաբերյալ: Նրա

---

<sup>2</sup> St u Macler F., Arménie et Crimée, Paris, 1930, էջ 347-349:

կարծիքով վերջինիս դատողությունները կորցնում են իրենց կշիռը, երբ լսում ենք ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Ռյոիլիի հաղորդումները՝ Ղրիմի հայերի մասին: Ֆրանսիացի ճանապարհորդն ասում է, թե հայերը շատ մեծ դեր են ունեցել Ղրիմի զարգացման գործում: 18-րդ դարի վերջին քառորդին Ղրիմն ուներ ավելի քան հինգ հարյուր հազար բնակիչ: Իմանալով հայերի ստեղծարար կարողությունների մասին՝ 1778 թ. Եկատերինա Երկրորդի հրամանով մեծաքանակ հայ բնակչություն տեղափոխվեց Ազովի ծովի մերձափնյա տափաստանային տարածքները: Մակլերի կարծիքով՝ հենց հայերի շնորհիվ Ղրիմը հարստացավ, և հայերը ճենովացիների ու Ղրիմի թաթարների հետ միաբան Արևելքի առևտրին տվեցին չտեսնված հոյակապ թոփչք: Ճանապարհորդ Ռյոիլին համոզված է, որ հայերը խելացիորեն նպաստել են Ղրիմի առևտրի զարգացմանը՝ Արևելքը վարպետորեն կապելով Եվրոպայի հետ: Ղրիմի հայերը հզոր օգնություն են ցույց տվել ճենովացիներին՝ նրանց ծովային ու ցամաքային առևտրում: Երբ վերջիններս իրենց քարավանները Արևելքից ուղղում են Ֆլանդրիա, Նյուրենբերգ և Ամստերդամ, այդ քարավանները ղեկավարվում էին հայերի կողմից, ու ճենովացիները հենց դրանով էլ կարևորում էին հայերի հաստատվելը Ղրիմում:

Ֆ. Մակլերը նշում է, թե ինքը ժամանակագրական կարգով կնկարագրի այն ձեռագրերը, որոնք ձեռքի տակ ունի և որոնց շնորհիվ առանց որևէ ճիգի կարելի է տեսնել, թե ինչպիսի բարձր արվեստ են ունեցել Ղրիմի հայերը՝ ստեղծելով գրչության և մանրանկարչության իսկական կոթողներ, և որ դա հակասում է այն թեր գնահատականներին, որ տվել էր դրիմահայությանը Կլեմա-

---

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 350:

նը: Հետազոտության մեջ Մակլերը վերհիշում է այն ջանքերը, որոնք գործադրում էր աբբա Սևինը Փարիզի արքայական գրադարանը նաև Ղրիմի հայ գաղթօջախից բերված ձեռագրերով հարստացնելու գործում<sup>4</sup>:

Իր ուսումնասիրության մեջ Ֆ. Մակլերը տպագրում է շատ հետաքրքիր զարդապատկերներ, լուսանցազարդեր: Առանձին ընտիր էջեր են ներկայացված առաքյալներ Պողոսի և Պետրոսի թղթերի ձեռագրերից՝ նրանց պատկերներով, Հունանը կետի բերանում, Ծաղկազարդի կանոնից մի էջ՝ լուսանցքում երեխան մազլցում է ծառը, Հովհաննես Մկրտիչը սրբերի կանոններում, Գրիգոր Լուսավորիչն ու պապ Սիլվեստրը և այլն: Որոշ ձեռագրերի նկարներում շատ հստակ երևում են հայ միջնադարյան երաժշտական ձայնանիշերը՝ խազերը:

Ֆ. Մակլերի «Հայաստան և Ղրիմ» հետազոտությունն արժեքավոր ներդրում է Ղրիմի հայկական երբեմնի հարուստ ու բազմամարդ գաղթօջախի պատմության ստեղծման շնորհակալ գործում և այն, անշուշտ, ունի ոչ միայն հայկական պատմամշակութային նշանակություն, այլև առավել լայն ընդգրկում:

Ֆ. Մակլերի հայագիտական ժառանգության բազմաձյուղ հետաքրքրություններից մեկը վերաբերում է 14-րդ դարի նշանավոր մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Տաթևացու «Ընդդեմ տաճկաց» հակաճառությանը<sup>5</sup>:

Մաշտոցյան մատենագրության մեջ դավանաբանական գրականությունը շատ հարուստ է: Նմանօրինակ գրականությունը բացի աստվածաբանական լինելուց եղել է նաև քաղաքական ու

---

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 361:

<sup>5</sup> Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ընդդեմ տաճկաց, ուսումնասիրեց և հրատարակեց Բաբգեն Եպս. Կլուվեսերյան, Վիեննա, 1930, էջ 50-186:

հայրենասիրական: Այդ առումով ուշագրավ է 5-րդ դարում Եգնիկ Կողբացու, Մովսես Խորենացու ու Եղիշեի երկերում եղած խիստ քննադատությունն ուղղված գրադաշտական կրոնի դեմ:

Իսլամի երևան գալուց, ու Հայաստանն արաբների կողմից նվաճվելուց հետո հայ մատենագրության մեջ սկսվում է նոր ուղություն՝ դավանաբանական պայքար ընդդեմ իսլամի:

Քանի որ մահմեդական երկրներն առավել երկար ժամանակահատված են նվաճողական պատերազմներ մղել Հայաստանում, հայ մատենագրության մեջ իսլամի դեմ ընդդիմության երևույթը եղել է տևական: Ավելին, մեր օրերում նույնիսկ գիրք է ստեղծվել «Հայաստանն իսլամը երևան գալուց հետո» խորագրով<sup>6</sup>:

8-րդ դարի պատմիչ Ղևոնդը, որի ողջ պատմությունը նվիրված է Հայաստանում արաբական արշավանքներին, ներկայացնում է իսլամի հակամարդկային բնույթն այլադավանների խնդրում. «Աստծո ճանապարհ եք կոչում ձեր ասպատակությունները, անողորմ սպանություններով և մարդկանց գերությամբ: Ձեր հավատը և վարքը այսպիսին են, իսկ ձեր վարձը և պարծանքը [իրքը] հրեշտակային կյանքն է»<sup>7</sup>:

Ընդդեմ իսլամի հակաճառության ամենաուշագրավ հուշարձանի հեղինակը՝ Գրիգոր Տաթևացին, քաջածանոթ էր մինչ իրեն հայ միջնադարյան մատենագրության մեջ եղած գրվածքներին և արդեն հարուստ ավանդույթի վրա ավելացնում է իր մանրակրկիտ աստվածաբանական ընդդիմախոսությունը, որը և

<sup>6</sup> Տե՛ս u Chalabian A., Armenia after the coming of islam, Southfield, Michigan, 2002.

<sup>7</sup> Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1982, էջ 84:

գրավել է Ֆ. Մակլերի ուշադրությունն ու արժանացել նրա թարգմանությանը<sup>8</sup>:

Ֆ. Մակլերը վկայակոչում է նաև բյուզանդական կայսր Լևոն Գ-ի պատասխանը արաբական խալիֆ Օմար Երկրորդին, որն ամբողջությամբ կրոնական խնդիրներին էր վերաբերում և պաշտպանում էր քրիստոնեությունը՝ որպես մարդասիրական կրոն:

Ֆրանսիացի հայագետը Գրիգոր Տաթևացու «Ընդդեմ տաճկաց» երկը ֆրանսերեն է թարգմանել մեծապես օգտվելով Բ. Կյուլեներյանի հրատարակած «Ընդդեմ տաճկաց» աշխատասիրությունից:

1971 թ. «Էջմիածին» ամսագրում լույս է տեսնում Ֆ. Մակլերի «Հայաստանը և Իսլանդիան» հոդվածը անվանի պատմաբան Մանվել Զուլայանի թարգմանությամբ<sup>9</sup>: Ըստ այդ հոդվածի՝ դեռևս 11-րդ դարում Հայաստանից հոգևորականներ (եպիսկոպոսներ) են գնացել հեռավոր Իսլանդիա ու այնտեղ ծավալել քարոզչական գործունեություն: Ֆ. Մակլերի առաջ բաց էին Եվրոպայի նշանավոր բոլոր գրադարանները, որոնցում նա մեծ եռանդով փնտրում էր հայկական նյութեր և, ահա, գնում է նաև այս փաստի հետքերով:

Մակլերը վկայակոչում է մի քանի ուրիշ վավերագրեր ևս, որոնք փաստում են, թե 11-12-րդ դարերում Եվրոպայի հյուսիսային երկրներ են եկել բյուզանդացիներ ու հայեր: Նա նշում է, որ Նորվեգիայի գահին բազմելուց հետո Հարալդ Դաժանը շարունակում է դաշնակցել Բյուզանդիայի հետ: Ավելին, Հարալդն իր եպիսկոպոսներին օժել է տալիս ոչ թե Հռոմի ենթակա Բրեմի

---

<sup>8</sup> St' u Macler F., L'Islam dans la littérature arménienne d'après Gr. Tathéwatsi, Paris, 1933.

<sup>9</sup> St' u «Էջմիածին», 1971, Զ-Է, էջ 73-76:

եկեղեցու միջոցով, այլ նրանց օծվելու է ուղարկում Անգլիա և Ֆրանսիա: Ու երբ նրան հիշեցնում են Հռոմի եկեղեցուն ենթարկվելու պարտականությունների մասին, նա բյուզանդական կայսրերի օրինակով պատասխանում է. «Ես Նորվեգիայում ուրիշ ոչ մի արքեպիսկոպոս չեմ ճանաչում, բացի ինձանից Հարալդից»: Եվ ահա թե ինչու Ալեքսանդր II պապը (1062 թ.) մի նամակով կշտամբում է Նորվեգիայի թագավոր Հարալդին, որը բացի Անգլիայում և Ֆրանսիայում օծված եպիսկոպոսներից իր ձեռքի տակ ունի նաև օտար չօծվածներ: Մակլերն այս փաստով հաստատում է հայ հոգևորականների Իսլանդիա գնալն ու քարոզելը:

Հայագետի կարծիքով՝ 11-րդ դարում սկանդինավյան ժողովուրդները նոր էին ընդունել քրիստոնեությունը: Նորվեգիայում քրիստոնեությունը վերջնականապես հաստատվեց 1033 թ., և Իսլանդիան քրիստոնեությունն ընդունեց Նորվեգիայից և ոչ Դանիայից, որի եկեղեցին ենթարկվում էր Հռոմին:

Այնուհետև Մակլերը հիշեցնում է, որ Հարալդ Դաժանի օրոք քրիստոնեությունը նրա երկրում վերջնական ու կատարելագործված վարդապետություն չունեք: Այդ ժամանակ Եվրոպայում կային կրոնական տարբեր շարժումներ, որոնցից էր ալբիգոյցիներինը, որը տարածված էր Բոսնիայում, Լոմբարդիայում, Ֆրանսիայի հարավում: Աղանդավորական այդ շարժումը սերտ աղերսներ ուներ Բուլղարիայի բոգոմիլների ու Հայաստանի պավլիկյանների հետ, որը ոչնչացվեց «Երանելի Թեոդորայի ջերմեռանդ կատաղությամբ»<sup>10</sup>:

<sup>10</sup> Դիլ Շ., Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, ֆր. թարգմանեց Շ. Մակսյույանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Մ. Բարբիկյանի. Եր., 2005, էջ 31-32:

Ֆ. Մակլերի հայագիտական ժառանգության մեջ բազմիցս անդրադարձեր կան պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը»: Նա չի ոգևորվում այն գիտնականների կարծիքներով, ովքեր Մովսես Խորենացուն համարում են կեղծարար և ոչ 5-րդ դարի պատմիչ: Մակայն որպես խորագետ հայագետ, նա ծանոթ է այն թեր ու դեմ կարծիքներին, որոնք առկա են իր ժամանակի հայագիտության մեջ:

Ռուս հին գրականության մեծագույն գիտակ Դմիտրի Լիխաչովը «Текстология» հետազոտության մեջ նկատում է, որ միջնադարի, առավել ևս հնադարի մատյաններն արտագրվելիս ենթարկվել են լուրջ փոփոխությունների. դրանցից հանվել են հատվածներ, դրվել նորերը, և շատ քիչ հուշարձաններ են հասել հեղինակային սկզբնական բովանդակությամբ: Դարերի ընթացքում առավել փոփոխությունների են ենթարկվել աշխարհիկ ու պատմական բովանդակություն ունեցող երկերը, մի հանգամանք, որը մեծ մասամբ չէր վերաբերում կրոնական գրքերին. «В еще большей степени подвергалась переработкам литература светская - в первую очередь историческая»<sup>11</sup>: Զարմանալ կարելի է որոշակի մի փաստի համար. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ անհաշտ պայքար է մղվում զրադաշտական կրոնի դեմ: Եթե այդ մատյանը գրվել է 7-րդ դարի վերջում կամ նույնիսկ 8-րդ դարում, ապա պատմությունից հայտնի է, որ Սասանյան դինաստիան (226-651) նշված ժամանակներում այլևս գոյություն չունեի, և նրա վերացման հետ արգելվեց զրադաշտական կրոնը, ու նրան փոխարինեց մահմեդականությունը: Էլ ինչո՞ւ էր պատմահայրը դրա դեմ պայքարում:

---

<sup>11</sup> Лихачев Д. С., при участии А.А. Алексеева, А.Г. Боброва, Текстология, На материале русской литературы X-XVII веков, Санкт-Петербург, 2001, с. 395.

1903 թ. "Journal Asiatique" ամսագրում լույս է տեսնում Մակլերի "La chronique de Maribas Kaldoyo (Mar Abas Katina [?], Essai de critique historico-littéraire)" հրապարակումը, որի հիմնական նպատակը Մար Աբասի բնագրի ֆրանսերեն թարգմանությունն էր ու խորենացիագետներին այն մատուցելը<sup>12</sup>:

Հայ մանրանկարչությամբ ու զարդարվեստով Մակլերը զբաղվել է 1913 և 1924 թթ.: Ավելի շուտ հենց այդ տարիներին են լույս տեսել նրա համապատասխան հետազոտությունները: Հատկապես 1924 թ. լույս տեսած «Հայ աշխարհիկ զարդարվեստը» հետաքրքիր ու թարմ խոսք է հայ զարդարվեստի հետազոտության պատմության մեջ: Աշխատության «Նախաբանում» հայագետը նշում է, թե վերջին քառասուն տարվա մեջ հայ միջնադարյան զարդարվեստի հետազոտությունը լուրջ առաջընթաց է ապրել, այն ուսումնասիրվել է հոգևոր դիտակետից, և դա բնական է, որովհետև միջնադարն առաջին հերթին քրիստոնեական կրոնին հարազատ արվեստ է ստեղծել: Իր հերթին գիտնականը փորձում է ընդլայնել այդ տեսադաշտը: Եվ, ըստ այդմ, Ֆ. Մակլերն իր առաջ դնում է կարևոր խնդիր. պարզել արդյոք Հայաստանում էլ է ստեղծվել աշխարհիկ զարդարվեստ, որը կարող է մրցակցել կրոնականի հետ: Ահա հենց այդ հարցադրման պատասխանն էլ դարձել է 1924 թ. լույս տեսած հետազոտությունը, որը հայ զարդարվեստի մեջ առանձնացնում ու գնահատում է բուլղորովին նոր բնագավառ՝ աշխարհիկ զարդարվեստը:

Հայագետը նշում է, որ իր նախընտրած բնագավառում ցանկալի արդյունքի հասնելու համար հարկավոր է ունենալ շատ աղբյուրներ, մինչդեռ այդ խնդրի հետ կապված բազմաթիվ դժվար

<sup>12</sup> Տե՛ս 'Journal Asiatique', 1903, mai-juin, էջ 492:

րություններ կան: Հայ ձեռագրական ամենահարուստ հավաքածուները գտնվում են Երևանում, Էջմիածնում և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում: Անշուշտ, աշխարհիկ զարդարվեստը ծաղկել է հայերի մոտ և հասել մինչև 17-րդ դարը: Մակայն ավերումներն ու գաղթերը ոչնչացրել են Հայաստանի այնքան բազում գանձեր. ավելի շատ զարմանալ կարելի է, որ դեռ բավական հոգևոր գանձեր պահպանվել են ու իրենցով վկայում են դրանց դարավոր գոյությունը: 10-11-րդ դարերից սկսած բյուզանդական արվեստի մեջ քրիստոնեականի կողքին վերարթնանում է հելլենական ավանդույթը: Նույն երևույթը նկատելի է նաև հայկական արվեստում: Որպես օրինակ Մակլերը բերում է նախ երկու մանրանկար, որոնցից առաջինում Կիլիկիայի թագավոր Լևոն IV-ը դատական վճիռ է արձակում<sup>13</sup>: Մեկ ուրիշ մանրանկարում պատկերված է աշխարհիկ հագուստով անձը. այդ փաստը հետաքրքիր է՝ նույնիսկ երբ նա բյուզանդացի է և ոչ թե հայ: Նա նկատում է, որ աշխարհիկ մանրանկարներն առավելապես պատկերում են բժիշկների ու առկա են բժշկությանը վերաբերող ձեռագրերում: Հայագետը ներկայացնում է բժիշկների պատկերող երկու մանրանկար, որոնք գունավոր են, և դրանք ստացել է Երուսաղեմի հայկական պատրիարքարանից՝ արքեպիսկոպոս Եղիշե Դուրյանի շնորհիվ:

Մակլերն ավելորդ չի համարում գրել, որ իրեն հետաքրքրող ձեռագիրն արտագրվել է 1294 թ. Օշինի որդի՝ Կիլիկիայի թագավոր Հեթումի համար: Անհետացած բնագիրը, անշուշտ, եղել է ավելի հին: Խոսում է մեկ ուրիշ ձեռագրի մասին, որն արտագրվել է դարձյալ 1294 թ. և պահվում է Վենետիկի Մխիթարյանների միա-

---

<sup>13</sup> St' u Macler F., Documents d'art arméniens, L'enluminure arménienne profane, Paris, 1924, էջ 8:

բանությունում: Այս ձեռագրից պարզ է դառնում, որ բժշկական երկը արաբերենից հայերեն է թարգմանվել Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունու ժամանակ, որը գահակալել է 990-1020 թթ.:

Մակլերը նշում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունն իրականում ծնվել է մեծ աշխարհակալի մահվանից որոշ ժամանակ անց և արդեն կար մ.թ.ա. 3-րդ դարում: Այդ ժամանակներից սկսած ունեցել է տարբեր խմբագրություններ, տարածվել է Արևելքի ու Արևմուտքի ամենատարբեր երկրներում՝ անտիկ ժամանակներից մինչև միջնադար: Բազմիցս թարգմանվել է տարբեր լեզուներով, վերածվել չափածոյի, նկարազարդվել մանրանկարներով և ունեցել հին տպագրություններ:

1913 թ. լույս տեսած հայ մանրանկարչությանը նվիրված հետազոտության «Նախաբանում» Մակլերը խոստովանում է, որ մասնագիտացած չէ մանրանկարչության հետազոտման բնագավառում, և որ բազմաթիվ ճամփորդությունների ու որոնումների ընթացքում, որոնք կատարվում էին հայ ժողովրդի պատմության և մատենագրության արժեքները հայտնաբերելու համար, ինքը հանդիպել է այդ փոքրաթիվ ժողովրդի մանրանկարչության բազմաթիվ օրինակների, որոնք և գրավել են իր ուշադրությունը: Հայագետի կարծիքով՝ հայ մանրանկարչության ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի Արևելքի ու Արևմուտքի արվեստների փոխազդեցությունը պարզելու ու երկկողմանի նպաստ կրերի Արևելքի և Բյուզանդիայի արվեստի փոխկապերի խնդրում<sup>14</sup>:

---

<sup>14</sup> Sli u Macler F., Miniature arméniennes. Vies du Christ, Peintures ornementales (X<sup>e</sup>-au XVII<sup>e</sup> siècle), Paris, 1913, էջ 1:

**ФРЕДЕРИК МАКЛЕР - ИССЛЕДОВАТЕЛЬ ДРЕВНЕЙ И  
СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ**

*Резюме*

В арменоведческом наследии Фредерика Маклера (1869-1938 гг.) важное место занимает французский перевод труда историка VII века Себеоса. Он включил в предисловие перевода краткий очерк об «Истории» Себеоса, в котором специально подчеркивается, что армянский историк был современником падения Сасанидской династии и правдиво описал исторические события своего времени, очевидцем которых часто был сам. Историк следил за ходом исторических событий и кажется, что он был знаком также с византийскими и арабскими историками и авторами хроник.

В 1930 г. в Париже вышел труд Ф. Маклера «Армения и Крым», с примечаниями к историческим и рукописным материалам. Здесь, как и во всех своих арменоведческих трудах, Ф. Маклер проявляет добросовестность, достойную ученого, а также объективность в оценке исторической роли армянского народа.

В числе многообразных интересов арменоведческого наследия Ф. Маклера следует отметить антитезу «Против турок» известного писателя, богослова, философа и педагога XIV века Григора Татеваци.

В своем арменоведческом наследии Ф. Маклер многократно обращается к «Истории Армении» Отца армянской историографии Мовсеса Хоренаци, которого он считает историком V века.

В 1903 г. в журнале «Journal Asiatique» вышел французский перевод текста истории Мар Абаса Катина, что явилось большим вкладом в исследовании наследия Хоренаци.

Ф. Маклера также занимали вопросы армянской средневековой музыки и миниатюры. Он доказал, что, наряду с религиозной миниатюрой, у армян были и произведения на светские темы, которые большей частью связаны с разными иллюстрациями «Истории Александра Македонского». Армянской миниатюрой и живописью Маклер занимался в 1913 и 1924 гг. Именно в эти годы вышли его исследования на эти темы. В 1924 г. было издано его исследование «Армянское светское орнаментальное искусство», которое явилось новым и интересным словом в истории этой области.

Одной из высочайших заслуг Ф. Маклера является создание Каталога армянских рукописей Национальной Библиотеки Парижа и изложение богатого фактами предисловия к нему.

FREDERIC MACLER - INVESTIGATOR OF ARMENIAN ANCIENT  
AND MEDIEVAL HISTORY AND CULTURE

*Summary*

The Armenian translation of the *History* of Sebeos, Armenian historian of the 7<sup>th</sup> century, has an important place in the Armenological heritage of Frederic Macler (1869-1938). He includes a brief essay about the *History* of Sebeos in the introduction to the translation. In it he especially underlines that the Armenian historian was the contemporary of the collapse of the Sassanid Dynasty, and he truly described the historical events of his time, eyewitness of which he had often been. The historian followed the course of historical events, and it seems that he was acquainted with Byzantine and Arab historians and chroniclers as well.

In 1930 F. Macler's «*Armenia and the Crimea*» was published in Paris with annotations to historical and manuscript documents. Here, as well as in all his Armenological works, F. Macler shows consciousness worthy of a great scientist and also objectivity in the appreciation of the historical role of the Armenian people.

Among various points of interest of the armenological heritage of F. Macler one should note the antithesis *Against Turks* by Grigor Tathevatsi, the well known author, theologian, philosopher and pedagogue of the 14<sup>th</sup> century.

In his Armenological heritage F. Macler refers many times to «History of Armenia» by Movses Khorenatsi, the Father of Armenian historiography, whom he considers a historian of the 5<sup>th</sup> century.

In 1903 the French translation of «History» of Mar Abbas Katina was published in «Journal Asiatique», which was a great contribution to the studies of Movses Khorenatsi's heritage.

F. Macler was interested in issues of Armenian medieval music and miniature painting. He proved that, alongside with religious miniature painting, Armenians had paintings on profane themes, the main part of which was related with the various illustrations of «The History of Alexander of Macedonia». F. Macler was studying Armenian miniature painting and painting in 1913 and 1924. Namely in these years his studies devoted to them were published. In 1924 his work «Armenian Secular Art of Ornamentation» was published, being a new and interesting contribution to the history of this field.

According to F. Macler, there are numerous obscure moments in the Armenian miniature painting which must be clarified. It will allow to explain the interrelations of Eastern and Western arts, and will be of reciprocal use in the issue of Eastern and Byzantine arts interrelations.

One of the greatest works of F. Macler is «Catalogue of Paris National Library Armenian Manuscripts» with a valuable preface.

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ  
ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Վանի թագավորության պատմության ուսումնասիրությունը XIX դարում Եվրոպայի մի շարք երկրներում, հատկապես Ֆրանսիայում իր ուրույն ընթացքն է ունեցել: Բրիտանացի ասուրագետ Ա. Սեյսը, բարձր գնահատելով Սեն-Մարտենի ներդրումը Վանի սեպագիր արձանագրությունների ուսումնասիրության գործում, նշել է. «Արդեն ավելի քան կես դար է, որ հայտնի է դարձել սեպագիր արձանագրությունների գոյությունը և հայտնաբերումը Հայաստանի տարբեր մասերում... Ֆրանսիական կառավարությունը Սեն-Մարտենի դրոմամբ 1826 թ. երիտասարդ պրոֆեսոր Ֆ. Շուլցին՝ Հեսսենից, գործուղեց Հայաստան դրանք ուսումնասիրելու նպատակով: 1828 թ. Շուլցը մանրամասն ուսումնասիրեց Վանը և դրա շրջակայքը: Նրան հաջողվեց հայտնաբերել և ընդօրինակել մոտ 42 սեպագիր արձանագրություն...<sup>1</sup>, որոնք հրատարակվեցին 1840 թ. «Journal Asiatique»-ում»<sup>2</sup>: Հաջորդ տասնամյակներում հայտնաբերվեցին այլ բիայնական սեպագիր արձանագրություններ Հայաստանի, ինչպես արևմտյան<sup>3</sup>, այնպես էլ արևելյան մասերում<sup>4</sup>:

<sup>1</sup> Schulz Fr. Ed., Mémoire sur le lac de Van et ses environs, Journal Asiatique, Paris, 1840, III<sup>e</sup> série, t. IX, pp. 257-323; Sayce A., The Cuneiform Inscriptions of Van, JRAS 1882, p. 378.

<sup>2</sup> «Պարզվեց, որ այդ արձանագրություններից երեքը պատկանում են պարսից արքա Բեհրսեսին... Մնացած երեսունինը գրված էին հատուկ վանկագրով և մի լեզվով, որը նման չէ որևէ տեղ գտնվածի» (Sayce A., նշվ. աշխ., էջ 377-378):

<sup>3</sup> See u Inscriptions in the Cuneiform Character from Assyrian Monuments, discovered by A. H. Layard, London, 1851, Fol., p. 74 (Inscription at Palou on the Euphrate); Sayce A., նշվ. աշխ., էջ 378:

Եվրոպացի, մասնավորապես, ֆրանսիացի արևելագետները և հայագետներն իրենց աշխատություններում առանձնակի ուշադրություն սկսեցին դարձնել Վանի սեպագիր արձանագրությունների վերծանման և լեզվի խնդիրներին, նախ՝ փորձելով ընթերցել որոշ գաղափարագրեր:

Ֆրանսիական և գերմանական ասուրագիտության ներկայացուցիչ Ժյուլ Օպերտը, Վանի արձանագրությունների լեզուն տարբերելով ասուրաբաբելականից, նշել է, որ դրանցում օգտագործվել է վերջինիս նշանների համակարգը և գաղափարագրերը: Վանի թագավորներին նա հիշատակել է որպես հայկական թագավորներ և Արգիշտիին անվանել է «Արարատի թագավոր»: Կատարելով լեզվական խմբավորում՝ Ժ. Օպերտը Վանի սեպագրերը կոչել է Արմենիակ «Arméniaque»<sup>5</sup>: Ֆրանսիացի հայագետ Ս. Բրոսեն նշել է, որ հայ Սարդուրը (II) (Arménien Sardur) Մաթիելի<sup>6</sup> հետ միասին դիմակայեցին Թիզլաթպալասարին<sup>7</sup> (III), որը «գավթեց շատ քաղաքներ և հիմնեց Ասուրբազա<sup>8</sup> քաղաքը Հայաստանում»<sup>9</sup>:

<sup>4</sup> St<sup>e</sup> u Notice sur deux inscriptions cunéiformes, découvertes par M. Kastner dans l'Arménie russe, Notice de M. Lerch, Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Petersbourg, 1863, t. cinquième, p. 431; Никольский М. В., Клинообразные надписи ванских царей, открытых в пределах России, М., 1893; տես նաև՝ Lehmann-Haupt C. F., Corpus inscriptionum Chaldicarum, Berlin und Leipzig, 1928.

<sup>5</sup> Oppert J., Expédition scientifique en Mésopotamie, 1858, Paris, t. II, liv. I, ch. V, pp. 69-70.

<sup>6</sup> St<sup>e</sup> u Բիթ-Ազուսիի թագավորը Հյուսիսային Ասորիքում (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Եր., 1971, էջ 315):

<sup>7</sup> Սարդուր II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.) կազմած դաշնությունը պայքարեց Ասորեստանի դեմ, սակայն Արփադի (Ասորիքի հյուսիսում) ճակատամարտում (մ.թ.ա. 743 թ.) դաշնակից ուժերը պարտություն կրեցին Թիզլաթպալասարից (մ.թ.ա. 745-727 թթ.) (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 315, 317):

<sup>8</sup> St<sup>e</sup> u «Աշուրիկշա», համաձայն Ս.Մ. Բացիկալյի ընթերցման (տե՛ս Ассиро-вавилонские источники по истории Урарту.- ВДИ, N 2, 42, с. 313).

<sup>9</sup> Brosset M., Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes, Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Petersbourg, 1871, t. seizième, p. 338.

Տարբեր կարծիքներ են առաջարկվել Վանի սեպագիր արձանագրությունների վերծանման և դրանց լեզվի կապակցությամբ: Իռլանդացի ասուրագետ Է. Հինքսը ենթադրելով, որ այդ արձանագրությունները «ասուրերենից լրիվ տարբեր տեղական լեզվով է», եզրակացրել է. «Նրանք, ովքեր կարդում են այս հողվածը կընդունեն, որ ես սկիզբ եմ դրել և զգալի առաջ գնացել մի շարք արձանագրությունների վերծանման և մեկնության խնդրում, որոնք, որքանով էլ կարող են նվազ արժեք ունենալ պատմական տեսանկյունից, անգնահատելի են բանասերի համար, որպես հնդգերմանական ընտանիքի ասիական ճյուղի՝ բոլոր համեմատություններից դուրս հնագույն նմուշ»<sup>10</sup>: Բրիտանացի արևելագետ Հ. Ռաուլինսոնը գրել է. «Այս արձանագրությունները ես անվանում եմ հայկական: Դրանք գրված են նույն նշաններով, որոնք օգտագործվում էին Ասորեստանում, սակայն ստեղծված են այլ լեզվով... որը, թեպետ ասուրերենից բազում բառեր է ներմուծել, սակայն, հավատացած եմ, որ պատկանում է որոշակիորեն այլ ընտանիքի...»<sup>11</sup>: Այնուհետև Հ. Ռաուլինսոնը նշել է. «Հայկական ճյուղին պատկանող վեց թագավորներ կան, որոնք իրար են հաջորդում... Այդ տոհմը ... թվում է թե մեծ ազդեցություն ուներ Հայաստանում»<sup>12</sup>:

<sup>10</sup> Hincks E., On the inscriptions at Van, JRASGBI, 1848, vol. IX, pp. 404, 422.

<sup>11</sup> Նա այդպիսին թյուրիմացաբար համարել է «սկյութականը» (Rawlinson H., A Commentary on the Cuneiform Inscriptions of Babylonia and Assyria, London, 1850, p. 75): Հետազոտողն այստեղ «սկյութ» ցեղանվամբ լեզվա-ընտանիքի՝ հիշատակությամբ, փաստորեն, նկատի է ունեցել հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ճյուղը, բանգի սկյութները իրանական ցեղ էին (Фрай Р., Наследие Ирана, М., 1972, с. 27): Գերմանացի լեզվաբան Հ. Հյուբշմանը հնդեվրոպական լեզուների ոլորտում հայերեն լեզվի դիրքին նվիրված իր լեզվահամեմատական աշխատությունում (1875 թ.) ցույց է տվել, որ հայերենը «հնդգերմանական» հնդեվրոպական լեզվաընտանիքի՝ առանձին ճյուղ է (տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Եր., 1987, էջ 86-90):

<sup>12</sup> Rawlinson H. C., նշվ. աշխ., էջ 75:

Ֆրանսիացի ասուրագետ և հնագետ Ֆր. Լենորմանը կատարել է լեզվական խմբավորում և նշել, որ Վան քաղաքի հարևանությամբ գտնվող ժայռերին փորագրված բազմաթիվ սեպագիր արձանագրությունների լեզուն *արմենիակ* է (*Arméniaque*), որն արիական կամ հնդեվրոպական լեզու է և ծառայել է Հայաստանի ազգաբնակչությանը մ.թ.ա. IX - VII դարերում<sup>13</sup>: Սակայն երկու տարի անց Ֆր. Լենորմանը հայտնեց ինքն իրեն հակասող մեկ այլ կարծիք, այն է՝ Հայաստանի սեպագիր արձանագրությունների լեզվի ուսումնասիրությունը իրեն թույլ է տվել տեսնել նմանություն վրացերենի հետ, միևնույն ժամանակ նշելով այդ արձանագրությունների լեզվի բառապաշարում արիական տարրի գոյությունը<sup>14</sup>: Սակայն վրացերենի հետ կապը մերժվել է բիայնական արձանագրությունների լեզվաբանական ուսումնասիրություններում<sup>15</sup>:

Գերմանացի արևելագետ Ա. Դ. Մորդտմանը<sup>16</sup> և Հովսեփ վարդապետ Սանտալճյանը պաշտպանում էին Վանի սեպագրերի հայկական ծագում ունենալու տեսակետը<sup>17</sup>:

---

<sup>13</sup> Sté u Lenormant Fr., Manuel de l'histoire ancienne de l'Orient, Paris, 1869, t. II, էջ 155-156.

<sup>14</sup> Sté u Lenormant Fr., Lettres Assyriologiques, Paris, 1871, t. I, էջ 124-127; Sayce A., նշվ. աշխ., էջ 381, հմմտ. Լեո, Վանի թագաւորութիւնը (Ուրարտու), Թիֆլիս, 1915, էջ 18, 66: Սարուխան, Վրաստան եւ հայերը, Հանդէս ամսօրեայ, 1933, N 1, 2, էջ 58-75:

<sup>15</sup> Sté u Никольский М., նշվ. աշխ., էջ 3:

<sup>16</sup> Sté u Mordtmann A. D., Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend. - Zeitschri. d.d.m.G., Laipzig, 1872, pp. 465-696. Մորդտմանի տեսությունը («Վանի լեզուն ոչ միայն արիական էր, այլ նաև հայկական և միայն անհրաժեշտ էր դիմել հայերեն բառարանին՝ հայտնաբերելու արձանագրություններում եղած յուրաքանչյուր բառը») քննադատվեց Ա. Մեյսի կողմից, որի հիմնական փաստարկն էր, «որ նույնիսկ շնորհելով այդ լեզվին լինելու հայերեն լեզվի վաղագույն ձևը, անհնար կլիներ վերականգնել դրա բառերի նշանակությունը միայն ժամանակակից հայերեն բառարանի միջոցով, առանց դիտարկելու հայերեն լեզվի անցած պատմությունը և դրա հնչունաբա-

Ա. Սեյսը և ֆրանսիացի ասուրագետ Ս. Գյույարը<sup>18</sup> փորձեցին ներկայացնել վանյան սեպագիր արձանագրությունների քերականությունը և բառապաշարը: Սեյսը անդրադառնալով այսպիսի ուսումնասիրության նախնական քայլերին՝ նշել է. «Դեռևս շատ անելիք կա մինչ վանյան (Vannic) արձանագրությունների վերծանումը հնարավոր լինի դնել ամբողջապես բավարար հիմքի վրա»<sup>19</sup>:

Վանի սեպագիր արձանագրությունների լեզվի անբավարար ուսումնասիրության արդյունքում որոշ հետազոտողների տարանջատեցին Արարատ-Ուրարտուի (Վանի թագավորություն) պատմությունը Հայաստանի և հայերի պատմությունից: Ֆրանսիացի արևելագետ Ժ.-Ա. Գատեյրիասը և հնագետ Ժ. դը Մորգանն առաջարկեցին հայերի մնասին «եկվորության» վարկածը: Համաձայն Ժ.-Ա. Գատեյրիասի՝ «հայերը... որոնց նախնիները ծագել են Պամիրի սարահարթից» ( *Les Arméniens ... dont les ancêtres descendus du plateau du Pamir*)<sup>20</sup>, իսկ ըստ Ժ. դը Մորգանի՝ Բալկանյան թերակղզուց: Վերջինս հերքում էր այն տեսակետը, որ հայերը Վանի թագավորության արքաների հետնորդներն էին: Ըստ Ժ. դը Մորգանի՝ հաշվի չեն առնվել ավանդությունները և լեզվական փաստերը<sup>21</sup>:

---

ությունում տեղի ունեցած փոփոխությունների... Առանց քերականության ոչ մի վերծանում հնարավոր չէ...» (Sayce A., նշվ. աշխ., էջ 382-383): Անհրաժեշտ է նշել, որ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ու Սարգիս Այվազյանի այս խնդրին վերաբերող հետազոտությունները (տե՛ս ստորև) հիմնված են պատմական լեզվաբանության և քերականության վրա:

<sup>17</sup> Sandalgian J., *Les Inscriptions Cunéiformes Urartique*, Venise, 1900.

<sup>18</sup> Guyard St., *Les inscriptions de Van.- Mélange d'assyriologie*, 1883, Paris, p. 113-144.

<sup>19</sup> Sayce A., նշվ. աշխ., էջ 679:

<sup>20</sup> Gatteyras J.-A., *L'Arménie et les Arméniens*, Paris, 1882, p. 7.

<sup>21</sup> Sté u J. de Morgan, *Histoire du peuple arménien depuis les temps les plus reculés de ses annales jusqu'à nos jours*, Nancy-Paris-Strasbourg, 1919, էջ 38-39:

Հակառակ այսպիսի տեսակետի ֆրանսիացի պատմաբան Է. Կավենյակը Վանի թագավորությունը դիտում է որպես «Հայկական Ուրարտուի (Արարատ) թագավորություն» (le royaume arménien d'Ourartou (Ararat)<sup>22</sup>: Ըստ ֆրանսիացի պատմաբան Ֆր. Տուրնեբիզի «Նաիրին հին Հայաստանի հարավային մի մասի ասուրական անվանումն է» («le Nairi, nom assyrien d'une partie de l'ancienne Arménie méridionale»)<sup>23</sup>:

Ֆրանսիայում հայագիտական հետազոտությունների<sup>24</sup> հիմնադիր Ա.ժ. Սեն-Մարտենը (1791-1832 թթ.)<sup>25</sup>, հիմնադրելով ուսումնասիրելով հին հունարեն և լատիներեն սկզբնաղբյուրները Հայաստանի պատմության և աշխարհագրության մասին<sup>26</sup>,

---

<sup>22</sup> Cavaignac E., Histoire générale de l'antiquité, Paris, 1946. էջ 155: Տես նաև Է. Cavaignac, Histoire du monde, Le monde Méditerranéen jusqu'au IV<sup>e</sup> siècle avant J.-C., t. II, Paris, 1929, p. 173, 207, 243.

<sup>23</sup> Tournebize Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 16.

<sup>24</sup> Ֆրանսիայում արքայական մատենադարանին կից «Արևելյան կենդանի լեզուների դպրոցի» 1798 թ. աշնանային ազդագրի համաձայն, Հակոբ-Շահան Զրպետյանը (1772-1834 թթ.) նախաձեռնել էր իր մայրենի հայերեն լեզվի ուսուցանումը: Նա այդ գործը կատարեց մինչև 1801 թ., այնուհետև վերսկսեց 1810 թ., իսկ 1812-1826 թթ. Զրպետյանը ղեկավարել է այդ դպրոցում «Հայոց լեզվի ամբիոնը» (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Հակոբ Շահան-Զրպետյան և նրա նորահայտ ֆրանսերեն անտիպ երկասիրությունը (Մահվան 120-ամյակի առթիվ).- Էջմիածին, 1958, ԺԵ (9), էջ 42: Բարլեզիզյան, Ա. Կ. Փարիզի արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ամբիոնը (հիմնադրման 200-ամյակի առթիվ).- Լրաբեր հասարակական գիտությունների, 1998, N 2, էջ 114): 1810 թ. դեկտեմբերի 8-ին հայոց լեզվի դասավանդման վերականգնումից հետո «քսան ունկնդիրներից բաղկացած խմբի մեջ էր ապագա ճանաչված հայագետ Սեն-Մարտենը» (նույն տեղում):

<sup>25</sup> Տե՛ս Դոլուխանյան Ա., Սեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկի երկու նախաբանները.- Պատմաբանասիրական հանդես, 2013, N 1, էջ 186:

<sup>26</sup> Սեն-Մարտենը ղեկավարվելով Հայաստանի պատմական աշխարհագրության ամբողջական ընկալմամբ (Մեծ Հայք և Փոքր Հայք) գրել է. «Հայ, ինչպես նաև հույն և լատին աշխարհագետները Հայաստանը հիմնականում 2 մեծ

միևնույն ժամանակ քննադատորեն նշել է. «Առանց այստեղ կանգ առնելու որպեսզի հերքեմ այն անհեթեթությունները, որ որոշ հույն և լատին հեղինակներ ասել են հայերի ծագման վերաբերյալ» («Sans m'arrêter ici à réfuter les absurdités que quelques écrivains Grecs and Latins ont débitées sur l'origine des Arméniennes»<sup>27</sup>: Հակառակ այսպիսի քննադատության, Գ. Մասպերոն փորձեց վերակենդանացնել որոշ հույն հեղինակների հաղորդումները<sup>28</sup>, իբրև թե «հայերի փոյուզիական ծագման» վերաբերյալ («L'origine phrygienne des Arméniens»)<sup>29</sup>: Այսպիսով, հետևելով անհիմն «եկվորության վարկածին», նա գրել է. «Ավելի հյուսիս, ուրարտացիները և նախկին Նաիրիի ժողովուրդները, որոնց բախտն ավելի քիչ էր բերել, յուրաքանչյուր սերունդ հայերի հաստատուն ճնշումներից տարածք էր կորցնում»<sup>30</sup>: Ն. Դոլենսը և Ա. Խաչը (Աստ. Խաչատրյան) քննա-

---

մասերի են բաժանում. Մեծ Հայք, որը ձգվում է Եփրատից մինչև Կասպից ծով և Փոքր Հայք, որը գտնվում է Մեծ Հայքից արևմուտք» («Les géographes Arméniens, aussi bien que les géographes Grecs et Latins, partagent ordinairement l'Arménie en deux grandes divisions. La Grande Arménie, Մեծ Հայք, qui s'étend depuis l'Euphrate jusqu' à la mer Caspienne et la Petite, Փոքր Հայք, située à l'occident de la Grande...») (Saint-Martin A.-J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818, v. I, p. 17).

<sup>27</sup> Saint-Martin J., նշվ. աշխ., էջ 280-281, հմտ. Глинка С., Обзорение истории Армянского народа, от начала бытия его до возрождения области Армянской в Российской Империи, ч. I, М., 1832, с. 23; Шопен И., Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852, с. 94.

<sup>28</sup> Strabo u Herodorus, edited with introduction and notes by Ch. F. Smith and A. G. Laird, books VII and VIII, New York-Cincinnati-Chicago, 1908, VII 73; The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, vol. V, London, 1954, XI 4.8, XI 14.12-15; Stephani Byzantii Ethnicorum quae supersunt, ex recensione Augusti Meinekii, tomus prior, Berolini, 1849, p. 123.

<sup>29</sup> Maspero G., Histoire ancienne des peuples de l'Orient classique, t. III, Paris, 1899, p. 521, com. 1.

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 777:

դատաբար նշել են, որ անհրաժեշտ է շատ զգույշ լինել հին պատմիչների առումով, երբ նրանք վերհիշում են իրենց առասպելական աշխարհը<sup>31</sup>:

Ֆրանսիացի հայագետ, լեզվաբան Ա. Մեյեն նշում է, որ փոյուզիացիները թրակիական ծագում ունեին և համաձայն որոշ հույն հեղինակների վկայության, «հայերը փոյուզական գաղութներից են» («les Arméniens seraient des colons Phrygiens»), սակայն թրակերենի մասին տեղեկության անբավարար լինելը թույլ չի տալիս լեզվաբանորեն հաստատել այդ տեսությունը<sup>32</sup>:

«Եկվորության» վարկածը խոչընդոտ եղավ դիտելու Վանի թագավորության պատմությունը որպես հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մաս<sup>33</sup>: XX դարի երկրորդ կեսին գերիշխեց այն տեսակետը, որ Վանի սեպագրերի լեզուն կամ բիայներեն-ուրարտերենը սերտ ազգակցական կապեր ունեն խոտերեն լեզվի հետ<sup>34</sup>: Իսկ *ուրարտերենի* և հայերենի միջև եղած ընդհանրությունների խնդիրը ներկայացնելով այդ տեսանկյունից, դոգմատիկորեն եզրակացվեց, որ այստեղ ազգակցություն չկա, լեզուները տարբեր լեզվական ընտանիքների են պատկանում<sup>35</sup>:

---

<sup>31</sup> Sté u Dolens N. et Khatch A., Histoire des anciens Arméniens, Genève, 1907, pp. 17-18, 34.

<sup>32</sup> Sté u Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 11.

<sup>33</sup> Դս, օրինակ, երևում է հետևյալ հայտարարությունից. «Ուրարտուի գոյությունը (նախահայկական, նախա- մ.թ.ա. 600 թ. քաղաքակրթություն) հայտնի չէր, մինչև 1823 թ. մի «կորցված» քաղաքակրթություն ...» (Chahin M., The Kingdom of Armenia, A History. Second, revised edition, London and New York, 2001, p. 45).

<sup>34</sup> Sté u Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960, с. 89-92, նույնի՝ Урартский язык, М., 1964, с. 10-14, Дьяконов И. М., Языки Древней Передней Азии, М., 1967, с. 113-165.

<sup>35</sup> Sté u Дьяконов И. М., Предыстория армянского народа, Е., 1968, с. 201-204.

Հակառակ այսպիսի մոտեցման՝ Գ. Ջահուկյանը «Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հայկական բնույթ կրելու մասին» իր հիմնարար հոդվածում առաջադրեց այդ խնդրի հետևյալ լուծումը. «Բավական համոզությամբ ապացուցվում է ներածական բանաձևերի հայկական բնույթը. դրանց բառապաշարը հիմնականում հայկական է, քերականական առանձնահատկությունները հնարավոր է բացատրել նախագրաբարյան շրջանի քերականական առանձնահատկություններով, ինչպես նաև այդ բանաձևերը հնարավորություն են տալիս կատարելու հայերենի նախագրաբարյան շրջանի բառային վերականգնումներ, պարզելու հեռագա փոխառությունների (մանավանդ իրանական ծագման բառերի) բուն հայկական համարժեքները՝ հնդեվրոպական նախաձևերի և «ուրարտական» կոչված արձանագրությունների ձևերի համեմատության հիման վրա»<sup>36</sup>: Մարգիս Այվազյանը, դեկավարվելով պատմական լեզվաբանության և քերականության վրա հիմնված հետազոտական մեթոդներով, եզրակացրել է. «Ուրարտերենը հավանաբար հին հայերենի բարբառ է»<sup>37</sup>:

Խնդրո առարկա որոշ աշխատություններում հայկական պատմա-աշխարհագրական տերմինները թերի են ներկայացված՝ հատկապես Արևմտյան Հայաստանի առումով<sup>38</sup>: Օրինակ՝

<sup>36</sup> Ջահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 2000, N 1, էջ 127-128:

<sup>37</sup> Ayvazyan S., Urartian-Armenian. Lexicon and comparative-historical grammar, Yerevan, 2011, p. 9.

<sup>38</sup> Հայկական տեղանունների կեղծարարությունների քննադատության մասին տես՝ Դանիելյան Է. Լ., Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, N 3, էջ 63: Ayvazyan A., Western Armenia vs. Eastern Anatolia, Europe and Orient, N4, <http://www.hayq.org/upload/files/aa-EO4.pdf>; Sahakyan L.,

*Արևմտյան Հայաստան* (Հայկական լեոնաշխարհի արևմտյան մասը) սխալ կերպով օգտագործվում է «Արևելյան Անատոլիա» (l'Anatolie orientale)<sup>39</sup>, որն իրականում համապատասխանում է Փոքր Ասիային և գտնվում է Հայկական լեոնաշխարհից արևմուտք: Վանի թագավորության և հաջորդ ժամանակաշրջանի առումով որոշ հետազոտողների կողմից ժամանակագրությունը ներկայացվում է ստորաբաժանված *ուրարտական* և *հետուրարտական* ժամանակաշրջանների<sup>40</sup>, առանց հազարամյակների հնություն ունեցող հայկական հնագիտական մշակույթի և պատմության հիշատակման:

Բրիտանացի հնագետ Չ. Բըրնին, սխալ կերպով տեղադրելով «Հայասա երկիրը» («la terre de Hayasa») «Անատոլիայի հյուսիսարևելքում»<sup>41</sup> (Հայկական լեոնաշխարհի արևմտյան մասում տե-

---

Turkification of the toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2011; Դանիելյան Է. Լ., Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջականության փաստն ընդդեմ թուրք-աղբբեջանական կեղծարարությունների, ԼՀԳ, 2016, N 1, էջ 43 և այլ:

<sup>39</sup> «Ուրարտուում խաղողագործությունը գործունեության կարևոր բնագավառներից էր, և այդ կարող էր հիմնավորել այն պատմական ավանդույթը, համաձայն որի արևելյան Անատոլիայի և Անդրկովկասի լեոնային բնակիչները ստեղծել էին գինին. այս ավանդույթն ավելի է հիմնավորվում նախապատմական շերտերում խաղողի կորիզների հայտնաբերմամբ, ինչպես Վիրբում, այնպես էլ արևմուտքում՝ Ելազիզի (հայկ. Խարբերդ Արևմտյան Հայաստան – Ա.Դ.) դաշտավայրում մ.թ.ա. IV-III հազարամյակներում (Burney Ch., Avant les Armeniens: les Ourartéens guerriers et bâtisseurs, see in: Histoire des Arméniens, sous la direction de G. Dédéyan, Toulouse, 1982, p. 65); տե՛ս նաև՝ Huot J.-L., Une archéologie des peuples du Proche-Orient, Des premiers villageois aux peuples des cités-états (X<sup>e</sup>-III<sup>e</sup> millénaire av. J.-C.), Paris, 2004, pp. 174, 190.

<sup>40</sup> Sté u Fichet de Clairfontaine F., Deschamps S., La céramique ourartéenne et post ourartéenne du secteur du temple de Haldi, Armenian Journal of Near Eastern studies, v. VII, 2012, Yerevan, pp. 105-125.

<sup>41</sup> «Հայերի ծագման և նրանց՝ Ուրարտուի տարածքները գալու վերաբերալ վկայություններում դժվար է տարանջատել պատմական փաստերը հորինվածքից:

ղաղբելու փոխարեն<sup>42</sup>), ինչպես նաև տարանջատելով հայերին «ուրարտացիներից», գրել է. «Մինչ հայերը՝ ուրարտացիներ. ուղվիկներ և շինարարներ» (*Avant les Arméniens: les Ourartéens guerriers et bâtisseurs*), «Հայերի գալը» («*L'arrivée des Arméniens*»)<sup>43</sup>.

Ֆրանսիացի ասուրագետ Դ. Շարպենը ճիշտ ձևով նկարագրել է Վանի թագավորության աշխարհագրական դիրքը («գտնվում է Հայկական լեռնաշխարհի տարածքում»՝ «*situé sur le territoire montagneux de l'Arménie*»), սակայն մինևույն ժամանակ գրել է. «Ուրարտուն որոշակիորեն պատմական առեղծված է... այն մ.թ.ա. IX դ. հանկարծակիորեն ներխուժել է Մերձավոր Արևելքի միջազգային ասպարեզ... և անհետացել սրընթաց կերպով մ.թ.ա. VII դ. վեջում և VI դ. սկզբին, ինչպես մի երկնաքար»<sup>44</sup>: Շարպենը մեծ հիացմունքով է գրում Վանի թագավորության մշակույթի, մասնավորապես ճարտարապետության, ամրոցաշինության, ջրանցքների կառուցման և մետաղագործության արտասովոր որակի մասին<sup>45</sup>: Անհրաժեշտ է նշել, որ Վանի թագավորության էթնո-մշակութային պատմությունն արմատավոր-

---

Վտանգավոր է հաստատապես պնդել հատուկ և աշխարհագրական անունների նմանությունը. այդպես մենք կհամադրեինք Հայասա երկրի անունը, որը համաձայն ինքերի որոշակիորեն գտնվում էր Անատոլիայի հյուսիսարևելքում, Հայաստան/Հայք անվանը, որը հայերը տվել են իրենց երկրին... Հնարավոր չէ կասկածել հայերի արևմտյան ծագումը, չնայած Հերոդոտոսի վկայությունը, որ նրանք Փոուզիայից են և զիված էին ինչպես փոյուզացիները հազիվ թե ավելի ամբողջական լինի, քան ճանապարհորդ Եվդոքս Կյուզիկեցունը (մ.թ.ա. II դ.) հայերենի և փոյուզերենի նմանության մասին» (*Burney Ch.*, նշվ. աշխ., էջ 79-80):

<sup>42</sup> St u Ghazaryan R. P., *The Development of the Armenian Statehood: Kingdom of Hayasa (XIV-XIII centuries BC)*, *Fundamental Armenology*, 2015, Issue 1, p. 16, <https://goo.gl/RYM1lc>

<sup>43</sup> St u Burney Ch., նշվ. աշխ., էջ 53, 79:

<sup>44</sup> St u Charpin D., *L'Ourartou et les Ourartéens*, Paris, 2001, <https://goo.gl/1QqTKG>

<sup>45</sup> Նույն տեղում:

ված էր Հայկական լեոնաշխարհի նախորդ դարաշրջանների քաղաքակրթական զարգացումներում և պետք է դիտվի որպես Հայոց պատմության բաղկացուցիչ մաս:

Ֆրանսիացի ասուրագետ Պոլ Գարելլին և Ա. Լեմերը նույնպես Ուրարտուն հիշատակել են որպես անհայտ ծագման մի թագավորություն: Նրանք համարում են, որ այն մի հին թագավորություն էր, որը զարգացել էր նախկին խուռիական շրջաններում և կրում էր այդ քաղաքակրթության ավելի շուտ կրոնական, քան լեզվական հետքը<sup>46</sup>:

Ֆրանսիացի արևելագետ, հայագետներ Անի և Ժան-Պիեռ Մահեններն իրենց «Հայաստանի պատմություն» աշխատությունում Նաիրիի «60 արքաների» միությունը խուռիական ցեղերի համադաշնություն են համարում, որոնք կոչվում էին ասորեստանյան արքա Թիզլաթպալասար I-ի դեմ: Համաձայն հեղինակների՝ երկու դար ու կես հետո ասորեստանյան վտանգը ուժգնանում է Աշուրնաճիրպալ II-ի օրոք, ինչն էլ Ուրարտու պետության կազմավորման հիմքն է հանդիսանում. «Երկուս ու կես դար անց, Աշուրնաճիրպալ II-ի (884-859 թթ.) օրոք սաստկացող ասորական սպառնալիքը ձևավորում է Ուրարտական պետությունը: Այս ասորական տեղանունը, որն Աստվածաշնչում Արարատ է կոչվում, ի սկզբանե նշանակում է, բավականին անորոշ, լեոնային տարածաշրջան, որը գտնվում է Ասորեստանի հյուսիսում: Արգաշկուի (Arcke կամ arces) հետագայում՝ Մանազկերտի, տիրակալ Արամուն (860-840 թթ.), ով կրում էր արքայից արքա (erili erilave) տիտղոսը, կարողացավ համախմբել իր իշխանության ներքո Վանա լճի ծայրամասում գտնվող բոլոր ցեղերին, Բիայնա կամ Բիայ-

---

<sup>46</sup> Sté u Garelli P., Lemaire A., *Le Proche-Orient Asiatique*, t. 2, Paris, 2002, p. 97.

նիլի երկիրը»<sup>47</sup>: Ըստ նրանց՝ Մովսես Խորենացու հիշատակած Արամը<sup>48</sup> հավանաբար կարող է նույնացվել Արամուի հետ<sup>49</sup>: Նրանք նշել են, որ «Ուրարտուի կայսրությունը» իր գագաթնակետին էր հասել Մինուա, Արգիշտի և Սարգուր II արքաների օրոք՝ մ.թ.ա. 810-735 թթ. և, որ այն գոյություն ուներ, ըստ Երեմիա մարգարեի<sup>50</sup>, դեռևս մ.թ.ա. 593 թ., իսկ մ.թ.ա. 590 թ., ըստ Անի և Ժան-Պիեռ Մահենների կարծիքի, այն անկում ապրեց<sup>51</sup>:

Այսպիսով, Վանի թագավորության պատմության ուսումնասիրությունը XIX դարում Եվրոպայի մի շարք երկրներում, հատկապես Ֆրանսիայում՝ հայագիտական ուսումնասիրությունների բնագավառում<sup>52</sup> իր<sup>4</sup>ուրույն ընթացքն է ունեցել: Հետագայում, խնդրո առարկա շրջանակներում մոտեցումները հայեցակար-

---

<sup>47</sup> Mahé A. et J.-P., Histoire de l'Arménie des origines à nos jours, Perrin, 2012, p. 22.

<sup>48</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 42: Ենթադրվում է, որ Արամի կերպարում խտացված են մ.թ.ա III հազարամյակում ապրած Հայկյան Հարմայի որդու՝ Արամի և Արարատյան Արամն թագավորների կերպարները (Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն, Եր., 2008, էջ 35, ծան. 2): Ա. Մովսիսյանը Հարմայի որդու՝ Արամի հետ է կապել Աքքադի Նարամ-Սուեն (մ.թ.ա. III հազ. 2-րդ կես) արքայի արձանագրություններում հիշատակվող «Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքի հարավում» հիշատակվող Արամ երկրանունը («Մեծագույն հավանականությամբ Արամ երկրանունը պետք է կապել հայկական ավանդության Արամին, որի անունով էլ, ըստ Պատմահայր Խորենացու, օտարները կոչեցին մեր երկիրն ու ժողովրդին») (Հովհաննիսյան Պ., Մովսիսյան Ա., Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիկա, հ. 1, Եր., 2007, էջ 60):

<sup>49</sup> Տե՛ս Mahé A. et J.-P., op. cit., p. 22. Moïse de Khorène, Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé, avec une introduction et des notes, Paris, 1993.

<sup>50</sup> Երեմ., Ծ, 41, ԾԱ, 27:

<sup>51</sup> Mahé A. et J.-P., op. cit., p. 26.

<sup>52</sup> Տե՛ս Dumikyan A.V., French researchers of the 19<sup>th</sup> century on the elucidation of some questions of the history of Armenia of the Van (Ararat-Urartu) kingdom's period, Fundamental Armenology, 2016, Issue 1 (3), pp. 36-43, [http://www.fundamentalarmenology.am/datas/issues/ISSUE-1-\(3\)-2016.pdf](http://www.fundamentalarmenology.am/datas/issues/ISSUE-1-(3)-2016.pdf)

գային և տերմինաբանական առումով մեթոդաբանական վերափոխման ենթարկվեցին:

АЛИСА ДУМИКЯН

*Институт истории НАН РА*

**К ПРОБЛЕМЕ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ  
ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ И ОРИЕНТАЛИСТОВ К  
ИСТОРИИ ВАНСКОГО ЦАРСТВА**

*Резюме*

В 19-ом веке исследования по истории Ванского царства имели специфическую направленность в некоторых европейских странах, и особенно во Франции, в сфере арменоведческих исследований. Позднее подходы к этой проблеме подверглись методологической трансформации в концептуальных и терминологических аспектах.

С точки зрения исторической преемственности цивилизационных процессов на Армянском нагорье, этнокультурная история Ванского царства должна рассматриваться как неотъемлемая часть истории Армении и армянского народа.

ALISA DUMIKYAN

*Institute of History of NAS RA*

**TO THE PROBLEM OF CONCEPTUAL APPROACHES OF THE  
FRENCH ARMENOLOGISTS AND ORIENTALISTS TO THE  
HISTORY OF THE KINGDOM OF VAN**

*Summary*

In the 19<sup>th</sup> century studies in the history of the Kingdom of Van had a specific course in some European countries, and particularly in France,

within the sphere of Armenological Studies. Later, approaches to this problem underwent methodological transformation in conceptual and terminological aspects.

In terms of historical continuity of civilizational processes in the Armenian Highland the ethno-cultural history of the Kingdom of Van must be considered as an integral part of the history of Armenia and the Armenian nation.

**ՀԱՅԱՍՏԱՅԻ (ԱԶԶԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ  
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հայասայի (Ազգիի) թագավորության պատմության ուսումնասիրությունը Հայոց պատմության այն հիմնահարցն է, որի հետազոտությունը կարևոր է թե՛ հայագիտության և թե՛ արևելագիտության մեջ և, ընդհանուր առմամբ, Արևմտյան Ասիայի հին շրջանի պատմության խնդիրներն ուսումնասիրելիս:

1920-ական թվականներից հրատարակվող խեթական աղբյուրների շնորհիվ ուսումնասիրվել են նաև Հայասայի (Ազգիի) պատմության բազմաթիվ խնդիրներ: Խեթական սեպագիր աղբյուրները կարևոր են նաև այն առումով, որ շատ դեպքերում դրանք միակ գրավոր վկայություններն են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազ. պետությունների պատմության վերաբերյալ:

Խեթական աղբյուրները հիմնականում գտնվել են խեթական պետության մայրաքաղաք Խաթթուսայի պալատական պահոցից: Փոքր Ասիայի տարբեր շրջաններում կատարված պեղումների շնթացքում հայտնաբերվել են նաև տեղական սեպագրական արխիվներ<sup>1</sup>, որոնցում հայտնաբերված աղբյուրների մի մասը հրատարակման փուլում է գտնվում: Այդ աղբյուրները գեոագանցապես նամակներ են՝ առաքված խեթական արքունիքից: Զգալի թիվ են կազմում նաև վարչական և ծիսապաշտամունքային տեքստերը: Այստեղ կան նաև հայագիտության համար հետաքրքրություն ներկայացնող նյութեր: Այդ սկզբնաղբյուրների

<sup>1</sup> Արխիվներ են հայտնաբերվել նաև խեթական Տապպիզա, Սարիսսա (Փոքր Հայքի տարածքում) և Սապինուվա քաղաքներից:

մեծագույն մասը հրատարակվում և վերլուծության է ենթարկվում արևմտյան գիտնականների կողմից:

Խեթական աղբյուրների շարքում, անկասկած, հատուկ կարևորվում են այն տեքստերը, որոնք ներկայացնում են արևելյան ուղղությամբ խեթական արքաների արշավանքները, Հայկական լեռնաշխարհի երկրների և քաղաքների հետ նրանց կնքած պայմանագրերը (այդ թվում՝ այլ պետությունների հետ կնքված պայմանագրերը, որոնցում որոշակի տեղեկություններ կան Հայկական լեռնաշխարհի երկրների և քաղաքների մասին), խեթական արքաների և տարբեր պաշտոնատար անձանց նամակագրությունն արևելյան շրջաններում ընթացող իրադարձությունների մասին: Այդ տեղեկությունները վերաբերում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածին՝ Բարձր Հայքի, Օտիքի, Տուրուբերանի և Աղձնիքի, ինչես նաև Փոքր Հայքի տարածքներին, այսինքն՝ Խաթթիի հետ Հայկական լեռնաշխարհի երկրների շփման գոտու ողջ երկայնքին:

Հայասայի պատմությունն ուսումնասիրվել է արևմտյան պատմագիտության կողմից դեռևս XX դ. 20-30-ական թվականներից խեթագիտության զարգացմանը զուգահեռ:

Խեթագիտության հիմնադիրներից Բ. Հրոզնին բավարարվել է միայն թռուցիկ ծանոթագրություններով Հայասա երկրի և նրան սահմանակից ցեղերի մասին<sup>2</sup>: Է. Ֆոռերն անդրադարձել է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 15-13-րդ դարերում կազմավորված քաղաքական միավորների պատմությանը: 1931 թ. հրատարակվել է նրա մեծարժեք «Հայասա-Ազգի» աշխատությունը<sup>3</sup>, որ-

<sup>2</sup> St u Hrozny F., Die ersten Zehn Regierungsjahre des Königs Muršiliš II, Hethitische Keilschrifttexte aus Boghazköi, 1919, էջ 156-223:

<sup>3</sup> Forrer E., Hayasa-Azzi.-Caucasica, 1931, 9, էջ 1-24:

տեղ նա կարծիք է հայտնել, որ Հայասան պետք է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում տեղադրել, ինչը հետագայում ընդունվել է արևմտյան արևելագետների մեծ մասի կողմից: Պահպանվել է նաև խեթահայասական պայմանագրի կնքմանը «վկա» աստվածների ցուցակ, որտեղ տրվել է նաև Հայասայի քաղաքների և նրանցում պաշտվող աստվածների անվանացուցակը: Այն առաջին անգամ հրատարակվել է Է. Ֆոռերի կողմից<sup>4</sup>: Այդ բեկորային տեքստը միակ սկզբնաղբյուրն է, որտեղ հիշատակվում են Հայասայի բնակավայրերը (թվով 13-ը) և նրանց աստվածությունները: Տեքստը ամենայն հավանականությամբ Խաթթիի արքա Մուրսիլի II-ի (մ.թ.ա. 1321-1295 թթ.) և Հայասայի արքա Աննիայի միջև կնքված պայմանագրի մի մասն է կազմել<sup>5</sup>:

Մինչ Է. Ֆոռերի այդ մեծարժեք աշխատության հրատարակությունը՝ Կ. Ռոթն, այնուհետև Պ. Կրեչմերը ցույց են տվել, որ Հայասա երկիրը նույնն է, ինչ որ Հայքը կամ Հայաստանը<sup>6</sup>: Պ. Կրեչմերը, նշելով, որ *Հայասա* անունը նշանակում է Հայաստան (նրանից առաջ այդ կարծիքն է արտահայտել Կ. Ռոթը), փաստորեն, համաձայնել է Հայասան Բարձր Հայքում տեղադրելու՝ Է. Ֆոռերի առաջարկած տեսակետի հետ:

Հայասայի պատմության ուսումնասիրության գործում զգալի ներդրում է կատարել նաև գերմանացի ականավոր արևելագետ Յ. Ֆրիդրիխը: Նա հրատարակել է Խաթթիի արքա Մուրսիլիու-

<sup>4</sup> St u KUB XXVI 39 (Forrer E., Hayasa-Azzi, S. 6). Տեքստը հետագայում հրատարակել է նաև Ֆ. Հասզը՝ Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands, Xenia. Das Reich Urartu, B. I, 1986. էջ 24:

<sup>5</sup> St u Քոսյան Ա., Հայասայի աստվածները (KUB XXVI 39).- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2005, հ. XXIV, էջ 44-457:

<sup>6</sup> St u Roth K., Die Bedeutung des Armenischen, Հանդես Ամսորեայ, 1927, N 11-12 էջ 741-750: «Հայ» անունը ըստ Պ. Կրեչմերի, Հանդես Ամսորեայ, 1933, N 7-8, էջ 429-432:

լիումա I-ի և Հայասայի տեր Խուկկանայի միջև կնքված դաշնագիրը<sup>7</sup>: Յ. Ֆրիդրիխը դեռևս 1925 թ. իր աշխատություններից մեկում Հայասա երկրի տեղադրությունը կապել էր Թեգարամա երկրից (Մելիտենեից հյուսիս-արևմուտք) հյուսիս-արևելք ընկած տարածքի, այսինքն՝ Բարձր Հայքի հետ: Փաստորեն, նա Հայասան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Հետագայում Յ. Ֆրիդրիխն առաջարկեց Հայասան տեղադրել Կասկա (Արևելապոնտական լեռների շրջանը) և Ալզի (հայոց Աղձնիքը, Վերին Տիգրիսի ակունքների մոտ) երկրների միջև, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում:

Հայասայի պատմության կարևորագույն աշխատություններն են նաև նշանավոր արևելագետ Ա. Գյոթցեի՝ գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները: Նա 1927 թ. հրատարակած իր հոդվածներից մեկում Հայասան տեղորոշել է Տրապիզոնից արևելք՝ Պոնտոսի մերձափնյա շրջանում: Այնուհետև, վերանայելով իր այդ տեսակետը, նա Հայասան տեղադրել է Արևմտյան Եփրատի և Ճորոխի ավազաններում՝ մինչև Սև ծովի ափերը<sup>8</sup>: Ա. Գյոթցեն տառադարձել, թարգմանել և հրատարակել է նաև Հայասայի պատմության համար եզակի սկզբնաղբյուր հանդիսացող Մուրսիլի II-ի տարեգրությունները («Տասնամյա» և «Ընդարձակ»)<sup>9</sup>: Տարեգրություններում Հայասայի (Ազզիի) հետ

---

<sup>7</sup> St u Friedrich J., Der Vertrag des Suppiluliumas mit Hukkanaš und den Leuten von Hayaša. Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, էջ 103-163:

<sup>8</sup> St u Goetze A., Zur Geographie des Hethiterreichs, Kleinasatische Forschungen, 1930, B. 1, H. 1, էջ 108-114: Goetze A., Kleinasien, München, 1957 (տե՛ս գրքի վերջում գետեղված քարտեզը):

<sup>9</sup> St u BoTU II, S. 48-63 (Götze A., Die Annalen des Mursiliš, MVAG, 1933, 38; CTH 61). Դեռևս Մուրսիլի II-ի տարեգրությունների առաջին ուսումնասիրողները՝ Է. Ֆոռերը, Ա. Գյոթցեն, զոնում էին, որ Մուրսիլի II-ի կառավարման

փոխհարաբերությունները թվագրվում են խեթական արքայի գահակալության յոթից տասնեկերորդ տարիներով:

Մուրսիլի II-ի ժամանակաշրջանից պահպանվել է նաև մի տեքստ (KUB XIV 4), որտեղ հիշատակվել է Խաթթիի մեծ արքայի՝ հավանաբար նրա 10-րդ տարում դեպի Հայասա (Ազգի) կազմակերպած արշավանքի ընթացքում խեթական թագուհու՝ Խաթթուսայում պալատական հեղաշրջում իրականացնելու փորձը: Տրվում է նաև այն մասին, որ թագուհին փորձել էր արևի խավարումն օգտագործել ընդդեմ արքայի<sup>10</sup>: Այս տեքստում ևս Հայաս-

---

ժամանակաշրջանի միևնույն իրադարձությունները տրված են տարբեր հատվածներում՝ Լական տեքստային և բովանդակային տարբերություններով: Այսինքն՝ նշյալ հատվածները պատկանում են ոչ թե մեկ, այլ երկու ինքնուրույն տարեգրական բնույթի ստեղծագործության: Մասնավորապես. KBo III 4 աղյուսակն իրենից ներկայացնում է, ընդհանուր առմամբ, ավարտուն տեքստ, որտեղ նկարագրվում են Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիների իրադարձությունները, որտեղ ևս, ի փառս Արիննայի Արևի աստվածուհու, հաղթում է իր բոլոր թշնամիներին, որոնք հանդես էին եկել Խաթթիի դեմ իր գահ բարձրանալու ժամանակ: Որոշ այլ հատվածներ հանդիսանում են այս տեքստի կրկնօրինակները կամ նրա կցաբեկորները: Մնացած բոլոր տեքստերը, որոնք նկարագրում են Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիների իրադարձություններն առավել մանրամասն, ինչպես նաև նրա կառավարման հետագա տարիների վերաբերող հատվածները Ա. Գյոթցեի կողմից պայմանականորեն մտցվել են, այսպես կոչված, «Ընդարձակ» տարեգրության մեջ (տե՛ս CTH 61.II): Հետագայում 1988 թ. «Տասնամյա» տարեգրությունը առանձին հրատարակել է Ժ. Պ. Գրելուան (Grelais J.-P., *Les Annales Décennales de Mursili II* (CTH 61.1), *Hethitica*, 1988, IX, pp. 17–14), տե՛ս նաև Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Եր., 2013:

<sup>10</sup> Արևի խավարման նկարագրությունը թույլ է տալիս ճշգրտել Մուրսիլի II-ի կառավարման ժամանակագրությունը: Հետազոտողների մի մասի կարծիքի համաձայն՝ արևի խավարումը տեղի է ունեցել մ.թ.ա. 1312 թ. հունիսի 24-ին: Այն երել է ամբողջական արևի խավարում, որը երևացել է Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում (տե՛ս Åström P., *The Omen of the Sun in the Tenth Year of the Reign of Mursilis II*, *Horizons and Styles: Studies in Early Art and Archaeology in Honour of Professor Homer I. Thomas*, 1993, pp. 11-17; Huber P. J.,

սան և Ազզին հիշատակվել են՝ որպես մեկ երկրի երկու տարբեր անվանումներ:

Է. Ֆոռեթից, Ա. Գյոթցեից և Յ. Ֆրիդրիխից հետո Հայասայի պատմության համար շատ կարևոր աղբյուրների հրատարակությամբ հանդես եկավ Է. Կավենյակը: Վերահրատարակելով Սուպպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1344-1322 թթ.) տարեգրություններն ու դաշնագրերը՝ նա փորձել է ճշտել նաև Հայասայի տեղագրությունը՝ այն համարելով առաջին թագավորությունը Հայաստանում և Արևելքի հզոր միապետություններից մեկը մ.թ.ա. XIV դարում: Է. Կավենյակը նույնպես Հայասան տեղադրել է Վերին Եփրատի ավազանում<sup>11</sup>:

Արևմտյան խեթագիտության մեկ այլ ներկայացուցիչ Հ. Գյուտերբոկը հրատարակել է խեթական արքա Սուպպիլուլիումա I-ի տարեգրությունը, որտեղ նույնպես շատ կարևոր տեղեկություններ կան Հայասայի մասին<sup>12</sup>: Այդ տարեգրությունից տեղեկանում ենք, որ Թուդխալիյա III-ն իր որդու՝ Սուպպիլուլիումայի մասնակցությամբ երկու ռազմական արշավանք է կատարել Հայասայի դեմ:

Իր ուսումնասիրություններում, որոնք հիմնականում վերաբերել են խեթական պետության պատմական աշխարհագրությանը, Ֆ. Կոռնելիուսն անդրադարձել է նաև Հայասայի պատմությանը: Նա համամիտ է այն ուսումնասիրողների հետ, որոնք Հա-

---

The solar omen of Mursili II.- *Journal of the American Oriental Society*, 2001, 121/4, pp. 640-644 և այլն):

<sup>11</sup> St' u Cavaignac E., *L'extension de la zone des Gargas à l'Ouest- Revue Hittite et Asiatique (RHA)*, 1931, 4, pp. 101-110. Նույնի, *Le premier royaume d'Arménie.- RHA*, 1934, 17, pp. 11-14. Նույնի, *La place du Palá et du Tumanna.- RHA*, 1936, 22, էջ 174-177:

<sup>12</sup> St' u Güterbock H., *The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II.- Journal of Cuneiform Studies*, 1956, 10, 2-4, էջ 41-68, 75-98, 107-130:

յասան տեղորոշել են Սև ծովի ափերին: Ֆ. Կոռնելիուսը Հայասան տեղադրել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին (ներկայիս Սամսուն քաղաքի շրջակայքում): Իսկ Հայասայի գլխավոր քաղաքն (մայրաքաղաքը), ըստ նրա, տեղադրված է եղել Գայլ գետի ներքին ավազանում՝ Հորոզթեփե հնավայրի տեղում<sup>13</sup>: Մակայն Ֆ. Կոռնելիուսի տեսակետը մերժվել է ուսումնասիրողների կողմից: Նման տեղադրության պայմանում բացառվում է Հայասայի աշխարհագրական մերձավորությունը Իսուվայի (Շուֆքի) հետ, որը փաստվել է խեթական արձանագրությունում, երբ խեթական արքան (Սուպլիլուումա I-ը) Իսուվայից շարժվել է դեպի Շուխապա երկիրը (ասորեստ. աղբ. Suhma՝ Իսուվայի հարևանությամբ), այնուհետև մտել Հայասա<sup>14</sup>:

Շատ կարևոր է նաև արևմտյան խեթագետների կողմից հրատարակված «Պախիսուվացի Միտայի» տեքստը<sup>15</sup>: Տեքստի մասին առաջիններից մեկը, որ հիշատակել է բրիտանացի նշանավոր արևելագետ Ա. Մեյսն է: Տեքստում Հայասան չի հիշատակվել, սակայն այստեղ հանդես են գալիս որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղբյուրներից հայտնի են որպես այդ երկրի բնակավայրեր Դուզգաման և Արխիտան: Տեքստը փաստորեն խեթական արքա Աոնուվանդա I-ի և Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների, հիմնականում Վերին Եփրատի ավազա-

<sup>13</sup> Sl' u Cornelius F., Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches. - RHA, 1958, 62, էջ 3: Նոյնի, Neue Arbeiten zur Hethitischen Geographie, Anatolica, 1967, I, էջ 68:

<sup>14</sup> Sl' u KUB XXXIV 23 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II. - Journal of Cuneiform Studies, 1956, 10, 3, էջ 83):

<sup>15</sup> Sl' u KUB XXIII 72 (Sayce A.H., Hittite and Moscho-Hittite, RHA, fasc. 1, 1930, pp. 1-8; Gurney O.R., Mita of Pahhuwa, LAAA, 1948, 28, էջ 32-48; Hoffner H.A., A join to the Hittite Mita-text. - Journal of Cuneiform Studies, 1976, 28, էջ 60-62):

նի, երկրների և քաղաքների միջև կնքված պայմանագիր է<sup>16</sup>:

Մյուս կարևոր սկզբնաղբյուրը, որին անդրադարձել է արևմտյան պատմագրությունը, դա Խաթթիի արքա Մուպպիլուլումա I-ի և Հայասայի տեր Խուկկանայի միջև կնքված դաշնագիրն է<sup>17</sup>: Խուկկանայի հետ կնքած պայմանագիրը ժամանակագրական առումով հավանաբար երկրորդ պայմանագիրն է, որ կնքել է Խաթթիի արքան Հայասայի (Ազգիի) հետ<sup>18</sup>: Այս պայմանագիրը գիտական տառադարձամաբ, թարգմանությամբ և տեքստաբանական մեկնաբանություններով առաջին անգամ հրատարակել է Յ. Ֆրիդրիխը: Անցած տասնամյակներում Խուկկանայի տեքստը համալրվել է նոր կցաբեկորներով, որոնք լրացնում են

---

<sup>16</sup> Տեքստում ներկայացված են պայմանագրի կնքման նախօրեին վերինեփրատյան մի շարք երկրների հակախեթական ապստամբության իրադարձությունները. թվարկվում են երկու տասնյակ երկրներ և քաղաքներ: Դուզգամացի Աիսսին պիտոխյարիզացի Արիխալիցցիի հետ միասին հանդես է գալիս որպես Պախխուվա երկրի հետագա հավատարմության երաշխավոր: Իսկ Արիխտան հանդիսացել է Պախխուվայի դաշնակիցն ընդդեմ Խաթթիի: Պախխուվայի հետ միացած Արիխտան հարձակվել էր Կումմախայի բնակավայրերի վրա, իսկ խեթական զորքի հարձակման ընթացքում արիխտացիներն ապաստանել էին Պախխուվայում (Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Վերին Եփրատի ավազանում):

<sup>17</sup> St u CTH 42; Friedrich J., *Der Vertrag des Šuppiluliumaš mit iukkanaš und den Leuten von Hayaša*, *Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache*, Heft IV, 2 Teil, Leipzig, 1930, էջ 103-163; Carruba O., *Die Hajasja-Verträge Hattis*, in E. Neu and C. Rüster (eds.), *Documentum Asiae Minoris*, Wiesbaden, 1988, էջ 59-75:

<sup>18</sup> Հավանական է, որ մինչ այդ պայմանագիր էր կնքվել Թուդխալիյա III-ի և Հայասայի տեր Մարիյայի միջև, որից պահպանվել են միայն հատվածներ (տե՛ս և Քոսյան Ա., Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները (ևոր սկզբնաղբյուրներ).- Պատմա-բանասիրական հանդես, 2004, N 2, էջ 198, հղում 5: Նոյնի, Հայասան և Ազգին, Շնորհի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, Եր., 2008, էջ 269, 274): Մովորաբար մասնագիտական գրականության մեջ այն ներկայացվում է Խուկկանայի պայմանագրի հետ միասին, որպես նրա մի մաս (տե՛ս Kitchen K.A., Lawrence P.J.N., *Treaty, Law and Covenant in the Ancient Near East. Part 2: Text, Notes and Chromograms*, Wiesbaden, 2012, էջ 47-48):

դրա որոշ հատվածներ: Մի շարք կցաբեկորներ հրատարակվել են այլ մասնագետների (այդ թվում՝ Հ. Օտտեն) կողմից<sup>19</sup>: Նշենք նաև, որ որոշ փոքր կցաբեկորներ, որոնք առայժմ հրատարակվել են միայն ինքնագիր եղանակով, առ այսօր դեռևս մնում են առկախ, քանի որ պարզ չէ դրանց հստակ տեղը մայր տեքստում<sup>20</sup>: Տեքստի անգլերեն և գերմաներեն թարգմանությունները հրատարակվել են նաև Գ. Բեքմանի և Յ. Քլինգերի կողմից<sup>21</sup>:

Կարելի է նշել նաև, որ Խուկկանայի պայմանագիրը, որը հանդիսանում է հինարևելյան աշխարհի կարևորագույն պայմանագրերից մեկը, մինևույն ժամանակ Հայաստանի պատմության առաջին, համեմատաբար ամբողջական պահպանված, երկկողմանի պայմանագիրն է:

Հայկական լեռնաշխարհի երկրամասերի վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր է նաև խեթական արքա Խաթթուսիլի III-ի (մ.թ.ա. 1267-1237 թթ.) «Ինքնակենսագրությունը» (CTH 81), որտեղ տեղեկություններ կան խեթական արքայի կողմից գահի բռնազավթման արդարացման և նախորդ արքաների գործունեության վերաբերյալ: Տեքստը 1925 թ. հրատարակել է Ա. Գյոթցեն<sup>22</sup>: Այն հետագայում ամբողջական հրատարակել է Հ. Օտտե-

---

<sup>19</sup> St u Otten H., Ruster Chr., Textanschlüsse von BogazkoyTafeln (110), Zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archäologie, 62, 1972, էջ 102-108:

<sup>20</sup> Այդպիսի բեկորներից են KBo L-ում ինքնագիր եղանակով հրատարակված NN.104 և 120-ը: Տե՛ս նաև Քոսյան Ա., Մ.թ.ա. XIV դարի իւրթու-հայաստական միջպետական պայմանագրերը, Եր., 2016:

<sup>21</sup> Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996, 1, 22ff.; Klinger J., Der Vertrag Šuppiluliumas I. mit Hukkana von Hajaša, in Staatsverträge, Herrscherinschriften und andere Dokumente zur politische Geschichte (Hrsg. B. Janowski und G. Wilhelm) (=TUAT Neue Folge band 2), Gutersloh, 2005, էջ 106-112:

<sup>22</sup> St u Götze A., Hattušili: der Bericht über sein Thronbesteigung nebst den Paralleltexen (=Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft, 29.3), Leipzig, 1925:

նը<sup>23</sup>: Տեքստում կարևոր տեղեկություններ են պահպանվել Հայկական լեոնաշխարհի արևմուտքում՝ Հայասայի անմիջական մերձակցությամբ Խաթթուսիլի III-ի վարած պատերազմների մասին, որտեղ կան տեղեկություններ նաև վերիֆեֆրատյան շրջանի մերձակցությամբ գտնվող քաղաքների վերաբերյալ (Սամուխա, Պիտտիյարիգա, Խախխա)<sup>24</sup>:

Շատ կարևոր են նաև հրատարակված խեթական աշապես կոչված «Աղոթքների» տեքստերը, որտեղ ներկայացված են նաև Խեթական տերության ողջ տարածքում երկրպագվող աստվածությունները: Այստեղ, առանձին խմբավորված հիշատակվում են նաև Հայասայի հարևանությամբ գտնվող Իսուվայի, Թեգարամայի, Վերին երկրի, Սամուխայի, Արծիյայի, Պիտտիյարիգայի և Հայկական լեոնաշխարհի արևմտյան հատվածի այլ երկրների և քաղաքների աստվածները: «Աղոթքների» տեքստերի վերջին հրատարակությունը իրականացրել է Ի. Զինգերը<sup>25</sup>:

Հայասայի տեղադրության հարցերին է անդրադարձել նաև բրիտանացի հնագետ և պատմաբան Ջ. Մելլաարտը: Նա Հայասան տեղադրել է Եփրատի մեծ ոլորանից մինչև Կարին ընկած տարածքում՝ հավանական համարելով նաև, որ այն տարածվել է նաև Արաքս գետի հովտում՝ մինչև Արարատյան դաշտը, որտեղ

---

<sup>23</sup> St u KBo VI 28. CTH 81 (Otten H., Die Apologie Hattusiliš III: Das Bild der Überlieferung, Wiesbaden, 1981):

<sup>24</sup> St'u նաև Քոսյան Ա., Հայկական լեոնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004, էջ 113:

<sup>25</sup> St u Singer I., Hittite Prayers, Leiden-Boston-Köln, 2002. St'u նաև Gurney O. R., Hittite Prayers of Mursili II, AAA, 1940, 27; Goetze A., Hittite Prayers, in Ancient Near Eastern Texts relating to the Old Testament, Princeton, 1950, pp. 120-128; Houwink ten Cate Ph. H. J., Josephson F. J., Muwatallis' Prayer to the Storm-god of Kummanni (KBo XI 1), RHA, 1967, 25, pp. 101-140; Kühne C., Hittite texts, in Ancient Near Eastern Texts relating to the Old Testament, Philadelphia, 1978, pp. 146-184; Beckman G., Plague prayers of Mursili II, CoS, 1997, I, pp. 156-160 և այլն:

գտնվող Մեծամոր հնավայրը նա համարել է Հայասայի մաս<sup>26</sup>, ինչը հետաքրքիր է Հայասայի արևելյան սահմանների աշխարհագրական ընդգրկումը քննարկելիս: Մեկ այլ արևմտյան արևելազետ Ֆ. Հաազը համաձայն էր այն տեսակետի հետ, որ Հայասան առավելապես պետք է գտնվեր Երզնկայի, Տրապիզոնի և Կարինի միջև ընկած տարածքում<sup>27</sup>:

Այսպիսով, կարող ենք նշել, որ վերոհիշյալ արևմտյան գիտնականների հետազոտությունները գալիս են լրացնելու Հայասայի պատմությանը նվիրված հայ պատմագիտության մեջ հայտնված տեսակետները: Այն աղբյուրները, որ նրանք ուսումնասիրել են և հրատարակել՝ անգնահատելի նյութ են հանդիսանում մ.թ.ա. 15-13-րդ դարերի Հայոց պատմության համար: Մակայն, հարկ է արձանագրել նաև, որ Հայասայի (Ազգիի) պատմությունը արևմտյան գիտության կողմից չի ընդունվում որպես Հայոց պատմության մի մաս: Հիմնականում այն ղիտարկվում է շատ թռուցիկ և Խաթթի պատմությանը զուգահեռ: Տեղադրության առումով Հայասան սովորաբար նշվում է, որ գտնվել է կամ Սև ծովի հարավ-արևելյան ափամերձ հատվածում, կամ (որը այժմ եղած տեսակետների մեջ մեծամասնություն է կազմում) տրվում է Վերին Եփրատի ավազանում:

---

<sup>26</sup> St u Mellaart J., Anatolian Trade with Europe and Anatolian Geography and Culture Provinces in the Late Bronze Age.- Anatolian Studies, 1968, XVIII, էջ 201-202:

<sup>27</sup> St u Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands, Xenia. Das Reich Urartu, B. I, 1986, էջ 22: Հարկավոր է նշել, որ Ֆ. Հաազը այն քիչ արևմտյան գիտնականներից մեկն է, որ իր աշխատություններում օգտագործել է «Հայկական լեռնաշխարհ» պատմաաշխարհագրական տերմինը: Հատկապես վերջին տասնամյակների ընթացքում արևմտյան գիտնականների աշխատություններում տեղ է գտել Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի համար օգտագործվող «Արևելյան Անատոլիա» հակազդիտական տերմինը:

РОБЕРТ КАЗАРЯН

*Институт Востоковедения НАН РА*

**ИЗУЧЕНИЕ ИСТОРИИ ХАЙАСЫ (АЗЗИ)  
В ЗАПАДНОЙ ИСТОРИОГРАФИИ**

*Резюме*

История Хайасы изучается западной историографией с 20-30 гг. XX в. с развитием хеттологии. Работы армянских историков об истории Хайасы дополняются исследованиями западных ученых. Те хеттские источники, которые они изучили и опубликовали, являются бесценным материалом для изучения истории Армении XV-XIII вв. до н.э. Тем не менее, следует отметить, что история Хайасы (Аззи) не принимается западной историографией как часть истории Армении. Как правило, история Хайасы в этих работах дается попутно и параллельно истории Хеттского государства. Хайаса локализуется в этих работах либо в юго-восточной прибрежной зоне Черного моря, или же в бассейне Верхнего Евфрата (в настоящее время мнение большинства западных хеттологов).

ROBERT GHAZARYAN

*Institute of Oriental Studies of NAS RA*

**STUDY OF THE HISTORY OF HAYASA (AZZI) IN WESTERN  
HISTORIOGRAPHY**

*Summary*

The History of Hayasa has been studied by Western historiography since 20-30s of the 20<sup>th</sup> century with the development of Hittitology. The researches of Armenian historians on the history of Hayasa are supplemented by the researches of Western scholars. The Hittite

sources studied and published by them are important materials for studying the history of Armenia of the 15<sup>th</sup>-13<sup>th</sup> centuries BC. However, it should be noted that the history of Hayasa (Azzi) is not accepted by Western historiography as a part of the history of Armenia. As a rule, in their works the history of Hayasa is given simultaneously and in parallel with the history of the Hittite State. In these works Hayasa is localized either in the south-eastern coastal area of the Black Sea or in the basin of the Upper Euphrates (now the prevailing view of most Western Hittitologists).

## ԺԱՅՈՒՂԱՏԿԵՐԱԲԱՆ ՄԻՐՈՍԼԱՎ ԿՇԻՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սլովակ ժայռապատկերաբան Միրոսլավ Կշիցան (Kšica) նախնադարյան արվեստի հայտնի հետազոտող է: Ծնվել է 1920 թ.: Բռնոյի համալսարանում ուսումնասիրել է արվեստի պատմություն, ազգագրություն և հնագիտություն, հետագայում մասնագիտացումը շարունակել Սորբոնում: Դասավանդել է արտասահմանյան մի շարք համալսարաններում, տարբեր երկրներում իրականացրել 14 գիտարշավ, կազմակերպել մոտ 50 ցուցահանդես: Հրատարակել է մի քանի հիմնարար աշխատություն [Umění staré Eurasie: Skalní obrazy v SSSR, 1974 (1994, 2007); Výpravy za pravekým umením, 1984; Frauenidole der Eiszeit und Nachzeit: Realität und Abstraktion von Muttergottheiten aus dreissig Jahrtausenden, 1989; Felsbilder: zwischen Schwarzem Meer und Beringstrasse, 1994; Žena v pravěkém umění: moravské nálezy v euroasijském kontextu, 2007; Vom Naturbild zur Kunst: vom Urbild zur Schrift, 2009].

Միրոսլավ Կշիցայի «Ճամփորդություն դեպի նախնադարյան արվեստը» 312 էջանոց գիրքը (սլովակերեն) նվիրված է Խորհրդային Միության Արևմտյան մասի, Սիբիրի, Միջին Ասիայի, Կովկասի և Այսրկովկասի հնագույն մշակութային հուշարձաններին<sup>1</sup>: Հեղինակը հատուկ անդրադարձ է կատարել Հայաստանի ժայռապատկերներին (27 էջ) նշելով, որ տասնյակ հազարավոր ժայռանկարների մոտիվները նման են միքենյան ու միևնույան կնիքների պատկերներին, ուստի, հայկական ու միջերկ-

<sup>1</sup> Տե՛ս Kšica M., Výpravy za pravekým umením, Brno, «Svetom», 1984.

բաժնույն մշակույթները սերտ կապված են եղել այն ժամանակներում: Գրքի շապիկին պատկերված է Սևսարի երկնադիտարանի գլխավոր քարակոթողը: Այս կերպ նա արտահայտել է իր բարձր գնահատանքը հայկական նյութին:

Ծանոթանալով 1970-71 թթ. լույս տեսած Սյունիքի և Գեղամա լեռների ժայռապատկերներին նվիրված հայ հնագետների երկու մենագրություններին<sup>2</sup> և ճարտարապետ Սուրեն Պետրոսյանի հայտնաբերած հազարավոր պատկերներին՝ նա 1972 և 1974 թթ. այցելել է Հայաստան: Եղել է Մատենադարանում, Գառնիում, Էրեբունիում, Մեծամորում, Լճաշենում և այլուր: Ս. Պետրոսյանի հետ շրջել է Գեղամա և Վարդենիսի լեռներում, հետազոտել ժայռապատկերներ, աստղագիտական կառուցվածքներ ու վիշապաքարեր:

Գրքի՝ Հայաստանին նվիրված բաժինը բաղկացած է վեց մասից:

### 1. Երևանը «հավերժական քաղաք» Հռոմի ժամանակակիցն է.

Էրեբունու և Արարատյան թագավորության այլ հնավայրերի նյութերի հիմամբ նա նշում է, որ Երևանն աշխարհի այն հազվագյուտ քաղաքներից է, որն ունի *ծննդյան վկայական ու հիմնադիր արքայի անուն*: Իսկ Հայաստանը մարդկային քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկն է: Նրա պատմությունը սկսվում է պլեյստոցենում, ինչի վկան են հին և միջին քարի դարի գործիքները: Հետագա՝ բրոնզիդարյան շրջանի առավել արժեքավոր ժառանգությունը ժայռապատկերներն են, թե՛ շատ պարզ, թե՛ ծայրահեղ բարդ և թե՛ հասուն նկարները: Մ.թ.ա. *վերջին* հա-

---

<sup>2</sup> Տե՛ս Կարախանյան Գր. Հ., Սաֆյան Պ. Գ., Սյունիքի ժայռապատկերները, ՀՀՀ-4, պր. I, Եր., 1970, Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ., Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀՀ-6, պր. II, Եր., 1971:

գարամյակում Վանա լճի շրջակայքում ձևավորվել է *հայկական Ուրարտուն*<sup>3</sup>՝ աշխարհի հնագույն պետություններից մեկը, որի կենտրոնը Վանն էր: Հատկապես ուշագրավ է համարել հայ միջնադարյան մոտ չորս հազար հուշարձանների ամբողջությունը՝ «թանգարանը բաց երկնքի տակ»<sup>3</sup>:

Այս ամենը նա դիտարկել է ժայռապատկերային արվեստի ժառանգականության համատեքստում՝ որպես նախորդող (հնաքարյան) և հաջորդող (Ուրարտու, միջնադար) փուլերի հետ առնչված:

### 2. Ժայռերի վրայի նշաններից դեպի գիր.

Մատենադարանում նա ծանոթանում է հայ գրչության գլուխգործոցներին և այբուբենի արարման պատմությանը: Հայոց այբուբենի տառերը համադրելով հրատարակված գրքերից իրեն հայտնի և Գեղամա լեռներում տեսած ժայռապատկերների նշանագրերի հետ, նա նշում է՝ որ Մաշտոցյան այբուբենի ստեղծումից առաջ ժայռագրերն են ծառայել որպես գրի և հաղորդակցության միջոց<sup>4</sup>:

### 3. Ուխտասար լեռ.

Այս տարածքի ժայռապատկերները նա շատ բարձր է գնահատել՝ համեմատելով աշխարհի այլ վայրերի ստեղծագործության հետ: Արժևորել է հատկապես այն, որ կենդանիների ու մարդկանց, որսի և կենցաղային սովորական սյուժեների շարքում հաճախ են հանդիպում արտասովոր արարածների, սոսապելական էակների պատկերներ, վարժեցման ու երկրագործական, երկրպագության և զուգապարի տեսարաններ, փոխադրամիջոց ու հագուստ, նաև՝ բազմաթիվ խորհրդանշաններ: Եվ այդ

<sup>3</sup> Kšica M., op. cit., p. 267-68.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 269:

ամենի անդրադարձները նկատելի են հետագա շրջանի հնագիտական գտածոների՝ խեցեղենի և արձանիկի հորինվածքներում և զարդանախշում<sup>5</sup>:

#### 4. Աստղագիտությունը նախնադարում.

Սևսարի երկնադիտարանը դառնում է Մ. Կշիցայի հիացմունքի առարկան: Այնտեղ հասնելու ճանապարհին այցելում է Լճաշեն հնավայր, որտեղ *հայտնաբերվել է Տիեզերքի բրոնզե մոդելը*<sup>6</sup>:

Հեղինակը մանրամասն նկարագրում է Սևսարի քարակոթողը և շրջակայքի փորագիր օրացույցները, մեջբերում Ս. Պետրոսյանի, հնագետ Հարություն Մարտիրոսյանի և աստղագետ Բենիկ Թումանյանի տեսակետներն ու եզրակացնում, որ այդ փորագրությունը *աստղային երկնքի հնագույն պատկերումն է: ԽՍՀՄ տարածքում եզակի այս գտածոները կարևոր են հատկապես լուսնարեգակնային օրացույցի ծագման ժամանակի ու տեղի որոշման խնդրում:*

Այցելում է նաև Վարդենյաց լեռնանցքի բարձրակետ, դիտարկում քարասալերին փորագրված համաստեղությունների գծապատկերները և վստահաբար բնորոշում դրանք որպես հնագույն աստղաքարտեզ<sup>7</sup>:

Այս համատեքստում նա անդրադառնում է Ս. Պետրոսյանի հայտնաբերած մեկ այլ՝ խաչամիջուկ շրջանի չորս կողմերում կանգնած մարդկանց պատկերի վերլուծությանը՝ համաձայնելով հայ հետազոտողների տեսակետներին, որ դրանք արևաբնակ մարդիկ են կամ Անանիա Շիրակացու հիշատակած՝ Երկրագնդի

---

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 270-277:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 278, 283:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 279-283:

հակառակ կողմերում ապրող հակոտնյաներ<sup>8</sup>:

Այս կապակցությամբ վկայակոչում է եվրոպական աստղագետ-պատմաբանների այն համոզմունքը, որ Կենդանակերպի համաստեղությունների ձևավորման հայրենիքն Արարատ լեռան շրջակայքն է<sup>9</sup>:

Ավարտելով խոսքը նա եզրակացնում է, որ Սևսարի և շրջակա հուշարձանները ԽՍՀՄ տարածքի առավել արժեքավոր ժայռապատկերներից են:

**5. Կրակի ու ջրի պաշտամունքի վայրերից դեպի Գեղամա լեռների ժայռապատկերները.**

Վերադառնալով Սևսարից նա ճանապարհվում է դեպի Գեղամա լեռներ, բարձրանալով Գառնիի կողմից: Վանքի լճի մոտ ուսումնասիրում է վիշապաքարերը: Հասնում է Մեծ և Փոքր Պայտասար լեռների ստորոտները: Կշիցան տեղանքը բնորոշում է ոչ միայն որպես նախնադարյան ժամանակներում ապրելու, այլև որսի ու վաղ երկրագործության և անասնապահության ծագման համար շատ հարմար վայր<sup>10</sup>:

Այս ժայռապատկերների մեծ մասն ունեն բարձր գեղարվեստական մակարդակ և իրավամբ կարևոր են նախնադարյան արվեստի պատմության ուսումնասիրման ասպարեզում:

**6. Մեծամորի հնադարյան աստղադիտարանից դեպի Ազատ գետի հովիտ.**

Մեծամորի տարածքը բնակեցված է եղել առնվազն մ.թ.ա. III հազարամյակում, ինչի վկան են հնագիտական գտածոները՝ խեցեղեն, տարբեր գործիքներ ու հարմարանքներ, մայրության

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 283:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 284-290:

պաշտամունքին առնչվող կավե արձանիկներ, հնագույն մետաղաձուլական համալիրի մնացորդներ: Ժայռերից մեկի վրա փորագրված է ջրաբաշխական ցանցի գծագիր: Իսկ հյուսիսային կողմի երեք ժայռահարթակները ծառայել են աստղադիտումներին, մասնավորապես՝ դրանցից մեկի նշանները նշում են Սիրիուսի ծագման կետի դիրքը: Սա ևս մի վառ ապացույց է, որ Հայոց երկրում են աստղագիտության ակունքները<sup>11</sup>:

Այսպիսով, գրում է նա, կարելի է համաձայնել ամերիկյան նկարիչ Ռոբուել Քենտի հետ. *«Եթե ինձ հարցնեն, թե Երկիր մոլորակում որտեղ կարելի է տեսնել անհավանական հրաշքներ, ես, առաջին հերթին կասեի՝ Հայաստանում<sup>12</sup>...»*:

---

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 290-291, 283:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 292:

**СПЕЦИАЛИСТ ПО НАСКАЛЬНЫМ ИЗОБРАЖЕНИЯМ  
МИРОСЛАВ КШИЦА В АРМЕНИИ**

*Резюме*

Известный словацкий ученый Мирослав Кшица в своей книге «Путешествие за первобытным искусством» (Брно, 1984) посвятил Армении 27 страниц. На обложке книги изображена Севсарская обсерватория.

Побывав в Армении в 1972 и 1974 гг., Кшица посетил Матенадаран, Гарни, Эребуни, Мецамор, Лчашен и т.д. Вместе с архитектором Суреном Петросяном он совершил экспедиции в Гегамские и Варденисские горы, с целью изучения наскальных изображений, астрономических строений и вишап-камней.

В своей книге Кшица пишет, что число петроглифов достигает десятка тысяч, и интересно, что часть мотивов подобна тем, что изображены на микенских и минойских печатях. Это его наблюдение представляет собой еще одно подтверждение того, что армянская и средиземноморские культуры этой эпохи были тесно связаны между собой.

Объектом восхищения Кшицы становится Севсарская «астрономическая обсерватория» бронзового века с выгравированными созвездиями и сложными солнечными символами. Он побывал также на высочайшей точке перевала Варденяц, где на плоских камнях, в виде кружков, изображены созвездия. С уверенностью охарактеризовав их как древнейшие небесные карты, он отмечает, что эти уникальные находки важны для определения времени и места формирования лунно-солнечного календаря, а также знаков Зодиака.

В Матенадаране Кшица ознакомился с армянским алфавитом. Сравнив очертания букв с рисунками на скалах, он подтверждает бытующее мнение о том, что основы письма неразрывно связаны с наскальными изображениями.

Петроглифическое искусство Армении – одно из интереснейших в мире, оно отличается широким пространственно-временным диапазоном памятников, его традиции берут начало с позднего палеолита, сохраняясь до средневековья.

Высоко оценив наскальные изображения Армении, Кшица отмечает, что их содержание и сюжет проявляют аналогии в археологических артефактах – в композиции и в орнаменте керамики и скульптурных форм. Большинство этих петроглифов имеет высокий художественный уровень и по праву занимает важное место в истории первобытного искусства и научных знаний.

KAREN TOKHATYAN  
*Institute of History of NAS RA*

ROCK-ART RESEARCHER MIROSLAV KŠICA  
IN ARMENIA  
*Summary*

The famous Slovak scientist Miroslav Kšica in his book "Journey for primitive art" (Brno, 1984) has devoted 27 pages to Armenia. The cover of the book shows the Sevsar observatory.

During his trips to Armenia in 1972 and 1974 Kšica visited Matenadaran, Garni, Erebuni, Metsamor, Lchashen, etc. Together with the architect Suren Petrosyan he made expeditions to the Geghama and Vardenis Mountains, in order to study rock-paintings, astronomical structures and vishap-stones.

In his book Kšica writes that the number of petroglyphs reaches tens of thousands and it is remarkable that some of the motifs are similar to those depicted on Mycenaean and Minoan seals. This observation is yet another confirmation of the fact that the Armenian and Mediterranean cultures of this epoch were closely connected.

The object of Kšica's admiration becomes the Sevsar Bronze Age «astronomical observatory» with its engraved constellations and complex solar symbols. He also visited the highest point of the Vardenyats Pass, where constellations are depicted on flat stones, in the form of circles. Confidently describing them as the oldest heavenly maps, he notes that these unique findings are important for determining the time and place of the formation of the lunisolar calendar, as well as the Zodiac signs.

In Matenadaran Kšica got acquainted with the Armenian alphabet. Comparing the outlines of letters with drawings on rocks, he confirms the prevailing view that the basics of writing are inextricably linked with rock paintings.

Petroglyphic art of Armenia is one of the most interesting in the world, it is distinguished by a wide space-time range of monuments, its traditions originate from the late Paleolithic, sinking to the Middle Ages.

Highly appreciating the rock paintings of Armenia, Kšica notes that their content and plot show analogies in archeological artifacts - in composition and ornament of ceramics and sculptural forms. Most of these petroglyphs have a high artistic level and rightfully occupy an important place in the history of primitive art and scientific knowledge.

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՇՊՈՒԻՆԻԻ ԵՎ ՄԻՆՈՒԱՅԻ  
ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝ ԸՍՏ Կ.Ֆ.  
ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ

Գերմանացի արևելագետ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը (1861-1938) Վանի թագավորությունում Իշպուինիի (մ.թ.ա. մոտ 830-820 թթ. միանձնյա և մ.թ.ա. 820-810 թթ. Մինուայի հետ համատեղ) գահակալության տարիների իրողությունները վերականգնելիս առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում քիայնական պետականության՝ դեպի Մուծածիր ծավալման և Խալդի աստծո պաշտամունքի ձևավորման ու քարձրացման հանգամանքին<sup>1</sup>: Վանի թագավորության մայրաքաղաք Տուշպան, որն, ըստ հեղինակի, Իշպուինիի օրոք էր դարձել պետության կենտրոն, Լեման-Հաուպտը համարում է Խալդի աստծո քաղաքը<sup>2</sup>: Ըստ այդմ, հեղինակն Իշպուինիի գահակալության տարիներին կատարված իրողությունների վերականգնման մեկնակետ է ընտրում Խալդի աստծո պաշտամունքի տարածումը Վանիթագավորությունում:

<sup>1</sup> St' u Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt (այսուհետ՝ AEJ), Bd. II/1, Berlin-Leipzig, 1926, էջ 341:

<sup>2</sup> Լեման-Հաուպտը, պայմանավորված հոգնակիության na ցուցիչի թյուրիմացաբար «քաղաք» ընթերցմամբ, Haldina-ն մեկնում է որպես Խալդիի քաղաք՝ Տուշպա, իսկ Խալդյան դարպասները (BABU-susi)՝ Խալդիի քաղաքի համար տարբեր վայրերում հիմնված դարպասներ՝ ամրոցներ (տե՛ս u Lehmann-Haupt C. F., Corpus Inscriptionum Chaldicarum (այսուհետ՝ CICCh), Bd. I/II, Berlin-Leipzig, 1928-1935, Sp. 148-155: AEJ, Bd. II/1, էջ 21, 165: Вильгельм Г., К хурритской и урартской грамматике.- Древний Восток, № 5, Е., 1988, էջ 100-102): Լեման-Հաուպտի սույն տեւակետը ժամանակին իրավացիորեն քննադատվել է Յ. Ֆրիդրիխի կողմից (տե՛ս u Friedrich J., Chalder oder Urartäer?, «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft», Bd. 90, Leipzig, 1936, էջ 62-78):



Հայկական լեոնաշխարհի հարավ-արևելքում գտնվող Քելիշի լեոնանցքի երկլեզվյա արձանագրությունը ևս Լեման-Հաուպտը սկզբում թվագրում էր Իշպուհինի միայնակ գահակալության վերջին շրջանով<sup>7</sup>: Հետագայում հեղինակը, հետևելով Ա. Գյոթցեի առաջարկած թարգմանությանը, ենթադրեց, որ այն գրվել է Իշպուհինի և Մինուայի համատեղ կառավարման սկզբում՝ Մուծածիր երկրորդ անգամ կատարած այցի ժամանակ<sup>8</sup>: Ըստ Ա. Գյոթցեի՝ Քելիշիի արձանագրության ասուրական տեքստը շարադրված է նոր ասորեստանյան բարբառով, և արձանագրության բիայնական և ասուրական տեքստերը բառ առ բառ համապատասխանում են միմյանց <sup>9</sup>: Լեման-Հաուպտը, քննելով Գյոթցեի սույն տեսակետը, նշում է, որ Մուծածիրում նկատելի է

---

<sup>7</sup> St' u AEJ, Bd. II/1, էջ 340: CICH, N12:

<sup>8</sup> St' u CICH, Sp. 160: Ա. Գյոթցեն կարծում է, որ Քելիշիի արձանագրությունում տեղ են գտել 2 տարբեր իրադարձություններ՝ առաջին այցի ժամանակ հիմնադրվել է սրբավայր, երկրորդի՝ կանգնեցվել արձանգրություն կրող կոթող (տե՛ս A. Götze, Zur Kelischin-Stele.- Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, Bd. 39, Berlin-Leipzig, 1930, էջ 124): Համաձայն Ֆ. Քյոնիգի՝ արձանագրությունը շարադրված է երկու տարբեր հեղինակների կողմից. Իշպուհինի գահակալության ժամանակ Քելիշիի լեոնանցքում կառուցվել է սրբավայր burganani-ամառային արուսավայրային շրջան, և արձանագրության սկզբում նշվող կենդանիները՝ մոտ 22600, պահվել են այստեղ: Իշպուհինի և Մինուան դրանից հետո կատարել են համատեղ երկրորդ այցը Մուծածիր, կառուցել iarani-տաճար և BARA-նստավայր-պատվանդան, այնուհետև՝ կենդանիները տեղափոխվել են Մուծածիր: Նրանց հեռանալուց հետո կենդանիները վաճառվել են. ինչն էլ առիթ է հանդիսացել Իշպուհինիի և Մինուայի նոր այցի համար (տե՛ս König F. W., Handbuch der chaldischen Inschriften (այսուհետ՝ HchI), Bd. I/II, Craz, 1955/1957, էջ 42-45, 48-50, 235):

<sup>9</sup> St' u Götze A., նշվ. աշխ., էջ 99-100: Ա. Գյոթցեի սույն ենթադրությունը ներկայումս չի հաստատվում՝ բիայնական և ասուրական տեքստերում ստկա են մասնակի տարբերություններ (տե՛ս Benedict W. C., The Urartian-Assyrian Inscription of Kelishin.- Journal of the American Oriental Society, Vol. 81, № 4, 1961, էջ 361 ):

նան հնդեվրոպական տարրի առկայություն, և ենթադրում, որ շարադրողը եղել է Մուծածիրից, տիրապետել Մուծածիրի բիայնական բարբառին և, բավականաչափ, ասուրերենին<sup>10</sup> չբացատրելով նան քրմական դասի ներկայացուցիչների կողմից տեքստի հատվածական շարադրած լինելու հանգամանքը: Գ. Մելիշվիլին նույնպես կարծում է, որ Մուծածիրում գործածական է եղել բիայներենի Մուծածիրյան խոսվածքը՝ նշելով նան, որ Քելիշինի արձանագրությունում՝ 1-22 տողերում, նշվում է Ալդի ձևը, այնուհետև՝ Հալդի, ինչպես նան սույն հատվածներում առկա են տարբեր վերջածանցավորումներ<sup>11</sup>: Մուծածիրյան բարբառի գոյության մասին տեսակետը ներկայումս, սակայն, հերքվում է<sup>12</sup>: Միաժամանակ հարկ է նշել, որ Լուրիպրիի որդու՝ Սարդուրիի արձանագրություններն էլ շարադրված են նոր ասորեստանյան բարբառով<sup>13</sup>, ինչը կարող է վկայել նան դպրության հնարավոր որոշակի առնչության մասին:

Ըստ Լեման-Հաուպտի ենթադրելի է, որ Քելիշինի լեռնանցքից արևելք ընկած շրջանների նվաճումն այդ ժամանակ արդեն

<sup>10</sup> St u CICH, Sp. 137, 148. Յ. Ֆրիդրիխը մերժում է արձանագրության շարադրողի վերաբերյալ Լեման-Հաուպտի սույն ենթադրությունը՝ Ա. Գյոթցեի տարբերակն առավել վստահելի համարելով (տե՛ս Friedrich J., նշվ. աշխ., էջ 77, նույնի Kleinasiatische Sprachdenkmäler, Berlin, 1932, էջ 42-46):

<sup>11</sup> Հեղինակը սույն փոփոխությունները բացատրում է Տուշպայից ստացած համապատասխան հրահանգով (տե՛ս Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 82-84):

<sup>12</sup> St u Salvini M., Muşasir. A. Historisch., «Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie» (այսուհետ՝ RLA), Bd., 85./6. Lief., Berlin - New York, 1995, էջ 446:

<sup>13</sup> St u Wilhelm G., Urartu als Region der Keilschrift-Kultur, in: V. Haas (Hrsg.), Das Reich Urartu. Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr., «Xenia», 17, Konstanz, 1986, էջ 106:

սկսվել էր<sup>14</sup>: Քելիշինի արձանագրության՝ համանուն լեռնանցքում գտնվելու և երկլեզվյա լինելու հանգամանքը Լեման-Հաուպտը բացատրում է նաև լեռնանցքով Ասորեստան անցնող ճանապարհի առկայությամբ. լեռնանցքի արևելյան ստորոտում գտնվել է ասորեստանյան ամրոց<sup>15</sup>: Քելիշինի արձանագրությունում նշվում է Իշպուինիի և Մինուայի՝ *Արդինի-Մուծածիր քաղաք գալու, iarani* կառուցելու և *արձանագրություն կանգնեցնելու* մասին<sup>16</sup>: Լեման-Հաուպտը կարծում է, որ տեքստում նշվող արձանագրությունը Քելիշինի կոթողի հետ նույնական չէ, քանզի լեռնանցքի մոտ բիայնական կառուցապատման հետքեր չկան: Հիշատակված արձանագրությունը գտնվել է Մուծածիրում՝ *iarani-parakku* տաճարի պատի մեջ<sup>17</sup>: Լեման-Հաուպտը, հիմք ընդունելով Քելիշինի արձանագրության տվյալները, կարծում է, որ Մուծածիրում Խալդիի պաշտամունքին նվիրված գործերը վկայում են բիայնական պետության համար նրա պաշտամունքի՝ թեոկրատականից քաղաքականի վերափոխման մասին:

Արդինիում *iarani* կառուցելու հանգամանքն առնվազն կարող է վկայել արդեն զոյություն ունեցող տաճարային համալիրը Խալդիին նվիրված ևս մեկ կառույցով հալֆայրելու մասին: Տաճա-

<sup>14</sup> St' u AEJ, Bd. I, Berlin, 1910, էջ 257: AEJ, Bd. II/1, էջ 341-342: Сальвини М., Распространение влияния государства Урарту на востоке.- Древний Восток, № 4, Е., 1983, էջ 224-226:

<sup>15</sup> St' u AEJ Bd. I, էջ 247-248: AEJ, Bd. II/1, էջ 341: CICH, Sp.151:

<sup>16</sup> St' u CTU, vol. I, A 3-11Ro6-7: Բիայնական կողմում նշված *iarani*-ին համապատասխանում է ասորական՝ *paraku*-ն: Parakku(m) բառը հին բաբելոնեում նշանակել է տաճար, ավելի ուշ շրջանում՝ պաշտամունքային պատվանդան (տե՛ս W. von Soden, Akkadisches Handwörterbuch, Bd. II, Wiesbaden, 1972, էջ 827-828):

<sup>17</sup> St' u CICH Sp. 139-140, 151: Ի. Դյակոնովը կարծում է, որ Քելիշինի արձանագրությունում հանձին Խալդյան դարպասների հարկ է հասկանալ լեռնանցքում գտնվող ժայռե որմնախորշը (տե՛ս Дьяконов И. М., О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах.- Древний Восток, N 5, էջ 162-163):

րի գոյությունը փաստում է նաև Իշալուինիի և Մինուայի՝ Արդինի քաղաք՝ «Խալդի աստծո առաջ գալու» հանգամանքը: Քելիշինի արձանագրությունն Արդինիում գտնվող արձանագրության կրկնօրինակներից է, որոնք կանգնեցվել են Մուծածիր տանող ճանապարհի տարբեր հատվածներում<sup>18</sup>: Այս հանգամանքի օգտին է վկայում նաև այն, որ տեքստի սկզբում նշվող արձանագրությունը հանդես է գալիս առանց դերանվան. խոսքն այլ արձանագրության մասին է, իսկ «անեծքի բանաձևում նշվողը»<sup>19</sup> ini ցուցական դերանունով<sup>20</sup>: Տեսակետը, որ արձանագրությունում նշվում են տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձություններ, փաստերի սակավության հետևանքով դեռևս առկախ է մնում:

Լեման-Հաուպտը ենթադրում է, որ Արդինի քաղաքն այդ ժամանակ նոր էր հիմնադրվում՝ չբացառելով նաև արդեն գոյություն ունենալու տարբերակը<sup>21</sup>: Հեղինակն իր այս տեսակետը փաս-

---

<sup>18</sup> St. u Salvini M., *Geschichte und Kultur der Urartaer*, էջ 149:

<sup>19</sup> Քելիշինի արձանագրության բիայնական հատվածի «անեծքի բանաձևը» տարբերվում է մնացած արձանագրություններից, որը դեռևս մնում է առկախ (տե՛ս Benedict W. C., նշվ. աշխ., էջ, 383-385):

<sup>20</sup> St. u CTU, vol. I, A 3-11Ro7. 37:

<sup>21</sup> St. u AEJ, Bd. II/1, էջ 342: Մուծածիր երկիրը առաջին անգամ հիշատակվում է Աշուրնածիրապալ II-ի (մ.թ.ա. 883-859 թթ.) արձանագրություններից մեկում. մ.թ.ա. 879 թ. Նիմրուդի արքայական պալատի բացման տասնօրյա հանդիսություններին ներկա էին նաև Մուծածիրի ղեսպանները (տե՛ս u Grayson A.K., *Assyrian Rulers of the Early First Millennium BC (1114-859 BC): The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods* (այսուհետ՝ RIMA), vol. II, Toronto, 1991, A.O.101.30 (147), 145-150; Salvini M., *Muṣaṣir. A. Historisch.*, էջ 444): Հետազոտողներից ոմանք հնարավոր են համարում միջինասորեստանյան շրջանի արձանագրություններում նշվող Մուծրու երկրի և Արինի քաղաքի համադրությունը Արդինի-Մուծածիրի հետ (տե՛ս u Арутюнян Н. В., *Топонимика Урарту*, Е., 1985, с. 36, 145-146; Radner K., *Between a rock and a hard place: Muṣaṣir, Kummē, Uḫku and Subria - the buffer states between Assyria and Urartu, Biainili-Urartu*, *The Proceedings of the Symposium held in*

տարկում է այն հանգամանքով, որ Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.)՝ գահակալության 31-րդ տարվա արշավանքի նկարագրությունում Մուծածիր երկրում նշվում է Ծապարիա ամրացված քաղաքի ու 46 այլ բնակավայրերի նվաճումը, սակայն Մուծածիր քաղաքի վերաբերյալ որևէ տեղեկություն առկա չէ<sup>22</sup>: Արշավանքի նկարագրության շարունակությունում նշվում է, որ գորավար Դայան-Աշշուրը Մուծածիրից շարժվել է Ուրարսուտի ամրոցները, ամայացրել 50 բնակավայր<sup>23</sup>: Արդինի քաղաքի բիայնական հիմնադրման օգտին Լեման-Հաուպտը նշում է նաև երկու այլ հանգամանք՝ Մուծածիր անվան ասուրերենով ստուգաբանությունը և Մուծածիրում բիայնական ճանապարհաշինության առակայությունը<sup>24</sup>: Լեման-Հաուպտը Մուծածիր անվանումն առաջարկում է ասուրերենով, ժողովրդական ստուգաբանությամբ, որպես «օձի ելման վայր, օձի ելք» ստուգաբանել<sup>25</sup>: Հեղինակին նման բացատրության համար հիմք էր ծառայում այն հանգամանքը, որ Մուծածիրի արքա Ուրգանայի կնիքում նշվում է «Կնիքը Ուրգանայի, արքայի Մուծածիր քաղաքի, քաղաքի... որի

---

Munich 12-14 October 2007.- *Acta Iranica*, 51, Peeters, 2012, pp. 245-246): Մուծրու երկիրը տեղորոշվում է նաև Կումենուի հարևանությամբ: Հարկ է նշել նաև, որ նորասարեստանյան շրջանից ևս առկա է <sup>KUR</sup>Mu-us-ri (լեռներ մայրաքաղաք Դուր-Շարուկինից հյուսիս) ձևով վկայություն, որն իր աշխարհագրական դիրքով նույնացվում է Թիզլարթալասարի III-ի օրոք նշվող Մուծուր լեռների և Մուծրու երկրի հետ (տե՛ս u Kessler K., Muşri I, Muşri II., M.I. (KUR Mu-us-ri), RLA, էջ 497):

<sup>22</sup> Տե՛ս u AEJ, Bd.II/1 , էջ 325: Schrader E., Keilinschriftliche Bibliothek, Bd. I, Berlin, 1889, էջ 149: Grayson A. K., *Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858-745 BC)*.- *The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods*, vol. III, Toronto, A.O.102.14, 174b-190:

<sup>23</sup> Տե՛ս u Арутюнян Н. В., *Бивайинили (Урагты)*, Е., 1970, էջ 130-131:

<sup>24</sup> Տե՛ս u AEJ, Bd. II/1, էջ 301-302:

<sup>25</sup> Տե՛ս u նշվ. աշխ., էջ 305-336:

երախն ինչպես օձի՝ չար լեռներում բացված է»<sup>26</sup>: Ըստ հեղինակի՝ քաղաքն այստեղ ուղղակիորեն համեմատվում է լեռներում գտնվող օձի հետ: Սարահարթը, որի վրա գտնվում են Մուծածիրի ավերակները, համաձայն հեղինակի, համապատասխանում է հենց նման նկարագրության (տե՛ս ստորև): Լեման-Հաուպտը նշում է, որ Մուծածիրը, որպես Ուրարտուին հարող և պատկանող հարավային երկիր, անմիջապես Վանից Մուծածիր և Քելիշին եկող ռազմական ճանապարհ է ունեցել<sup>27</sup>: Հեղինակը նշում է

<sup>26</sup> Լեման-Հաուպտը չի անդրադարձել արձանագրության վիճարկելի հատվածի վերլուծությանը, որն այդ ժամանակաշրջանում արդեն տարրնթերցմաների պատճառ էր դարձել. առաջարկվել էին համապատասխանաբար «ջայլամ թռչնի քաղաքի», «արքայի Մուծածիրի և Ու-աբ(?)-տի քաղաքի», «ագոավի քաղաքի» տարբերակները (տե՛ս Jeremias A., Bemerkungen zu einigen assyrischen Altertümern in den Königlichen Museen zu Dresden.- Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, Bd. 1, Leipzig, 1886, էջ 47: Streck. M., Das Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistân und Westpersien nach den babylonisch-assyrischen Keilinschriften.- Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, Bd. 13, Weimar, 1898, էջ 130: Thureau-Dangin F., Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912, էջ XII: Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետ՝ АВИИУ).- Вестник древней истории, М., 1951, N 2-4, N 48. Ըմստ. Radner K., նշվ. աշխ., էջ 247):

<sup>27</sup> Լեման-Հաուպտն իր երկում բերում է Վանից Մուծածիր ձգվող ռազմական ճանապարհի վերաբերյալ Վ. Բելքի գեկոյցը, համաձայն որի բիայնական ռազմական ճանապարհը հյուսիսից կամ հյուսիս-արևելքից գալիս է Միդեկան, որտեղից թեքվում է արևելք՝ շարունակվելով Թոփուզավա, Բանե և Քելիշին: Այստեղից դեպի 75 կմ հյուսիս, հյուսիս-արևելք բլրապատ ճանապարհը լիովին անցանելի է, այնուհետև գաղիվեր ճանապարհով՝ Մեծ Զաբի վտակների վրայով, մինչև Հարունա գետ: Հարունա գետից պարսկական սահմանային լեռներին զուգահեռ 45-50 կմ հեռավորության վրա, 10-12 կմ ճանապարհը շարունակվում է մինչև Կանիրեշ գյուղ: Երթուղու այս հատվածի՝ բիայնական ճանապարհին պատկանելու մասին հստակ փաստեր չկան: Կանիրեշ գյուղի ճանապարհին գտնվող բլուրը հատված է նույն ձևով և լայնությամբ, ինչպես Թոփուզավայի մոտ գտնվողը: Այնուհետև ճանապարհը տանելի պայմաններով անցնում է 50 կմ դեպի հյուսիս՝ Զերգան գետի հովիտ, Դիգե, Հադամավերտ և Զուխի լեռնանցքով, որտեղ բարձրանալիս պարզ տեսանելի են բիայնական ճանապարհի հետքերը, Խոշաբի հովիտ և Վան: Զուխի լեռնանցքից 7,5 կմ

ճանապարհին քարե պատերով ամրացված գաղիվայրերի և ժայռե հիմքով կտրվածքների առկայությունը և զուգահեռ է անցկացնում Հունաստանի Միկենեան շրջանի ճանապարհաշինության հետ: Մույն ճանապարհն ունեցել է 1,7-2,5/3 մ լայնություն և նախատեսված է եղել ոչ միայն հեսիոտների և ձիավորների տեղափոխման համար, այլև՝ ջոկատների և ռազմական տեխնիկայի<sup>28</sup>: Ճանապարհի կառուցման ժամանակ հնարավորինս խուսափել են գաղիվայրերից: Ճանապարհի նվազագույն լայնությունը հնարավորություն է տալիս ենթադրություն կատարելու բիայնական քառանկյվ ռազմական տեխնիկայի վերաբերյալ: Հարկ է նշել այս առումով Մուծածիրի վերաբերյալ հեղինակի հետազոտության արդյունքների ամփոփումը. «Այսպիսով մենք միանշանակ տեսնում ենք, որ Մուծածիրն աշխարհագրականորեն խալդյան պետության հետ, որպես նրա հարավային ճյուղ՝ պարսկա-թուրքական սահմանի լեռներից այս կողմ, օրգանապես կապված է, մինչդեռ այդ Ռևանդուզով Ասորեստանից այստեղ ռազմականորեն լիովին անանցանելի է»<sup>29</sup>:

Ըստ Լեման-Հաուպտի հայեցակարգի՝ Ասորեստանից այս շրջանները նվաճելուց հետո այստեղ բիայնական ռազմական գաղութ է փոխադրվել, քաղաքը և նրա շրջակայքը Խալդի աստծո պաշտամունքին են ենթարկվել<sup>30</sup>: Հավանաբար, ասորեստանյան

---

հարավ գտնվում է մի ժայռափոր խորշ՝ դարպաս. 4 մ լայնությամբ և 15 մ խորությամբ՝ ուղևորների և փոխադրամիջոցների համար նախատեսված (տե՛ս AEJ, Bd.I, էջ 29: Bd. II/1, էջ 307-309):

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 302-304:

<sup>29</sup> AEJ Bd., II/1, էջ 309:

<sup>30</sup> Համաձայն Լեման-Հաուպտի՝ բիայնական դիցարանի մյուս աստվածների պաշտամունքը նույնպես հաստատվել է այստեղ և հավանաբար արևի աստվածության՝ Արդիների անունով կոչվել է քաղաքը (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 342): Մուծածիրում Խալդիի հետ պաշտված աստվածուհի Բագբարտուի անվան ստաջին

ուժերի հեռանալուց հետո Մուծածիրն առանց դիմադրության անցել է Վանի թագավորության իշխանության ներքո<sup>31</sup>: Լեման Հաուպտը քննարկում է նաև արդյո՞ք կարող է Մուծածիրը բիայնացիների նախնական հայրենիքը<sup>32</sup> և Խալդի աստծո պաշտամունքի հնագույն կենտրոնը լինել<sup>33</sup>: Ըստ Լեման-Հաուպտի՝ ասորեստանյան աղբյուրները, Աշուրնածիրապալ II-ի օրոք առաջին անգամ նշելով Ուրարտուն, ոչ մի դեպքում բիայնա-ասորական դիմակայությունը չեն տեղորոշում Տուր-Աբդինից հարավ և արևելք ընկած շրջաններում<sup>34</sup>:

---

վանկը պարսկերեն բազա, ռուսերեն բոգ, վկայում է Մուծածիրում հնդեվրոպական տարրի առկայության մասին (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 335): 1940 թ. Յ. Յրիդրի-խը մերժեց դեռևս Ա. Սեյսի առաջարկած Արդինի ընթերցումը ընթերցելով Շիվի-նի, և աղերսեց խոտիական դիցարանի Շիմիզինի աստծո հետ (տե՛ս Friedrich J, Aus verschiedenen Keilschriftsprachen, 1-2.- Orientalia, NS, IX, 1940, էջ 213-218): Շիմիզինի/Շիվիզինի/Շիվինի անցումը Ի. Դյակոնովը համարում է չիմնավորված և գտնում է, որ խեթական փոխառություն է (տե՛ս Дьяконов И. М., О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах, էջ 172):

<sup>31</sup> Տե՛ս u Сальвини М., Распространение влияния государства Урарту на востоке, էջ 228:

<sup>32</sup> Գ. Սելիքիշվիլին կարծում է, որ Սեծ Զաբի վերին և միջին հոսանքի, ինչպես նաև ներկայիս Ռևանդուզի շրջանում գտնվել են ուրարտացիների կրոնամշակութային և քաղաքական հնագույն կենտրոնները: Այլապես, հավանական չէ ուրարտական ժամանակաշրջանում Մուծածիրի սրբազան քաղաք դառնալու հանգամանքը (տե՛ս Меликишвили Г. А., Наир-Урарту, Тб., 1954, էջ 164-165, 167-168):

<sup>33</sup> Մ. Մալվինին կարծում է, որ Խալդին սկզբնապես խուռա-ուրարտական աստված չի եղել: Դեռևս միջինասորեստանյան շրջանից Վերին Միջագետքում նկատելի են Խալդի դիցանվանակերպ (թեոփորային) անձնանվան վկայություններ, ինչը փաստում է Խալդիի պաշտամունքի տարածումը Մուծածիրից՝ հյուսիսային Միջագետք: Մուծածիրը եղել է միջազգային սրբավայր՝ ինչպես Կումմեն, և Խալդի աստծո պաշտամունքի բարձրացումը պիտի աղերսել Իշպուլինիի քաղաքական ծրագրերի հետ (տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 37-40): Խալդի աստծո պաշտամունքի տարածումը Հյուսիսային Միջագետքում հնարավորություն է տալիս ենթադրելու, առնվազն, նրա պաշտամունքի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում տարածված լինելու մասին:

<sup>34</sup> Տե՛ս u RIMA, vol. II, A.O.101.30 (1-20a): AEJ, Bd. II/1, էջ 336:

Ներկայումս Արդինի անվան առավել ընդունելի ստուգաբանությունը համարվում է խուրիերենով *ard/te=ni*՝ քաղաք, տարբերակը<sup>35</sup>: Եթե համաձայնենք Լեման-Հաուպտի՝ Արդինի քաղաքի բիայնական հիմնադրման ենթադրության հետ, ապա, ըստ այդմ, Արդինի անվան բիայներենով ստուգաբանությունը կարող է փաստվել այդ հանգամանքով: Բիայնական ստուգաբանության առավել հավանական տարբերակ կարող է համարվել Գ. Ջահուկյանի առաջարկած «ուժ, իշխանություն, հրաման, աստված-աստվածուհի» տարբերակը<sup>36</sup>՝ հաշվի առնելով Խալդիի աստվածային բնույթն ու այստեղ նոր հիմնվող քաղաքին վերապահված դերակատարությունը:

Վանա ժայռի արձանագրությունում Խալդիին նվիրված վերոհիշյալ կառուցումները և Մուծածիրի տաճարի հիմնադրումը Լեման-Հաուպտը մոտավորապես նույն ժամանակահատվածով է թվագրում<sup>37</sup>: Համաձայն Լեման-Հաուպտի՝ Մուծածիրում փոխարքա է նշանակվել Մինուայի եղբայրը՝ Սարդուրին, ում ար-

---

<sup>35</sup> Sté u Меликишвили Г. А., Наирн-Урарту, էջ 36; Дьяконов И. М., Языки древней Передней Азии, М., 1967, էջ 139: Մ. Սալվինին, հետևելով սույն տեսակետին, ենթադրում է, որ անվանումը պայմանավորված է սրբավայրի ունեցած նշանակությամբ խուրիախոս բնակչության համար (տե՛ս u Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 47): Ն. Հարությունյանը ենթադրում է, որ Արդինի անունը աղերսվում է բիայնական դիցարանի Արդի աստվածուհու հետ և սկզբնապես այստեղ եղել է նրա պաշտամունքը, և միայն Ռուսա I-ի օրոք է Մուծածիրը դարձել Խալդիի աստծո պաշտամունքային կենտրոն: Արդինի քաղաքի նման կարևորումը հետագոտողը բացատրում է նրա ունեցած ռազմավարական նշանակությամբ (տե՛ս u Арутюнян Н. В., Бийнили (Урарту), Е., 1970, էջ 355): Հետագայում, հեղինակը ենթադրեց համանուն քաղաքի հնարավոր գոյությունը ևս էթիունիում (տե՛ս u КУКН, N 173/5, ծան. 44):

<sup>36</sup> Sté u Джаукян Г. Б., Взаимоотношения индоевропейских, хуррито-урартских и кавказских языков, Е., 1967, էջ 39; Ջահուկյան Գ. Բ., Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 1, էջ 49:

<sup>37</sup> Sté u AEJ, Bd. II/2, էջ 558:

ճանի՝ Մուծածիբի տաճարում գտնվելու մասին իր սրճանագրությունում վկայում է Սարգոն II-ը<sup>38</sup>: Լեման-Հաուպտը կարծում է, որ Մուծածիբի տաճարի ճակատային հատվածի աջ կողմում պատկերված ռազմիկը հավանաբար Մինուայի եղբայր Սարդուրին է<sup>39</sup>: Սարտիկի արձանից աջ՝ արձանի առջև գտնվել է հորթուկին սնող կովի արձան<sup>40</sup>: Տաճարից տարված ավարի թվում սույն արձանների հետ մեկտեղ հիշատակվում է նաև ցուլի պղնձե արձան<sup>41</sup>: Տաճարի մուտքի մոտ նման արձանախմբի առկայությունը վկայում է Խալդիի և Բագբարտուի պաշտամունքի հետ այդ կենդանիների ունեցած աղերսների մասին: Բ. Պիոտ-

---

<sup>38</sup> St u Lehmann-Haupt C. F., *Das urartaisch-chaldische Herrscherhaus.*- Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, Bd. 33, Berlin-Leipzig, 1921, էջ 31; AEJ, Bd. II/2, էջ 557; АВИИУ, N 49 (367):

<sup>39</sup> Որոշ հետազոտողներ կարծում են, որ այստեղ խոսքը Սարդուրիի որդի Իշպուհինի մասին է, քանի որ նա արձանագրությունում նշվում է որպես «Ուրարտուի արքա». արձանագրությունում գործ ունենք հին արևելյան զրչի թույլ տված սխալի հետ (Ադոնց Ն., *Հայաստանի պատմություն*, Եր., 1972, էջ 194: Հմայակյան Ս., *Վանի թագավորության պետական կրոնը*, Եր., 1990, էջ 72: Salvini M., *Geschichte und Kultur der Urartäer*, էջ 97): Ըստ արձանագրության սույն անձի հրամանով տաճարում գտնվող պղնձից ձուլվել են կովի և ցուլի արձանները: Գ. Մելիքիշվիլին, հիմնվելով սույն հանգամանքի վրա, կարծում է, որ նա եղել է տաճարի գերագույն քուրմը. նրա արձանը եղել է աղոթողի դիրքով (տե՛ս Меликшвили Г. А., նշվ. աշխ., էջ 204): Առկա սուղ փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել՝ սույն անձն իրավասու է եղել տնօրինել տաճարի արդեն գոյություն ունեցող հարստությունը, ինչև ուղղակի վկայում է նաև իշխող հարստության կողմից տաճարի անմիջական կառավարման մասին:

<sup>40</sup> Դեռևս Հին Եգիպտական թագավորությունում առկա էին փարավոնին ծնող երկնային կովի (տե՛ս Шмаков Т., *Древнеегипетские тексты пирамид*, Омск, 2014, էջ 196), ինչպես նաև արև ծնող երկնային կովի՝ Խատորի մասին պատկերացումներ: Խեթա-խոտիական լեգենդում արևի աստվածը սիրահարվում է կովին (տե՛ս Иванов В. В., Корова.- *Мифы народов мира*, т. II, М., 1992, էջ 5-6):

<sup>41</sup> Բարձրաքանդակի ձախ կողմում հավանաբար պալատի տանիքին, պատկերված է գրագիրներին ավարը թելադրող ասորական հրամանատարը (տե՛ս E. Rehm, *Hohe Türme und goldene Schilde-Tempel und Tempelschatze in Urartu.*- Mitteilungen der Deutschen Orient Gesellschaft, N 136, 2004, էջ 178):

րովսկին, նշելով Մուծածիրի տաճարում Իշպուհնիի որդի Մարդուրիի արձանի առկայությունը, հավանական է համարում Մուծածիրի տաճարի կառուցման թվագրումը մ.թ.ա. 9-րդ դարի վերջին<sup>42</sup>:

Լեման-Հաուպտը, կիսելով Է. Հերցֆելդի տեսակետը, կարծում է, որ Մուծածիրի տաճարի կառուցվածքն աղերսվում է պոնտական-պափլագոնիական ոճի հետ, որն էլ իր հերթին առնչվում է անտիկ տաճարների հետ (*templum in antis*)<sup>43</sup>: Է. Հերցֆելդը նշում է, որ Մուծածիրի տաճարի ոճի հիմնական գծերն են սյունազարդ բաց նախասրահը՝ 6 սյուներ, որոնք կրում են վերնաճակատը (ֆրոնտոն), կողքի պատերի հետ միասին: Ստիլոբատը կազմել է ողջ տաճարի մեկ քառորդը: Նախասրահի հետևի պատի կենտրոնում նկատելի է դուռը, դեպի գլխավոր սենյակ տանող՝ վերնաճակատով ծածկված: Վերնաճակատի ողջ մակերեսը ծածկված է երկրաչափական նախշերով, որը հիշեցնում է փոյուզիական վերնաճակատները, վերնաճակատի բարձրությունը հավասար է սյուների բարձրության կեսին: Մուծածիրի տաճարի

<sup>42</sup> Տե՛ս Плотровский Б. Б., նշվ. աշխ., էջ 201:

<sup>43</sup> Տե՛ս AEJ, Bd. II/2, էջ 557; Sarre F. und Herzfeld E., *Iranische Felsreliefs*, Berlin 1910, էջ 8-9: Կ. Տրևերը Գառնու տաճարն իր հիմնական գծերով նույնացնում է Մուծածիրի տաճարի հետ (տե՛ս Тревер К. В., *Очерки по истории древней Армении (II в. до н.э. - IV в.н.э.)*, М.-Л., 1953, էջ 74): Այս առումով հետաքրքիր է Ա. Պետրոսյանի ենթադրությունը Խալդիի՝ հայաստանյայտ աստված լինելու վերաբերյալ, ինչը կարող է բացատրել նաև ենթադրելի նման հավանական առնչությունները (տե՛ս Պետրոսյան Ա., Հայաստանի դիցարանի էթնիկական հիմքերը. «Էջմիածին», 2015, ԺԱ, էջ 87-88, ծան. 45): Դ. Սարոնայսը Մուծածիրի տաճարն աղերսում է Այանիսի տաճարի հետ՝ ենթադրելով, որ տաճարը շրջապատել են մույթեր (տե՛ս Stronach D., *Urartu's impact on Achaemenid and pre-Achaemenid architecture in Iran*, *Bianili-Urartu*, էջ 312-315): Ս. Սալվինին, հիմք ընդունելով Քելիշինի և Ռուսա Ի-ի երկլեզվյա արձանագրությունների տվյալները, Մուծածիրի տաճարը զանազանում է բիանյական աշտարակաձև տաճարներից՝ կարծելով, որ այն եղել է E.BA'RA գաղափարագրով նշվող կառույց (տե՛ս Salvini M., *Turmtempel*, RLA, Bd.14.3/4. Lief., 2014, էջ 205):

տանիքին պատկերված նիզակի ծայրը խորհրդանշել է պատե-  
րազմի աստծուն՝ Խալդիին<sup>44</sup>:

Լեման-Հաուպտը ենթադրում է, որ Մուծածիրի տաճարի  
սյուները չեն ունեցել ոչ խոյակ, ոչ էլ սյունախարիսխ<sup>45</sup>: Ենթադրե-  
լի է, որ Մուծածիրի տաճարը եղել է քառակուսաձև կառույց՝  
երկթեք կամ քառաթեք տանիքով<sup>46</sup>:

Մուծածիրի շրջանը, ըստ Լեման-Հաուպտի, ընդգրկում էր ոչ  
մեծ տարածք, սակայն մի քանի քաղաքներ ուներ: Ըստ հեղինա-  
կի՝ Մուծածիրի շրջանն արևմուտքում տարածվում էր մինչև  
Ռևանդուզ, հարավում, ենթադրելի է, որ չէր անցնում Թոփուզա-  
վա գետի հովտից անդին, և միայն հյուսիսում է հավանական  
Բադլիանից ավելի հեռու տարածվել<sup>47</sup>: Լեման-Հաուպտը կար-  
ծում է, որ Քելիշինի լեռնանցքից արևմուտք Միդեկանից 2 կմ  
արևելք, սարահարթի գագաթին գտնվող մի ոչ ընդարձակ ամրո-  
ցի ավերակները հենց Մուծածիրի փլատակներն են: «Նկատելի է  
այստեղ համարյա մինչև հատակը քանդված ամրոցի պարիսպը՝  
կազմված իրար վրա շերտ-շերտ չազուցված փոքր ժայռային և  
զլաքարերից: Դրա կողքին, բայց, պարզ նկատելի է հիմքը հին  
խալդյան-մուսասիրյան ամրոցի կառույցի՝ միայն տեղ-տեղ գետ-

<sup>44</sup> St u Riemschneider M., Die urartaïschen Gottheiten.- «Orientalia» N.S., vol. 32, N 2, 1963, էջ 148: Նույնի Urartaïsche Bauten in den Königsinschriften.- «Orientalia», N.S., vol. 34, N 3, 1965, էջ 325: Պ. Կալմեյերը տարբերակում է մուսքի մուտ ողջույնի դիրքով կանգնած արձանների հետևում պատկերվածները որպես նիզակներ, իսկ տաճարի տանիքինը՝ սրբազան ծառ (տե՛ս Calmeyer P., Zu den Eisen-Lanzenspitzen und der «Lanze des Haldi», Bastam I, Berlin, 1979, էջ 183-193:

<sup>45</sup> Ենթադրելի է, որ սյուները կազմված են եղել բարձր թմբկաձև կամ քառանկյուն քարերից, որոնց կցվածքները ծածկվել են որպես զարդ ծառայող երիզով, ինչպես նախասրահի երևացող պատը (տե՛ս AEJ, Bd. II/2, էջ 558):

<sup>46</sup> St u Boehmer R. M., Muşafir. B. Archäologisch., RLA, էջ 447:

<sup>47</sup> St u AEJ, Bd. II/1, էջ 299:

նից ցցուն»։ Հեղինակը նշում է, որ սարահարթի գագաթի վրա գտնվող ամրոցի ներսի պատը կազմված է վիթխարի, քիչ հղկված, ըստ բիայնական ոճի՝ առանց շաղախի 3,4-4 մ հաստությամբ ժայռաքարերից։ «Այն ներառում է մի քառակուսաձև շրջան 36x32 մ մեծությամբ, որում արքայական պալատը և Խալդիի տաճարը կարող էին լինել։ Խալդերի տաճարային կառույցներն առանց բացառության ապշեցուցիչ փոքր են»<sup>48</sup>։ Սարահարթի ներքևում նույնպես նկատելի են նմանանատիպ քարերից պատրաստված, երկար ձգված ամրոցի պարսպի հետքերը։ Նման պարիսպը, ինչպես հեղինակն է դիտարկում, դժվար թե դիմակայեր երկարատև պաշարմանը։ Հետևաբար, ըստ նրա, Մուծածիրն ուժեղ պաշտպանված չի եղել, բնակիչներն ապավինել են տեղանքի բնական, անառիկ պայմաններին։

1973 թ. այստեղ անցկացված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվեցին ինչպես ավելի նոր, այնպես էլ մ.թ.ա. 8-7-րդ դդ. թվագրվող խեցեղենի և շինությունների մնացորդներ։ Ներկայումս Լեման-Հաուպտի՝ Մուծածիրի տեղորոշման շուրջ այս տեսակետը համարվում է վիճարկելի, քանի որ Մուծածիրի ավելի հավանական տեղորոշումը համարվում է այստեղից 7 կմ արևմուտք գտնվող Մուջեսիր գյուղի մոտակայքը<sup>49</sup>։ Ի դեմս Լեման-Հաուպտի սույն տեղորոշման՝ գործ ունենք բիայնական շրջանով թվագրվող Մուծածիրյան որևէ բնակավայրի հետ, քանզի ինչպես Լեման-Հաուպտն է ենթադրում, Մուծածիրի շրջանը ունեցել է մի քանի բնակավայր։

---

<sup>48</sup> «Քառանկյան ներսում նկատելի են շատ բնակելի տների փլատակներ՝ կառուցված փոքր քառանկյուն զլաքարերից։ Դրսի պատի երկարությամբ նույնպես ձգվում են նման քառանկյուն քարերի կույտեր» (տե՛ս AEI, Bd. II/1, էջ 300-301)։

<sup>49</sup> St' u Boehmer R. M., նշվ. աշխ., էջ 446։

Այսպիսով, պատմագրությունում Մուծածիրի վերաբերյալ քննարկված ներհակ կարծիքները կարելի է տարանջատել երկու հարթությամբ: Մուծու-Մուծածիր և Արդինի-Արդինի համադրություն. ըստ այդմ՝ միջինասորեստանյան շրջանում Արդինի քաղաքում արդեն գոյություն ունեւ Խալդի աստծո պաշտամունքը: Սույն տարբերակի դեպքում, ինչպես նշվեց, միաժամանակ առկա են տարբեր ենթադրություններ այդ ժամանակաշրջանում Խալդիի՝ խուտա-բիայնական աշխարհի հետ ունեցած աղերսի մասին: Սույն տարբերակում դեռևս անբացատրելի է ասորեստանյան արձանագրություններում Արդինի քաղաքի այլևս չհիշատակվելը, Արդինի քաղաքի՝ բիայնական երկլեզվյա արձանագրություններում միայն Մուծածիր ձևով հիշատակվելը և, ավելի ուշ, դարձյալ Մուծուր անվան հիշատակությունը:

Եվ երկրորդ՝ Լեման-Հաուպտի առաջարկած տարբերակը. քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. 9-րդ դ. վերջում, և այստեղ հաստատվել է Խալդի աստծո պաշտամունքը: Ինչպես նշվեց, Լեման-Հաուպտը չի բացառել նաև քաղաքի ավելի վաղ գոյություն ունենալու հանգամանքը<sup>50</sup>: Աղբյուրներում ուղղակի վկայություններ Մուծածիրում Խալդիի տաճարի կառուցման վերաբերյալ առկա չեն, սակայն ենթադրելի է, որ տաճարի կառուցումը պիտի պայմանավորել Վանի թագավորությունում Խալդի աստծո պաշտամունքի բարձրացմամբ: Ինչպես Լեման-Հաուպտն է նշում, Մուծածիրի շրջանում առկա են բիայնական ժամանակաշրջանով թվագրվող կառուցապատումներ և ճանապարհաշինության հետքեր: Արդինի քաղաքի բարձրացումը սույն տարբերակում կարելի

---

<sup>50</sup> Սույն ենթադրությանը մասնակիորեն աղերսվում է Ն. Հարությունյանի վերոհիշյալ տեսակետը. Արդինի քաղաքը Խալդիի պաշտամունքային կենտրոն է դարձել շատ ավելի ուշ՝ Ռուսա I-ի օրոք:

է աղերսել բիայնական ժամանակաշրջանով Հայկական լեոնաշխարհում թվագրվող ամրոցաշինության և քաղաքաշինության հետ:

Ասորեստանյան արձանագրությունների տվյալները հուշում են, որ Մուծածիրը՝ առնվազն մինչև Սալմանասար III-ի գահակալության 31-րդ տարվա արշավանքը մ.թ.ա. 826 թ., դուրս էր Վանի թագավորության քաղաքական ազդեցության ոլորտից: Իշպուխիի միայնակ գահակալության ժամանակաշրջանով թվագրվող արձանագրություններում ևս նշվում է Խալդի աստծո անունը<sup>51</sup>: Մուծածիրում Խալդիի պաշտամունքի գոյության վերաբերյալ առաջին հավաստի փաստերն առկա են Քելիշինի արձանագրությունում՝ մ.թ.ա. 820-810 թթ. թվագրվող<sup>52</sup>: Հարկ է նշել նաև, որ Քելիշինի արձանագրության անեծքի բանաձևում Խալդիից, Թեյշեբայից և Շիվինիից գատ հիշատակվում են Արդինի քաղաքի աստվածները ևս<sup>53</sup>: Մուծածիրի միացումը Վանի թագավորությանը պայմանավորված էր հարավից՝ Չաբի հովտով Ասորեստանից եկող սպառնալիքով<sup>54</sup>: Ելնելով քննարկված նյութից՝ կարելի է փաստել, որ Մուծածիրում Խալդի աստծո պաշտամունքի հաստատման վերաբերյալ Լեման-Հաուպտի ենթադրությունը ներկայումս նույն-

---

<sup>51</sup> Տե՛ս CTU, vol. I, A 2-1, A 2-3a-d, A 2-6A-C, A2-7A, A2-7B, A 2-8, A 2-10: CTU, vol. IV, Roma, 2012, B 2-1 Ro, B 2-7 A-E: Մ. Սալվինինի հավանական է համարում, որ Մուծածիրը դեռևս Իշպուխիի կառավարման վաղ շրջանում. Վանի թագավորության կողմից վերահսկվել է (տե՛ս Salvini M., *Geschichte und Kultur der Urartäer*, էջ 26-27): Նման ենթադրությունը, սակայն լրացուցիչ փաստարկման կարիք է զգում. հարավային ուղղությամբ ռազմական արշավանքների վերաբերյալ արձանագրությունները վերաբերում են Իշպուխիի և Մինուայի համատեղ կառավարման ժամանակաշրջանին (տե՛ս CTU, vol. I, A 3-9, A 3-10):

<sup>52</sup> Տե՛ս M. Salvini, *Kelishin*, RLA, Bd. 5., էջ 569:

<sup>53</sup> Տե՛ս CTU, vol. I, A 3-11 RO 41, VO 41:

<sup>54</sup> Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 197:

պես շարունակում է պահպանել իր արդիականությունը: Մուծածիրյան թնջուկի՝ քաղաքի վերջնական տեղորոշման, հիմնադրման ժամանակաշրջանի, ինչպես նաև՝ տաճարի կառուցման ժամանակաշրջանի և կառուցվածքի սպառիչ պատասխանը դեռևս ապագա հետազոտությունների խնդիր է:

**ВАГЕ САРГСЯН**

*Институт истории НАН РА*

**ВАНСКОЕ ЦАРСТВО В ПЕРИОДЕ ПРАВЛЕНИЯ ИШПУИНИ И  
СОВМЕСТНОГО ПРАВЛЕНИЯ С МИНУА СОГЛАСНО  
К.Ф. ЛЕМАН-ХАУПТУ**

*Резюме*

Леман-Хаупт, исследуя факты в годы правления Ишпуини в Ванском царстве, особое внимание уделил вопросу расширения биайнской государственности к Муцациру и обстоятельству культа формирования и возвышения бога Халди. Автор, для восстановления фактов в годы правления Ишпуини, как исходную точку выбрал распространение культа бога Халди в Ванском царстве. Сооружение, посвященное Халди и упомянутое в надписи на восточной части Ванской скалы, а также оснавание Муцацирского храма, Леман-Хаупт датировал примерно в одном и том же временном отрезке. Соединение Муцацира к Ванскому царству было обосновано угрозой, приходящей из Ассирии - долины Заб. Предположение Леман-Хаупта относительно основания города Муцацир и утверждение культа богу Халди и по сей день сохраняет свою актуальность.

THE KINGDOM OF VAN DURING THE JOINT REIGN OF  
ISHPUINI AND MENUA ACCORDING TO  
C. F. LEHMANN-HAUPT

*Summary*

In the process of his studies on the realities of the kingdom of Van during Ishpuini's regnal years, Lehmann-Haupt paid particular attention to the expansion of Biainili towards Musasir, and to the circumstance of the formation and rise of the cult of god Khaldi. Accordingly, the author marks the spread of the cult of Khaldi in Van kingdom as a starting point for the reconstruction of the historical realities of Ishpuini's regnal years. The constructions devoted to Khaldi and mentioned in the cuneiform inscription on the eastern side of Van rock, as well as the foundation of the temple of Musasir are dated approximately by the same period of time by Lehmann-Haupt. Musasir's accession to the Kingdom of Van was conditioned with the Assyrian threat from the south, through the valley of Zab River. Lehmann-Haupt's assumption regarding the foundation of Musasir and the establishment of the cult of god Khaldi continues to maintain its relevance up to day.

## ՎԱՐԴՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական  
լեզվա հասարակագիտական համալսարան*

### **ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայոց այբուբենը V դարասկզբին ստեղծվեց մի համակարգով, որը հայ ժողովրդին մեծ հաջողությամբ ծառայում է առ այսօր: Այդ այբուբենը հայ ժողովրդին հնարավորություն ընձեռեց հիմնել ազգային այնպիսի գրականություն և մշակույթ, որով նա համաքայլ ընթացավ հունական և լատինական գրականությանն ու մշակույթին:

Դարերի ընթացքում հայոց գրերը դարձան ազգային ինքնության ամենակարևոր խորհրդանիշը: Ֆրանսիացի պատմաբան, հայագետ Ռենե Գրուսեն գրում է. «Եթե այդ ողբերգական ժամերին հայ ժողովուրդն անկախ իր մշակութային և կրոնական պատկանելությունից կարողացավ դիմակայել և պահպանել իր գոյությունը, ապա դա միայն Սուրբ Սահակի ու Սուրբ Մեսրոպի հանճարեղ աշխատանքի շնորհիվ էր: Իրականում, գրական տաղանդներն իրենց ազգի համար երբեք չեն կարող անել դրանից մեծ գործ: Այն ժամանակ, երբ վտանգված էր Հայաստանի քաղաքական անկախությունը, նրանք վճռականորեն ապահովեցին իրենց երկրի հոգևոր անկախությունը, որն էլ դարձավ պայքարի հիմնական գրավականը: Ստեղծելով հայոց գրերը՝ նրանք ազատագրեցին իրենց հայրենիքը՝ այլ ժողովուրդների հետ միաձուլումը դարձնելով անհնարին: Չնայած քաղաքական պառակ-

տումներին՝ նրանց շնորհիվ ապահովվեց Հայաստանի սլահայա-  
նումը և անմահությունը»<sup>1</sup>:

XX դարում Հայոց ցեղասպանության հետևանքով հարյուր  
հազարավոր հայեր ստիպված եղան թողնել իրենց պատմական  
հայրենիքը և հանգրվան գտնել տարբեր երկրներում՝ ձևավորե-  
լով «սփյուռքահայություն» հասկացությունը:

Հարց է առաջանում. հայոց գրերի գյուտից այսքան տարիներ  
հետո արդյոք Հայոց այբուբենը շարունակում է ազգային ինք-  
նության պահպանման հիմնական առհավատչյան լինել նաև  
սփյուռքահայության համար:

Նախ նշենք, որ որևէ լեզվի գրերի համակարգի և դրանից  
օգտվող ժողովրդի միջև կապը կարող է սահմանվել երկու ձևով.

1. գործնական, գործաբանական կապ,
2. պատմական, մշակութային, ազգային կապ:

Ինչպես գիտենք, աշխարհում գոյություն ունի գրերի միայն  
14 համակարգ, սակայն կան հազարավոր լեզվական հանրութ-  
յուններ, որոնք օգտվում են միևնույն այբուբենից: Ասվածի վառ  
ապացույցն է լատինական այբուբենը<sup>\*</sup>, որը երկար ժամանակ  
գրոց լեզու է տարբեր եվրոպական ազգերի համար: Մինչև XX դ.  
գիր չունեցող բազմաթիվ ազգեր իրենց այբուբենը փոխառել են  
այլ լեզուներից: Եվ այս դեպքում գրերի համակարգի և այն կիրա-  
ռող ժողովրդի միջև կապը միայն գործնական է եղել: Ավելին, հա-  
ճախ այդ կապն այնքան թույլ է և աննշան, որ մի քանի տասնամ-  
յակ հետո գործող գրերի համակարգը, քաղաքական դրդա պատ-  
ճառներով պայմանավորված, փոխարինվել է մեկ այլով: Այս ազ-  
գերի համար գիրը մշակութային և պատմական արժեք չի ներկայ-

<sup>1</sup> Grousset R., Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, Payot, rééd. 1973, 1984, 1995, 2008, էջ 175-176.

յացնում: Դրա ապացույցը ադրբեջանցիներն են, որոնք մինչև 1929 թ. կիրառել են արաբական այբուբենը, ապա լատինական, 1940 թ. կիրիլիցան, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո նրանք կրկին անցան լատինական այբուբենին:

Մինչդեռ հայոց գրերի և հայ ժողովրդի միջև կապն անքակտելի է: Եթե հայերը փոխառեին լատինական կամ հունական գրերի համակարգը, ապա շատ հավանական է, որ Հայոց այբուբենն այլևս չէր լինի ազգային ինքնության եզակի, յուրահատուկ և միակ խորհրդանիշն ու չէր ունենա այն ազգապահպան դերը, որն ունեցել է և ունի:

Աներկբայորեն կարող ենք փաստել, որ մեծ է հայոց լեզվի դերը սփյուռքի հայապահպանության հարցում:

Հայ-ֆրանսիական հարաբերությունները բազմադարյան պատմություն ունեն: XI դ. կազմավորվում է Կիլիկիայի Հայկական պետությունը և գոյություն ունենում մոտ երեք դար (1080-1375 թթ.): Կիլիկյան Հայաստանը առևտրական, սոցիալ-քաղաքական և մշակութային կապերի մեջ էր մի շարք երկրների, այդ թվում Ֆրանսիայի հետ<sup>2</sup>:

Միջին հայերենի<sup>3</sup> բառապաշարում որոշակի թիվ են կազմում տարբեր լեզուներից, մասնավորապես ֆրանսերենից կատարված փոխառությունները:

Հարկ է նշել, սակայն, որ այդ փոխառությունների մեջ հանդիպում են նաև բազմաթիվ օտարամուտ բառեր, որոնցից շատե-

---

<sup>2</sup> Տե՛ս Բարլեզիզյան Ա., Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Եր., 1997, էջ 8-9:

<sup>3</sup> Միջին հայերենը գոյատևել է XII դ. մինչև XVI դ.: Միջին հայերենը կոչվում է նաև կիլիկյան հայերեն, որը բաժանվում է 2 ենթափուլի

1. Կիլիկյան նորմավորման շրջան, որը գոյատևել է XII դ. -ից մինչև XIV դ. Կեսերը:  
2. Աշխարհաբարացման շրջան, որը գոյատևել է XIV դ. կեսերից մինչև XVI դ.:

րի համարժեքները կային հայերենում: Մա է պատճառներից մեկը, որ այդ բառերից շատերը դուրս մնացին գործածությունից և չամրացան հայոց լեզվի բառապաշարում.

*ռոէ* - թագավոր, արքա (roi)

*ջամռ, ջանքո* - սենյակ (chambre)

*կալօփ* - ձիու վազք (galop) և այլն:

Որոշ բառեր ժամանակին այնքան սովորական և ընդունելի էին, որ ունեին նաև ածանցյալ ձևեր ու նույնիսկ բարդություններ էին կազմում.

*արեսդ* /բանտարկում, կալանք/ (arrêt) – *արեսդ առնել*, և այլն:

Միջին հայերենում ֆրանսերենից կատարված փոխառությունների մեծ մասը անմիջական է: Միջնորդավորված փոխառությունները մի քանիսն են: Դրանցից են.

arcevesque < լատ. archiepiscopus - *արծուէք (արծրվէք)* /արքեպիսկոպոս/

curcuma < պահլ. kurkum - *քրքում* /բույսի տեսակ/

grammaire < հուն. γράμμα - *կրամայր* /քերականություն/:

Նշենք նաև, որ ֆրանսերեն փոխառությունների մեծ մասը գրավոր լեզու է թափանցել խոսակցական լեզվի միջոցով, ինչով էլ բացատրվում է ֆրանսերեն բառերից շատերի հնչյունափոխված լինելը.

bourgeois, bourgeois, bourjeis, bourjois, bourgeois - *բուրճէս, պուրճէս, պուրճէս, պոռճէս* /քաղաքացի/

prescheor, preecheor, précheur - *բրաջուր, բրեջուր* /կաթուղիկ քարոզիչ/

hospital - *ըսպիտալ, ոսպիթալ, ոսբիթալ, ոսպիտալ* /հյուրանոց/, և այլն:

Նույնիսկ Կիլիկյան թագավորության անկումից հետո (1375 թ.) հայ-ֆրանսիական կապերը շարունակվեցին և գնալով ծավալվեցին՝ աստիճանաբար ընդգրկելով նորանոր բնագավառներ:

Ֆրանսիայում հայագիտությունը պաշտոնական կարգավիճակ ձեռք բերեց 1798 թ. Փարիզի՝ Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզվի դասավանդմամբ, այնուհետև՝ ամբիոնի հիմնադրմամբ: Այդ գործի նախաձեռնողն էր Շահան Հակոբ Ջրպետյանը, որը, նախ՝ ստանձնեց հայերենի դասավանդումը (1798-1801 թթ., վերականգնվեց 1810 թ.), ապա՝ ամբիոնի ղեկավարի պաշտոնը (1812-1826 թթ.):

Հայագիտության գործում իրենց ավանդն են ունեցել ֆրանսիացի մի շարք հայագետներ, ինչպիսիք են Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Ժորժ Դյումեզիլը, Ֆրեդերիկ Ֆեյդին և այլք:

Անտուան Մեյեն ուսումնասիրել է հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող բազմաթիվ լեզուներ, այդ թվում հին սլավոներեն («Հին սլավոներեն», 1914 թ.), հայերեն («Դասական հայերենի համեմատական պատմության ակնարկ», 1903 թ., «Հին հայերենի ձեռնարկ», 1913 թ.), պարսկերեն («Հին պարսկերենի քերականություն», 1915 թ.), լատիներեն և հունարեն («Դասական լեզուների համեմատական քերականություն», 1924 թ.):

Ա. Մեյեն իր մասնակցությունն է բերել 1932 թ. լույս տեսած «Լատիներենի ստուգաբանական բառարան»-ի և 1924 թ. լույս տեսած «Աշխարհի լեզուներ» մեծածավալ ուսումնասիրության աշխատանքներին:

---

<sup>1</sup> Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936; նույնի՝ Remarques sur la grammaire de l'arménien de Cilicie de J. Karst, Ztschr. f. armen. Phil. II, 1904.

Մակայն Մեյեն չի քավարարվել միայն հայերենը ուսումնասիրելով և նրա մասին գիտական աշխատություններ գրելով. ևս ձգտել է մոտիկից ճանաչել Հայաստանը, հայ ժողովրդին, սովորել կենդանի հայերեն խոսքը: Հենց այդ նպատակով 1890-1891 թթ. ձմռանը Միխիթարյան միաբանությունում Շ. Տաշյանի օգնությամբ սովորում է դասական հայերենը (գրաբարը):

1891 թ. գնում է Կոստանդնուպոլիս, ապա Թիֆլիս և Հայաստան: Հայաստանում նրա ուղևորությունը եղել է շատ բեղմնավոր: Էջմիածնի վանքի մատենադարանում ուսումնասիրում է հին ձեռագրերի հարուստ հավաքածուն, երկու շաբաթ անցկացնում է Աշտարակում, բարձրանում Արագած լեռը, ուսումնասիրում Աշտարակի բարբառը:

Մեյեն երկրորդ անգամ այցելում է Հայաստան 1903 թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Շուշիում ևս այցելում է իր աշակերտ Հրաչյա Աճառյանին, որն այն ժամանակ ուսուցիչ էր այնտեղ: Էջմիածնում շարունակում է հայերենի և հին ձեռագրերի ուսումնասիրությունը: Այս այցը Հայաստան ևս բեղմնավոր է եղել՝ հրատարակել է երկու հոդված<sup>5</sup>:

1919 թ. Մեյեն Ֆ. Մակլերի և ուրիշների հետ հիմնադրում է «Հայագիտական ընկերությունը»: Հայերենագիտական ուսումնասիրությունների մեջ Մեյեն քննում է հայոց լեզվի համեմատական քերականության խնդիրները, գրում հին գրական հայերենի՝ գրաբարի դասագիրք, ձևակերպում հայերենի հնչյունական համապատասխանությունների մի շարք օրենքներ (բանաձևեր),

---

<sup>5</sup> Meillet A., Étymologies arméniennes: nd; andundkh; hawt; getamoyñ; boyth; erkotasan.- Mémoires de la Société de Linguistique de Paris, XII, 1903, pp. 429-431; նույնի՝ Arménien cicalim.- Mémoires de la Société de Linguistique de Paris, XIII, 1905, p. 375.

հանգամանորեն մշակում համեմատական ձևաբանության ու շարահյուսության հարցերը, անդրադառնում հայերենի պատմության, ուղղագրության, ստուգաբանության և հարակից այլ հարցերի: Հետևելով Հ. Հյուբշմանին՝ նա ևս իր հետազոտություններով հաստատեց, որ հայերենը՝ լինելով հնդեվրոպական լեզու, ներկայանում է իբրև անկախ, ինքնուրույն ճյուղ:

Մեյեն Փարիզում կազմակերպված բոլոր հայանպաստ միջոցառումների և հավաքույթների մշտական նախագահն էր և գլխավոր բանախոսը: Մերը հայերենի և հայերի նկատմամբ նա տարավ իր կյանքի ողջ ճանապարհով մինչև իր մահը՝ 1936 թ. սեպտեմբերի 21-ը:

**Ֆրեդերիկ Մակլերը** հիմք դրեց աշխարհաբարի զարգացմանը Ֆրանսիայում՝ 1932 թ. հրատարակելով «Chrestomathie de l'arménien moderne» աշխատությունը, որը ներառում էր արևելահայերենով և արևմտահայերենով շարադրված տեքստեր: Նա ևս այցելեց Էջմիածին՝ ուսումնասիրելու հին հայկական ձեռագրերը:

**Ժորժ Դյումեզիլը** զբաղվել է լեզուների համեմատական ուսումնասիրությամբ և, հատկապես, կրոնի պատմությամբ: Նա հայերեն է ուսումնասիրել՝ շեշտը դնելով դասական հայերենի վրա, որին, ի դեպ, ավելի լավ էր տիրապետում, քան աշխարհաբարին<sup>6</sup>:

**Ֆրեդերիկ Ֆելդիի** հայտնի աշխատությունն է 1935 թ. հրատարակված «Արևմտահայերենի քերականությունը»: Նա մեծ հեղինակություն էր վայելում Ֆրանսիայի հայկական համայնքում: 1983 թ. նոյեմբերի 6-ին Սորբոնի համալսարանում մի շարք գի-

---

<sup>6</sup> Dumézil G., L'arménien à l'École Nationale des Langues Orientales Vivantes (Cent-Cinquantième de l'École des L.O.), Paris, 1948.

տաժողովներով և մշակութային միջոցառումներով հանդիսավոր նշվեց նրա հայագիտական գործունեության 50-ամյակը:

Սյապիսով, կարող ենք փաստել, որ XIX-XX դարերում հայ-ֆրանսիական կապերն ավելի են ամրապնդվում և իրենց որոշակի հետքը թողնում հայ ազգային մշակույթի և հայոց լեզվի վրա:

**ВАРДУШ АРУТЮНЯН**

*Ереванский государственный лингвистический  
университет им. В. Брюсова*

## **ОСВЕЩЕНИЕ ВОПРОСОВ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА В ТРУДАХ ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ**

*Резюме*

Создание армянского алфавита является одним из важнейших событий в истории армянского народа. Создание письменности стало залогом сохранения национальной идентичности. Не случаен тот факт, что на протяжении веков алфавит для армянского народа считается святым.

Армяно-французские отношения имеют многовековую историю. Киликийская Армения была в торговых, политических и культурных отношениях с Францией. Эти отношения продолжались и в XIX-XX веках.

Французские арменоведы внесли большой вклад в развитие Арменоведении, особенно в освещение вопросов истории Армянского языка.

VARDUSH HARUTUNYAN

*Yerevan V. Brusov State University of  
Languages and Social Sciences*

**THE ISSUES OF THE HISTORY OF THE ARMENIAN LANGUAGE  
IN THE WORKS OF FRENCH ARMENOLOGISTS**

*Summary*

The creation of the Armenian alphabet was a turning point that had its influence on the Armenian nation's destiny. The fact of creating the alphabet carried a very important mission - to preserve the Armenian nation. And it is surely no coincidence that the Armenian nation has sanctified the alphabet over centuries.

Armenian-French relations have a long history. Cilician Armenia was in trade, political and cultural relations with France. These relations continued in the XIX-XX centuries as well.

French Armenologists made a great contribution to the development of Armenology, especially in covering the issues of the history of the Armenian language.

**ՏԲԳՐԱՆ Բ ՄԵԾԻ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՏ ԷՔԶԱՐԴՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՇՈՒՐԶ**

1909 և 1910 թթ. գերմանական «Կլիո» ամսագրում տպագրվեց գերմանացի նշանավոր գիտնական Կարլ Ֆրիդրիխ Լեմանշաուպտի աշակերտ Կուրտ Էքհարդտի «Լուկուլլոսի հայկական արշավանքները» ուսումնասիրությունը (Kurt Eckhardt, Die armenischen Feldzuge des Lukullus, Klio, Bd. IX, Heft 4 und Bd. X, Heft 1 und 2.), որը Գարեգին Գարանֆիլյանի կողմից թարգմանվեց հայերեն և «Տիգրան Բ եւ հայ-լուկուլլեան պատերազմները» վերնագրով 1926 թ. տպագրվեց Վիեննայում:

Կուրտ Էքհարդտից առաջ հռոմեական և պոնտական պատմությունը ուսումնասիրող եվրոպական գիտնականներ Ռեյնակը, Մումզենը, Նոյմանը, Դրումանը և Մեյերը որոշ չափով արդեն անդրադարձել էին տիգրանյան ժամանակաշրջանի ռազմաքաղաքական պատմությանը, սակայն մ.թ.ա. 69-67 թթ. հայ-հռոմեական սպառնազմը համակողմանի չէր քննվել:

Կուրտ Էքհարդտը առաջինն էր, որ մանրակրկիտ քննեց իրեն հասանելի բոլոր հունական ու հռոմեական սկզբնաղբյուրները և իր նախորդների ուսումնասիրությունները, որից հետո մանրամասն շարադրեց մ.թ.ա. 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի մ.թ.ա. 69 և 68 թթ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները:

Ի տարբերություն նախորդ եվրոպական գիտնականների, Էքհարդտը բավականին քննադատորեն էր վերաբերվում անտիկ պատմիչների հաղորդումներին, որովհետև նրանք միակողմանի

արտահայտում էին միայն հակամիհրդատյան և հակատիգրան-  
յան տեսակետները:

Մանրամասն քննելով անտիկ պատմիչների հաղորդումները  
Հայաստան ներխուժած Լուկուլլոսի զորքերի թվաքանակը մա-  
սին՝ նա կտրականապես մերժել էր նրանց ներկայացված թվերը:  
Էքհարդոտը համարում էր, որ 12.500, 15.000 կամ 18.000 զինվորնե-  
րից բաղկացած հռոմեական բանակի մասին տեղեկությունները  
ստույգ չեն և համեմատելով տարբեր պատմիչների ներկայաց-  
րած տվյալները, ապացուցում էր, որ այդ թիվը առնվազն 22.000  
զինվոր է. «...Լուկուլլոս իր հրամանի տակ ուներ Վալերիանեան  
երկու լեգեոններն, ու մնացեալ երեքին 17 վաշտերը. ընդ ամենը  
18.000 հետեւակ, 3.000 հեծեակ եւ 1.000 թեթեւագէն»<sup>1</sup>:

Զարմանալի է, որ Էքհարդոտը չի տարակուսում, թե ինչու  
հսկայական մարդկային և նյութական ռեսուրսներ ունեցող  
Հռոմն այդպիսի աննշան ուժերով էր սկսում այս ծանր պատե-  
րազմը: Եթե Էքհարդոտը Լուկուլլոսի հայկական արշավանքի  
մասշտաբը քններ Հռոմեական հանրապետության արևելքում  
կուտակված ռազմական հնարավորությունների ներքո, ապա  
պետք է զարմանար ինչ աննշան միջոցներ է հատկացրել այս  
պատասխանատու պատերազմին Հռոմը: Բացի բուն հռոմեական  
զորամիավորումներից, Հռոմեական հանրապետության սրևել-  
յան ռազմական համակարգի մեջ էին մտնում նաև դաշնակից  
երկրների և որոշ չափով, նաև վարձկան զորքերը, որոնց քանակը  
խիստ բազմանում էր պատերազմների ժամանակ: Արդեն հրա-  
տարակված էին Հին Հունաստանի և Հռոմի պատերազմների  
պատմությանն ու ռազմարվեստին նվիրված կարևոր հետազո-

<sup>1</sup> Էքհարտ Կ., Տիգրան Բ և հայ-լուկուլլեան պատերազմները, թարգմ. գերմ.  
աշխատասիրեց Զ. Գարեգին Գարանֆիլեան, Վիեննա, 1926, էջ 76:

տություններ, որոնք թույլ են տալիս գնահատել այդ հնարավորությունները:

Միայն մեկ դար հետո հնարավոր եղավ ճշտել էփարդտի ներկայացված թվերը: Դժբախտաբար գերմանացի գիտնականի ուշադրությունից վրիպել էր երկու կարևոր հանգամանք:

1. Պոնտոսում Լուկուլլոսի անմիջական հրամանատարության տակ գտնվող հինգ լեգեոնների թվակազմը տարբեր էր.

- առաջին և երկրորդ ֆիմբրիական (վալերիական) լեգեոնները հավաքվել էին Իտալիայում մ.թ.ա. 86 թ. և անմիջապես տեղափոխվել Փոքր Ասիա, որտեղ վարել էին բազմաթիվ ծանր մարտեր: Նրանք հավաքված էին Սուլլայի, նշանակում է նաև Լուկուլլոսի, հակառակորդ մարիոսականների կողմից, որպեսզի պատերազմեին ոչ միայն Միհրդատ Ջ Եվպատորի, այլև Սուլլայի զորքերի դեմ: Հետագայում այս լեգեոնները, որոնք հայտնի էին իրենց ըմբոստ պահվածքով չցրվեցին միայն շնորհիվ իրենց արտակարգ մարտունակության: Մ.թ.ա. 73-71 թթ. Լուկուլլոսը (մինչ այդ Սուրենան, մ.թ.ա. 83-81 թթ. Երկրորդ միհրդատյան պատերազմի ժամանակ) ֆիմբրիականներին նետում էին ամենածանր տեղերը և նրանք պատվով էին դուրս գալիս այս փորձություններից: Մ.թ.ա. 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի շեմին ֆիմբրիականները տասնյոթամյա ծառնայության ընթացքում ծանր կորուստներ էին կրել (հռոմեական լեգեոնները խիստ հազվադեպ էին համալրվում, հատկապես «ըմբոստները») և յուրաքանչյուրի լեգեոներների թիվը դժվար թե գերազանցեր 4.000-ը. երկու լեգեոնում մոտ 8.000 լեգեոներ:

- Սեքստիլիոսի հրամանատարության տակ գտնվող լեգեոնը հավաքվել էր Իտալիայիում մ.թ.ա. 73 թ. և նույն տարի Լուկուլլոսի հետ մեկնել Փոքր Ասիա: Նա մասնակցել էր միայն Եր-

րորդ պոնտական պատերազմին: Նույնիսկ ամենածանր կորուստների դեպքում նրա կազմում պետք է լինեի ոչ պակաս, քան 5.000-5.500 լեգեոներ: Ըստ Մեմնոնի, մ.թ.ա. 70 թ. Լուկուլլոսի մոտ Իտալիայից ժամանում է զինվորական համալրում, որի դեկավարը Բարբան էր<sup>2</sup>: Համալրումը բաղկացած էր մի քանի հազար զինվորներից և ակնհայտորեն 5-6.000 զինվորից քիչ էր, հակառակ դեպքում սովորականի նման կկազմվեր առանձին լեգեոն: Բարբայի զինվորները համալրել էին Լուկուլլոսի մնացած երեք լեգեոնների կազմը: Հենց այս համալրումի շնորհիվ Մեքստիլիոսի լեգեոնի թվաքանակը վերականգնվել էր մինչև 6.000 լեգեոներ:

- Լիկինիոս Մուրենայի հրամանատարության տակ էր գտնում Լեոնային Կիլիկիա նահանգում գտնվող երեք լեգեոններից մեկը, որը մ.թ.ա. 73 թ. Հռոմեական ծերակույտի հրամանով ենթարկվել էր Լուկուլլոսին Երրորդ պոնտական պատերազմին մասնակցելու համար: Այս և Սորնատիոսի հրամանատարության տակ գտնվող երկրորդ կիլիկյան լեգեոնը մասնակցել էր մ.թ.ա. 78 թ. Լեոնային Կիլիկիայի պրոկոնսուլ Պուբլիոս Մերվիլիոսի վարած կատաղի մարտերին կիլիկյան ծովահենների դեմ և ունեցել զգալի կորուստներ: Հետագայում այն նույնպես համալրվել էր և Բարբայի Սորնատիոսի հրամանատարության ներքո էր Լեոնային Կիլիկիա նահանգում գտնվող երեք լեգեոններից երկրորդը, որը մ.թ.ա. 73 թ. ծերակույտի հրամանով ենթարկվել էր Լուկուլլոսին Երրորդ պոնտական պատերազմին մասնակցելու համար: Այս լեգեոնը նույնպես համալրվել էր Բարբայի զորախմբի զինվորներով մինչև 6.000 լեգեոներ: Հայաստան

<sup>2</sup> Տե՛ս Գևորգյան Ա., Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ., պրակ I, Եր., 2009 («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հ. III):

արշավելիս, այս լեզեոնը Լուկուլլոսը թողնում է Պոնտոսում:

- գորախմբի զինվորներով մինչև 6.000 լեզեոներ:

2. Արդեն Երրորդ միհրդատյան պատերազմի ընթացքում Լուկուլլոսն իր բանակի կազմում ուներ բազմաթիվ դաշնակիցներ և վարձկաններ: Մ.թ.ա. 70 թ. և 69 թ. առաջին կեսին հայկական արշավանքին նախապատրաստվելիս, նա պետք է որ զգալիորեն մեծացներ դաշնակցային և վարձկան զորքերի քանակը: Պատմիչների երկերում նշված հռոմեական դաշնակիցներին՝ գալաթացիներին, բուրանիացիներին, թրակացիներին և այլոց որպես թվաքանակ էքհարդը չի տեսնում: Իրականում, Փոքր Ասիայում Հռոմեական հանրապետության վարած զրեթե բոլոր պատերազմներում դաշնակիցները պատկառելի, հաճախ բուն հռոմեական բանակից ավելի թվաքանակ ունեին և Լուկուլլոսի արշավանքը նկարագրող պատմիչները բազմիցս պատմում են նրանց գործողությունների մասին: Դաշնակիցների հետ միասին Լուկուլլոսի բանակի քանակը պետք է ավելի քան կրկնապատկվեր:

Այժմ, կարող ենք ճշտել էքհարդոսի տվյալները: Հայաստան ներխուժած բուն հռոմեական բանակը բաղկացած էր չորս լեզեոնից՝ 20.000 լեզեոներ, 3.000 հեծյալից և 1.000 թեթևագեներից՝ ընդամենը 24.000 զինվոր: Նրանց գումարված դաշնակիցների զորքերը՝ Լուկուլլոսի բանակը տեսականորեն կարող էին հասցնել 30.000-ից մինչև 75.000 զինվոր: Ավելի հավանական էր 50.000–55.000 թվաքանակը:

Այսպիսով, բուն հռոմեական բանակի էքհարդոսի գնահատականը՝ 22.000 զինվոր, շատ մոտ է արդի տվյալներին: Եթե էքհարդոսը նաև հաշվի առներ հռոմեացի պատմիչների սովորությունը, հազվադեպ նշել դաշնակիցների քանակը և դերը, ապա նա

դեռևս 1910 թ. կկարողանար ավելի ճիշտ գնահատել Լուկուլլոսի բանակի ընդհանուր թվաքանակը:

Մինչև Տիգրանակերտի ճակատամարտը տեղի ունեցած մարտերում (Մեիրուժանի մարտը Մեքստիլիոսի դեմ, հայկական հեծելազորի հարձակումը Տիգրանակերտը պաշարող հռոմեացիների վրա, Մուրենայի և Մեքստիլիոսի հարձակումները հայերի և իր դաշնակիցների վրա Տավրոսի լեռներում, Տիգրանակերտի ամրությունների անհաջող գրոհները) բուն հռոմեացիների զգալի կորուստները էքհարդոսը հաշվում է բավականին ճիշտ: Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը էքհարդոսը շարադրում է ըստ Պլուտարքոսի, նկատում նրա երկի որոշ հակասությունները, սակայն չի փորձում համեմատել այլ պատմիչների, հատկապես Ապպիանոսի, ներկայացրած տարբերակների հետ և վերականգնել ճակատամարտի ընթացքը: Նա անվերապահորեն հավատում է Պլուտարքոսին:

Արաձանիի ճակատամարտի նկարագրության ժամանակ էքհարդոսը նույնպես հիմնվում է միայն Պլուտարքոսի հաղորդման վրա և անտեսում (նույնիսկ չի հիշատակում) հռոմեական բանակի անհաջող ճակատամարտի մասին Դիոն Կասսիոսի հստակ հաղորդումը: Հետագա դեպքերի նկարագրությունից միանշանակ երևում է, որ հեղինակը գիտե Դիոնի երկի այս հատվածը: Ըստ երևույթին Արաձանիի ճակատամարտում Լուկուլլոսի պարտությունը պարզապես չէր տեղավորվել էքհարդոսի պատկերացումների մեջ:

Լինելով XX դ. դարասկզբի պատմագիտության ներկայացուցիչ էքհարդոսը պատմությունը շարադրում է ելնելով հունահռոմեական ռազմարվեստի գերազանցության կանխադրությից. «կիսաբարբարոս» Միհրդատ Զ-ն և գրեթե «բարբարոս» Տիգրան Բ-ն,

որը «հնագանդորեն ենթարկվում է Միհրդատի կամքին» գրեթե անկարող են դիմակայել Լուկուլլոսին, սակայն շնորհիվ Հայաստանի «խստաշունչ» կլիմայի և հռոմեական զորավարի խստություններից «նեղված» հռոմեական բանակի «անհնագանդությամբ», տեղի է ունենում անսպասելին, և հանճարեղ հռոմեացին նահանջում է: Սակայն, ի տարբերություն բազմաթիվ այլ հեղինակների, օրինակ Ռեյնակի, Տիգրանին անտեղի տրված վիրավորական գնահատականների, էփարդտը խիստ հավասարակշռված է, և ձգտում է հնարավորինս հավասարապես գնահատել թե՛ հռոմեացիների, թե՛ նրանց հակառակորդների արժանիքները:

Կուրտ էփարդտին պետք է ծանոթ լիներ 1908 թ. վերահրատարակված Հանս Դելբրյուկի «Ռազմական արվեստի պատմությունն քաղաքական պատմության շրջանակներում» բազմահատորյակի առաջին երկու հատորների երկրորդ հրատարակությունը: Առաջին հատորի նախաբանում<sup>3</sup> Հանս Դելբրյուկը գրում էր. «Ընդհակառակը, ես իմ վրա համարձակություն եմ վերցնում պնդել, որ, ըստ էության, բոլոր փոփոխությունները, որոնք ես այժմ մտցրել եմ, գալիս են այն համոզմունքից, որ առաջին հրատարակությունում ես դեռ բավարար չէի հեռացել ավանդական պատկերացումներից: Ահավասիկ, փաստորեն այնպես էր, որ ոչ թե պարսիկները, այլ հույներն ունեին թվային գերազանցություն. որ Ալեքսանդրը շարժվեց Պարսկական թագավորությունը նվաճելու ոչ թե փոքր ջոկատով, այլ երկու անգամ ավելի մեծ բանակով, քան երբևիցե ունեցել էր Քսերքսեսը. որ Հռոմում զինվորագրումը երբեք չի անցկացվել այս կամ այն

---

<sup>3</sup> Sk' u Дельбрюк Г., История военного искусства в рамках политической истории, т 1, Англичский мир (пер. с нем.), М., 1936, էջ 19-31.

ունեցվածքային դասակարգի համապատասխան. որ քաղաքակիրթ աշխարհին սպառնացող բարբարոսների բանակները միշտ շատ մեծ չէին. որ հռոմեացիները հաղթում էին գալլերին և գերմանացիներին գլխավորապես իրենց թվային գերազանցության շնորհիվ. որ պատերազմ վարելու հնարքները գոյություն ունեին մինչև ֆեոդալիզմի առաջացումը, այլ ոչ թե բխում էին նրանից: Այս բոլոր հարցերով հավատը դեպի հակառակ ավանդույթը համարյա թե նույնքան ամուր է, որքան էլ հին է, և դրանք հաղթահարելու և ավելի ճիշտ հասկացություններով փոխարինելու համար անհրաժեշտ են ոչ միայն հիմնավորումներ, այլև ժամանակ»:

Էքհարդտի վերլուծությունները Լուկուլտսի հայկական արշավանքի վերաբերյալ արժեքավոր են նաև այսօր:

Կուրտ Էքհարդտի աշխատությունը հանդիսացավ Հայաստանի մ.թ.ա. 95-55 թթ. ռազմաքաղաքական պատմության մասնագիտացված (հին աշխարհի ռազմական պատմություն) ուսումնասիրության առաջին փուլը, երկրորդը սկսվեց 1940 թ. Հակոբ Մանանդյանի հրատարակած «Տիգրան Բ և Հռոմը» կոթողային մենագրությունով<sup>4</sup>: 1987 թ. հրատարակվեց Ռուբեն Մանասերյանի «Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94-64 թթ.» (երկրորդ, լրացված հրատարակություն 2007 թ.) մենագրությունը<sup>5</sup>, որը գիտականորեն անթերի հիմնավորեց Տիգրան Մեծի քաղաքականության տրամաբանությունը: 2009-2011 թթ. Արա Գևորգյանը, հիմնվելով Ռ. Մանասերյանի հայեցակարգի և Նիկողայոս Ադոնցի գնահատականների

<sup>4</sup> Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը: Նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների (վերահրատ. 1940 թ.), Եր., 1972:  
<sup>5</sup> Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94 - 64 թթ. (երկրորդ, լրացված հրատ.), Եր., 2007:

վրա<sup>6</sup>, «Տիգրան Մեծի քանակը» եռահատոր ուսումնասիրությունում<sup>7</sup> մանրամասն վերլուծեց տիգրանյան Հայաստանի վարած պատերազմները և ռազմական մեքենան, որի ուսումնասիրության սկիզբը մեկ դար առաջ դրել էր տաղանդավոր գիտնական Կուրտ Էքհարդտը:

Կուրտ Էքհարդտի բարձր գիտական մակարդակով կատարված հետազոտությունից ուղիղ մեկ դար հետո Ռուսաստանում և Արևմուտքում շարունակում են տպագրվել գրքեր, որտեղ Միհրդատ Եվպատորի և Տիգրան Մեծի կերպարները ներկայացված են խեղաթյուրված՝ պասկվիլային տեսքով<sup>8</sup>: Հատկապես անարդար է արդի արտասահմանյան պատմագրության նկարագրությունը և զնահատականը մեծն հայի գործունեության հանդեպ: Նույնիսկ Տիգրանին Հռոմի թշնամի համարող հունական և հռոմեական պատմիչները ավելի զուսպ են, քան ներկա «գիտնականները»: Սակայն, ոչ միայն Տիգրանի «բախտը» չի բերել: Միայն նրա համար, որ մեծագույն հռոմեացի զորավարներից մեկը՝ Գնեոս Պոմպեոս «դժբախտություն» է ունեցել հակառակորդ լինել Հուլիոս Կեսարին, այդ պատճառով նրա կերպարն և գործունեությունը ոչ հիմնավոր ձևով նսեմացվում է, իսկ Ադրիաննա Մեյորի գրքում հանդիպում ենք կոպիտ սխալների,

---

<sup>6</sup> Տե՛ս Ադոնց Ն., Տիգրան Մեծ. Ուսումնասիրություններ, Եր., 2010:

<sup>7</sup> Տե՛ս Գևորգյան Ա., Տիգրան Մեծի քանակը մ.թ.ա. 95-55 թթ., պրակ I, Եր., 2009: Նույնի՝ Տիգրան Մեծի քանակը մ.թ.ա. 95-55 թթ., պրակ II, Եր., 2010; Նույնի՝ Տիգրան Մեծի քանակը մ.թ.ա. 95-55 թթ., պրակ III, Աշտարակ, 2011 («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հ. III):

<sup>8</sup> Мэйор А., Митридат: Отважный воин, блестящий стратег, зловещий отравитель. 120-63 г. до н.э. (пер. с англ. Л. Огаревой), М., 2015 (Adrienne Mayor. The poison king: The live and legend of Mithridates, Rome's deadliest enemy: Princeton University Press, 2010). Остахов А.А., Ильюшин Ю.В., Кавказ в эпицентре внешней политики Рима на Ближнем Востоке (I в. до н.э. - III в. н.э.), Пятигорск, 2012.

պարզունակ և անարդար գնահատականների<sup>9</sup>: Մեյորը չատ է համագործակցում արդի թուրք պատմաբանների հետ: Հիմնականում այստեղից են ծնվում Տիգրանի «քոչվորները», զբքում տեղադրված քարտեզներում Տիգրանի կայսրությունը որպես Միհրդատի տերության մի մաս ներկայացնելը: Մեյորին առանձնապես չեն զիջում Օստախովը և Իյուշինը, որոնք ինքնակամ Միհրդատին «արքայից արքա» տիտղոս են «շնորհում» և առաջարկում են «նուրբ վարկած», որ Տիգրանը արքայից արքա տիտղոսը ընդունել է այդ տիտղոսից Միհրդատի հրաժարումից հետո: Վերջիններիս հրապարակած քարտեզների մեծ մասը խայտառակ սխալների հավաքածու է: Հայկական գիտական միտքը պարտավոր է հատկապես միջազգային գիտական պարբերականներում պարբերաբար անդրադառնալ նման «գիտական» հրապարակումներին:

---

<sup>9</sup> Мэйор А., նշվ. աշխ.: Mayor A., նշվ. աշխ.:

АРА ГЕВОРГЯН

*Научный и медицинский фонд «Аревелк-Аревмутк»*

ОБ ИССЛЕДОВАНИИ КУРТА ЭКХАРДТА ПО ВОЕННО-  
ПОЛИТИЧЕСКОЙ ИСТОРИИ  
ЭПОХИ ТИГРАНА II ВЕЛИКОГО

*Резюме*

В 1909 и 1910 гг. в немецком журнале «Клио» было напечатано обширное исследование ученика известного немецкого ученого Карла Фридриха Леман-Гаупта, Курта Экхарда «Армянские походы Лукулла» (Kurt Eckhardt. Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, Heft 4 und Bd. X, Heft 1 und 2), которое в 1926 г. было переведено на армянский язык Г. Гаранфилян и напечатано в Вене. Труд К. Экхардта, являясь первым специализированным исследованием по военной и военно-политической истории Армении 95-55 гг. до н.э., заложил основы изучения военной истории Древней Армении и сохранил научную ценность до настоящего времени. В дальнейшем, Н. Адонц, Я. Манандян, Р. Манасерян, А. Геворгян и др. использовали данное исследование.

Однако некоторые современные авторы, в частности А.А. Остахов и Ю.В. Ильюшин в своей книге вообще не используют эти достижения. В монографии А. Мэйор одиозно, в пасквильном стиле изображены не только Тигран Великий, но и Гней Помпей, а приведенные исторические карты представляют собою не что иное, как прямую фальсификацию истории.

ARA GEVORGYAN

*Scientific and Medical Foundation "Arevlk-Arevmutk" Asharak*

**STUDY ON KURT ECKHARDT ON MILITARY-POLITICAL  
HISTORY OF THE ERA OF TIGRAN II THE GREAT**

*Summary*

In 1909 and 1910 the German magazine «Clio» published the extensive research of the pupil of famous German scientist Karl Friedrich Lehman-Haupt, Kurt Eckhardt «The Armenian campaigns of Lucullus» (Kurt Eckhardt, Die armenischen Feldzuge des Lukullus.-Klio, Bd. IX, Heft 4 und Bd. X, Heft 1 und 2.), which was translated into Armenian by G. Garanfilyan in 1926 and printed in Vienna. Being the first specialized research on the military and military-political history of Armenia in 95-55 BC, K. Eckhardt's work laid the foundations for the studying of military history of Ancient Armenia and keeps its scientific value to the present day.

Later this research was used by N. Adonts, H. Manandyan, R. Manaseryan, A. Gevorgyan, etc. However some modern investigators, particularly A.A. Ostakhov and Yu.V. Ilyushin, do not use these achievements in their book. In A. Mayor's monograph odiously in libelous style is represented not only Tigran the Great, but also Gnaeus Pompeius, and the historical maps are nothing more than a direct falsification of history.

## ՌՈՒՍ ԴՐԱՄԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

20-րդ դ. առաջին կեսերին Ռուսաստանում՝ Սանկտ-Պետերբուրգում, հանդես եկան ազգությամբ ռուս, ճանաչված արևելագետ-դրամագետներ, ովքեր ոչ միայն ցուցաբերել են հետաքրքրություն հայ դրամագիտությանն առնչվող հարցերին, այլ նաև իրենց գործունեությամբ ու գիտական հետազոտություններով բերել իրենց նպաստը, մասնավորապես՝ վաղմիջնադարյան Հայաստանի դրամագիտական հարցերին: Ներկա հոդվածում անդրադառնանք միայն երկու ռուս դրամագետների՝ Ալեքսեյ Կոնստանտինի Մարկովին (1858-1920 թթ.) և Ռոման Ռոմանովիչ Ֆասսերին (1888-1938 թթ.): Գիտությանը նվիրյալ այս անձերը մինչ օրս շարունակում են մնալ Էրմիտաժի դրամագետների ցանկում ոչ միայն ճանաչված, այլև փնտրված անձեր: Նրանք արևելյան դրամագիտությամբ հետաքրքրվողների ու հետազոտողների համար թողել են արժեքավոր ժառանգություն:

Անդրադառնալով նրանց գիտահետազոտական ու կենսագրական գործնեությանը՝ նշենք, որ այս դրամագետներն իրենց գիտական գործունեությունը սկսել են Էրմիտաժից: Ալ. Մարկովը 1888 թ. աշխատել է Սանկտ-Պետերբուրգի Կայսերական թանգարանում (Էրմիտաժում), իսկ 1900 թ.՝ զվիավորել Էրմիտաժի դրամագիտության բաժինը: Դրամագետը Ռուսաստանի Կայսերական հնագիտական ինստիտուտի պրոֆեսոր էր, ռուսական և արևելյան դրամների ճանաչված մասնագետ: Նա ծագումով առաջին ռուս արևելագետ-դրամագետն էր Էրմիտաժում, որ ուսանել էր

արտասահմանում. 1880-1882 թթ. սովորել է Փարիզի մասնագիտացված արևելյան լեզուների հատուկ դպրոցում (École des Langues Orientales), որը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո շարունակել է ուսումը Գերմանիայում: Այնուհետև վերադարձել է Սանկտ-Պետերբուրգ, ընդունվել Հնագիտության ինստիտուտ ու արժանացել այդ հաստատության ոսկե մեդալին<sup>1</sup>: Նա հրաշալի տիրապետում էր արևելյան, արևմտաեվրոպական ու ռուսական դրամագիտությանը վերաբերող հարցերին: Ա. Մարկովն իր մարդկային որակներով ու աշխատանքային գործունեությամբ դրամագիտության ոլորտի անձնագրի նվիրյալ էր, գիտելիքների նրա խոր իմացությունն ու կազմակերպչական ձիրքն իրենց գործնական ներդրումը բերեցին Էրմիտաժի դրամագիտության բաժնի պատմության մեջ: Դրամագետը դրամագիտական հուշարձանին մոտենում էր խորքային, գիտահետազոտողի տեսանկյունից, և ոչ թե հավաքորդի: Նա կայսերական թանգարանում ստեղծեց, ծավալեց ու թողեց բազում կարևոր ու մեայուն գործեր: Նրա շնորհիվ Էրմիտաժի դրամագիտական գրադարանը (որն ունի իր կազմավորման հետաքրքիր պատմությունը), համալրվում էր նոր գրականությամբ: Ձեռք էին բերվում և դրանց հիման վրա ստեղծվում ու գրանցվում արևելյան դրամների գրացուցակները, պարբերաբար եվրոպական դրամագիտական կենտրոններից ստացվում էին նոր դրամագիտական գրացուցակներ, ինչը տվյալ ժամանակի համար կարևոր էր ու արտակարգ: Էրմիտաժի արևելյան դրամների բաժինն իր հարուստ հուշարձաններով, գիտական մթնոլորտով ու դրամագիտական ուսումնասիրություններով մինչ օրս մնաց բացառիկ օջախ, որտեղ դրամա-

<sup>1</sup> Словарь Нумизмата, М., 1982, с. 145.

գետները կարող են ծանոթանալ ոչ միայն մասնագիտական գրականության, այլև արևելյան դրամագիտության վերաբերող բազում հարցերի ու խնդիրների հետ: Գրադարանը հիմա էլ շարունակում է համալրվել արժեքավոր դրամագիտական գրքերով ու մնալ համաշխարհային առումով կարևորագույն գրադարան:

Ա. Մարկովի շնորհիվ փրկվեց Կիև-Պեչորյան լավրի գանձը<sup>2</sup> և այն 1899 թվականից իր հաստատուն տեղը գտավ Կայսերական թանգարանի դրամագիտական ֆոնդում: 1884 թ. դրամագետը «Անտիկ դրամագիտություն» խորագրով դասախոսություններ է կարդում Սանկտ-Պետերբուրգի հնագիտական ինստիտուտում: 1885 թ. Ա. Մարկովը Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ է դառնում, իսկ արդեն 1886 թ. նշանակվում Սանկտ-Պետերբուրգի հնագիտության ինստիտուտում դրամագիտության ամբիոնի վարիչ: Երեք տարի անց՝ 1889 թ., դառնում է Մոսկվայի դրամագիտական ընկերության իսկական անդամ, իսկ 1907 թ. ընտրվում է Ռուսաստանի կայսերական հնագիտական կոմիտեի անդամ:

Ա. Մարկովը հրատարակել է մի շարք դրամագիտական հոդվածներ՝ նվիրված հելլենիստական Արևելքի, անտիկ ու բյուզանդական դրամներին: Ճանաչված դրամագետը միաժամանակ աշխատանքներ է ծավալել Կայսերական թանգարանի հավաքածուների ուսումնասիրության, նրանց դասակարգման ու հրապարակման գործում: Դրամագետի պատմական ու հնագիտական զիտելիքների խոր իմացությունը, լեզուների հրաշալի տիրապետումը, լայն մտահորիզոնը դարձնում էին իր անձը ճանանչված, նա փնտրված էր ու վայելում էր ժամանակակիցների մեծ հա-

---

<sup>2</sup> Спасский И. Г., Русская монетная система, Л., 1970, с. 14.

մակրանքը: Ա. Մարկովը նաև ժամանակակիցն ու մասնակիցն է եղել 1917 թ. պետրոգրադյան հայտնի իրադարձությունների, նրա ղեկավարությամբ էր կատարվում թանգարանի դրամագիտական արժեքների տարհանումը Պետրոգրադից Մոսկովյան Կրեմլ՝ ապահովելու դրանց պահպանության խնդիրը: Հետհեղափոխական տարիների անկայուն ծանր տնտեսական կյանքն իր ազդեցությունը թողեց դրամագետի անձնական կյանքի վրա, որն էլ անդրադարձավ նրա առողջության վրա: Ծանր հիվանդությունից հետո՝ 1920 թ. օգոստոսին ռուս դրամագետ-արևելագետ Ա. Մարկովը կնքեց իր մահկանացուն:

Ինչո՞ւ մն էր Ա. Մարկովի կարևոր ավանդը. նա կարողացավ Ռուսատանի տարբեր ծայրամասերից հավաքագրել ու Էրմիտաժի նորաստեղծ դրամագիտության բաժնում կենտրոնացնել դրամագիտական փոքր ու մեծ հավաքածուները: Նրա օրոք Էրմիտաժի դրամագիտության բաժինը բաղկացած էր չորս մասից՝ հին, արևելյան, արևմտաեվրոպական ու ռուսական դրամների ենթաբաժիններից:

Արևելագետ դրամագետի գործը շարունակեց նրա դուստր Աննա Ալեքսեյևնա Մարկովան, որը 1924-1961 թթ. Էրմիտաժի արևմտաեվրոպական դրամների հավաքածուի պատասխանատուն էր և այդ ոլորտի լավագույն մասնագետներից մեկը:

Ռուս դրամագետի գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում դրամագետին հոգեհարազատ արևելյան դրամագիտությանը վերաբերող հարցերը: Երախտագիտությամբ պետք է նշել, որ Ա. Մարկովը Էրմիտաժի արևելյան դրամների շարքում՝ Հայաստանում ու հայկական քաղաքներում թողարկած հազարավոր դրամներ է որոշել: Իր հեղինակությամբ ստեղծված «Կայսերական Էրմիտաժի արևելյան դրամների հաշվառման

ցուցակում» (ՄՊԲ, 1896) Ա. Մարկովը<sup>3</sup> մանրամասն անդրադարձել է Օմայան և Աբբասյան հարստության բազմաթիվ դրամների թողարկված արաբական խալիֆայության *Արմինիա* նահանգում:

Արաբերենով արձանագրված են Արմինիա, Առան, Բարդա (Պարտավ) և Մաադին Բաջունայս (Ապահունիք) քաղաքները: Համաձայն նրա ուսումնասիրությունների՝ վաղագույն օմայան դիրհեմը արձանագրված է Արմինիայում ու թվագրված Հիջրայի 94 թվով, իսկ ամենաուշ Աբբասյան դիրհեմը վերագրված է ալ-Մուքտադիրին՝ թողարկված Բարդայում և թվագրված Հիջրայի 319 թվով: Հետագայում՝ 1910 թ., Մարկովը հրատարակեց «Արևելյան դրամական գանձերի տեղագրությունը»<sup>4</sup>:

Դրամագետը ներկայացրել է եվրոպական երկրներում գտնված գանձերը, հատկապես սասանյան ժամանակաշրջանի ու արաբական խալիֆայության, ինչպես նաև վերջինիս անկումից առաջացած ամիրայությունների կողմից թողարկված արծաթե դրամական գանձերը: Դրանք պարունակել են Հայաստանում թողարկված դրամներ՝ Արմինիա անվան արաբատառ արձանագրությամբ<sup>5</sup>: «Էրմիտաժի արևելյան դրամների ցուցակը» երկար ժամանակ հանդիսացավ ու շարունակում է մնալ որպես օրինակ գիտական ուսումնասիրության համար:

2008 թ. Էրմիտաժի դրամագիտության բաժինը նշեց դրամագետի 150-ամյակը՝ երկօրյա դրամագիտական ընթերցումներով, որտեղ հանդես եկան թե՛ պատմաբաններ, թե՛ դրամագետներ ու արևելագետներ, որոնք ներկայացրեցին դրամագետի ոչ միայն

<sup>3</sup> Марков А., Инвентарный каталог мусульманских монет Императорского Эрмитажа, СПб., 1896.

<sup>4</sup> Топография кладов восточных монет (сасанидских и куфических), СПб., 1910.

<sup>5</sup> Мушегян Х.А., Денежное обращение и торговые связи Двина по монетным данным, Л., 1957.

ստեղծագործական կյանքը, այլև մանրամասն քննարկեցին նրա աշխատությունների կարևորությունն արևելյան դրամների ուսումնասիրության գործում: Այսօր հնարավոր չէ արևելյան դրամների ուսումնասիրությունը սկսել առանց Ա. Մարկովի մնայուն աշխատությունների:

Ա. Մարկովի աշխատությունները՝ նվիրված արևելյան դրամագիտական ուսումնասիրություններին հետևյալն են՝

1. Les monnaies des rois parthes, St.P., 1877.

2. Библиография классической археологии за 1884-86 гг., СПб., 1886.

3. Catalogue des monnaies Arsacides, Subarsacides, Sassanides etc. de l'Institut des Langues Orientales du Ministère des Affaires Étrangères, St.P., 1889.

4. Registre général des monnaies orientales du même Institut, 1891.

5. Неизданные арсакидские монеты, СПб., 1892.

6. Инвентарный каталог мусульманских монет Императорского Эрмитажа, СПб., 1896.

7. Каталог Джалаиридских монет, СПб., 1897.

8. Топография кладов восточных монет (сасанидских и куфических), СПб., 1910.

Ականավոր հաջորդ ռուսաստանցի արևելագետ դրամագետը ծագումով գերմանացի Ռոման Ռոմանովիչ Ֆասմերն է՝ Ռ. Ֆասմերը Շվեդիայի հնագիտական ակադեմիայի անդամ էր, արևելյան դրամների ուսումնասիրությանը նվիրված հիսունից ավելի հոդվածների հեղինակ:

---

<sup>6</sup> Ռ. Ֆասմերը շարունակել է Քրիստիան Ֆոենի (1782-1851 թթ.) գործը, որն Սահական թանգարանի արևելյան դրամների ուղեցույցի հիմնադիրներից մեկն է:

Ռ. Ֆասմերը, 1910 թ. ավարտելով Պետերբուրգի համալսարանը, անմիջապես աշխատանքի է անցել Էրմիտաժի դրամագիտության բաժնում: 1920 թ. գլխավորել է Էրմիտաժում պահվող արևելյան հին և միջնադարյան մետաղյա դրամներն ու դրամական գանձերը, ղեկավարել դրանց հետ կապված հետազոտությունները: Աշխատելով ու աշակերտելով Ա. Կ. Մարկովին՝ Ռ. Ֆասմերը բացահայտել է արևելյան դրամների ծագումնաբանության ու ժամանակագրության տվյալները: 1919-1929 թթ. եղել է Ռուսաստանի ակադեմիայի պատմության նյութական մշակույթի իսկական անդամ և հանձնաժողովի մշտական քարտուղար, իսկ հետագայում նույն ակադեմիայի դրամագիտության բաժնի քարտուղար: 1925 թ. Լենինգրադում (հրատարակվեց Ռ. Ֆասմերի առաջին՝ արբասյան խալիֆների օրոք Հայաստանում իշխած ամիրաների ժամանակագրությունը, որը և հանդիսացավ նրա դասական աշխատության սկիզբը: Վիեննայի Մխիթարյան միաբանությունը 1929 թ.<sup>7</sup> և 1931 թ.<sup>8</sup> գերմաներեն ու հայերեն լեզուներով հրատարակեց Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակներում Հայաստանում իշխած ամիրաների ցուցակը:

Նա ստեղծել է կարևոր աշխատություններ ինչպես նախամոնղոլական, այնպես էլ հետմոնղոլական դրամների վերաբերյալ, համարվում է արևելյան, հատկապես՝ արաբական ծագում ունեցող օմայան ու արբասյան դրամների դասակարգման գործում խորհրդային ժամանակաշրջանի խոշոր մասնագետ:

<sup>7</sup> Vasmer R., Chronologie der arabischen Statthalter von Armenien in den Jahren 833-887, von R. Vasmer.- Handes Amsorya, vol. XLIII (Januar, Dezember 1929), nos. 1,12, pp. 41-47, 718-727 respectively.

<sup>8</sup> Ֆասմեր Ռ., Հայաստանի ոստիկանների ժամանակագրությունը ալ-Ամին և ալ-Մամուն խալիֆների օրոք.- Հանդես Ամսօրեայ, հ. XLIII, 1929, էջ 650-667:

Ցավոք, նա դարձավ ստալինյան բռնապետության զոհը, 1934 թ. ձերբակալվեց՝ դատապարտվելով տասը տարվա ճամբարային խստացված աքսորի, մեղադրվելով արտերկրում բնակվող իր հարազատ եղբոր՝ Մաքս Ֆասմերի հետ ունեցած նամակագրության համար: 1938 թ. Ուզբեկստանում, կալանավորման վայրում, ստեղծագործական կյանքի ծաղկուն շրջանում իր մահկանացուն է կնքում տաղանդավոր արևելագետ դրամագետը: Հետագայում, որպես ցավալի իրականություն՝ նրա մահից հետո, ապացուցվում է գիտնականի անմեղությունը, և նա արդարացվում է:

Ֆասմերի թողած ժառանգությունն այսօր էլ շարունակում է մնալ կարևոր աղբյուր դրամագետների, մասնավորապես, արևելյան դրամներով զբաղվողների համար: Էրմիտաժը, հավատարիմ մնալով իր ավանդույթներին, մնացած երախտավորների օրինակով, 2013 թ. հոկտեմբերին նշեց Ռոման Ֆասմերի 125-ամյա հոբելյանը, որին մասնակցելու համար ժամանել էին բազմաթիվ արևելագետներ և դրամագետներ:

Անդրադառնալով դրամագետ-արևելագետի աշխատություններին, նշենք որ Ռ. Ֆասմերը, հիմնվելով դրամագիտական տվյալների վրա, ուսումնասիրում ու պատմականորեն ճշտում է Հայաստանի արաբ ոստիկանների տարեթվերը՝ զուգահեռներ բերելով արաբ ու հայ պատմական սկզբնաղբյուրներից<sup>9</sup>:

Գիտնականն իր աշխատության մեջ ներկայացնում է Հայաստանի ոստիկանների ժամանակագրության 833-887 տարիները: Աշխատության մեջ ներկայացված է Աբբասյան խալիֆներից ալ-Մուտասիմից մինչև ալ-Մուտադիդի ժամանակաշրջանը, Հիջրա-

---

<sup>9</sup> Ste u Vasmer P., Хронология наместников Армении при первых Аббасидах, 1925, էջ 381-400: Ֆասմեր Ռ., Հայաստանի ոստիկանների ժամանակագրությունը 833-887 տարիներին, Հանդես Ամսօրեայ, հ. XLVI, 1932:

յի 218-273 թթ. (833-887 թթ.). ներկայացված է շուրջ 25 ուստիկան: Նրանցից վաղագույնը ալ-Հասան բին Ալի ալ-Բադդիսի ալ Մամունին (Հ. 218-220 թթ.), իսկ ամենավերջինը Ահմեդ բին Խալիդն է (Հ. ?-273 թթ.):

«Հայաստանի ուստիկանների ժամանակագրությունն առաջին Աբասյանների օրոք» աշխատության մեջ հեղինակը, հիմնվելով դրամագիտական տվյալների վրա, պատմական աղբյուրների զուգահեռներով ճշտում է արաբ ուստիկանների տարեթվերը՝ զուգահեռաբար վկայակոչելով հայ ու արաբ պատմիչներին: Ներկայացված է առաջին հինգ Աբբասյան խալիֆներ ալ-Մաֆֆահից մինչև Հարուն ալ-Ռաշիդի ժամանակաշրջանը, Հ. 132-193 թթ. (749-809 թթ.), որտեղ ցուցակագրված են 35 ուստիկաններ: Վաղագույնը Մուհամմեդ բին Մուլ և Աբու Ջաֆար ալ-Մանսուրն են Հ. 132 թ., և ամենաուշը՝ Մուհամմեդ բին Ջուհեյր ադ-Դաբբին՝ Հ. 193 թ.:

1933 թ. Վիեննայի Մխիթարյանները թարգմանում են Ռ. Ֆասմերի «Հայաստանի ուստիկանների ժամանակագրությունն առաջին Աբասյանների օրոք, սկսած ալ-Մաֆֆահից մինչև Աշոտ Ա-ի թագավորելը 750-887» աշխատությունը<sup>10</sup>:

Ռուս դրամագետի այս ուսումնասիրությունները հետազոտում շարունակեց ու զարգացրեց Խ. Մուշեղյանը՝ իր աշխատություններում անդրադառնալով արևելյան դրամներին: Հայ դրամագետը Ա. Մարկովին ու Ռ. Ֆասմերին համարում էր իր ուսուցիչները: Հետագայում հայ դրամագետը լրացրեց այդ ցուցակը՝ նոր գտածոներով ներկայացնելով Հայաստանում հայտնաբերած նոր դրամագյուտերը: Դրանց մեջ մտավ հայ դրամագետի վերջին աշ-

<sup>10</sup> Vasmer R., Chronology der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Krönung Ashots I: 750-887, Wien, 1931.

խատանքը՝ «Սյունիքի գանձ»-ի գտածոն, որը դարձավ Հայոց պատմության համար նորահայտ բացահայտումների արդյունք<sup>11</sup>: Այդ աշխատանքը շարունակությունն էր այն մեծ գործի, որ Ռուսաստանում նախաձեռնել էին արևելագետ-դրամագետները՝ անդրադառնալով հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն առնչվող կարևորագույն փաստերին:

Դրամագետ արևելագետ Ռ. Ֆասմերի հիմնական աշխատություններն են՝

1. Фасмер Р., Куфические монеты Переяславского клада, Пг., 1914.

2. Фасмер Р., Клад куфических монет, найденных в Новгороде в 1920 г. // Известия РАИМК, Л., 1925, т. 4, с. 267–268.

3. Vasmer R., Beitrage zur muhammedanischen Münzkunde, 1925.

4. Vasmer R., Die kufischen Muenzen des Fundes von Luurila, Kirchspiel Hattula // Finska forminnefoereningens tidskrift. Helsinki, 1927, № 3.

5. Фасмер Р., Список монетных находок, зарегистрированных секцией нумизматики и глиптики находок ГАИМК. 1920–1925 гг. // Сообщения ГАИМК, Л., 1927, № 1, с. 287–308.

6. Фасмер Р., О двух редких золотых монетах делийских султанов // Известия Общества археологии, истории и этнографии при Казанском университете, 1927, вып. 4, № 33, с. 45–52.

7. Фасмер Р., Монеты Саджидов, Известия, Баку, 1927, с. 37.

8. Фасмер Р., Два клада куфических монет. Труды нумизматической комиссии, VI, Л., 1927, с. 29.

---

<sup>11</sup> Մուշեղյան Խ., Սյունիքի Գանձ, Սինիքի Դրամատան Գանձը.- Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1990, էջ 140-183:

9. Vasmer R., Ein im Dorfe Staryi Dedin in Weissrussland gemachter Fund kufischer Muenzen. Stokholm, 1929, P. 26–28.

10. Фасмер Р., Список монетных находок // Сообщения ГАИМК. Л., 1929, № 2, с. 281–324.

11. Фасмер Р., Завалишинский клад куфических монет VIII–IX вв. // Известия ГАИМК. Л., 1931, т. 7, вып. 2, с. 12.

12. Фасмер Р., Архив ГЭ (фонд Р. Фасмера, оп. XVIIЕ; Архив СПб отделения Института археологии РАН, ф.2, ф.3, № 453).

13. Vasmer R., Über die Münzen der Wolga-Bulgaren // Numismatische Zeitschrift, Bd. 58. Wien, S. 63-84.

Ռուս դրամագետներ Կ. Մարկովը և Ռ. Ֆասմերը՝ լինելով ռուս մտավորականության ազնվափայլ ներկայացուցիչներ ու իրենց գործին նվիրյալ հետազոտողներ, ողջ կյանքն անմնացորդ նվիրեցին դրամագիտությանը: Արևելյան դրամագիտության մեջ հիմնադրեցին ռուսական՝ էրմիտաժյան դպրոցի ավանդույթները՝ մինևսյն ժամանակ իրենց նստատեղ բերելով հայ դրամագիտությանը: Միջնադարյան Հայաստանի պատմությամբ զբաղվող մասնագետները, իսր ուսումնասիրելով նրանց աշխատությունները, կարող են բարձր գնահատել ու հասկանալ նրանց թողած հսկայական աշխատանքի ժառանգությունը:

## Էրմիտաժի դրամագիտության բաժնի դրամագետները



Լուսանկար, 1929 թ.

Նստածների շարքում աջից առաջինը՝ Ա. Ա. Մարկովան  
(դրամագետի դուստրը), կանգնածների շարքում աջից առաջինը՝  
Ռ. Ֆասմերը:

**РУССКИЕ НУМИЗМАТЫ О ЧЕКАНЕННЫХ В АРМЕНИИ  
МОНЕТАХ**

*Резюме*

Известные российские нумизматы А. К. Марков (1858-1920) и Р. Р. Фасмер (1888-1938) являлись ведущими учеными в России, в лучших традициях эрмитажной школы востоковедения. Они оставили важнейшее наследие всем тем, кто интересуется изучением нумизматики на Востоке. Эти русские востоковеды-нумизматы проявляли большой интерес к изучению мусульманских чеканенных монет в Армении в период раннего средневековья. Они занимались изучением монет в исторический период арабских правителей Армении - в период Омейядов и Аббасидов. А. К. Марков дал целый список омейядских и аббасидских монет, чеканенных в халифской области «Арминия». Благодаря Р. Р. Фасмеру был составлен хронологический список аббасидских правителей халифской области Армения. Работы Р. Р. Фасмера основывались на монетных находках, а также на свидетельствах арабской и армянской историографии.

Изучая монеты этого периода, мы не можем обойти вниманием этих двух крупных ученых востоковедов, чьи труды с благодарностью используем и по сей день.

RUSSIAN NUMISMATISTS  
ABOUT COINS RELATING TO ARMENIA

*Summary*

Alexey Markov (1858-1920) and Roman Vasmer (1888-1938) are well-known Russian numismatists who have had leading roles in Russian and particularly in the Hermitage school's Oriental numismatic traditions. They left an important legacy to all those who are interested in studying Oriental numismatics.

These Russian numismatists were also interested in coins struck in Armenia in the early medieval period.

A. Markov described several Umayyad and Abbasid coins struck in the mints of the Arab Caliphate's „Arminiya" administrative province.

Vasmer studied monetary data and historically specified the dates of Arab rulers who ruled in Armenia during the period of the Abbasid Caliphate, starting from al-Saffah (A.H. 132) to the coronation of the Bagratid King Ashot I. He based his study on numismatic evidence as well as Arab and Armenian historiography.

These scholars remain to be among renowned and demanded numismatists of Hermitage up to present day, and it is impossible to neglect their works while reflecting on the history of the given period.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Աշոտ Մելքոնյան

ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ..... 5

### Էդուարդ Դանիելյան

Դ. Մ. ԼԱՆԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ..... 8

### Հայկ Մելիք-Աղամյան, Քրիստափոր Խաչանով

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԵՐԿՐԱԲԱՆ ՀԵՐՄԱՆ ԱԲԻԽԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ ..... 24

### Տիգրան Ալեքսանյան

ՀԱՅԱԳԵՏ ԱՆԱՏՈՒԻ ՅԱԿՈՒԲՍՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ..... 42

### Գոհար Վարդումյան

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՒԻ ԵՎ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

ԱՅԼԱԶԳԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 51

### Արփի Վարդումյան

ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ

ԵՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ..... 64

### Ալբերտ Սուշեղյան

ՔՍԵՆՈՓՈՆԻ ԱՐՄԵՆԻՈՍ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ԿԱՆԻ

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԻՔԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ (Մ.Թ.Ա. 585 Թ.) ..... 97

### Աելիսա Դոմիտյան

ՖՐԵՂԵՐԻԿ ՄԱՎԼԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՍԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՈՒ ՄԵԱԿՈՒՅԹԻ ՀԵՏԱԶՈՏՈՂ ..... 101

### Ալիսա Դոմիտյան

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ

ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ

ՍՈՏԵՅՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԾՈՒՐՋ ..... 118

**Ոռքերս Ղազարյան**

ՀԱՅԱՍՏԱՅԻ (ԱԶԶԻԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԵՎՍՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ..... 133

**Կարեն Թոխաթյան**

ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐԱԲԱՆ ՄԻՐՈՍԼԱՎ ԿՇԻՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 146

**Վահե Սարգսյան**

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՇՊՈՒԻՆԻԻ ԵՎ ՄԻՆՈՒԱՅԻ ՀԵՏ  
ՀԱՄԱՏԵՂ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝  
ԸՍՏ Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ..... 155

**Վարդուշ Հարությունյան**

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ  
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 174

**Արա Գևորգյան**

ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՏ ԷՔՀԱՐԴՏԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ ..... 183

**Անահիտ Մուշեղյան**

ՌՈՒՄ ԴՐԱՄԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐԱՄՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ..... 195

## СОДЕРЖАНИЕ

<b>Ашот Мелконян</b> ПО НАСТОЯНИЮ ВРЕМЕНИ .....	5
<b>Эдуард Даннелян</b> ВКЛАД Д. М. ЛАНГА В ОЦЕНКУ ЦИВИЛИЗАЦИОННОГО НАСЛЕДИЯ АРМЕНИИ .....	8
<b>Гайк Мелик-Адамян, Христофор Хичанов</b> АРМОНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ НЕМЕЦКОГО ГЕОЛОГА ГЕРМАНА АБИХА В АРЦАХЕ И НАХИДЖЕВАНЕ .....	24
<b>Тиграг: Александян</b> ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМОНОВЕДА АНАТОЛИЯ ЯКОВСОНА ПРОТИВ АЗЕРБАЙДЖАНСКИХ ФАЛЬСИФИКАЦИЙ .....	42
<b>Гоар Вардумян</b> ИЗУЧЕНИЕ ВОПРОСОВ ДРЕВНЕАРМЯНСКОЙ РЕЛИГИИ И МИФСЛОГИИ В ТРУДАХ ИНОСТРАННЫХ АРМОНОВЕДОВ .....	51
<b>Арши Нардумян</b> ИНОСТРАННЫЕ АВТОРЫ ОБ ИСКУССТВЕ КОМИТАСА И ОБ АРМЯНСКОЙ МУЗЫКЕ .....	64
<b>Альберт Мушегян</b> ЦАРЬ АРМЕНИОС КСЕНОФОНТА - РЕСТАВРАТОР ДИНАСТИИ ГАЙКАЗУН В ВАНСКОМ ЦАРСТВЕ (585 г. до н.э.) .....	97
<b>Аэлига. Долуханян</b> ФРЕДЕРИК МАКЛЕР - ИССЛЕДОВАТЕЛЬ ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ .....	101
<b>Алиса Думикян</b> К ПРОБЛЕМЕ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ ФРАНЦУЗСКИХ АРМОНОВЕДОВ И ОРИЕНТАЛИСТОВ К ИСТОРИИ ВАНСКОГО ЦАРСТВА .....	118

<b>Роберт Казарян</b> ИЗУЧЕНИЕ ИСТОРИИ ХАЙАСЫ (АЗЗИ) В ЗАПАДНОЙ ИСТОРИОГРАФИИ .....	133
<b>Карен Тохатян</b> СПЕЦИАЛИСТ ПО НАСКАЛЬНЫМ ИЗОБРАЖЕНИЯМ МИРОСЛАВ КШИЦА В АРМЕНИИ .....	146
<b>Ваге Саргсян</b> ВАНСКОЕ ЦАРСТВО В ПЕРИОДЕ ПРАВЛЕНИЯ ИШПУИНИ И СОВМЕСТНОГО ПРАВЛЕНИЯ С МИНУА СОГЛАСНО К.Ф. ЛЕМАН-ХАУПТУ .....	155
<b>Вардуш Арутюнян</b> ОСВЕЩЕНИЕ ВОПРОСОВ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА В ТРУДАХ ФРАНЦУЗСКИХ АРМЕЛОВЕДОВ .....	174
<b>Ара Геворгян</b> ОБ ИССЛЕДОВАНИИ КУРТА ЭКХАРДТА ПО ВОЕННО- ПОЛИТИЧЕСКОЙ ИСТОРИИ ЭПОХИ ТИГРАНА II ВЕЛИКОГО .....	183
<b>Анаит Мушегян</b> РУССКИЕ НУМИЗМАТЫ О ЧЕКАНЕННЫХ В АРМЕНИИ МОНЕТАХ .....	195

## CONTENTS

<b>Ashot Melkonyan</b> BY THE INSISTENCE OF TIME .....	5
<b>Eduard Danielyan</b> THE CONTRIBUTION OF D. M. LANG TO THE APPRECIATION OF ARMENIA'S CIVILIZATIONAL HERITAGE .....	8
<b>Hayk Melik-Adamyanyan, Christapor Khachanov</b> ARMENIAN STUDIES BY GERMAN GEOLOGIST HERMAN ABICH IN ARTSAKH AND NAKHICHEVAN .....	24
<b>Tigran Aleqsanyan</b> THE ACTIVITIES OF ARMENOLOGIST ANATOLY YAKOBSON AGAINST THE AZERBAIJANI FALSIFICATIONS .....	42
<b>Gohar Vardumyan</b> THE RESEARCH OF ANCIENT ARMENIAN RELIGION AND MYTHOLOGY IN THE WORKS OF FOREIGN ARMENOLOGISTS .....	51
<b>Arpi Vardumyan</b> FOREIGN AUTHORS ABOUT THE ART OF KOMITAS AND ARMENIAN MUSIC .....	64
<b>Albert Musheghyan</b> XENOPHON'S KING ARMENIOS - THE RESTORER OF THE HAİKAZUN DYNASTY IN THE KINGDOM OF VAN (585 BC) .....	97
<b>Aelita Dolukhanyan</b> FREDERIC MACLER - INVESTIGATOR OF ARMENIAN ANCIENT AND MEDIÉVAL HISTORY AND CULTURE .....	101
<b>Alisa Dumikyan</b> TO THE PROBLEM OF CONCEPTUAL APPROACHES OF THE FRENCH ARMENOLOGISTS AND ORIENTALISTS TO THE HISTORY OF THE KINGDOM OF VAN .....	118

<b>Robert Ghazaryan</b> STUDY OF HISTORY OF HAYASA (AZZI) IN WESTERN HISTORIOGRAPHY .....	133
<b>Karen Tokhatyan</b> ROCK-ART RESEARCHER MIROSLAV KŠICA IN ARMENIA .....	146
<b>Vahe Sargsyan</b> THE KINGDOM OF VAN DURING THE JOINT REIGN OF ISHPUINI AND MINUA ACCORDING TO C. F. LEHMANN-HAUPT .....	155
<b>Vardush Harutunyan</b> THE ISSUES OF THE HISTORY OF THE ARMENIAN LANGAUAGE IN THE WORKS OF FRENCH ARMENOLOGISTS .....	174
<b>Ara Gevorgyan</b> STUDY ON KURT ECKHARDT ON MILITARY-POLITICAL HISTORY OF THE ERA OF TIGRAN II THE GREAT .....	183
<b>Anahit Mousheghyan</b> RUSSIAN NUMISMATISTS ABOUT COINS RELATING TO ARMENIA .....	195

ԱԶԳԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԵՎ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*Միջազգային գիտաժողովի նյութեր,  
28 հոկտեմբերի, 2016 թ.*

ВКЛАД ИНОСТРАННЫХ АРМЕНОВЕДОВ В ИЗУЧЕНИИ  
ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИИ АРМЕНИИ

*Материалы международной научной конференции,  
28 октября 2016 г.*

THE CONTRIBUTION OF FOREIGN ARMENOLOGISTS IN THE  
STUDY OF ANCIENT AND MEDIEVAL HISTORY OF ARMENIA

*International Scientific Conference, 28 October 2016*

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյան  
Համակարգչային շարվածքը՝ Ա. Ղազարյան  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության  
Տպարանակը՝ 150 օրինակ

Ի

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՐԵՄԻԱ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՅՈՒՏ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
RA, 0019, Yerevan, pr. Marshal Baghramyan 24/4  
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>



[2000 m.]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0471596

A 8  
103372